

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԱ.
2022



ՀԹ. ՏԱՐԻ


ԲԱՆԴՈՒՄ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԼԻՆԱՆՅԱՆ ՀԱՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ԸՆՅՐ ԼԹՈՒՄՅԱՆ ՄԻՔՈՅ ԷԶՐԻԼԵՐԻ

ՆՊԵՏԵՐ

2022

Ի. ԷԶՐԻԼԵՐԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,**
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բօգոյեան,
Խաչիկ Րաֆֆի Գազեր,
Վարդան Դերիկեան,
Աբրահամ Տէրեան,
Գեորգ Տէր-Վարդանեան





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Abraham Terian,
Gevorg Ter-Vardanyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекиан,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Абраам Терян
Геворг Тер-Вардanian**



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ԹԵՄ՝ ՋԵՐՄՈՒԿ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԻ ԺԱՄԱՆԱԿ

(5 նոյեմբերի, 2022 թ.)

«Քրիստոս Աստուած, տո՛ւր մեզ օգնութիւն ի նեղութեան
մերում բարեխօսութեամբ սրբոց մարտիրոսաց եւ կեցո՛»
(Ժամագիրք):

Սիրելի՛ ջերմուկցիներ,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ աղոթքով հայցում երկնավորից, որ այս դժվարին պահին օգնական լինի նեղությունների դիմագրավող հայորդիներիդ: Առաջին անգամը չէ, որ այցելում ենք մեր երկրի այս գողտրիկ անկյունը: Զերմուկում եղել ենք բազմաթիվ առիթներով, հմայվել այս բնաշխարհի շքեղությամբ եւ վայելել այստեղի ժողովրդի հոգու ջերմությունն ու հյուրընկալությունը: Զերմուկը իր բուժիչ ջրերով եւ գեղատեսիլ բնաշխարհով մեր երկրի կարեւորագույն այցեքարտերից է եւ մշտապես եղել է հիվանդությունների բուժման ու տազնապների փարատման օրրան մեր ժողովրդի եւ բյուրավոր այցելուների համար: Այսօր Զերմուկն ինքը կարիքն ունի ապաքինման ու վշտերի թոթափման: Մենք եկել ենք Մեզ ուղեկցող Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամների հետ սրտակից ու զորակից լինելու ձեզ եւ միասին աղոթք բարձրացնելու եւ մեր հայրերի խոսքով հայցելու, որ Քրիստոս Աստված սուրբ մարտիրոսների բարեխոսությամբ օգնի եւ փրկի մեզ նեղության ժամանակ:

Երկու ամիս առաջ՝ սեպտեմբերի 13-ին, աղրբեջանական զինված ուժերը լայնածավալ հարձակում գործեցին Հայաստանի դեմ՝ թիրախավորելով Զերմուկ, Վարդենիս եւ Սիսիան քաղաքները եւ շրջակա տարածքները: Մեր ժողովուրդը վերստին կրեց ռազմական գործողությունների պատճառած ցավն ու արհավիրքը: Մեր սրտակցությունն ենք բերում մեր ժողովր-

դի սգավոր եւ վշտացյալ զավակներին ազրբեջանական ազրեսիայի հետեւանքով զոհւած հայորդիների, ավերված քաղաքների ու շենքերի համար: Աղոթում ենք, որ Տերը Իր ողորմութեամբ հանգստութիւն պարգեւի հայրենիքի համար նահատակված քաջորդիներին, մխիթարութիւն ու սփոփանք շնորհի զոհվածների ընտանիքներին եւ կամք ու քաջութիւն հավատաւոր Մեր զավակներիդ, որ կարողանաք դիմակայել հառնած խնդիրներին:

Սիրելի ջերմուկցիներ,

Տագնապներն ու անհանգստութիւնները չափազանց շատ են այսօր մեր կյանքում: Մենք մտահոգված ենք մեր հայրենիքի, հարազատ երկրում ապրող մեր ժողովրդի զավակների ներկայով եւ ապագայով, հատկապես երբ մեր հայացքները ամեն անգամ հանդիպում են անմեղ, բայց արդեն հոգսաշատ դարձած մեր մանուկների աչքերին: Մեր երկրի եւ ժողովրդի առջեւ ծառացած մտահոգութիւններից ու անհանգստութիւններից դրդված՝ որոշ ընտանիքներ հեռանում են երկրից եւ դառնում գաղթական՝ օտարութեան մեջ փնտրելով իրենց եւ իրենց զավակների երջանկութիւնն ու ապահովութիւնը:

Մենք եկել ենք այստեղ ասելու, որ այն ամենը, ինչ ունենք մեր երկիրն է, մեր հայրենիքը: Պիտի զինվենք քաջութեամբ ու տոկունութեամբ, որպեսզի պաշտպան լինենք այն սրբազան հողին, ուր ապրել ու արարել են մեր հայրերը եւ մեր հայրերի հայրերը, ուր նահատակվել են մեր զավակները: Այսօր պետք է այնպես ապրենք ու գործենք, որ կարող լինենք հաղթահարելու ծառացած մարտահրավերները, հզորացնելու մեր հայրենիքը եւ արժանավոր ժառանգութիւն թողնելու սերունդներին: Այս ծանր օրերին ձեր դրսեւորած քաջութիւնը անուրանալի վկայութիւնն է ձեր հայրենասիրութեան ու հանդեպ սրբազան մեր հողը ունեցած ձեր նվիրումի: Անկոտրում ձեր ոգին գոտեպնդում է մեզ եւ քաջալերում աշխարհասփյուռ հայորդիներին, նաեւ պարտավորեցնում ողջ հայութեանը, երկրի իշխանութիւններին ամենայն ջանք ու նախանձախնդրութիւն դրսեւորելու մեր երկրի անվտանգութեան եւ նրա ապահով կյանքի համար, որպեսզի չունենանք այլեւս զոհեր ու նահատակներ, չունենանք սգացող այրիներ, որդեկորույս մայրեր ու որբացած մանուկներ: Մենք՝ եկեղեցականներս, ձեզ հետ ենք, ձեր կողքին: Քաջ ու զորեղ մնանք, հաստատուն ու աննկուն լինենք առ հայրենին նվիրումի մեջ՝ թշնամյաց շարագործութիւնից ու ավերումից մեր բնակավայրերն ու մեր սրբավայրերը՝ Նորավանքը, Գնդեվանքը, Սուրբ Խաչ վանքը, Յախաց քարը, Սուրբ Աստվածածին վանքը պաշտպանելու:





Սիրելի՛ ջերմուկցիներ,

Մեր ժողովրդի մեջ տարածված է ավանդազրույցը Ջերմուկ աշխարհի վիրավոր եղնիկի մասին, որ որսորդից ստացած ծանր վերքերը ապաքինում է Ջերմուկի բուժիչ ջրերում: Մենք հավատում ենք, որ Ջերմուկի խորհրդապատկերի նմանողությամբ այս գեղատեսիլ քաղաքը, այլեւ մեր ողջ երկիրը վերստին կապաքինվի իր վերքերից, կվերապրի ողբերգությունները եւ կհաղթահարի դժվարություններն ու նեղությունները: Եվ մեր ժողովուրդը իր իմաստնությամբ, իր աշխատասիրությամբ, տոկունությամբ ու քաջությամբ պիտի շարունակի կառուցել արժանապատիվ ու ստեղծագործ իր կյանքը, զորացնել երկիր հայրենին եւ կերտել լուսավոր գալիքը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Վայոց ձորի թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանին, թեմի ողջ եկեղեցականությանը՝ իրենց հոգեխնամ սպասավորության, տերունապատվեր առաքելության արդյունավորման համար: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք հայտնում հարգարժան մարզպետին եւ քաղաքապետին այս տարածաշրջանի Մեր սիրեցյալ զավակներին իրենց բերած նվիրյալ ծառայության համար եւ մաղթում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը դժվարին, ծանր ու կարեւոր առաքելության մեջ:


Վերստին Մեր սրտաբուխ հայցն ենք բարձրացնում՝ ըստ մեր հայրերի սրտառուչ աղոթքի. «Քրիստոս Աստված, սուրբ մարտիրոսների բարեխոսությամբ օգնիր եւ փրկիր մեզ նեղության ժամանակ»: Աղոթում ենք, որ երկնավոր Տերը պահպանի, զորակից լինի Հայոց բանակի մեր զինվորներին՝ հայրենիքը պաշտպանելու, մեր ժողովրդի անվտանգությունը ապահովելու նվիրյալ ծառայության մեջ: Թող Ամենակալն Աստված խաղաղություն սփռի համայն աշխարհում, խաղաղության մեջ պահի մեր երկիրն ու մեր ժողովրդին եւ ամենախնամ իր Աջի հովանու ներքո զորություն ու ամրություն պարգևի ամենքիդ:

Տիրոջ շնորհները, սերը եւ օրհնությունը թող լինեն ամենքիդ հետ այժմ եւ միշտ, ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(6 նոյեմբերի 2022 թ.)

Յաճումն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Այսօրուայ այս սուրբ եւ անմահ պատարագով մենք Տիրոջը շնորհակալութիւն, գոհութիւն ենք յայտնում, որ մեզ` Հայ Եկեղեցու բոլոր հոգեւոր սպասաւորներին, հաւատացեալներին, առիթ է ընծայում, որ մենք բոլորս մեր շնորհաւորութիւնները եւ երախտագիտութիւնը յայտնենք Ամենայն Հայոց Հայրապետին իր կաթողիկոսական օծման եւ գահակալութեան քսաներեքերորդ այս ուրախ եւ երջանիկ տարեդարձի առթիւ: Այսօրուայ այս սուրբ պատարագի ընթացքին մենք բոլորս մեր աղօթքներն ենք մատուցում Տիրոջը, որ Տէրը երկար-երկար, առողջ եւ պտղաբեր տարիներ շնորհի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Տիրոջից խնդրում ենք, որ մեզ բոլորիս շնորհի իմաստութիւն եւ կորով՝ զօրակից մնալու Վեհափառ Հայրապետին` մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի առաքելութեան շարունակականութեան իր կարեւորագոյն առաքելութեան ճանապարհին` Հայ Եկեղեցու աւանդութիւնների համաձայն: Աղօթքի եւ հոգեւոր խորհրդածութեան այս պահին յիշում ենք Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքերը` Եփեսացիներին ուղղուած, ուր առաքեալն ասում է, որ Տէրը նրանց շնորհ տուեց` լինելու առաքեալներ, ոմանց մարգարէներ, ոմանց աւետարանիչներ, ոմանց հովիւներ եւ վարդապետներ, որպէսզի իր առաքելութիւնը շարունակական մնայ այս երկրի վրայ` ի շինութիւն Քրիստոսի մարմնի: Եւ մենք գիտենք մեր պատմութիւնից, որ մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս Քրիստոս, որպէսզի իր առաքելութիւնը շարունակական պահի մեր ժողովրդի, մեր Հայրենիքի կեանքից ներս ինքը եկաւ մեզ, ինքն իջաւ Հայոց հողի վրայ` հաստատելու մեր Սրբութիւն Սրբոց էջմիածնի տաճարը` իբրեւ խորհրդանիշ իր ներկայութեան, Քրիստոսի

ներկայութեան: Եւ յիշում ենք, թէ այդ ներկայութիւնը Գրիգոր Լուսաւորիչն էր, որ իր տեսիլքով մեր ժողովրդին փոխանցեց, բայց իր տեսիլքը Լուսաւորիչը վերածեց համայն հայ ժողովրդի տեսիլքի եւ շնորհիւ նրա եւ շնորհիւ դարեր շարունակ Լուսաւորչի յաջորդ երանաշնորհ հայրապետների՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու՝ Քրիստոսի թողած առաքելութիւնը շարունակական մնաց նոյնիսկ մեր պատմութեան այնպիսի պահերին, ուր, թերեւս, մարդկային հասկացողութեամբ անկարելի էր այդ իրագործել: Այդ առաքելութիւնը, Փառք Աստծոյ, չդադարեց Հայոց կեանքում: Եւ, ահաւասիկ, քսաներեք տարիներ առաջ Հայ Եկեղեցու Հայրապետութեան եւ բարձրագոյն ղեկավարութեան առաջնորդութեան կոչը ուղղուեց Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Գարեգին Երկրորդ կաթողիկոսին: Երգում եւ ասում ենք՝ «Ընտրեալդ Աստուծոյ»: Այո՛, Տէրն է, որ ընտրեց Իր ժողովրդի միջոցով, որպէսզի այս մեր ժողովրդի կարեւորագոյն պատմական եւ դժուարին ժամանակաշրջանում Վեհափառ Հարապետը Հայ Եկեղեցու ղեկը եւ առաջնորդութիւնը իր ձեռքը վերցնի: Վեհափառը այդ բարձրագոյն եւ, սակայն, դժուարին առաքելութեան կոչուեց, ինչպէս ասում էին մեր ժողովրդի պատմութեան ամենադժուար ժամանակաշրջանում: Սակայն Փառք Տիրոջը, որ Վեհափառը պատրաստ էր Տիրոջ այդ կոչին պատասխանելու եւ կրելու ծանր, բայց քաղցր լուծը խաչի: Այս պահին յիշում ենք Վեհափառ Հայրապետի՝ իբրեւ նոր օծեալ կաթողիկոս իր առաջին պատգամը՝ ուղղուած մեր ժողովրդին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի խորանից, որտեղ Վեհափառն ասաց. «Սիրելի՛ հաւատացեալ հայորդիներ, ներեկեղեցական եւ ներազգային բազում խնդիրներ ունենք՝ ինչպէս պատմական անցեալից ժառանգած, այնպէս եւ ներկայ անկախ պետականութեան կերտման ճանապարհին,— եւ ասաց Վեհափառը,— «չեմ երկնչում, որքան էլ բարդ եւ դժուարին եւ խորարմատ են կուտակուած այդ խնդիրները հայրենական մեր կեանքում, քանզի յարուցեալ Տէրն է իմ յոյսը եւ հայրերիս Աստուածն է իմ ապաւէնը, միասնաբար պիտի յաղթահարենք բոլոր դժուարութիւնները, հարթենք բոլոր խոչընդոտները, վերապրեցնենք մեր Եկեղեցին իր մշտական ներկայութեամբ մեր ժողովրդի կեանքում»: Վեհափառ Տէրը Փառք Աստուծոյ անցեալ քսաներեք տարիների ընթացքում այդ կուտակուած բազում դժուարութիւններից շատերը, յաղթահարեց իր աշխոյժ գործունէութեամբ, իր իմաստուն ղեկավարութեամբ, յաղթահարելու համար եւ ապահովելու համար մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի

առաքելութիւնը Հայ Եկեղեցու աւանդութեան համաձայն մեր ժողովրդի կեանքից ներս: Անցնող քսաներեք տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետի կատարած կարեւոր ձեռքբերումներին, յաջողութիւններին ի նպաստ Հայ Եկեղեցու եւ Հայ ժողովրդի շարանը շատ երկար է, եւ գիտենք, որ անկարելի է բազում տարիների ընթացքին կուտակուած խորարմատ դժուարութիւնները մէկ օրում անմիջապէս յաղթահարել, որովհետեւ տեսնում ենք, որ ինչ-ինչ պատճառներով, թերեւս, մենք մեր արմատներից հեռացել էինք. հայ ժողովրդի արմատը, իր իսկական արմատը ոսկեգրեան, Վարդանանց ոգին է, եւ այնքան ժամանակ, որ մեր ժողովուրդը դարեր շարունակ հաւատարիմ է մնացել այդ արմատներին եւ ոգուն, կարողացել է այդ բոլորը յաղթահարել: Վեհափառ Տէր, մենք՝ բոլորս, երախտապարտ ենք Ձեզ, երախտապարտ ենք, որ քաջութեամբ շարունակում էք դիմագրաւել եւ ճանապարհներ որոնել՝ առկայ դժուարութիւնները եւ մարտահրաւէրները յաղթահարելու: Ձեր կարեւոր առաքելութեան ճանապարհին եւ յիշում ենք Վեհափառ Հայրապետի հետեւեալ կարեւոր պատգամը, որտեղ ասում է. «սէրը անձնակենտրոն չէ, իրենը չի փնտրում, այն արտայայտուում է միմեանց հանդէպ նուիրուածութեամբ եւ հիմքն է ծաղկումի, վերելքի եւ յարութեան»: Իմաստուն խօսքեր, իմաստուն պատգամ մեր բոլորի համար՝ առանց խտրականութեան: Վեհափառ Տէր, աղօթում ենք, որ Ձերդ սրբութեան սիրոյ եւ միասնականութեան կոչը լսելի դառնայ մեր ժողովրդի զաւակներին՝ առանց խտրութեան, որովհետեւ այդ կոչին անսալը, այդ կոչը կեանքի վերածելը պիտի լինի մեր ժողովրդի փրկութեան եւ յարութեան եւ յաղթանակի ճանապարհը: Վեհափառ Տէր, բոլորս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հայրերը, եղբայրները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը, խոնարհուում ենք Ձեր առջեւ, համբուրում ենք Ձեր օծեալ աջը եւ մեր հաւատարմութիւնը եւ մեր որդիական սէրը յայտնում ենք Ձեզ: Վեհափառ Տէր, կը շարունակենք աղօթել Ձեզ հետ եւ զօրակից ենք Ձեր բոլոր ծրագրերի, երազների իրականացման ճանապարհին, որովհետեւ այդ երազների, այդ ջանքերի իրականացումը պիտի լինի յաղթանակը ոչ միայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու, այլ մեր ամբողջ հայրենիքի եւ համայն ժողովրդի. ամէն:



**Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՍՊՈՍ ԳԱՆՏԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՍՅԱՑՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԱՐՏԱՇԱՏԻ ՍՈՒՐԲ ԶՈՎՃԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 նոյեմբերի 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ անա այս աղոթքն եմ ասում. թո՛ղ ձեր սերն ավելի ու ավելի առատանա գրոյթյան եւ իմաստոյթյան մեջ, որպէսզի դո՛ւ լավն ընտրե՛մ, հաստատուն մնա՛մ եւ առանց գայթակղոյթյան լինե՛մ Քրիստոսի օրվա համար՝ լցված արդարոյթյան պտուղներով Հիսուս Քրիստոսի միջոցով ի փառս եւ ի գոհոյթյուն Աստծոյ»

(Փիլ. Ա. 9—10):


Այս խոսքերով է առաքյալը դիմում իր համայնքին՝ նրանց, ում հետ կոչված է տարածելու եւ քարոզելու մեր Տիրոջ կենսաբեր խոսքը, պատգամը եւ կյանքը: Թո՛ղ ձեր սերն ավելի ու ավելի առատանա՝ ոչ պարզ կերպով, այլ գիտության եւ իմաստության մեջ: Լավն ընտրե՛ք, բարին ընտրե՛ք, հաստատուն մնացե՛ք Քրիստոսի օրվա համար, արդարության պտուղներով լցվե՛ք ի Հիսուս Քրիստոս՝ Աստծու փառքի եւ գոհության համար: Մեր կյանքում այսօր նշանակալից եւ կարեւորագույն օրերից մեկն է, երբ այս Սուրբ եկեղեցու խորանից այստեղ ծնվեցին հինգ քահանաներ եւ իրենց մյուս ընկերը Ստեփականերտի Աստվածամոր Սուրբ տաճարում՝ ընծայվելու համար Աստծու գործի, կյանքի եւ խոսքի առաքելությանն ու տարածմանը: Սիրո մեջ առատանալու համար, լավը եւ բարին փնտրելու համար, Սուրբ Հոգու շնորհած պարգևի եւ իրենց համոզմունքի մեջ հաստատուն մնալու համար, իմաստություն եւ գիտություն ունենալու՝ ճանաչելով Աստծուն՝ ճանաչեցնելով մարդկանց, այդ մեծ առաքելության համար, լցվելու արդարության պտուղներով եւ չվա-

խենալու դրանց մասին խոսելուց, դառնալու համար Աստծու փառքի կիսողը եւ նրա անվան գովերգողը: Այսօր նշանակալից է նաեւ այն իմաստով, որ մեր սիրելի նորընծա քահանա հայրերը, ովքեր այս Սուրբ սեղանի վրա ուխտեցին հավատարմությամբ եւ անսակարկ կերպով, անարժաթ պատվով, հակառակ բոլոր տեսակի դժվարությունների, դժբախտությունների, հարձակումների, ծաղրանքների, խոցումների, վշտերի, դառնությունների, աղքատության եւ այլ տեսակի տառապանքների՝ ուխտեցին ծառայության մեջ մնալ Աստծու հավատարմությանը՝ իրենց վրա կրելով մեր վերջին կամ շարունակվող պատերազմի կամ պատերազմների հերոս եւ նահատակ զավակների անունները: Այդպես խոսեց մեզ Սուրբ Հոգին՝ այդ պատվական անուններով կնքելու ձեզ՝ այս անգամ որպես հոգեւոր նահատակության փառքի պսակը կրողներ, զուգակից իրենց եղբայրներին, որ մեր կյանքի համար իրենց կյանքն ընծայեցին: Այս անվանակիրներից շատերին ես իմ ձեռքերով եմ հուղարկավորել, եւ այսօր այս նույն անարժան ձեռքերով ծնունդ ենք տալիս այս Սուրբ խորանից նոր կյանքի, նոր նահատակության եւ նոր հաղթանակի՝ Հարություն, Վահրամ, Նարեկ, Դավիթ, Աբգար, Արցախում նաեւ Վաչագան: Այս անուններով եւ իրենց շարքին՝ բազմահարյուր-բազմահազար անունները ոչ մեկ վայրկյան չկասկածեցին, չտատամսեցին, երկյուղն ու վախը չունեցան, մարմնավորը երբեք չգերազնահատեցին այն հոգեւոր թոփշից, ուստի մեզ՝ բոլորիս... պատվի, արժանապատվության, հավատքի եւ հայրենիքի գոյության համար ընծայեցին իրենց կյանքը: Այսօր մեր սարկավազները քահանայության կոչումով եւս ամբողջանվեր ուխտեցին ընծայելու իրենց կյանքը: Նրանք ֆիզիկական խրամատում էին, նաեւ հոգու պաշտպանության համար: Այսօր մեր սիրելի քահանա հայրերը հոգեւոր առաջնագծի խրամատում են գտնվելու՝ նաեւ մեր ֆիզիկական պաշտպանության համար: Եւ մեր խնդրանքն է, որ իրենց քահանայությունը նաեւ պատճառ լինի մեր կյանքի ամբողջական վերականգնման՝ հարության խորհրդով... մեր կյանքի հաղթանակների վերականգնմամբ: Դրանք կլինեն փոքր կամ մեծ տարածություններ, դրանք կլինեն մեր ամենօրյա կենցաղի մեջ, թե մեր հայրենիքի սահմանների եւ արժանավորության վերականգնման համար, ոչ մի տարբերություն: Եւ մեր միակ խնդրանքն է, որ այդ կյանքի վերականգնումով նաեւ ուրախությունը վերականգվի մեր տան մեջ: Սիրելի՛ նորընծա քահանա հայրեր, մեծ պատասխանատվությամբ Աստծու Հոգու կանչին ունկնդիր

լինելով՝ դուք ձեր քայլերն ուղղեցիք այս սուրբ տաճարը՝ այս սուրբ խորանը, ձեր վրա կրելով մեր հերոս զավակների անունները, ամբողջական գիտակցություն ունենալով, որ կյանքում միշտ չէ, որ ձեզ ծաղիկներով, շեփորներով են դիմավորելու դիմավորելու: Դուք դժվար, բայց եւ վերընթաց ուղի եք ընտրել: Ձեր աշխատանքը լինելու է քրտնաջան, տեւական, համառ: Եւ միայն ամենօրյա, ամենժամյա նվիրյալ ծառայության շնորհիվ ձեր սպասավորությունը ձեզ եւ ձեզ վստահված անձանց համար մխիթարության աղբյուր կհանդիսանա: Ոչ մի նյութական բարեկեցություն ավելին չի լինելու ձեր կյանքում, քան այն հոգեւոր հրճվանքը, մխիթարությունը, որ ձեր միջոցով դույզն չափով՝ մի կաթիլ իսկ փոխանցված կլինի մեր ժողովրդի զավակներին, որը փառք եւ գոհություն կլինի Աստծու անունին: Դուք կոչված եք՝ գործելու անանձնական կերպով, դուք ապրելու եք ոչ թե ձեր սեփական ուրախությունը, այլ անանձնական ուրախությունը՝ բոլոր նրանց, ովքեր կոչված կլինեն ձեր խնամքին: Դուք կոչված եք լինելու վշտի մեջ գտնվողի հետ վշտակցել, սգի մեջ գտնվողի հետ՝ սգալ, չսողին խոսք փոխանցել, մոլոր ճանապարհի մեջ գտնվողին ճանապարհ ցույց տալ, հարատեւ աղոթքի մեջ լինել բոլորի համար, սիրտ սրտի ապրել բոլորի հետ, ոչ թե որպես օտարը, այլ սեփական, քո ժողովուրդը լինելու զգացումով: Անկախ նրանից՝ թե որքան քար կգա ձեր ճանապարհին, այդ քարերը դարձրե՛ք բարի սերմեր, արդարության պտուղներ եւ վերջապես լցվե՛ք ու առատացրե՛ք մեր կյանքը սիրո մեջ: Անբեկանելի է սիրո պատմությունը, որը այսօր հյուսվել է ձեր եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջեւ: Այդ սերը տարե՛ք, չձանձրանա՛ք, չհոգնե՛ք, չսակարկե՛ք, չընկճվե՛ք, չսպասե՛ք, որ ձեզ անպայմանորեն սիրելու են, այլ դուք տվե՛ք այդ սերը՝ առանց ակնկալիքի եւ առանց սիրված լինելու սպասումի: Մեր Տիրոջ օրինակով խաչի ճանապարհ է ձեր ճանապարհը՝ այնպես, ինչպես յուրաքանչյուր հոգեւոր սպասավորի: Կլինեն փշեր, կլինեն տատասկներ, կլինեն չոր այգիներ, կլինեն անպտուղ ծառեր, այդ բոլորը ձեր ձեռքի մշակությամբ թո՛ղ շենանան, դառնան պտղատու այգիներ, դառնան ցորեն: Գրավե՛ք այդ սրտերը՝ այնտեղ դրոշմելու մեր Տիրոջ անունը, որ ուղղակի՛... ուղիղ կերպով նշանակում է հաղթանակ, եւ այլ ոչինչ: Ես ուզում եմ մեր շնորհավորանքը եւ գնահատանքը հայտնել մեր քահանա հայրերի ընտանիքներին, ծնողներին, ընտանիքի անդամներին, մեր երեցկանանց... եւ հատկապե՛ս երեցկանանց, որ այլեւս իրենց քահանա ամուսինների հետ կոչված են ամբողջական ծառայու-

Թյան Տիրոջ այգու մեջ, եւ վստահաբար որքան շնորհ ձեր քահանա ամուսիններն ունեն, եւս առավել նաեւ դուք եք կոչված այդ շնորհը կրելու եւ տարածելու: Որքան սեր իրենք ունեն, եւս առավել ձեր առաքելությունը դարձրեք այդ սերը խնամելու, պաշտպանելու եւ տարածելու այն մարդկանց կյանքում, ովքեր կշրջապատեն ձեզ, եւ ում դուք կշրջապատեք: Դուք էլ կոչված եք ծառայելու, սիրելի՛ երեցկանայք, եւ ես մաղթում եմ, որ ձեր ծառայությունը լինի միայն գոհության, ուրախության եւ մխիթարության ծառայություն: Ես մաղթում եմ, որ դուք շատ զավակներ ունենաք, սիրելի՛ քահանա հայրեր եւ երեցկանայք: Բազմաթիվ զավակներ ունենաք, երկնքի արքայության եւ երկրի վրա արդարության քաղաքացիների թիվը բազմապատկեք, տասնապատկեք, ուրախությամբ լցնեք եւ ձեր կյանքը, մեր ժողովրդի կյանքը, ում կոչված կլինեք ծառայության: Մեր շնորհավորանքը եւ որդիական խոնարհումը ազգիս Վեհափառ Հայրապետին, ում օրհնությամբ եւ տնօրինությամբ այսօր մենք քահանայական ծառայության կոչեցինք մեր հինգ սիրելի եղբայրներին, եւ վեցերորդը Ստեփանակերտում է: Մեր գնահատանքն ու շնորհակալությունը մեր լուսարարապետ Սրբազանին, մեր ողջ լուսարարապետությանը, մեր քահանա հայերին, ծառայողներին, սարկավագներին, ովքեր այս օրը մեր սիրելի եղբայրների կյանքում դարձրին ուղղակիորեն նոր սկիզբ՝ նոր կյանքի: Եւ ես համոզված եմ նաեւ նոր հաղթանակներում: Մեր գնահատանքը մեր սիրելի վկայող Հայր Սուրբին, որ հանձն առավ նաեւ այսօր վկայել մեր սիրելի նորածն քահանաների համար, ինչ-որ իմաստով լինել Աստծու առջեւ նրանց համար պատասխան տվողը, ինչպես որ ես կոչված եմ՝ այս ծնունդով Աստծու առջեւ ներկայանալու եւ իր ողորմությունը խնդրելու նաեւ ինձ: Եւ բոլորիդ ու բոլորիս, սիրելի՛ ժողովուրդ, այս եկեղեցում կամ մեր բոլոր եկեղեցիներում՝ անկախ նրանից ֆիզիկապես ներկա են, ներկա չեն, այս խորհուրդը տեղի է ունենում նաեւ տիեզերքում, տեղի է ունենում, տարածվում է ամենուր, որովհետեւ Աստծու շնորհը սահմանափակված չէ, այլ այսօր մեր այս ձեռնադրության խորհրդով մոտք է գործում յուրաքանչյուր քրիստոնյայի տուն, յուրաքանչյուր մարդու տուն, ով զգում է այդ խորհրդի ճշմարտությունն ու ապրում է նրա կարիքի եւ ակնկալիքի մեջ: Հայցում եմ ձեր աղոթքները, սիրելի՛ ժողովուրդ, մեր սիրելի քահանաների համար, նորածն քահանաների համար, ովքեր շատ պատվական ու պատասխանատու անուններ են կրում: Հայցում եմ ձեր աղոթքները մեզ՝ բոլորիս համար, բոլոր հո-

գեւորականների համար, ովքեր ծառայության դաշտի մեջ՝ իրենց առաքելության ճամփին, հնարավոր է սխալվելու, սայթաքելու, բայց միեւնույն ժամանակ հաստատուն են մնալու՝ Աստծու հետ համագործակցելով եւ իրենց գործը կատարելով այս երկրի վրա: Հայցում եմ ձեր աղոթքները, որպեսզի ինչպես մշտապես ասել եմ, այդ բոլորը պատճառ չլինեն ձեզ վնասելու համար: Թող Աստված զորացնի մեր Սուրբ եկեղեցին, այս քահանայական ձեռնադրությամբ թող նոր սկիզբ լինի մեր ամբողջական կյանքի վերականգնման, մեր գողացված ուրախության պատմությունը թող միայն դառն հուշ մնա մեզ համար, եւ վերականգնվի մեր հոգու սնունդը, ամբողջական ուրախությունը, մեր տունը դառնա արժանավորների տուն, մեր տունը դառնա պատիվ ունեցողների, քաջերի, արդարության պտուղներով լցվածների, սիրո, իմաստության, գիտության մեջ ձգտումով ապրող խիզախների եւ հայրենիք ստեղծող, արարող մարդկանց տուն: Թող վերականգնվեն մեր հայրենական ամբողջ սահմանները, եւ մենք պատճառ չունենանք արտասուքների, դառնությունների եւ ողբերի, այլ մեր պատմությունները հյուսվեն միայն սխրանքների, քաջությունների եւ հաղթանակների մասին: Աստված զորացնի մեզ մեր կյանքի եւ առաքելության մեջ՝ գնալու ճշմարտության եւ արդարության ճանապարհներով: Թող զորանաք դուք, սիրելի՛ քահանա հայրեր, եւ թող ձեր ճամփով եւս Սուրբ Հոգին առատապես հեղվի մեր կյանքում՝ որպես աստվածային շնորհի մեծագույն արտահայտություն ձեր միջոցով: Կրէք Աստծու Հոգին ձեր մեջ, ինչպես որ կա, եւ փոխանցէք նրանց, ովքեր կվստահվեն ձեզ: Մեր Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղությունը լինեն բոլորիս հետ: Ամեն:



Տ. ՄԻՆԱՍ ԱՐԵՂԱ ԶԱՆՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԴԱՏԱՐԱԳԻՆ

(27 նոյեմբերի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Զի գործեցից՝ զի ոչ գոյ տեղի
ուր ժողովեցից զարդիւնս»
(Ղուկ. ԺԲ 17):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօրվա սուրբգրային ընթերցվածքներից հատկանշական է մի առակ, որ պատմում է Տեր Հիսուս Քրիստոս։ Ամենքիդ քաջածանոթ է այդ առակը։ Մեծահարուստի արտերն առատ բերք տվեցին։ Մտքում խորհեց՝ ինչ անի, քանի որ բերքերը ժողովելու տեղ չունի։ Ապա որոշեց. «Կքանդեմ իմ շտեմարանները եւ ավելի մեծերը կկառուցեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը եւ իմ ամբողջ բարիքները։ Եւ ինքս ինձ կասեմ. «Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգիստ եղիր, կե՛ր, խմի՛ր եւ ուրախացի՛ր»։ Սակայն Աստված նրան ասաց. «Անմիտ, հենց այս գիշեր հողիդ քեզնից պահանջելու էմ, իսկ քո կուտակածն ո՛ւմ է մնալու» (Ղուկ. ԺԲ. 16—20)։

Ապտակի նմանվող խոսքեր, որ սթափեցնող ազդեցություն են գործում ու անմիջապես ցած իջեցնում մարդուն թվացյալ բարձունքից։ Այս առակը վերաբերում է անհատապես յուրաքանչյուրիս, քանի որ ամենքս էլ մեզ տրված նյութական կամ ոչ նյութական կարողություններ ունենք եւ առակի հարուստի պես մի օր կանգնելու ենք Աստծու առջեւ ու պատասխան տանք, թե մեզ պարգեւած կարողություններն ինչպես օգտագործեցինք։

Նյութական հաջողություն գտնելը սքանչելի է՝ անկարոտ կյանք ապահովելու համար, սակայն կարեւորն այդ հաջողությունից հետո եսասեր չդառնալն է։ Ամեն ոք պիտի գիտակցի, որ հարուստ է յուրովի։ Մեկը՝ հոգով, մյուսը՝ խելքով եւ այսպես շարունակաբար հարստություններն ու

արժեքները տարբերվում են իրարից: Նյութական հարստությամբ հաջողություն գտնողն էլ պետք է հիշի առակի վերջավորությունը, եւ իր ունեցածի նկատմամբ պատասխանատվության գիտակցում ունենա: Այսօրվա առակը շատ կարեւոր է մեր հոգիների արթնության համար:

Քրիստոս զգուշացնում է կուտակելու մոլուցքով տարված այն մարդկանց, ովքեր նյութականը վեր են դասում ամեն ինչից ու կյանքը կառուցում դրա շուրջ՝ հավանաբար մտածելով, որ դեռ երկար են ապրելու երկրի երեսին: Բայց իրականում այդպիսիները տազնապի ու անհանգստության մեջ են ապրում, կորցնում են հոգու խաղաղությունը, նրանց միտքն անդադար աշխատում է՝ նախ ունեցվածք կուտակելու, հետո այն պահպանելու, ապա ավելացնելու մասին հոգսերով: Միշտ հիշենք, որ արծաթասեր մարդուն անընդհատ որոշակի գումար է պակասում իրեն բավարարված զգալու համար, փառասեր մարդուն՝ փառքի մի որոշակի աստիճան, զվարճասերին՝ նորանոր զվարճություններ: Եւ այդպես էլ անցնում է կյանքը՝ երկրային չափանիշներով կարճ կամ երկար, ու անսպասելի վրա է հասնում մահվան օրը, եւ աշխարհի ոչ մի հարստություն ի զորու չի լինում պահպանելու վախճանից: Եւ մարդու սիրտն էլ երբեւէ չի բավարարվում նյութական ունեցվածքով, քանի որ Արարիչ Աստված է միայն ի զորու լցնելու Իր ստեղծածն ու հագեցնելու Իր անսահման սիրով, կենարար լույսով եւ աստվածային զորությամբ:

Եկեղեցու երանելի հայրերից մեկն այս առակը մեկնաբանելիս մեր ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ այդ հարուստ մարդը նայեց իր մեծ ունեցվածքին ու մտահոգվեց ասելով. «Ի՞նչ պիտի անեմ»: Սակայն նույն հարցն է տալիս նաեւ աղքատ մարդը, երբ տեսնում է, որ ոչ ուտելիք ունի, ոչ էլ հագնելիք: Ապա եզրակացնում է եկեղեցու հայրը. «Աղքատների դատարկ որովայններն են այն ապահով շտեմարանները, որ կարող են եւ շատ բարիք ամբարել եւ անփուտ ու անկործան են, որովհետեւ երկնային են ու աստվածային, քանի որ աղքատին տվողն Աստծուն է տալիս»:

Հարուստն անմիտ կոչվեց, որովհետեւ իրեն էր վերագրում այդ ողջ բարիքը եւ ոչ թե իրեն Աստծուց տրված պարգեւ: Եւս մեկ անգամ տեսնում ենք, որ Աստված ոչ թե կարողությունից է մեզ հեռու պահում, այլ զգուշացնում է դրան ճիշտ վերաբերվելու ու աստվածահաճո տնօրինելու մասին: Խրատում է մեր ուշադրությունը, եռանդն ու ջանքերը ոչ թե նյութականին կենտրոնացնելու, այլ առաջին հերթին հոգեւոր բարիքների

ու հոգու փրկության մասին հոգ տանելու, որպեսզի նյութական բարիքները չխոչընդոտեն մեր հոգու փրկության ճանապարհը: Քանի որ ամեն մարմնական բան մարմնի հետ երկրի վրա է մնալու, իսկ անմահ հոգին իր հետ հոգեւոր հարստությունն է վեր տանելու: «Որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը», - զգուշացնում է Տերը: Իսկ սուրբ Բարսեղ Մեծն էլ ասում է. «Երկրային բաների հանդեպ սերը ձյութ է, որ կապում է մարդու հոգեւոր թեւերը»:

Երբ հատկապես այս օրերին մեր իրականությանն ենք նայում, զրուցում շատերի հետ, հաճախ տեսնում ենք, որ աշխարհիկ հասկացողությամբ հարուստ կյանք ապրած, կյանքի բոլոր հաճույքները վայելած, ունեցվածք ու հեղինակություն ձեռք բերած մարդիկ, իրենց կյանքի մայրամուտին որեւէ դժբախտության կամ արգելքի հանդիպելիս, կանգ են առնում եւ մեծ ափսոսանքով հետ նայում: Եւ նրանցից շատերը պատրաստ են ամեն ինչ տալու, միայն թե հետ բերեն մանկության անհոգ տարիները, հայրական ակութի՝ միգուցե աղքատիկ, բայց այնքան ջերմ ու հարազատ պատերը: Երբ մարդը վերջապես կանգ է առնում թվացյալ բարիքներ կուտակելու խելահեղ մրցավազքում եւ սթափ նայում իր անցած ճանապարհին, հասկանում է, որ կյանքն ապրել է միայն իր համար, որ եսասիրությունը սրտից դուրս է մղել աստվածային լույսն ու ջերմությունը, եւ այժմ այնտեղ լավագույն դեպքում սառն դատարկություն է: Երբ աշխարհի ծովի ալեբախումները մեզ մի ափից մյուսն են նետում եւ տեսադաշտից կորցնում ենք աստվածային ուղեցույց Լուսը, ճանապարհից շեղված օտարականի պես սխալ փողոցներ ու խուլ նրբանցքներ ենք մտնում եւ թույլ գտնվելու դեպքում ի վերջո կործանվում:


Այսօր մենք չենք կարող ժխտել, որ մեր ունեցվածքը հաճախ մեզ հեռու է պահում Աստծուց, այն մեզ համար երբեմն դառնում է արժեք, նպատակ եւ ոչ թե միջոց: Դրամը, որ ստեղծված է մարդու կյանքը ապահովելու համար, չար կամ բարի չէ, սակայն կարեւոր է, թե մենք ինչպես ենք վերաբերվում դրան: Ողորմություն տալով է, որ մենք հարստանում ենք Աստուծով: Ինքն իր համար ապրող մարդն իրականում Աստծուց հեռու է ապրում: Արդ, մեր հարստությունը կուտակենք երկնքում, իսկ երկրի վրա՝ մեր նմանի, մեր մերձավորի սրտի շտեմարանում, որովհետեւ չգիտենք մեր կյանքի վերջին օրը երբ է գալու:


Բազում ողորմ մեր Տերը հոգալով մեր հոգիների փրկության մասին, մեզ ցույց է տալիս ճշմարտության ճանապարհը, որն Աստծու կամքի ու

պատվիրանների վրա հիմնված կյանքն է: Կյանք, որ պետք է կառուցվի ոչ թե մեր տկար ու մեղավոր եսի, այլ Ամենակարողի շուրջ:

Ուրեմն այսօրվա ավետարանական առակը թող խրատ լինի, որ չլինի թե Արարիչ Աստծուն մոռացած՝ մեր կյանքի իմաստը նյութական ունեցվածքի մասին հոգ տանելը դարձնենք, այլ ամրանանք աստվածային գանձեր հանդիսացող քրիստոնեական առաքինությունների՝ հավատի, խոնարհության, ողորմածության եւ այլ շնորհների մեջ, որոնք մեզ հետ հավիտենություն ենք տանելու:

Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղությունը թող լինեն ձեզ հետ այսօր եւ միշտ, ամեն:





ԹԵՈՓԻԼՈՍ ԱՆՏԻՈՔԱՅԻ

ԱՌ ԱՎՏՈԼԻԿՈՍ

Սկիզբը՝ թիվ Ը.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Մի քանի օր առաջ տեղի ունեցած մեր զրույցի ընթացքում, ով հարգելի Ավտոլիկոս, դու ինձ հարցրիր, թե ով է իմ Աստվածը, եւ միաժամանակ բարեհաճեցիր լսել խոսքերս: Ես էլ իմ տեսակետն արտահայտեցի կրոնի նկատմամբ, որից հետո մենք բարեկամաբար բաժանվեցինք իրարից, եւ յուրաքանչյուրս գնաց իր տուն, թեեւ սկզբում դու ինձ խիստ ընդունեցիր. գիտես եւ հիշում էլ ես, որ մեր վարդապետությունը քեզ հիմարություն էր թվում: Թեեւ այն բանից հետո, երբ ինքդ խնդրեցիր ինձ [կրկին անդրադառնալ այս հարցին], ես, որ անվարժ եմ խոսքի մեջ¹, կամենում եմ իմ այս գրքի մեջ ավելի հանգամանորեն ապացույցել քեզ քո չարչարանքների անօգտակարությունն ու մատուցվող ծառայությանդ ունայնությունը եւ միաժամանակ ներկայացնել քեզ ակնհայտ ճշմարտությունը ձեր իսկ պատմազրույցներից, որոնք դու կարդում ես, բայց, թերեւս, լիովին չես հասկանում:

Բ. Իմ աչքին զավեշտական է այն, որ քարտաշները, քանդակագործերը, նկարիչները կամ ձուլողները կերտում, նկարում, տաշում, ձուլում եւ պատրաստում են աստվածներ, որոնց, այն բանից հետո, երբ վերջնականապես մշակում են վարպետները, հենց իրենք էլ բանի տեղ չեն դնում, սակայն այն բանից հետո, երբ դրանք գնում են եւ կանգնեցնում մեհյաններում կամ տներում, այդժամ ոչ միայն դրանց գնողներն են զոհեր մատուցում, այլեւ նրանք, ովքեր կերտել ու վաճառել են այդ կուռ-

¹ Բ. Կորնթ. ժԱ. 6:

քերը, սրանք ջանասիրությամբ գալիս եւ բազում զոհերով ու ձոներով երկրպագում են դրանց՝ աստվածներ համարելով, մոռանալով, որ այդ աստվածները նույնն են, ինչ որ իրենց ձեռքերում էին՝ քար, պղինձ, փայտ, ներկ կամ ցանկացած նյութ: Դա, իհարկե, ձեզ հետ էլ է պատահել, ձեզ հետ, որ կարդում եք թվացյալ աստվածությունների պատմություններն ու տոհմաբանությունները: Բանն այն է, որ երբ կարդում եք նրանց ծագման մասին, նրանց մարդիկ եք համարում, իսկ հետո նրանց աստվածներ եք անվանում ու երկրպագում՝ չըմբռնելով ու չհասկանալով, որ դրանք ծնվել են այնպիսին, ինչպիսին որ են իրենց ծագումով ձեր ընթերցած աւքերում:

Գ. Քանի որ ձեր աստվածները ծնվում էին, նրանց ցեղն այնժամ շատ բազմաքանակ էր: Իսկ հիմա ինչ-որ բանից երեւում է, որ աստվածները ծնվում էին: Արդ, եթե այն ժամանակներում նրանք լույս աշխարհ էին գալիս եւ լույս աշխարհ բերում, ակնհայտ է, որ ցայսօր էլ պիտի ծնվեին աստվածները. հակառակ դեպքում դա պիտի տկարություն համարվեր: Նրանք կամ ծերացել են, ինչի պատճառով այլեւս սերունդ չեն տալիս, կամ մահացել ու այլեւս գոյություն չունեն: Եթե աստվածները ծնվում էին, ապա այսօր էլ պիտի ծնվեին, ինչպես որ մարդիկ են դեռեւս ծնվում, ավելին՝ աստվածները թվով պիտի գերազանցեին մարդկանց, ինչպես ասում է Սիբիլլան. «Եթե աստվածները ծնում են, եւ իրենք էլ անմահ մնում, ապա ծնված աստվածներն ավելի շատ պիտի լինեին, քան մարդիկ, եւ մահկանացուների համար այլեւս տեղ չէր մնա»²: Եթե մարդիկ, որոնք մահկանացու եւ կարճակյաց են, ցայսօր դեռ երեխաներ են ունենում եւ շարունակում են մնալ այդպիսիք, այնպես որ քաղաքներն ու գյուղերը լցված են նրանցով, եւ մինչեւ իսկ դաշտերն են բնակեցնում, ապա մանավանդ աստվածները, որոնք բանաստեղծների պատկերացումներով չեն մահանում, միթե չպիտի ծնեին ու ծնվեին, եթե դուք պնդում եք, թե աստվածները ծնվել են: Ինչո՞ւ Օլիմպոս կոչված լեռը, որ երբեմնի բնակեցված էր աստվածներով, այսօր թափուր է: Կամ ինչո՞ւ էր Զեւսն առաջ ապրում Իդա լեռան վրա, եւ ըստ Հոմերոսի եւ այլ բանաստեղծների՝ հայտնի էր, որ նա անդ էր ապրում, իսկ այսօր անհայտ է նրա ապրելավայրը: Կամ էլ ինչո՞ւ նա ամենուրեք չէր, այլ գտնվում էր երկրի

² Տե՛ս «Alexandre Orecula Sibyl», Paris, 1841, J. H. Friedlieb, Die Sibyllinischen Weissagungen, Leipzig, 1852:

մի որոշակի վայրում, կամ էլ այլոց մասին չէր հոգում, կամ չէր կարող ամենուրեք լինել եւ հոգալ ամեն ինչի մասին: Այսպես՝ եթե նա, օրինակ, գտնվեր արեւելյան մասում, ապա չէր լինի արեւմտյանում, եւ հակառակը՝ եթե գտնվեր արեւմտյան մասում, չէր լինի արեւելյանում: Բայց Բարձրյալ Աստծուն՝ ամենակարող եւ ճշմարիտ Աստծուն հատուկ է ոչ միայն ամենուրեքությունը, այլեւ ամեն ինչ տեսնելն ու լսելը եւ որեւիցե տեղով չսահմանափակվելը: Հակառակ դեպքում Իրեն պարունակող տեղն Իրենից մեծ կլիներ. քանզի պարունակողը պարունակչալից մեծ է, այնինչ Աստված [որեւիցե] տեղով չի սահմանափակվում, այլ Ինքն է ամեն ինչը պահում: Դարձյալ, ինչո՞ւ Զեւսը հեռացավ Իդայից, արդյո՞ք ոչ այն պատճառով, որ մահացավ, կամ լեռն այլեւս հաճո չէր իրեն: Իսկ ո՞ր գնաց: Երկինք, ո՞չ: Կասես՝ գուցե Կրետե՞: Ժիշտ այդպես. ցայսօր այնտեղ է նրա դամբարանը: Թե՞ կասես՝ նա Պիզա է գնացել, ուր ցայսօր մեծարում է Փիդասի ձեռքերի արվեստը:

Այժմ դառնանք ձեր փիլիսոփաների եւ քերթողների ստեղծագործություններին:

Դ. Ստոիկներից ոմանք ասում են, որ բնավ Աստված չկա, կամ եթե կա էլ, պնդում են նրանք, բացի Իրենից՝ ոչ մի բանի մասին հոգ չի տանում: Եւ հենց այս միտքն է, որ լիովին բացահայտեց էպիկուրի եւ Քրիսպոսի անմտությունը: Այլք ասում են, որ ամեն ինչ պատահականորեն է կատարվում. որ աշխարհն արարված չէ, իսկ բնությունը հավերժ է: Նրանք չէին համարձակվում պնդել, որ բնավ ոչ մի աստվածային Նախախնամություն էլ չկա, բայց ասում էին, որ Աստված յուրաքանչյուրի խղճմտանքն է: Մյուսները պնդում են, որ Աստված հոգի է՝ ամեն ինչի մեջ թափանցող: Պլատոնն ու նրա հետետորդներն ընդունում են, որ Աստված անսկիզբ է, ամենայնի արարիչն ու հայրն է, բացի այդ՝ ընդունում են, որ Աստված եւ մատերիան անսկիզբ են, եւ որ վերջինը հավերժությամբ համահավասար է Աստծուն: Եթե Աստված անսկիզբ է, եւ եթե մատերիան էլ է անսկիզբ, ապա ուրեմն Աստված այլեւս ամենայնի արարիչը չէ, ինչպես կարծում են պլատոնականները, եւ խոսք չի կարող լինել նրա մենիշխանություն մասին, ինչպես որ նրանք ենթադրում են: Բացի այդ՝ Աստված, անսկիզբ լինելով, նաեւ անայլայլելի է, այդպես էլ մատերիան, եթե անսկիզբ է, պիտի միաժամանակ եւ անփոփոխելի լինի, եւ հավասար Աստծուն. քանզի ժամանակի մեջ սկզբնավորվածը փոփոխելի եւ փոխարկելի է, իսկ անսկիզբը՝ անփոփոխելի եւ անփոխարկելի: Խնչ մեծ բան է այն,

որ Աստված աշխարհն արարեր եղած նյութից: Այսպես է նաեւ վարպետի պարագայում. եթե մի տեղից նյութ ստացած լինի, դրանից կպատրաստի այն, ինչ ուզում է: Իսկ Աստծու զորությունն ի հայտ է գալիս այնտեղ, որ ոչնչից է արարում այն, ինչ կամենում է, ընդ որում՝ հոգի եւ շարժում շնորհելը, բացի Աստծուց, ուրիշ որեւէ մեկին հատուկ չէ: Մարդն ի վիճակի է ինչ-որ բան պատկերելու, բայց իր ստեղծագործությանը միտք, շունչ եւ զգացմունք տալ չի կարող: Այնինչ Աստված անհամեմատ ավելի զորավոր է՝ ստեղծելու բանականություն, շունչ եւ զգացմունք: Ինչպես որ այս ամենում է Աստված մարդուց ավելի զորավոր, այնպես էլ այն բանում, որ ոչնչից արարել ու արարում է եղած բաները, որքան եւ ինչպես կամենում է:

Ե. Ահա այսպես իրարամերժ են ձեր փիլիսոփաների եւ գրողների կարծիքները: Մինչդեռ երբ նրանք այդպես էին ասում, Հոմերոս բանաստեղծն այլ կերպ էր շարադրում ոչ միայն աշխարհի, այլեւ աստվածների ծագումը: Նա ասում է.

Օվկիանոսին, որից զարմն է աստվածների, մայր Թետիսին³,
որից սկիզբ են առնում համակ ծովը բոլոր գետերի հետ⁴:

Սույն խոսքերում նա դեռ ի հայտ չի բերում Աստծուն: Քանզի ո՞վ է, որ չգիտի, որ օվկիանոսը ջուր է: Իսկ թե ջուր է, ուրեմն Աստված չէ: Բայց Աստված, եթե ամենայնի արարիչն է, ինչպես եւ իրականում է, եւ ջրերի, եւ ծովերի հաստիչն է: Հետիոտնը նույնպես շարադրել է եւ աստվածների, եւ աշխարհի ծագումը:

Խոսելով այն մասին, որ աշխարհն արարված է, նա ի վիճակի չէր ասելու, թե ումից է այն առաջացել: Ի շարս այլոց՝ նա աստվածներ էր անվանում Կրոնոսին եւ նրա որդիներ Զեւսին, Պոսեյդոնին եւ Պլուտոնին, իսկ մենք գիտենք, որ նրանք աշխարհի ստեղծումից հետո են ի հայտ եկել: Նա նաեւ պատմում է, որ Կրոնոսը պարտվել էր Զեւսին՝ իր որդուն: Ահա նրա խոսքերը.

³ ՀՈՄԵՐՈՍ, Իլիական, հին հունարենից թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Գ. Մուրադյանի եւ Ա. Թոփչյանի, Երեւան, 2022, երգ ԺԴ., տ. 201: Հստ Հետիոտնի «Թեոգոնիա»-ի (տ. 132–137)՝ Օվկիանոսն ու Թետիսը, ինչպես մյուս տիտանները, ներառյալ Կրոնոսն ու Հեփեսոսը, Ուրանոսի եւ Գեայի զավակներն են (ՀՈՄԵՐՈՍ, Իլիական, ծնթ. 201, էջ 625):

⁴ ՀՈՄԵՐՈՍ, Իլիական, երգ ԻԱ., տ. 196:

«Ուժով հաղթեց հայր Կրոնոսին, լավ է բաշխել նա ամեն բան
Անմահների մեջ հավասար, ամենքն իրենց պատիվն ունեն»⁵:

*Ապա նա խոստում է Զեւսի դուստրերից, որոնց մուսաներ է կոչում եւ
խնդրում նրանց հայտնել իրեն, թե ինչպես է այդ ամենը կատարվել.*

«Ուրախացե՛ք, Զեւսի՛ դուստրեր, չճաղ երգե՛ր պարգևեցե՛ք,
Դրվատեցե՛ք անմահների սուրբ սերունդը հավերժական,
Նրանց, ովքեր ծնունդ առան Երկրից, Երկնից աստեղալից,
Մութ Գիշերից. նրանց, որոնց սնուցել է ծովը աղի:
Դուք պատմեցե՛ք, թե ինչպես են ծագել Հողը, աստվածները,
Այլեւո՞ծ ծովն իր մոլեգին կռակներով եւ գետերը,
Փայլատակող աստղերը եւ լայն Երկինքը մեր վերեւում,
Թե բարեգործ աստվածներից ով՝ ումից է ծնունդ առել,
Թե պատիվը, հարստությունն ինչպես նրանք բաժանեցին,
Թե առաջին անգամ ինչպես ապառաժոտ Օլիմպ էլան:
Ո՛վ Մուսաներ Օլիմպիոսյան, այդ ամենը ի սկզբանե
Ինձ պատմեցե՛ք ու ասացե՛ք, թե ով սկզբում ծնունդ առավ»⁶:

*Բայց ինչպե՞ս կարող էին այդ մասին իմանալ մուսաները, որոնք աշ-
խարհից ավելի երիտասարդ էին: Եւ ինչպե՞ս կարող էին Հեսիսդոսին
պատմել, երբ նրանց հայրը դեռ չէր ծնվել:*

*Զ. Հեսիսդոսն ինչ-որ առումով ենթադրում է, որ նյութը գոյություն
է ունեցել [ի սկզբանե], եւ հետեւյալ կերպ արտահայտվում աշխարհի
արարման մասին.*

«Առաջինը ծնվեց Քաոսն, իսկ այնուհետ ծնունդ առավ
Լայնակուրծ Գեան՝ հար հուսալի ապաստանը անմահների,
Որ տիրեցին Օլիմպոսի ձյունով ծածկված գագաթներին:
Ապա Երկրի խորքում ծնվեց մութ, լայնուղի Տարտարոսը,
Էրոսն ապա՝ գեղեցկագույնն աստվածներից հավերժական:
Անհաղթ է նա, բոլոր անմահ աստվածներին, նաեւ մարդկանց
Միշտ զրկում է արթուն մտքից ու կրծքի տակ տիրում սրտին...
Քաոսից սեւ Գիշերը եւ Էրեբոսը ծնունդ առան,
Իսկ Գիշերը Հեմերային ու Եթերին աշխարհ բերեց.
Հղիացավ նա սրանցով՝ մերձենալով Էրեբի հետ:
Գեան սկզբում ծնեց իրեն նիշտ հավասար Ուրանոսին,

⁵ ՀԵՍԻՈՒՊՈՍ, *Թեոգոնիա*, «Անտիկ միջնադարյան վերածննդի գրականություն», թարգմ.՝ Ա. Թոփչյան, Երեւան, 1990, տ. 73–74, էջ 420:

⁶ ՀԵՍԻՈՒՊՈՍ, *Թեոգոնիա*, տ. 104–115, էջ 421:

Որ աստղերով լի երկինքը ծածկի երկիրն ամեն կողմից
 Ու ապաստան լինի կայուն՝ աստվածներին երանելի:
 Ապա ծնեց նա սարերում հրապուրիչ Նիմփաներին,
 Որ ապրում են անտառախիտ լեռանց վրա, անձավներում:
 Ապա ծնեց ծովն անպտուղ՝ Պոնտոսը հաղթ ալիքներով.
 Զկենակցեց նա այս անգամ ոչ մեկի հետ: Այնուհետև,
 Ուրանի հետ մերձենալով, ծնեց նա խոր Օվկիանոսին»⁷:

Այս բանը շարադրելով՝ նա տակավին ցույց չի տալիս, թե այս ամենն ով է ստեղծել: Արդ, եթե ի սկզբանե կար քաոսը եւ նախագոյություն ուներ ինչ-որ մի անստեղծ մատերիա, ուրեմն, ով է, վերջապես, այն ստեղծել, կարգի ու տեսքի բերել: Ինքը՝ Նյոնթին է իրեն տեսք ու գեղեցկություն հաղորդել: Զեւսը ոչ միայն մատերիայից, այլեւ աշխարհից ու բազում մարդկանցից ավելի ուշ է երեւան եկել. այդպես է նաեւ հայր Կրոնոսի պարագայում: Թե՛, ավելի շուտ, եղել է մի մեծ զորություն, որն ստեղծել է այդ ամենը, այսինքն՝ Աստված, Որը զարդարել է այդ ամենը: Բացի այդ՝ պարզվում է, որ Հեսիսդոսը, ըստ ամենայնի, դատարկաբանի մեկն է, որն ինքն իրեն էլ է հակասում: Արդ, հիշատակելով երկիրը, երկինքն ու ծովը՝ ասում է, որ դրանցից են առաջացել աստվածները, իսկ աստվածներից՝ ինչ-որ սարսափելի մարդիկ՝ հար եւ նման աստվածներին, որոնք են՝ տիտանների, կիկլոպների, հսկաների, ինչպես նաեւ եգիպտական աստվածների կամ, ավելի ճիշտ, դատարկ մարդկանց սերունդը, ինչպես այդ մասին ասում է Հորապիոս կոչված Ապոլլոնիդոսն իր «Սեմենոտի» խորագիրը կրող գրքում եւ եգիպտական կրոնի ու թագավորների մասին պատմական իր այլ աշխատություններում:

Է. Անիմաստ բան է ինձ համար հելլենների անհեթեթ հեքիաթների շարադրումը Պլուտոնի՝ խավարի թագավորի, ծովում թաքնվող Պոսեյդոնի մասին՝ սիրահարված Մելանիպպեին, որը մարդկանց խժռող զավակ էր ծնել. անհեթեթ է նաեւ Զեւսի եւ նրա որդիների մասին ձեր գրողների կազմած ողբերգական ավանդազրույցների շարադրումը: Իրենք են, որ ներկայացնում են նրանց ծննդաբանությունները՝ ցույց տալով, որ նրանց մարդիկ, եւ ոչ թե աստվածներ են ծնել: Կատակերգու Արիստոփանսը «Թռչուններ» խորագրով կատակերգությունն մեջ, անդրադառնալով աշխարհի արարչությանը, ասում է, որ աշխարհն իր նախաստեղծ ծագումն ստացել է ձկից.

⁷ Անդ, տ. 116—133, էջ 421:

«Սեւաթույր գիշերը նախ ձու ծնեց»:

Բացի այդ՝ Սատիրոսը, պատմելով ալեքսանդրացիների տոհմի մասին, Պտղոմեոս կոչված Փիլոպատորից սկսյալ՝ ասում է, որ Դիոնիսոսն է այդ տոհմի նախահայրը եղել, որի պատճառով էլ Պտղոմեոսն է կազմում առաջին սերունդը:

Ահա թե ինչ է ասում Սատիրոսը.

«Դիոնիսոսից եւ փեստոսյան Ալթեիայից ծնվեց Դեինարան, նրանից եւ Զեւսի որդի Հերակլեսից՝ Հիլլոսը, նրանից՝ Կրեսփոնոսը, նրանից՝ Արիստոմաքոսը, նրանից՝ Տեմենոսը, նրանից՝ Քիսոսը, նրանից՝ Մարոնը, նրանից՝ Փեստոսը, նրանից՝ Աքայոսը, նրանից՝ Արիստոմիդոսը, նրանից՝ Քարոնը, նրանից՝ Քինոսը, նրանից՝ Թիրիմմեսը, նրանից՝ Պերդիքքոսը, նրանից՝ Փիլիպպոսը, նրանից՝ Ափրոնեսը, նրանից՝ Ալկեսեսը, նրանից՝ Ամյունտասը, նրանից՝ Վոկրասը, նրանից՝ Մենագրոսը, նրանից՝ Արսինոյան, իսկ նրանից եւ Լագյանից՝ Պտղոմեոս Սոտերը, նրանից եւ Վերենիկեից՝ Պտղոմեոս Փիլադելփոսը, նրանից եւ Արսինոյայից՝ Պտղոմեոս Եւերգեստեսը, նրանից եւ կյուրենյան արքա Մագասի դուստր Վերենիկեից՝ Պտղոմեոս Փիլոպատորը: Այսպիսին է Դիոնիսոսի եւ ալեքսանդրյան թագավորների միջեւ արյունակցությունը: Ուստի Դիոնիսոսյան ցեղում կան հետեւյալ տոհմերը՝ ալթեյանը՝ սերած Դիոնիսոսի նախկին կին Փեստոսի դուստր Ալթեայից. դեինարյան՝ սերած Դիոնիսոսի եւ Հերակլեսի կին Ալթեայից: Նրանք այլ տոհմանուններ էլ ունեն՝ Արիադնեի տոհմը Մինոսի հայրասեր⁸ դստեր եւ Դիոնիսոսի կնոջից, որը զուգավորվել էր նավավարի տեսք ընդունած Դիոնիսոսի հետ, փեստոսյան՝ Ալթեայի հայր Փեստոսից, փռանտոսյան՝ Դիոնիսոսի որդի Փռանտոսից, ստափիլոսյան՝ Դիոնիսոսի որդի Ստափիլոսից, էվենիոսյան՝ Դիոնիսոսի որդի էվենիոսից, մարոնյան՝ Արիադնեի եւ Դիոնիսոսի որդուց: Սրանք բոլորն էլ Դիոնիսոսի զավակներն են⁹»: Ասենք, որ եղել եւ ցայսօր էլ կան այլ տոհմանուններ՝ հերկուլեսյան՝ Հերկուլեսից, ապոլլոնիդոսյան եւ ապոլլոնցիներ՝ Ապոլլոնից, պոսեյդոնյան՝ Պոսեյդոնից, դիւսյան եւ դիոգենեսյան՝ Զեւսից:

Ը. Արդյոք հարկ կա՞ թվարկելու բազմաթիվ նմանօրինակ այլ անուններ ու ծննդաբանություններ: Այնպես որ մոլորվում են ձեր բոլոր գրող-

⁸ Այսպես անվանվել է հեգնաբար, քանզի Թեսեսին վարձահատույց լինելու համար դավաճանել էր հորը:

⁹ Սատիրոսի մասին տե՛ս GERARDUS JOANNES VOSSIUS, De historicis graecis libri tres, Lipsiae, 1838:

ները, քանաստեղծներն ու փիլիսոփաները, եւ մանավանդ՝ նրանք, ովքեր վստահում են նրանց: Նրանք իրենց աստվածների մասին հեքիաթներ ու հիմար ավանդազրույցներ են հյուսել, քանզի նրանց ոչ թե աստվածներ, այլ որպէս մարդիկ են ներկայացրել՝ ոմանց՝ հարբեցող, ոմանց էլ՝ շնացող ու մարդասպան: Իսկ աշխարհի ծագման մասին ավանդել են անհեթեթ եւ իրարամերժ պատումներ: Առաջին՝ ոմանք, ինչպէս վերը ցույց տվեցի, հայտարարեցին, որ աշխարհն արարված չէ, եւ պնդելով, որ աշխարհն անսկիզբ է, իսկ բնությունը՝ հավերժ, ասում են այն, ինչ հակասում է աշխարհն արարված համարողների տեսակետին: Բանն այն է, որ նրանց կարծիքը հիմնված է կռահումների եւ մարդկային ըմբռնման, բայց ոչ ճշմարտության վրա: Ոմանք ասում էին, որ Նախախնամություն կա, իսկ այլք մերժում էին նրանց վարդապետությունը: Արատոսն ասում է. «Սկսենք Զեւսից, որի անունը մենք՝ մարդիկս, երբեք չենք դադարում տալ. Զեւսով առլեցուն են փողոցներն ու հրապարակները մարդկանց, առլեցուն են ծովերն ու նավահանգիստները. ամենուր մենք օգտվում ենք Զեւսից: Մենք նրա ծնունդն ենք. նա իր ողորմությամբ մարդկանց բարօրություն է շնորհում եւ մղում նրանց աշխատանքի՝ հորդորելով կյանքի հոգսը քաշել. նա՛ է ասում, թե երբ է հողն առավել նպաստավոր եզների եւ բահի համար, երբ է հողը վարելու եւ սերմնացանության բարեպատեհ ժամանակը»¹⁰:

Արդ, ո՞ւմ հավատալ՝ Արատոսին, թե՞ Սոֆոկլեսին, որն ասում է.

«Նախախնամություն գոյություն չունի. ամենից ճիշտը բախտի բերմամբ ապրելն է՝ ով ինչպէս կարող է»¹¹:

Հոմերոսը, սակայն, այս հարցում էլ համամիտ չէ նրա հետ, քանզի ասում է.

«Զեւսը պակաս կամ ավելի կորովով է օժտում մարդկանց՝
Ինչպէս կուզի, որովհետեւ ամենից էլ հզոր է նա»¹²:

Իսկ Սիմոնիդեսն ասում է.

«Ոչ ոք՝ ո՛չ քաղաքը, ո՛չ մարդը, առանց աստվածների, առաքինություններ չեն ստացել. Աստված իմաստուն է, բայց մարդկանց միջեւ առանց ստի ոչինչ չի լինում»:

¹⁰ ARATUS, Phaenomena I. Bekker, Berlin, 1828, 1—9.

¹¹ ՍՈՖՈԿԼԵՍ, Էդիպուս արքա, տ. 978:

¹² ՀՈՄԵՐՈՍ, Իլիական, XX, 242:

Նույն բանն ասում է Եւրիպիդեսը.

«Առանց Աստծո՛ւ մարդկանց հետ ոչինչ չի պատահում»¹³:

Մենանդրոսն ասում է. «Մեր մասին, բացի Աստծուց, ոչ ոք չի հոգում»¹⁴:

Եւ կրկին Եւրիպիդեսն ասում է.

«Երբ Աստծուն հաճո է փրկել, Նա փրկության համար շատ միջոցներ կպարգեւի»¹⁵:

Մի այլ տեղ.

«Եթե Աստված կամենա, կփրկվես, թեկուզ ծեղիկի վրա նավելիս լինես»¹⁶:

Այսօրինակ բազում կարծիքներ են նրանք արտահայտել՝ մինչեւիսկ իրենք իրենց հակասելով: Աստծու նախախնամությունը մերժող Սոփոկլեսը մի այլ տեղ ասում է. «Մահկանացուն Աստծու հարվածից չի փախչի»¹⁷:

Բացի այդ՝ նրանք մերթ բազում աստվածներ էին ներմուծում, մերթ խոսում Աստծու մենիշխանությունից, երբ ոմանք ընդունում էին Նախախնամությունը, այլք՝ մերժում դրա գոյությունը: Ուստի Եւրիպիդեսն անում է հետեւյալ խոստովանությունը. «Լիահույս ուսումնասիրում ենք շատուշատ բաներ, բայց զուր ենք չարչարվում եւ ոչինչ էլ չգիտենք»¹⁸:

Այսպիսով՝ նրանք ահամա խոստովանում էին, որ ճշմարտությանը հասու չեն եղել. եւ ինչ էլ որ ասում էին, ասում էին դեւերի ներշնչանքով: Իրապես էլ, բանաստեղծներ Հոմերոսն ու Հիսիոդոսը, որոնց, ինչպես ասվում են, մուսաներն ենն ներշնչել, խոսում էին երեւակայության եւ պատրանքի ազդեցությամբ՝ ոչ մաքրամաքուր, այլ խաբեպատիր հոգու ներշնչանքով: Սրա հստակ ապացույցն այն է, որ դեւերով բռնվածները մինչեւ իսկ ներկայումս էլ են ճշմարիտ Աստծու անունով երգմնեցվում, եւ հենց իրենք էլ՝ այս սուտ հոգիները, խոստովանում են, որ իրենք դեւեր են՝ երբեմնի ներգործած այդ պոետների վրա: Այնուամենայնիվ, նրանցից ոմանք, հոգու սթափ վիճակի գալով, ասում էին մարգարեական խոսքերին համահունչ ինչ-ինչ բաներ, ինչը եւ որպես վկայություն է ծառայում

¹³ ԵՒՐԻՊԻԴԵՍ, Թիեստես:

¹⁴ Հատված Մենանդրոսի անհայտ ստեղծագործությունից:

¹⁵ Եւրիպիդեսի անհայտ ստեղծագործությունից:

¹⁶ Տողը Եւրիպիդեսի «Թիեստես» ստեղծագործությունից է:

¹⁷ Սոփոկլեսի անհայտ ստեղծագործությունից:

¹⁸ ԵՒՐԻՊԻԴԵՍ, Թիեստես:

հենց իրենց եւ բոլոր մարդկանց դեմ, զորօրինակ՝ Աստծու մենիշխանության, գալիք դատաստանի եւ այլ ճշմարտությունների հարցերում:

Թ. Բայց կային նաեւ Աստծու այրեր՝ լցված Սուրբ Հոգով, եւ ճշմարիտ մարգարեներ՝ հենց Աստծուց ներշնչված եւ իմաստնացած, որոնք ի վերուստ գիտություն, սրբություն եւ բարեպաշտություն էին ստացել: Հենց նրանք էլ Աստծու խոսնակների եւ Աստծու իմաստության անոթները լինելու պատվին արժանացան, ըստ որի էլ խոսեցին աշխարհի արարման եւ այլ ամենի մասին: Նրանք մարգարեանում էին ժանտախտի, սովի ու պատերազմի մասին: Եւ ոչ թե մեկը կամ երկուսը, այլ շատերն ի հայտ եկան տարբեր ժամանակներում հրեաների մեջ այնպես, ինչպես Սիբիլլան՝ հելլենների մեջ, եւ նրանց բոլորի խոսքերը համաձայն էին իրար թե՛ այն մասին, ինչ եղել էր իրենցից առաջ, թե՛ այն մասին, ինչ կատարվում էր իրենց օրոք, թե՛ այն մասին, ինչ կատարվում է այսօր մեր աչքի առաջ. եւ այդ իսկ պատճառով մենք վստահ ենք նաեւ ապագայի առնչությամբ, որ նույնպես կկատարվի, ինչպես եւ կատարվածները:

Ժ. Նախեւառաջ բոլոր մարգարեները միաձայն սովորեցրին մեզ, որ Աստված ամեն ինչ արարել է ոչնչից: Բանն այն է, որ ոչինչ համահավերժ չէ Աստծուն, այլ Ինքն Իր համար տեղ¹⁹ լինելով, ոչ մի բանի կարիք չունենալով եւ գոյություն ունենալով ժամանակից առաջ՝ կամեցավ ստեղծել մարդուն, որպեսզի ճանաչվի նրա կողմից, եւ հենց նրա համար էլ կանխատեսվեց աշխարհը: Նա, ով արարվել է, այս կամ այն բանի կարիքն ունի, իսկ Անսկիզբը ոչ մի բանի կարիքը չի զգում: Այսպես ուրեմն՝ Աստված, որ Բանն ուներ Իր իսկ մեջ²⁰, ծնեց Նրան՝ նախեւառաջ հայտնելով Նրան Իր իմաստության հետ միասին: Սույն Բանը Նրա համար Իր արարչության ի կատար ածողն էր, Ում միջոցով էլ արարեց ամեն ինչ: Բանն սկիզբ է կոչվում, որովհետեւ տիրում ու իշխում է ամենայնի վրա, ինչ իրենով է արարված: Նա Աստծու հոգի²¹, սկիզբ, իմաստություն, Բարձրյալի զորություն լինելով՝ իջնում էր մարգարեների վրա եւ նրանց շուր-

¹⁹ Քանի որ մի այնպիսի տարածություն գոյություն չունի, որը Նրանից մեծ լինեք եւ իր մեջ պարփակեք Նրան: Տե՛ս գլուխ Գ.: Նմանօրինակ արտահայտություն ունի նաեւ Հովհան Դամասկացին. տե՛ս «Ավանդություն ուղղափառ հաւատոյ», գր. Ա., գլ. ԺԳ.:

²⁰ Այստեղ Բան ասելով՝ նկատի ունի Աստծու Որդուն, իսկ իմաստության ներքո՝ Սուրբ Հոգուն, այսինքն՝ Սուրբ Երրորդության երկրորդ եւ երրորդ անձանց: Նրանց մասին Թեոփիլոսը խոսել է ԺԵ. եւ ԺԶ. գլուխներում, ինչպես եւ առաջին գրքի է. գլխում:

²¹ Այստեղ Աստծու հոգի ասելով՝ նկատի ունի ոչ թե Սուրբ Հոգու անձը, այլ Աստծու Որդու հոգեւոր էությունը:

Թերով բարբառում աշխարհի արարչագործության եւ այլ ամենի մասին: Արդ, աշխարհի արարման ժամանակ մարգարեներ չկային, բայց Աստծու Իմաստությունը [միշտ] Իր հետ էր, Նրա սուրբ Բանը՝ միշտ անբաժան Նրանից: Ուստի Բանը Սողոմոն մարգարեի շուրթերով այսպես է ասում. «Ես Նրա հետ էի, երբ Նա պատրաստում էր երկինքը... այն ժամանակ, երբ դնում էր երկրի ամուր հիմքերը, ես Նրա մոտ էի որպես գործավար»²²: Սողոմոնից շատուշատ տարիներ առաջ ապրած Մովսեսը կամ, ավելի ստույգ, Աստծու Բանը նրա՝ իբրեւ գործիքի միջոցով ասում է. «Ի սկզբանե ստեղծեց Աստված երկինքն ու երկիրը»²³: Նախ նա հիշատակում է սկիզբն ու արարչագործությունը, ապա եւ Աստծու անունը տալիս. քանզի չի կարելի զուր եւ աննպատակ գործածել Աստծու անունը: Արդ, Աստծու Իմաստությունը կանխատեսում էր, որ ոմանք դատարկաբանելու են եւ բազում գոյություն չունեցող աստվածներ ներմուծելու: Ուստի որպեսզի ճշմարիտ Աստվածն ընկալվեր Իր իսկ գործերից, եւ պարզ երեւար, որ Աստված Իր Բանով արարեց երկինքն ու երկիրն ու այն ամենը, ինչ կա նրանցում, ասաց. «Ի սկզբանե ստեղծեց Աստված երկինքն ու երկիրը»: Այնուհետեւ, խոսելով դրանց արարման մասին, ցույց է տալիս մեզ. «Երկիրն անձեւ ու անկազմ էր, խավար էր տիրում անդունդի վրա, եւ Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա»²⁴. սա՛ է մեզ նախեւառաջ ուսուցանում աստվածային Գիրքը՝ ինչ-որ առումով ցույց տալով, որ մատերիան, որից Աստված արարեց եւ կարգի բերեց աշխարհը, սկզբնավորվեց եւ ստեղծվեց Աստծուց²⁵:

ԺԱ. Արարչագործության սկիզբը լույսն է, քանզի լույսը տեսանելի է դարձնում արարվածը: Դրա համար է ասվում. «Եւ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եւ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը լավ է՝ ինքնին հասկանալի, որ մարդու համար է: Եւ բաժանեց լույսը խավարից, եւ Աստված լույսը ցերեկ կոչեց, իսկ խավարը կոչեց գիշեր: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր առաջին: Աստված ասաց. «Թող հաստատություն առաջանա ջրերի մեջ, եւ թող դա ջրերը բաժանի ջրերից»: Եւ եղավ այդպես: Աստված ստեղծեց հաստատությունը, որով Աստված հաստատության

²² Առակ. Ը. 27, 29:

²³ Ծննդ. Ա. 1:

²⁴ Ծննդ. Ա. 2:

²⁵ Սբ. Թեոփիլոսը Ծննդոց գրքի երկինք եւ երկիր արտահայտության մեջ տեսնում է նյութն ընդհանրապես, որից հետագայում ստեղծվեցին երկինքն ու երկիրը: Տե՛ս Սբ. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ, «Վեցօրյան», Ա., Բ. եւ ԺԱ.:

ներքեւում եղած ջրերն անջրպետեց հաստատութեան վրա եղած ջրերից: Աստված հաստատութեանը կոչեց երկինք: Աստված տեսավ, որ այն լավ է: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր երկրորդ: Աստված ասաց. «Թող երկնքի տակ գտնվող ջրերը հավաքվեն մի տեղ, եւ երեւա ցամաքը»: Եւ եղավ այդպէս. երկնքի տակի ջրերը հավաքվեցին մի տեղ, ու երեւաց ցամաքը: Աստված ցամաքը կոչեց երկիր, իսկ հավաքված ջրերը կոչեց ծով: Աստված տեսավ, որ լավ է: Աստված ասաց. «Թող երկիրն իր տեսակի ու իր նմանութեան սերմը պարունակող դալար բույս եւ իր տեսակի ու իր նմանութեան սերմը պարունակող, իր տեսակի միրգ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»: Եւ եղավ այդպէս. հողն ամբողջ երկրի վրա ցանելու սերմն իր մէջ պարունակող դալար բույս եւ իր տեսակի սերմն իր մէջ պարունակող, միրգ տվող ծառ աճեցրեց: Աստված տեսավ, որ լավ է: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր երրորդ: Աստված ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի հաստատութեան մէջ, որպէսզի լուսավորեն երկիրը եւ իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպէսզի ցույց տան տարվա եղանակները, տոնական օրերն ու տարիները, թող լինեն, ծագեն երկնքի հաստատութեան մէջ՝ երկիրը լուսավորելու համար»: Եւ եղավ այդպէս: Աստված ստեղծեց երկու մեծ լուսատուներ, մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպէս նաեւ՝ աստղեր: Աստված դրանք դրեց երկնքի հաստատութեան մէջ՝ երկիրը լուսավորելու համար, ինչպէս նաեւ ցերեկվա եւ գիշերվա վրա իշխելու եւ լույսն ու խավարը իրարից բաժանելու համար: Աստված տեսավ, որ լավ է: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր չորրորդ: Աստված ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանութեան շունչ ունեցող զեռուններ, եւ երկրի վրա ու երկնքի հաստատութեան մէջ թող թեւավոր թռչուններ լինեն»: Եւ եղավ այդպէս: Աստված ստեղծեց խոշոր կետեր, կենդանութեան շունչ ունեցող ամենայն զեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, եւ ամենայն թռչուններ՝ ըստ տեսակների: Աստված տեսավ, որ լավ է: Աստված օրհնեց դրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցրէ՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրա»: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր հինգերորդ: Աստված ասաց. «Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ եւ գազաններ իրենց տեսակներով»: Եւ եղավ այդպէս: Աստված ստեղծեց երկրի գազաններին իրենց տեսակներով, անասուններին իրենց տեսակներով եւ երկրի բոլոր սողուններին իրենց տեսակներով:

րով: Աստված տեսավ, որ դրանք լավ են: Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությունամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան, իշխեցէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Աստված ասաց. «Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը եւ իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների՝ բոլոր կենդանիների համար թող լինեն կեր»: Եւ եղավ այդպես: Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ լավ է: Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ՝ օր վեցերորդ: Այսպիսով՝ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը եւ կարգավորեց դրանք: Աստված վեցերորդ օրն ավարտեց արարչագործությունը եւ իր կատարած բոլոր գործերից հետո՝ յոթներորդ օրը, հանգստացավ: Աստված օրհնեց յոթներորդ օրը եւ սրբագործեց այն, որովհետեւ այդ օրն Աստված հանգստացավ իր այն բոլոր գործերից, որ սկսել էր անել²⁶:

ԺԲ. Սույն յոթնօրյա արարչագործությունը մարդկանցից եւ ոչ մեկը չի կարող հարկ եղած ձևով ո՛չ բացատրել, ո՛չ նկարագրել նրա ողջ աստվածային տնտեսությունը, թեկուզ հազար բերան ու հազար լեզու ունենար, նույնիսկ թեկուզ հազար տարի ապրած լինեիր այս աշխարհում, միեւնույնն է ի վիճակի չէր լինի պատշաճ կերպով այդ մասին ինչ-որ բան ասել Աստծու իմաստության գերազանց վեհության եւ հարստության պատճառով՝ այս վեցօրյա արարչագործությանը բնորոշ: Ընդօրինակելով սրան՝ շատ գրողներ փորձեցին ներկայացնել աշխարհի արարումը, եւ թեպետ աշխարհի արարումն ու մարդու բնությունը բացատրելիս օգտվում էին այս ձեռնարկից, սակայն ճշմարտությանը նման նշույլ իսկ չասացին: Իհարկե, այն, ինչ ասացին ձեր փիլիսոփաները, պատմիչներն ու բանաստեղծները, հավանաբար վստահարժան է նրանց խոսքի պաճուճաբանության պատճառով, սակայն շարադրանքի հիմարությունն

²⁶ Ծննդ. Ա. 3-Բ. 3:

ու նանրությունն ի հայտ են գալիս այն բանում, որ դրանցում բարբառանքը շատ է, իսկ ճշմարտություն դուրս-ինչ չափով էլ չկա, քանզի այն, ինչ հավանաբար նրանք ասել են ստուգաբար, միախառնված է մոլորությունը: Ինչպես մեղրի եւ գինու հետ խառնած մահաբեր թույնը ողջ այդ խառնուրդը դարձնում է վնասակար եւ ոչ պիտանի, այդպես էր նրանց պերճախոսությունը զուր չարչարանք է կամ, ավելի շուտ, կործանարար է նրանց համար, ովքեր հավատում են դրան: Բացի այդ՝ նրանք խոսում էին նաեւ յոթներորդ օրվա մասին, որի անունը բոլորն էլ գործածում էին, բայց նրանց մեծամասնությունը չէր հասկանում. այն, ինչ հրեաները շաբաթ են կոչում, հելլեններեն թարգմանվում է՝ հեբդոմաս (ἑβδομάς), որը գործածում է հանուր մարդկային ցեղը, իսկ թե ինչ պատճառով է այդպես անվանվում, ոչ ոք չգիտի: Իսկ ինչ վերաբերում է Հեսիոդոսի այն պատումին, ըստ որի՝ Քաոսից են ծնվել Էրեբոսը, Երկիրն ու Էրոսը, որոնք տիրում են թվացյալ աստվածներին եւ մարդկանց, ապա դա սին է, անհեթեթ եւ խորթ ամենայն ճշմարտությանը, քանզի Աստված չի կարող հաճույքից պարտված լինել, ինչպես որ ողջախոհ մարդիկ են ձեռնպահ մնում ամենայն ամոթալի հաճույքից եւ հոռի ցանկությունից:

ԺԳ. Իսկ այն, ինչ Հեսիոդոսը պատմում է աշխարհի արարչագործության մասին՝ երկրային բաներից սկսյալ, մարդկային միտք է՝ Աստծու վերաբերմամբ ոչ հարգալից ու անզոր: Մարդը, ներքեւում գտնվելով, իր տան կառուցումն սկսում է հողից եւ չի կարող հարկ եղած ձեւով այն վեր խոյացնել եւ տանիքը կապել, եթե նախ տան հիմքը չզցի: Իսկ Աստծու զորությունը բացահայտվում է այն բանում, որ Նա իրերն արարում է ոչնչից եւ այնպես, ինչպես հաճո է Իրեն: Քանզի. «Ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարավոր է»²⁷: Ըստ այդմ՝ մարգարեն էլ է ասում, որ ամեն բանից առաջ Նա տանիքի պես երկինքն արարեց. «Ի սկզբանե, — ասում է նա, — Աստված ստեղծեց երկինքը»²⁸, այսինքն՝ Սկզբի միջոցով էր երկինքն արարվել, ինչպես եւ վերն ասացի²⁹: Իսկ երկիր է կոչում այն, ինչ որոշ առումով որպես գետին ու հիմք է ծառայում, անդունդը՝ բազում ջրեր ու խավար, քանի որ Աստծու ստեղծած երկինքը տանիքի պես ծածկում էր ջրերը հողի հետ միասին, իսկ հողին, որ շրջում էր ջրերի վրա, այն է, ինչ Աստված շնորհեց արարչությունը՝ կենդանաց-

²⁷ Դուկ. ԺԸ. 27:

²⁸ Ծննդ. Ա. 1:

²⁹ Տէս գլ. Ժ.:

նեղու համար, ինչպես մարդուն՝ հոգի՝ միավորելով նուրբը նուրբի հետ (քանզի հոգին, ջուրն էլ նուրբ են), որպեսզի հոգին սնի ջրին, իսկ ջուրը, հոգու հետ միասին ամենուր թափանցելով, սներ ողջ արարչությանը: Այս միասնական հոգին՝ հար եւ նման լույսին, գտնվում էր ջրի եւ երկնքի միջեւ, որպեսզի որեւիցե ձեւով խավարը չհավեր երկնքին՝ Աստծուն շատ մոտ, նախքան Աստված կասեր. «Թող լույս լինի»: Այսպես ուրեմն՝ երկինքը՝ իսկը կամար, պարուրում էր այնժամ մեծակտորի նման ողջ նյութեղեն զանգվածը: Իսկ մի այլ մարգարե՝ Եսայի անվամբ, երկնքի մասին ասաց. «Աստված արարել է երկինքն ինչպես կամար, ձգել՝ ինչպես վրան ապրելու համար»³⁰: Այդ իսկ պատճառով Աստծու հրամանը, այսինքն՝ Նրա Բանը, որ ինչպես մոմը պարփակված էր սենյակում, լուսավորեց երկնատակը՝ աշխարհից առանձին արարելով լույսը. «Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց գիշեր»³¹, քանզի իրավամբ մարդը չէր կարող լույսը ցերեկ կոչել կամ խավարը՝ գիշեր, ոչ էլ այլ տեսակների անուններ տալ, եթե նա այդ անվանումներն Արարիչ Աստծուց ստացած չլիներ:

Սուրբ Գիրքն աշխարհի արարման իր պատումի ամենասկզբում խոսում է ոչ թե այն հաստատության մասին, որը մենք տեսնում ենք, այլ մեկ ուրիշ երկնքի մասին՝ մեզ համար անտեսանելի, ըստ որի էլ՝ մեզ տեսանելի երկինքը կոչվեց հաստատություն, եւ որի մեջ պահվում է ջրերի կեսը, որպեսզի անձրեւի, տարափի եւ ցողի ձեւով ծառայի մարդկությանը: Ջրի մյուս մասը թողնվեց երկրի վրա՝ գետերի, աղբյուրների ու ծովերի համար: Երբ այսպես ջուրը ծածկում էր երկիրը, հատկապես երկրի խորախոր տեղերը, Աստված Իր Բանի միջոցով հրամայեց ջրերին կուտակվել մի տեղում եւ ցամաքին երեւալ, որն առաջ անտեսանելի էր: Երկիրը տեսանելի դարձավ, բայց դեռ անկազմ, չձեւավորված էր: Աստված երկիրը բարեկարգեց եւ զարդարեց տեսակ-տեսակ խոտերով, սերմերով ու բույսերով:

ԺՂ. Ապա քննիր դրանց բազմազանությունը, անզուգական գեղեցկությունն ու բազմաքանակությունը, թե ինչպես են իրենցով ներկայացնում հարությունը՝ բոլոր մարդկանց գալիք հարության պատկերով: Ո՞վ չի զարմանա՝ տեսնելով, որ թզի հատիկից թզենի է աճում, կամ այլ

³⁰ Հմմտ. Եսայի Խ. 22:

³¹ Ծննդ. Ա. 5:

փոքրագույն սերմերից՝ վիթխարի ծառեր: Իսկ ծովն աշխարհի որոշ նմանությամբ է մեր առջեւ հառնում: Արդ, ինչպես ծովը վաղուց ցամաքած կլիներ իր աղիության պատճառով, եթե իր մեջ չընդուներ գետերի եւ աղբյուրների ջրերը, այդպես էլ աշխարհը վաղուց կործանված կլներ չարության եւ նրանում բազմապատկվող մեղքերի հետեւանքով, եթե Աստծու եւ մարգարեների օրենքները չգործեին, որոնցից քաղցրություն, գթասրտություն, արդարություն եւ Աստծու սուրբ պատվիրանների վարդապետություն չբխեին: Եւ ինչպես ծովում մարդաբնակ կղզիներ կան՝ առատ զուլալ ջրերով ու պտուղներով, դալար վայրեր ու նավահանգիստներ ունեցող, որոնցում ապաստանել կարող են ծովամորրիկների ենթարկվածները, այդպես էլ Աստված մեղքերով տակնուվրա եղած ու ալեկոծված աշխարհին ժողովատներ է տվել՝ սուրբ եկեղեցիներ կոչվող, որոնցում, ինչպես բարեկարգ նավահանգիստներում, պահպանվում է ճշմարտության վարդապետությունը, որոնց դիմում են փրկվել ցանկացողները՝ հենց որ ճշմարտություն սիրողներ դառնան եւ ցանկանան խուսափել Աստծու ցասումից ու դատաստանից:

Եւ ինչպես որ այլ կղզիներ էլ կան՝ ապառաժ, անջրդի, ամալի, վայրի գազաններով վիստացող ու անմարդաբնակ, վտանգավոր նավարկության համար ու փոթորկալից, որոնց բախվելով եւ ենթարկվելով՝ խորտակվում ու կործանվում են ափերին մոտեցող նավերը, այդպես էլ կան կեղծ ուսմունքներ՝ հերձվածներ, որոնք կործանում են իրենց հարողներին:

Արդ, դրանք չեն առաջնորդվում ճշմարտության խոսքով, այլ ինչպես ծովահենները, որոնք լեփ-լեցուն ուղեւորներով³² նավերը դիտավորությանմբ բախում են այդ վերոհիշյալ տեղերին, որպեսզի կործանեն նրանց, այդպես էլ պատահում է նրանց հետ, ովքեր շեղվում են ճշմարտությունից. նրանք իրենց իսկ մոլորության պատճառով էլ կործանվում են:

ԺՆ. Չորրորդ օրն ստեղծվեցին լուսատուները: Աստված Իր կանխիմացությամբ գիտեր բարբաջանքներն ունայն փրկիստփաների, որոնք իրենց աստվածամերժության մեջ պիտի ասեին, որ ամենայն երկրային բարիք լուսատուների ծնունդն է. այդ իսկ պատճառով, որպեսզի ճշմարտությունը հստակ երևար, բույսերն ու սերմերը ստեղծվեցին նախքան լուսատուները, քանզի հետագայում ստեղծվածը չի կարող ստեղծել այն, ինչ նախորդում է իրեն: Սա իր մեջ մեծ խորհրդի պատկեր է ամփոփում:

³² Այսինքն՝ ճանապարհորդները, որոնք ծովահենների նավերն էին նստել՝ որեւէ վատ բան չկասկածելով (Մարան):

Արդ, արեգակն Աստծու, իսկ լուսինը մարդու պատկերն է: Եւ ինչպես որ արեգակն է իր գորուծյամբ ու փառքով գերազանցում լուսնին, այդպես էլ Աստված գերազանցելով գերազանցում է մարդուն. եւ ինչպես արեգակն է առանց նվազելու միշտ բոլորածիր, այդպես էլ Աստված է միշտ կատարյալ՝ լի ամենայն գորուծյամբ, բանականությամբ, իմաստությամբ եւ ամենայն բարությամբ: Իսկ լուսինը մարդու պատկերն է՝ ամեն ամիս փոքրանալով եւ ասես մահանալով, ապա կրկին ծնվելով եւ մեծանալով՝ գալիք հարությունը խորհրդանշելով:

Նույն կերպ էլ լուսատուներից առաջ ստեղծված երեք օրերն են [Սուրբ] Երրորդության³³ Աստծու, Նրա Բանի եւ Նրա իմաստության պատկերը խորհրդանշում: Իսկ չորրորդ օրը խորհրդանշում է մարդու պատկերը, որը լուսի կարիք ունի, այնպես որ գոյություն ունեն՝ Աստված, Բան, իմաստություն եւ մարդ: Այդ իսկ պատճառով լուսատուներն արարվեցին չորրորդ օրը: Աստղերի դասավորությունն էլ է խորհրդանշում արդարների, բարեպաշտների եւ Աստծու օրենքներին ու պատվիրաններին հետեւողների տարբեր կարգերը: Արդ, ամենից լուսավոր ու ամենից պայծառ աստղերը մարգարեների խորհրդանիշներն են, որի պատճառով էլ անշարժ են, այսինքն՝ տեղից տեղ չեն տեղափոխվում: Այլ՝ նվազ պայծառ աստղերն արդար մարդկանց խորհրդանիշներն են: Թափառական եւ տեղից տեղ շարժվող այսպես կոչված մոլորակներն իրենցով խորհրդանշում են նրանց, ովքեր հեռանում են Աստծուց եւ Նրա օրենքներից ու պատվիրաններից:

ԺԶ. Հինգերորդ օրը ջրից կյանքի կոչվեցին կենդանիները, որոնց միջոցով նույնպես ի հայտ է գալիս Աստծու բազմաբովանդակ իմաստությունը: Արդ, ի՞նչ կարող է հաշվել դրանց բազմաքանակությունն ու բազմազանությունը: Ընդ որում՝ Աստված օրհնեց ջրից ստեղծվածներին, որպեսզի դա էլ նշան ծառայի այն բանի, որ ճշմարտությանը ձեռնամուխ եղող մարդկանց Աստված վերածնում եւ օրհնում է, որ ապաշխարեն եւ մեղքերի թողություն ստանան վերածննդի ջրի ու լվացման միջոցով: Իսկ կետերն ու գիշատիչ թռչուններն ազա՜հ եւ հանցագործ մարդկանց նմանության պատկերն են: Արդ, ինչպես լողացող եւ թռչող արարածների մեջ, որոնք թեեւ նույն ծագումն ունեն, կան այնպիսիք, որոնք ապրում են ըստ իրենց բնության եւ չեն նեղացնում իրենցից ավելի թույ-

³³ Երրորդություն բառն առաջին անգամ գործածում է Եկեղեցու հայրերից Ս. Թեոփիլոսը:

լերին, այլ Աստծու օրենքին հավատարիմ մնալով՝ սնվում են երկրային բույսերով, իսկ դրանցից որոշ տեսակները, Աստծու օրենքը խախտելով գիշակերությունից, նեղացնում են իրենցից ավելի թուլներին, այդպես էլ Աստծու օրենքը պահող արդար մարդիկ ոչ մեկին տհաճություն եւ նեղություն չեն պատճառում, ապրում են սուրբ եւ բարեպաշտ կյանքով, իսկ ագահ, մարդասպան եւ անաստված մարդիկ հար եւ նման են կետերի, գազանների եւ գիշակեր թռչունների, որովհետեւ միմիայն սնվում են իրենցից թուլներով: Այդ էլ ասենք, որ ձկների եւ սողունների ցեղը, թեեւ արժանացավ Աստծու օրհնությանը, սակայն ոչ մի առանձնահատուկ առավելություն չստացավ:

ԺԷ. Վեցերորդ օրն Աստված ստեղծեց շորքոտանի կենդանիներին, գազաններին ու սողուններին, բայց չօրհնեց նրանց՝ պահպանելով նրանց մարդու համար, որին մտադիր էր ստեղծել վեցերորդ օրը: Չորքոտանի կենդանիներն ու գազանները նույնպես խորհրդանշն են այն մարդկանց, որոնք չեն ճանաչում Աստծուն, ապրում են ամբարիշտ կյանքով, խորհում երկրայինի մասին եւ չեն ապաշավում: Արդ, անօրենությունից հետ կանգնողներն ու բարեպաշտ կյանքով ապրողները խիստ նման են վեր խոյացող թռչուններին՝ խորհելով վերինի մասին եւ հաճելի լինելով կամքին Աստծու: Իսկ Աստծուն չճանաչողները եւ ամբարշտաբար ապրողները նման են թռչունների՝ փետուրներ ունեցող, բայց դեպի վեր թռչել եւ Աստծու բարձունքներում ճախրել չկարողացողներին: Այսպիսի մարդիկ, թեեւ մարդկանց անուն ունեն, բայց իմաստակում են ոչ պիտանիի եւ երկրայինի շուրջ՝ մեղքերով ծանրաբեռնված: Գազանները (θηρία) իրենց անունն ստացան վայրենանալու (από τ ον θηριονσδαι), այլ ոչ թե այն պատճառով, որ ի սկզբանե էին չար կամ թունավոր, քանզի ի սկզբանե Աստծու ձեռամբ ոչ մի չար բան չէր ստեղծվել, եւ ամեն ինչ գեղեցիկ էր: Մեղքը մարդու, սակայն, ամեն ինչ փչացրեց, քանզի մարդու հանցանքի հետ նրանք էլ զանցառեցին: Եթե տանտերն իրեն լավ է պահում, ապա անխուսափելիորեն ծառաներն էլ են բարեպաշտ կյանքով ապրում, իսկ եթե տերը մեղանչի, ապա ծառաներն էլ նույնպես կմեղանչեն: Նույն կերպ էլ պատահեց այն, ինչ պատահեց, մարդու մեղանչմամբ, որն ամենայնի տերն է, նրան ծառայող արարածներն էլ հակվեցին չարին: Բայց երբ մարդը կրկին դառնա իր բնությանը բնորոշ վիճակին, այդժամ կենդանիներն էլ կվերականգնվեն իրենց հեղուկյան նախասկզբնական պատկերի մեջ:

ԺԸ. Ինչ վերաբերում է մարդու արարմանը, ապա դրա նկարագրումը մարդու ընդունակությունից վեր է, թեպետեւ Սուրբ Գրքի՝ դրան առնչվող պատումը կարճ է: «Մարդ ստեղծենք մեր պատկերով ու նմանությանամբ» խոսքով Աստված նախեւառաջ ցույց է տալիս մարդու արժանապատվությունը: Ամեն ինչ խոսքով ստեղծելով՝ Նա կարծես թե այդ ամենը նվազ կարեւոր էր համարում, եւ միմիայն անմահ մարդու արարումն է Իր ձեռքերին վայել գործ համարում: Ապա ասես օգնության կարիք զգալով՝ Աստված ասում է. «Մարդ ստեղծենք մեր պատկերով եւ նմանությանամբ»: Բացի Իր Բանից եւ Իր Իմաստությունից՝ Նա «ստեղծենք»-ը մեկ ուրիշի չի ասում: Մարդ արարելով եւ օրհնելով նրան առ այն, որ բազմանա եւ լցնի երկիրը՝ Աստված ամեն ինչ հնազանդեցրեց նրա իշխանությանն ու տիրապետությանը՝ նախապես նրա համար որպես սնունդ սահմանելով երկրային պտուղներից, սերմերից, [ուտելի] խոտաբույսերից եւ բանջարեղենից՝ միաժամանակ եւ կենդանիների համար սահմանելով մարդու հետ նույն սնունդն ունենալ եւ սնվել բոլոր երկրային բույսերով:

ԺԹ. Այսպիսով՝ Աստված, վեցերորդ օրն ավարտին հասցնելով երկնքի եւ երկրի արարումը եւ այն ամենը, ինչ կա նրանցում, «Իր կատարած բոլոր գործերից հետո՝ յոթներորդ օրը հանգստացավ»: Ապա Սուրբ Գիրքն իր՝ առաջ ամենայն ասածն այսպես է ի մի բերում. «Այս է երկնքի եւ երկրի արարչության պատմությունը: Այն օրը, երբ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, երկրի վրա դեռ ոչ մի բանջար վայրի չէր բուսել, դեռ ոչ մի դաշտային բույս չէր աճել, որովհետեւ Տեր Աստված անձրեւ չէր տեղացրել երկրի վրա, եւ մարդ չկար, որ մշակեր հողը»³⁴: Սույն խոսքերով Գիրքը մեզ ցույց է տալիս, որ այն ժամանակ երկիրը ոռոգվում էր աստվածային աղբյուրից, եւ կարիքը չկար, որ մարդը մշակեր հողը, քանզի Աստծու հրամանով երկիրն ամեն ինչ ինքնին աճեցնում էր, որպեսզի մարդը չկբեր աշխատանքի ծանր բեռան տակ: Իսկ որպեսզի պարզ երեւար մարդու արարումը՝ ի կանխումն մարդկանց միջեւ ծագելիք հնարավոր անվերջանալի վիճաբանությունների՝ Աստծու՝ «մարդ ստեղծենք» խոսքի շուրջ, ինչը դեռ ցույց չէր տրվել, Սուրբ Գիրքը մեզ հետեւյալ խոսքերով է ուսուցանում. «...աղբյուր էր բխում երկրից եւ ոռոգում ողջ երկիրը, եւ Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդա-

³⁴ Մինդ. Բ. 4–5:

նության շունչ փչեց, ու մարդը եղավ կենդանի հոգի»³⁵: Այդ է պատճառը, որ հոգին շատերն անմահ անվանեցին: Մարդ արարելիս Աստված նրա համար արեւելյան կողմերում մի ապրելավայր ընտրեց՝ գեղեցիկ լույսով պատված, մաքրամաքուր կայծկլտող օդով, բազմազան բուսականությամբ հարուստ, եւ այդտեղ էլ հաստատեց մարդուն:

Շարունակելի

Ռուներենից թարգմանեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ



³⁵ Ծննդ. Բ, 6–7:

Տ. ԱՆԱՆԻԱ ԱՔԵՂԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միանձնացյալ կրոնավորները՝ վանականները, Եկեղեցում կուսակրոն աշխատանքներ են, որ նվիրապետության մաս չեն կազմում, բայց իրենց կոչումով եւ ուխտով նախապատիվ են հավատավոր ժողովրդի պարզ համայնքից: Ուստի վանականները, ի տարբերություն ձեռնադրված հոգեւորականների, նվիրապետական աստիճան չունեն. նրանց տրված չէ օծված հոգեւորականությանը վերապահված Ս. Խորհուրդներն ու ծիսական արարողությունները կատարելու իշխանությունը: Կրոնավորական վիճակի մեջ մտնելով՝ վանականները որոշակի հանձնառություն է ստանձնում, որոնց համաձայն պետք է կենցաղավարեն: Վանականությանը վերաբերող առաջին կանոնների կազմումը կապված է եգիպտական հայրերի, հատկապես Պախոմիոսի անվան հետ, որին է պատկանում վանական առաջին կանոնադրության մշակումը՝ Տաբենիայում իր հիմնած վանքի համար (320 թ.)¹: Եկեղեցական պատմագրությունը Պախոմիոսից հետո Ս. Բարսեղ Մեծին (329–379 թթ.) է ճանաչում հեղինակ վանական կանոնադրության, որը կիրարկվել է Արեւելյան բոլոր Եկեղեցիներում:

Հայ Եկեղեցու վանական հաստատություններում որպես կանոնադրություն դարեր ի վեր Ս. Բարսեղի հեղինակածներն են գործածվել: Այս մասին է վկայում Ստեփանոս Ասողիկ Տարոնեցին իր «Տիեզերական պատմություն» աշխատության՝ Սեւանա վանքին նվիրված հատվածում:

¹* Ստացվել է 8.12.2022, գրախոսվել է 26.12.2022: Էլ. հասցե՝ hayranania@gmail.com:

² Պախոմիոսի կանոնները պահպանվել են միայն Հերոնիմոս Երանելու կատարած լատիներեն թարգմանությամբ. տե՛ս J. E. GOEHRING, Pachomius The Great, edited by Philip F. Esler, The Early Christian World, second edition, New York, 2017, էջ 1022. Կ. Դ. ԴՐՈԲՆԵՐ, Patrologia, էջ 471. «Творения блаженного Иеронима», ч. 4, Киев, 1880, էջ 53–57. W. HARMLESS, Desert Christians, էջ 117, “Pachomiana Latina, Regle et epîtres de S. Pachome, Text latin de S. Jerome, per Dom Amand Boon, Praefatio Hieronymi”, Bruxelles, 1932:

Նա նշում է, որ Մաշտոց Եղիվարդեցին Սեւանա կղզում միաբանություն հիմնելիս առաջնորդվել է Ս. Բարսեղ Մեծի կանոններով. «Ժողովեցան եղբարց բազմութիւն, կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսղի»³: Միեւնույն պատմիչն ընդգծում է, որ երբ վանական կյանքը Հայաստանում վերստին սկսեց վերելք ապրել, ու մի շարք վանքեր հիմնադրվեցին, այդ միաբանությունները եւս Ս. Բարսեղի կանոններն էին գործածում. «Յայսմ ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց: Եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեացք սիրովն Քրիստոսի:Կանոն կարգի ունելով զսահմանադրութիւն սրբոյն Բարսղի հայրապետին Մեծի»⁴: Աշոտ Գ. Ողորմած Թագավորի օրոք կառուցված Հաղպատի եւ Սանահինի վանքերը նույնպէս այդ կանոնադրությունն են ունեցել. «Յաւուրս սորա շինեցան կրօնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ եւ Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց Շ-ոց»⁵:

Այսպիսով՝ հայ վանական համակեցության հիմնական եւ առաջնային ուղեցույց-աղբյուրը Ս. Բարսեղի կանոնադրությունն է: Այն բաղկացած է ընդարձակ եւ համառոտ կանոնախմբերից, որոնցից առաջինը գրվել է 360-ական թթ., իսկ հետագայում համալրվել համառոտ կանոններով: Հայտնի է, որ Ս. Բարսեղ Մեծն ի մոտո վանական կյանքին հաղորդակից լինելու նպատակով այցելել է Եգիպտոս, Պաղեստին, Ասորիք: Ուստի միանգամայն բնական է, որ նրա կանոնները կրում են եգիպտական անապատականների ճգնակեցական կարգերի, հատկապէս Անտոն Մեծի վարքի ու խրատների, Պախոմիոսի կազմած կանոնադրության ազդեցությունը⁶: Ս. Բարսեղ Մեծի կանոնների հայերեն բնագիրը, որտեղ, որպէս մեկ ամբողջություն, զետեղված են «Ընդարձակ» եւ «Համառոտ» կանոնները, «Հարցողաց գիրք» անվամբ է հայտնի: Գիրքն սկսվում է հե-

³ «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 160:

⁴ Անդ, էջ 173–174:

⁵ Անդ, էջ 181:

⁶ Sĕu H. R. DROBNER, նշ. աշխ., էջ 475. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV–VIII դդ.), Բ. լր. հրատ., Երեւան, 2020, էջ 100. ԵԶՆԻԿ ԱՐՔ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայրաբանություն, մաս Բ., Երեւան, 2018, էջ 110–111:

ղինակի՝ ճգնակյաց կրոնավորներին ուղղված ճառով, որին հաջորդում է կանոնների համար գրված նախաբան-ներածությունը: Կանոնները բաղկացած են 361 հարցուպատասխանից, որոնցից առաջին քառասունչորսը (Ա.—ԽԴ.) «Ընդարձակ» կանոններն են, իսկ մնացյալը (ԽԵ.—ՅԿԱ.)՝ «Համառոտ»-ները: Վերջում կցված է վանականներին ուղղված եւս տասնմեկ համառոտ կանոն⁷:

Ս. Բարսեղ Մեծի վանական կանոնադրությունից զատ՝ վանականներին առնչվող կանոնական թելադրություններ կան «Կանոնագիրք Հայոց»-ի տարբեր կանոնախմբերում: «Կանոնագիրք Հայոց»-ում վանական կյանքին, միայնակեցությունը վերաբերող կանոնները մեծ քանակությամբ չեն կազմում: Պատճառն այն է, որ Ս. Բարսեղ Մեծի կանոնական հրամաններն արդեն իսկ բավական էին վանական կենցաղավարությունը կարգավորելու համար, ուստի մեր հայրապետները միայն առանձին հարցերի են անդրադարձել: Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում» եւս նշում է, որ վանականներին վերաբերող կարգերն արդեն Ս. Բարսեղը սահմանել է. «Կարգ ոգւոց դատաստանաց եւ հրահանգ բարեաց ի սրբոյն, բաւականապէս եղբարց եւ նոցունց հարց, եղեալ է ի Բարսղէ»⁸: Կանոնական առումով բավականին կարելորդ են «Յաճախապատում ճառեր»-ի ԻԳ. ճառը՝ «Երանելոյն սրբոյն Գրիգորի խրատք ճգնաւորաց եւ ցոյցք հանդիսից, որ յառաքինութիւն յորդորեն», եւ Ս. Ներսէս Դ. Շնորհալի հայրապետի «Թուղթ ընդհանրական»-ում կրոնավորներին ուղղված՝ «Առ կրօնաւորս խարազանազգեացս՝ որ ի վանորայս» խրատը⁹:

Բ. Ս. ԲԱՐՍԵՂ ՄԵԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Վանական կենցաղավարությունը, ինչպես տեսնում ենք «Գիրք հարցողաց»-ում, Ս. Բարսեղ Մեծի համար պարզապես հեռացում կամ հրա-

⁷ Տե՛ս «Basilio Di Cesarea. Il Libro Delle Domande (Le Regole)», edito da Gabrirla Uluhogian, (CSCO vol. 536, Scriptores Armeniaci, t. 19), Lovanii, 1993. Ս. ԱՆԱՍՅԱՆ, Հայկական մատենագիտություն, Ե.—ԺՀ. դդ., հտ. Բ., Երեւան, 1976, էջ 1361—1663:

⁸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Գիրք Դատաստանի, Երեւան, 1975, էջ 33: Հետաքրքրական է, որ «Դատաստանագրքի» Բ. խմբագրության մեջ Ս. Բարսեղ Մեծի անվան հետ նաեւ Ս. Սահակ Պարթեւի անունն է նշված. «Եղեալ է սրբոյն Սահակայ եւ Բարսղէ». տե՛ս «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», աշխ.՝ Վահան վրդ. Բատասմեանցի, Վաղարշապատ, 1880, էջ 85:

⁹ «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ ճառս յաճախապատումս եւ լուսաւոր վարդապետութիւնս յաղագս աւգտի լսողաց», «Մատենագիրք Հայոց», հտ. Ա., Անթիլիաս—Լիբանան, 2003, էջ 128—137. Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, աշխ.՝ է. Բաղդասարյանի, Երեւան, 1995:

ժարում չէ աշխարհից, այլ օրհնյալ մի միջոց, հնարավորություն կյանքի այս ճանապարհով, որ է վանական կանոնների կիրառում. անձնուրացություն, մեղքի դեմ պայքար, սուրբգրային պատվիրանների կատարում եւ այլն հասնելու բուն նպատակին՝ գերագույն օրհնությանը՝ Աստծու հետ միություն, Փրկչին նմանակցություն:

Ս. Բարսեղ Մեծը գրում է, որ միայնակյացը պարտավոր է ուրանալ սեփական անձն ու մերժել սեփական կամքը, քանզի հանուն Քրիստոսի մեռնելու ցանկությունը, երկրավոր կյանքում երկրավոր անդամների մեռելությունը, ամեն տեսակի վշտերի հաղթահարումն ու այժմյան կյանքի հանդեպ աննախանձ լինելը նշանակ են Քրիստոսի խաչն առնելուն, որով եւ մարդու կենցաղային հոգսերի ու նորամուտ սովորությունների խափանումն ենք տեսնում¹⁰: Ս. Հայրապետը կարգադրում է, որ միաբանության շարքերը մտնելու եւ լիարժեք վանական կյանքով ապրելու համար սկսնակը նախ աշխարհից պետք է հրաժարվի՝ «մերկանալով զհին մարդն հանդերձ գործովք իւրովք, զապականեալն ցանկութեամբ խաբեութեանն»¹¹: Ինքնին հասկանալի է, որ այս տեսակի հեռացումն աշխարհից եւ մերկացումը հին մարդուց ակնկալում են հրաժարում մարմնավոր կրքերից, չարիք բերող սովորություններից, ինչպես նաեւ աշխարհիկ կապերից՝ բարեկամներից, ընկերներից ու մարդկային մտերմությունց: Վանականից ակնկալվում է նաեւ ողջախոհ համակեցություն միաբանակից եղբայրների հետ՝ հարմարեցնելով իր ծառայությունը հոգուտ միաբանության, ինչպես նաեւ ողջախոհ հնազանդություն իր առաջնորդին¹²:

Վանական կյանքում մեղքի եւ գայթակղությունների դեմ պայքարը հույժ կարեւոր է, որովհետեւ մեղքը Տիրոջից հեռացման պատճառ է դառնում, ուստի պետք է ամենօրյա հետեւողական պայքար մղել մեղքի դեմ, ապաշխարել գործած կամ մտածած սխալների համար: Ս. Բարսեղ Մեծի կանոններում մի վանականի՝ մյուսին մեղքի համար հանդիմանություն անելը նույնպես կարեւորվում է՝ համաձայն ավետարանական խոսքի (Մատթ. ԺԸ. 15–16)¹³: Ապաշխարությունն օգնում է զղջալ թույլ տված սխալների համար եւ ատել մեղքը. «Եթէ ոք հաւատասցէ որքան եւ որպիսի չարեաց լինի պատճառք մեղանքն, ինքեամբ եւ կամաւ կրէ առ

¹⁰ Տէս "Basilio Di Cesarea. Il Libro Delle Domande (Le Regole)", կանոն 2., էջ 55:

¹¹ Անդ, կանոն Ը., էջ 61:

¹² Անդ, կանոն ԼԴ., էջ 122:

¹³ Անդ, կանոն ԽԹ., էջ 146–147:

նոսա զատելն, որպիսի եցոյց որ ասացն. «Զմեղս ատեցի եւ անարգեցի» (Սաղմ. ՃԺԸ. 163)¹⁴: Հեռանալով աշխարհիկ կյանքից, ապաշխարելով նախկինում գործած մեղքերի համար, ինչպես նաեւ հոգեւորութեամբ ու մտավորապես հասունացած՝ նորեկը կուսութեան ուխտ է անում. «Ապա եւ ի խոստովանութիւն կուսութեանն մերձենալ պարտի, յորժամ հաստատուն եւ ընտանի կամացն յընտրութենէ լինիցի»¹⁵:

Ս. Բարսեղ Մեծի համար վանականներին անհրաժեշտ առաքինութիւններէն էր նաեւ խոնարհութիւնն ու հնազանդութիւնը: Հնազանդ եւ խոնարհ լինելն արտահայտվում է միաբան եղբայրների՝ մեծ թե փոքր, միմյանց սպասավորութիւն անելով: Խոնարհ վարքը հատուկ պետք է լինի ոչ միայն միաբաններին, այլեւ առաջնորդին, որպեսզի նա էլ, գոռոզանալով եւ հպարտանալով, չընկնի խոնարհութեան երանութիւնից ու դատապարտվի¹⁶: Ինչպես վանքի վանահայրն է հոգ տանում միաբանների համար, այնպես էլ նրանք պետք է հնազանդ լինեն աստվածային պատվիրաններին ու առաջնորդի խոսքին, քանզի հնազանդութիւնը հոգեւոր կյանքի առաջնայնութիւններից է. «Առ Աստուած հնազանդութեանն ոչ ինչ նախապատուագոյն»¹⁷:

Պատվիրանների գործադրումն ամենից առաջ աստվածասիրութիւն է ենթադրում: Ս. Բարսեղի կանոններում աստվածասիրութիւնն ու եղբայրասիրութիւնը վանականի համար պարտադիր կանոններ են: Աստծուն սիրելն ուսուցանելով ձեռք չի բերվում. սիրուն հաղորդակցվելու բնատուր ձգտումը մարդուն ի սկզբանե է տրվում, ինչպես տրված են դեպի բարին ձգտումը, սերն առ մերձավորը, բարեգործութիւն կատարելու ցանկութիւնը եւ այլն: Ուրեմն Տեր Հիսուս Աստծուն սիրելը որպէս առաջին եւ մեծագոյն պատվիրան տվեց, իսկ որպէս երկրորդ պատվիրան՝ սահմանեց ընկերասիրութիւնը. «Նա ուրեմն եղ զիւր զպատուիրանացն զկարգն՝ Տէրն. առաջին եւ մեծագոյն առ Աստուած զսէրն զպատուիրանն սահմանեաց. երկրորդ ըստ կարգի եւ նման նմին, մանաւանդ լրումն առաջնոյն եւ զնմանէ յեռեալ՝ առ ի ընկերն զսէրն, որպէս զի յասացելոցս եւ յընկերաց նորա, այսպիսիք են յաստուածային Գիրս բերեալք, յամե-

¹⁴ Անդ, կանոն ՃՀԹ., էջ 202—203:

¹⁵ Անդ, կանոն ԺԳ., էջ 75:

¹⁶ Անդ, կանոն ԻԶ., էջ 101:

¹⁷ Անդ, կանոն ԺԲ., էջ 71:

նայն ի պատուիրանս Տեառն կարգ եւ հետեւումն է ուսանել»¹⁸ (հմմտ. Մատթ. ԻԲ. 36—39): Ս. Բարսեղ Մեծը երրորդ կանոնում փարատում է այն մտավախությունը, թե արդյոք ունենք Աստծուց այդ պատվիրանը կատարելու կարողություն. «Զի ո՞վ ոք ոչ գիտէ եթէ ընտանի եւ հաղորդ կենդանի մարդն, եւ ոչ միայնակ եւ ոչ վայրենի: Քանզի ոչ այնպէս առանձին բնութեանս մերոյ, որպէս հաղորդել միմեանց եւ պիտոյանալ միմեամբք եւ սիրել զազգակիցս»¹⁹: Հաջորդ պատգամն առ Աստված երկյուղն է, որպէսզի Տիրոջից տրված շնորհների առատությունը դատապարտության պատճառ չդառնա²⁰:

Գ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ,

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ

Ինչպես նշեցինք, «Կանոնագիրք Հայոց»-ում տարբեր դարերում տեղ գտած կանոնախմբերում եւս վանականներին ուղղված կանոններ ու հրահանգներ կան, որոնք լրացնում են Ս. Բարսեղ Մեծի կանոնները: Կրոնավորներին խրատելու առումով հատկապես արժեւորելի են Առաքելական, Ս. Սահակ Պարթեւի եւ Շահապիվանի ժողովի կանոնները:

«Կանոնագիրք Հայոց»-ի առաջին կանոնախումբը «Կանոնք առաքելականք»-ն է, որ, ըստ ավանդության, սահմանել են Տիրոջ առաքյալները, սակայն մեր առջեւ նպատակ չդնելով ուսումնասիրել այս կանոնախմբի հեղինակային պատկանելության խնդիրը՝ նշենք միայն, որ այն Հնդհանրական Եկեղեցու հնագույն եւ կարեւորագույն կանոններից է: Այս կանոնների մեծ մասն ուղղված է հոգեւորականներին, մյուսները՝ աշխարհականներին: ԼՔ. կանոնը պատվիրում է, որ ով կամենում է կուսակրոն լինել, ցանկանում է բարի գործ կատարել եւ համարձակ է վանք կառուցելու մեջ, պետք է պահի սրբության կարգերն ու օրենքները, զգույշ եւ պարկեշտ պետք է լինի սննդի հարցում, հեռու մնա զինվորական հանդերձ կրելուց եւ իր կեցվածքով նմանվի Աստծու հրեշտակներին ու երկնային զվարթուններին. «Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, եթէ ոք ի կարգէ պաշտանէից եւ յուխտէ եկեղեցւոյ կամեսցի կուսան լինել, բարւոյ գործոյ ցանկայ, համարձակ լիցի վանս շինելոյ ի

¹⁸ Անդ, կանոնք Ա., Բ., էջ 41—42:

¹⁹ Անդ, կանոն Գ., էջ 48:

²⁰ Անդ, կանոն Դ., էջ 49—50:

տեղիս տեղիս՝ ժողովեալ աւրինաց եւ կարգի սրբութեան, զգուշացին ի կերակրոյ պարկեշտանալ, ի զինուորական զգեստուէ հեռանալ, պճղնաւորեալ նմանեսցի պաշտանէից հրեշտակաց Աստուծոյ եւ զուարթնոց երկնից...» (կանոն ԼԲ.)²¹։

Ս. Սահակ Պարթեւ հայրապետն (387—439 թթ.) իր կանոններում վանականներին հորդորում է լինել պարկեշտ, եղբայրասեր, հրեշտակային վարքով կենդանացավարող. «Յիշեցուցանեմ եւ ձեզ կրանասէր վանականաց ամենեցուն, վասն զի հրաժարեալ էք ի կենաց երկրաւորաց, եւ պարապեալ Աստուծոյ եւ աստուածայնոցն, զի նմանեսցէ անուանդ խոստովանութեան եւ գործքդ. եւ եղիցի ձեզ սիրելի՝ պարկեշտութիւն, արթնութիւն, պաշտանսիրութիւն, նմանութիւն բերել յանձինս հրեշտակական վարուց, աւտարսիրութիւն եւ եղբայրսիրութիւն» (կանոն ԼԵ.)²²։

Վանականներին խրատելու առումով Շահապիվանի ժողովի կանոնները ներկայացնում են բացառիկ արժեք։ Շահապիվանի ժողովը հրավիրվել է 444 թ.²³ Հայոց Հովսեփ կաթողիկոսի (440—452 թթ.) նախաձեռնությամբ։ Կանոնախմբի ժե. կանոնում հրահանգվում է բոլորին, ովքեր «ի հաւատս կացցէ կամ միայնակեաց կամ լինել, զկուսութիւն եւ զսրբութիւն պահել եւ կենացն յաւիտենից հասանել», պետք է ոչ թե առանձին-առանձին կենցաղավարել, այլ միասին ապրել վանական կյանքով. «Մի՛ լիցի սովորութիւն միայն լինել. ապա զիմրդ կարեն գիտել զկարգ եւ զպայման հաւատոց, եւ կամ զյանցուածս իւր ի միտ առնուլ, կամ զհնազանդութիւնս եւ զսէր առ ընկերս ցուցանել։ ...Այլ հաւատք կատարեալ եւ ճշմարիտ այս են՝ հնազանդութիւն առ ընկերս եւ սէր առ միմեանս եւ առ Քրիստոս, ի մէջ մարդկան լինել աւրինակ բարի եւ տիպք նախանկարք. զի շահեալ ի միմեանց եւ նախանձեալ ի գործս բարիս, զի տեսցեն եւ փառաւորեսցեն զԱստուած յերկինս...»²⁴ (հմմտ. Մատթ. Ե. 16)։ Ապա նշված են մի շարք խրատական հորդորներ, որոնցից յուրաքանչյուրը հիմնավորվում է սուրբգրային որեւէ տեղիով։ Սրանց նպատակն է հետ պահել միանձանց եւ կուսանաց ամեն տեսակի սխալ քայլերից ու գայթակղություններից եւ ուղղել դեպի աստվածահաճո ընթացք. օրինակ՝

²¹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 46—47։

²² Անդ, էջ 385—386։

²³ Սույն ժողովի եւ ժողովի թվականի մասին տե՛ս Ն. Ա. ԿԻՆԵԱՆ, Շահապիվանի ժողովին կանոնները, «Հանդէս Ամսօրեայ», 1949, Դ.—ԺԲ., էջ 79—170։

²⁴ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 450—451։

«ամուր դուռ» դնել բերանին՝ սխալ խոսքեր չասելու համար, վարձով արժաթագրամներ չտալ եւ տոկոս չպահանջել, վերցված պարտքը շուտ վերագարձնել, չլինել խստասիրտ եւ նեղսիրտ, հեռու մնալ շնությունից եւ պոռնկությունից, գողությունից, ագահությունից, արժաթասիրությունից, սուտ երգումից, սուտ խոսելուց, բանսարկությունից, արբեցությունից, որկրամոլությունից, ինքնահավանությունից, կամակորությունից, պերճությունից, գոռոզությունից, չլինել հպարտ, չարակամ, ամբարտավան, անվայելուչ երգեր չերգել, չլինել զրկող, գանգատվող, ատող, հանդուգն, շատախոս, որեւէ մեկից չբամբասել եւ չարախոսություն չլսել, չլինել ցանկասեր, ծուլ, կամակոր ուսման հանդեպ, չծուլանալ աղոթելիս, չատել աղքատներին, չխուսափել պահքից ու ճգնությունից, բարի գործեր անել ու սիրել Աստծու պատվիրանները, լինել հեզ եւ խոնարհ, ամեն ժամ դողալով եւ երկյուղով մտաբերել Տիրոջ խոսքերը, փնտրել խաղաղություն եւ գնալ արդար ճանապարհով, չձանձրանալ բարիք գործելուց, լինել կատարյալ եւ երկրի վրա երեւալ որպես հրեշտակ: Կանոնը հետեւյալ խոսքով է ավարտվում. «Որ միայնակեաց կամի լինել եւ կուսան եւ զհաբեղայութիւն յանձն առնուլ, կանոն զայս կալցի ամենայն ոք, որ ի հաւատս կացցէ, զի ի ձեռն անարատից մեղաւորք սրբեսցին»²⁵:

Կանոնական բնույթ է կրում «Յաճախապատում»-ի ԻԳ. ճառը, որում բազում խրատական հորդորներ կան ճգնավորների եւ վանականների համար: Ճառի հեղինակը թելադրում է, որ վանականները կենցաղավարեն համաձայն ավետարանական պատգամների. հեռու լինեն աշխարհական ցանկություններից, դառնան նոր մարդ՝ զարգարված բարի գործերով եւ սուրբ, անարատ ու կատարյալ արդարությամբ՝ սրբված երկրավոր բոլոր ցանկություններից. «Ուշ ունելով մտերիմ խորհրդով եւ արժանաւորապէս ըստ Աւետարանին Քրիստոսի կրանաւորիլ: Մերկանալ զաշխարհական ցանկութիւնս ամենայն, եւ զգեանուլ զնոր մարդն ամենայն բարի գործովք զարդարեալ ներքոյ եւ արտաքոյ սուրբ եւ անարատ կատարեալ արդարութեամբ եւ սրբեալ յամենայն ցանկութեանց երկրաւորացս»²⁶: Հեղինակը հորդորում է, որ ճգնավորները սուրբ սրտով եւ անկեղծ հավատքով հակվեն աստվածասիրությանը, մտքով եւ մարմնով հաստատուն, անսասան եւ անդրդվելի լինեն կրո-

²⁵ Անդ, էջ 454:

²⁶ «Յաճախապատում ճառք», էջ 129:

նավորական կարգի մեջ, հոգեւոր հանապազօրյա մարտ մղեն այս աշխարհի թշնամու դեմ. «Նախ զաստուածսիրութեան զհանգամանս յանձին հաստատել սուրբ սրտիւ եւ անկեղծաւոր հաւատով, պատրաստ լինել ըստ արժանի իւրոյ ընծայութեանն յոր կոչեցաւն, յամենայն բօից անարատ եւ մաքուր եւ հաճոյ Աստուծոյ լինել: Մտաւք եւ ամենայն անդամովք հաստատուն եւ անշարժ եւ անդրդուելի կալ ի կարգի ճգնաւորական հանդիսիցն: Մարտնչել ի հոգեւորական մարտին ընդդէմ հանապազօրդեան թշնամւոյն»²⁷:

Դ. ՎԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԵՐ

Աշխարհից հրաժարվելու, անձնուրաց կյանքով ապրելու, կրոնավորությունը բոլորանվեր տրվելու համար կա երեք հիմնական նախադրյալ՝ կուսություն, անընչասիրություն եւ հնազանդություն²⁸: Կուսություն ունենալով հաղթահարվում են մարմնական ցանկությունները, անձը փորձում է ապրել դեպ աշխարհ ձգող զգացումներից վեր կյանքով եւ ջանում նմանվել Փրկչին՝ Քրիստոսին: Անընչասիրությունը հարկավոր է մաքուր մտքով Աստծուն ազդեցելու համար, քանզի մինչ միտքն ամբողջովին վերացած չէ նյութականից, անհնար է մաքուր մտքով ազդեցել եւ սիրել Տիրոջը: Հնազանդվել նշանակում է սեփական կամքը կատարելու փոխարեն ունկնդիր լինել հոգեւոր առաջնորդի թելադրություններին, որի արդյունքն էլ միայնակյացի մաքուր մտքի ձեռքբերումն է լինում: Ծգնակեցությունը նախ եւ առաջ ենթադրում է մտքի պարզություն, իսկ առանց հնազանդության՝ անհնար է հասնել դրան: Հնազանդվելով հոգեւոր հորը՝ վանականն սկսում է հնազանդվել նաեւ աստվածային կամքին, կատարել աստվածային պատգամները եւ հասնել կատարելության²⁹: Այս մասին Ներսէս վրդ. Մելիք-Թանգյանը գրում է. «Առաջին պայմանը դրուած էր նրա համար, որպէսզի վանականը ժուժկալութեամբ եւ կրքերը սանձահարելով՝ ներքին կատարելագործութեան կարողանայ հասնել. երկրորդը՝ հրաժարեցնելով բոլոր շոյող եւ շռայլութեան տանող աղբիւրներից, սովորեցնում էր քիչով բաւականանալու սկզբունքը, որպէսզի մարմինը

²⁷ Անդ:

²⁸ Տէս ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄԵԼԻՔ - ԹԱՆԳԵԱՆ, Հայոց Եկեղեցական իրաւունքը (վերահրատ.), Ս. Էջմիածին, 2011, էջ 675:

²⁹ Հմմտ. Ս. САХАРОВ, Рождение в Царство Непоколебимое, Москва, 2000, էջ 136—137, 144—145, 150—151:

կարողանայ կրթել աւելի բարձր ձգտումների հասնելու համար. երրորդը՝ իբրեւ եղբայրական սիրով կապուած մարդ, պիտի առիթ չտար վէճերի, անհնազանդութեան եւ այլն»³⁰: «Կանոնագիրք Հայոց»-ում բավականին շատ են հատկապէս կուսութեան եւ հնազանդութեան մասին կանոնները՝ ճգնավորների եւ վանականների կենսակերպը կանոնակարգելու համար:

Դ. 1. Կուսութիւն կամ ողջախոհութիւն

«Կանոնագիրք Հայոց»-ի տարբեր կանոնախմբերում միանձանց կուսութեամբ ապրելու համար զանազան կանոնական ցուցումներ կան, իսկ կուսութեան ուխտը խախտողների համար՝ որպէս ապաշխարութիւն, զանազան հատուցումներ են սահմանված: Ս. Բարսեղ Մեծի՝ Իկոնիայի Ամփիլոքոս (Ամփյուղոքոս) եպիսկոպոսին ուղղած թուղթը, որը տեղ է գտել «Կանոնագիրք Հայոց»-ում՝ «Գիր կանոնական մեծի եւ գիտնաւորի եպիսկոպոսապետի Բասղի առ սուրբն Ամփիլոքոս եպիսկոպոս» խորագրով, պարունակում է ճգնակեցական հրահանգներ: Այս կանոններում շնութեան մեղքի համար միանձանց խիստ ապաշխարութիւն է սահմանվում. «Որ զկուսութիւն խոստացեալ է պահել եւ անկցի ի խոստմանէն եւ շնացէ ընդ ումեք, նոյնպէս եւ որ զմոնազնութիւն խոստացեալ է պահել եւ անկցի ի շնութիւն, զամենայն ժամանակս կենաց իւրեանց ապաշխարեսցեն» (կանոն ԻԹ.)³¹: Ժ. կանոնում խիստ է մոտեցումն այն կույսերի հանդեպ, որոնք իրենց անձը նվիրել էին Տիրոջը, սակայն խախտել էին ուխտը. «Կուսանաց որոց միանգամ խոստացեալ իցեն զվարս իւրեանց Քրիստոսի նուիրել եւ զգաստութեամբ եւ համեստութեամբ գնալ, ապա դարձեալ անկանիցին ի մարմնաւորական ախտս եւ անարգեսցեն զդաշինսն, զոր եղին առ Աստուած: Եւ արդ, եթէ այրութիւն նուազ գտանի քան զկուսութիւնն, ապա յայտ է թէ եւ մեղանշել կուսին առաւել չար է, քան զայրոյն...» (կանոն Ժ.)³²:

«Կանոնագիրք Հայոց»-ում տեղ է գտել Ս. Բարսեղ Մեծին վերագրված մի ընդարձակ կանոնախումբ եւս՝ «Բասղի Գիր կանոնական վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից»³³: Այս կանոնների մի մասը վերաբե-

³⁰ ՆԵՐՍԷՍ ՎՐԳ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 675:

³¹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 350–351:

³² Անդ, էջ 342:

³³ Այս «Գիր կանոնական»-ի հեղինակային պատկանելութեան խնդրի վերաբերյալ տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Բ., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1971, էջ LXX–LXVIII, LXX–LXXI:

րում է կուսույթյան ուխտը խախտողներին եւ շնացողներին. «Որ մոռնողնութիւն խոստանայ եւ կին առնէ, ուրացող է, նոյնպէս եւ քահանայն» (կանոն ԼԳ.), «Վասն այնոցիկ որ զանձինս իւրեանց նուիրեցին Աստուծոյ եւ շնան եւ կին առնեն եւ արանց լինին՝ է. ամ ապաշխարեսցեն եւ բազում տրաւք աղքատաց արժանի լիցին աւրինաց» (կանոն ԼԹ.)³⁴։ Կան մեղանշումների ավելի սաստիկ դեպքեր, զորօրինակ՝ անասունների հետ պղծվողներ, որոնց համար հրահանգվում է առհասարակ թողնել կարգը. «Թէ ուխտաւոր եկեղեցւոյ կամ քահանայ ի պղծութեան անասնոյ գտցի՝ մերժեսցին ի կարգէ իւրեանց եւ մինչեւ ի վախճան ընդ ունկնդիրս կացցեն. եւ եթէ սրտի մտաւք դարձցին՝ հեծեծանաւք արժանի լիցին աւրինաց» (կանոն ՀԷ.)³⁵։

Ինչպես Ս. Բարսեղին վերագրվող «Գիր կանոնական»-ում, այնպես էլ Ս. Գրիգոր Աստվածաբանին վերագրված «Յաղագս ուղղափառութեան հաւատոյ եւ ապաշխարութեան յանցաւորաց» կանոններում սաստիկ է մոտեցումը կուսույթյան ուխտը խախտողների նկատմամբ։ Կանոնախմբի ժԹ. կանոնը կուսույթյան ուխտը դրժողներին խիստ ապաշխարույթուն է սահմանում, իսկ Ի. կանոնը տասնհինգ տարվա ապաշխարույթուն է սահմանում կուսան հավատավորի (միանձնուհու) հետ շնացողին, քանզի ապականվում են Աստծու տաճարն ու Քրիստոսի հարսնացյալը. «Որք կուսանալ խոստացան Աստուծոյ եւ պոռնկեցան՝ Զ. ամ արտաքս մնասցեն, Բ.՝ ի ներքս ընդ լսողսն ոչ հաղորդեալ, ապա առցէ զձեւ կուսանի եւ հաղորդեսցի» (կանոն ԺԹ.), «Որք պոռնկեցան ընդ կուսան հաւատաւորացն՝ զսպանողին կրեսցեն վտանգ, զի ապականեաց զտաճարն Աստուծոյ եւ զՔրիստոսի հարսնացեալն. ԺԵ. ամ ապաշխարեսցէ, ապա մտցէ ի հաւտն՝ սրբեալ ի չարէն եւ յեւս անձինն հաղորդեսցի աւրինաց» (կանոն Ի.)³⁶։

Հաջորդ կանոնախումբը, որին անդրադարձել ենք, «Կանոնք յետ առաքելոց հարանց հետեւողաց»-ն է։ Կանոնախմբի ժԶ. կանոնը սահմանում է, որ ով իր ցանկությամբ եւ ոչ հարկադրված վանական (միայնակեցության) ուխտ է արել, բայց ցանկանում է ամուսնանալ, կհամարվի իր կարգն ուրացող. «Որոյ մոռնազանութիւն խոստացեալ է՝ կամաւք եւ ոչ

³⁴ Անդ, էջ 109–110։

³⁵ Անդ, էջ 119–120։ Նկատելի է, որ այս կանոնների խմբագիրը գործածել է «մոռնողն», «ուխտավոր», «ուխտական» բառերը՝ որպես համարժեքներ «վանական», «միայնակյաց» բառերին։

³⁶ Անդ, էջ 195։

ի հարկէ, եւ խնդրէ ամուսնանալ, իբրեւ զուրացողն եւ դարձող է ի կարգ քահանայութեան, ի դատաստան անձին մի՛ խաբեսցի» (կանոն ԺԶ.)³⁷:

Միայնակյացներին վերաբերող հրահագներ կան Անկյուրիայի ժողովի կանոնախմբում: Այս ժողովն Անտիոքի եպիսկոպոսի նախագահությամբ եւ տասնութ եպիսկոպոսների մասնակցությամբ հրավիրվել է Անկյուրիա քաղաքում (Փոքր Ասիա) 313—315 թթ.³⁸՝ փաստորեն նախորդելով Առաջին տիեզերաժողովին (Նիկիա, 325 թ.): Մեզ հետաքրքրող կանոնը Ի.-ն է, որը երեք տարվա ապաշխարություն է սահմանում կուսության ուխտը խախտողներին. «Վասն այնոցիկ ոչք ի չափ հասակի հասեալ իցեն եւ կուսութիւն խոստանայցեն պահել եւ ստեցին խոստմանն՝ ի շնութիւն անկան, կոյս այնուհետեւ ոչ եւս կարէ լինել, այլ եղիցի նա որպէս այն որ երկուս կանայս արարեալ իցէ, զսահման նոցին ընկալցի եւ զապաշխարութիւն նոցա Բ. ամս ընդ ձեռամբ առ դրանն, եւ Ա. ամս մտեալ յեկեղեցին ընդ ապաշխարողս ելցէ, զջերմութիւն ապաշխարութեանն տեսցեն եւ հաղորդեսցի աւրինացն, բայց յաւժումն քահանայութեան մի՛ մերձեսցին. այլ վասն կուսանացն որ մերձենային առ ոմանս իբրեւ քեռք, զայնպիսիսն խափանեցաք, զի մի՛ եւս լիցին» (կանոն Ի.)³⁹: Այստեղ պետք է մի հանգամանք նկատի ունենալ, որ ժողովի ժամանակ վանական կյանքը դեռ լիովին ձեւավորված ու կանոնակարգված չէր, սակայն կային միանձնական կամ անապատական կյանքով ապրող անհատներ, խմբեր: Ուստի կանոնն ուղղված էր այն տղամարդկանց եւ կանանց, որոնք կուսակրոն կյանքով էին ապրում: Կուսության ուխտը խախտողները երեք տարի ապաշխարելուց հետո թեեւ արձակում էին ստանում, սակայն հետագայում քահանայական օծման իրավունք չունեին: Ինչպես երեւում է կանոնի վերջին հատվածից. «Այլ վասն կուսանացն որ մերձենային առ ոմանս իբրեւ քեռք, զայնպիսիսն խափանեցաք», համայնքների ներսում կային կույսեր, որոնք ապրում էին տղամարդկանց հետ որպես քույրեր, ուստի ապաշխարություն է սահմանվում այդ հարաբերությունները խախտողներին⁴⁰:

Կուսության ուխտին վերաբերող հրահանգներ եւ ուխտը խախտողներին պատիժներ սահմանող կանոններ կան Ս. Գրիգոր Լուսավորչի

³⁷ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 108:

³⁸ ՆԵՐՍԷՍ ՎՐԳ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 158—166:

³⁹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 166—167:

⁴⁰ Sĕu H. Mилаш, Правила Святой Православной Церкви с толкованиями, т. 2, 2004, էջ 3—25:

կանոնախմբում: Նշենք, որ այս կանոնները համարվում են Հայոց Եկեղեցում հեղինակված առաջին կանոնները⁴¹: Կանոնախմբի ԺԳ. կանոնում ասվում է, որ ո՛չ մոնոզոներ, ո՛չ էլ կուսանն ամուսնանալու իրավունք չունեն: Անձը, որ միայնակեցության կարգն է ընտրում, պետք է ապրի խստակյաց եւ ճգնողական կյանքով, հեռու լինի ամուսնական կարգից, առավել եւս չընկնի շնության մեղքի մեջ. «Կոյս որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ, նոյնպէս եւ մոնազն, մի՛ իշխեսցէ ամուսնանալ. ապա եթէ գտցի՝ ի հաղորդութենէն անկեալ հեռացի, եւ եպիսկոպոսն տեսցէ զվարսն եւ որպէս կամի՝ մարդասիրեսցէ» (կանոն Լ.)⁴²: Այս կանոնախմբի մեկ այլ կանոն առհասարակ արգելում է կուսակրոն եկեղեցականներին՝ խախտելու կուսության օրենքը, հակառակ դեպքում ապաշխարության կարգ է սահմանվում. «Որ զկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեաց եւ ապա ապականեցաւ՝ է. ամ ապաշխարեսցէ» (կանոն ԺԳ.)⁴³:

Դ. 2. Հնազանդություն

«Հնազանդությունը՝ վանականության հիմքն է:Այն հասցնում է մարդուն այն աշխարհը, որն աննկարագրելի է, քանի որ մարդկային ոչ մի հասկացողություն համադրելի չէ դրան:Վանականությունից դուրս հնարավոր է հասնել Աստծու մեծ շնորհների, ընդհուպ մինչեւ նահատակության կատարելություն, սակայն մտքի մաքրությունը վանականությանը հատուկ շնորհ է՝ անհասանելի այլ ճանապարհներով, եւ այդ վիճակին վանականը հասնում է ոչ այլ կերպ, քան միայն հնազանդության սխրանքով: Ահա թե ինչու ենք այն համարում վանականության գլխավոր հիմքը, որում ներառված են մյուս երկու ուխտերն իբրեւ դրա բնական

⁴¹ Ըստ Մովսէս Խորենացու՝ Լուսավորչին այս կանոնները գրել է, երբ Արիստակես հայրապետը վերադարձել է Նիկիայի 325 թ. տիեզերաժողովից եւ Ս. Գրիգորին ներկայացրել Նիկիայի կանոնները. «Ապա դարձեալ Արիստակէս արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովը ժողովոյն՝ գալ հանդիպի հաւրն եւ արքային ի Վաղարշապատ քաղաքի: Ընդ որ ուրախացեալ սուրբ Գրիգորի, սուղ ինչ զլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»։ տե՛ս «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, «Մատենագիրք Հայոց», հտ. Բ., Անթիլիաս—Լիբանան, 2003, էջ 1992. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 407: Համարվում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչի կանոնախմբը, ի շարս այլ կանոնախմբերի, գրերի գյուտից հետո թարգմանել-խմբագրել է Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսը. տե՛ս Ռ. ՎԱՐԳԱՆՅԱՆ, Հայոց Տոնացույցը (4—18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 59:

⁴² «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 249:

⁴³ Անդ, էջ 246:

հետեւանք:»⁴⁴: Ուստի հնազանդությամբ է, որ վանականի կյանքում ողջախոհության եւ անընչասիրության առաքինություններն ըստ ամենայնի դրսեւորվում են: Հնազանդության գիտակցության շնորհիվ է, որ վանքերում վանահայրերը կարողանում են խաղաղությունն ու ներդաշնակությունը պահպանել: Ինչպես «Յաճախապատում ճառեր»-ի հեղինակն է կարգում, միաբանության առաջնորդի կամքին բոլորը պետք է հավանություն տան, եւ ոչինչ չի կարող որոշվել եւ գործադրվել առանց նրա կամքի. «Եւ որ արտաքոյ նորա կամացն խորհի ինչ կամ ասէ կամ գործէ, պարտաւոր է ապաշխարութեան. զի զառաջնորդն արհամարհեալ՝ զԱստուած արհամարհէ, քանզի ասաց Տէրն՝ Որ զձեզ անարգէ, զիս անարգէ. եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ զբանն ձեր պահեսցէ, զիմն պահեսցէ (հմմտ. Դուկ. Ժ. 16)»⁴⁵: Վանականին արգելվում է նաեւ առանց վանքի առաջնորդի ու միաբանակից եղբայրների համաձայնության հեռանալ վանքից⁴⁶: Առաջնորդն էլ պետք է հոգատար լինի միաբանակից եղբայրների նկատմամբ. «Եւ որ վերակացուն է, զգաստ լիցի առ մերձաւորս եւ նախատես առ հեռաւորսն. խրատել զեղբարս խորագիտութեամբ ըստ ժամանակին, ըստ ընդունելութեանն, ըստ բարուց սրտին»⁴⁷:

Վանքի առաջնորդ վանահայրերին հնազանդվելուն են վերաբերում «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ գտած մի շարք կանոններ: Լավոդիկեի (Փոյուզիա, Փոքր Ասիա) ժողովը գումարվել է մոտ 365 թ. եւ սահմանել մի շարք կանոնական որոշումներ զանազան խնդիրների՝ եկեղեցական կարգերի, հոգեւորականների եւ աշխարհականների վարքի մասին, զանազան հանցանքների եւ այլն⁴⁸: Կանոնախմբի Խ. կանոնում շեշտված է քահանաների եւ վանականների (բնագրում՝ ուխտավորների) հնազանդությունը եպիսկոպոսին. «Զէ մարթ քահանայի կամ ուխտաւորաց առանց հրամանի եպիսկոպոսին ճանապարհ ուրեք երթալ» (կանոն Խ.)⁴⁹:

Ս. Գրիգոր Աստվածաբանի անվամբ հայտնի կանոնախմբի ԺԵ. կանոնը քահանաներին եւ վանականներին հրահանգում է հնազանդվել տե-

⁴⁴ Տէս Շ. САХАРОВ, նշ. աշխ., էջ 135–136:

⁴⁵ «Յաճախապատում ճառք», էջ 131:

⁴⁶ Անդ, էջ 132:

⁴⁷ Անդ, էջ 130:

⁴⁸ Տէս ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 182: Ժողովի թվականը Վահան վրդ. Բաստամյանցը նշում է 364-ը. տէս ՎԱՀԱՆ ՎՐԴ. ԲԱՍՏԱՄԵԱՆՅ, Կանոնագիտական երկեր, Ս. էջմիածին, 2015, էջ 232:

⁴⁹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 238:

ղի եպիսկոպոս առաջնորդին: Կանոնը չի խրախուսում քահանայի կամ միայնակյացի անհնազանդությունը եւ ռիսապահությունը՝ առաջնորդ եպիսկոպոսի որոշումներին՝ մանավանդ բողոքը եպիսկոպոսի դեմ «նախագլուխ» եպիսկոպոսին. «Եթէ ոք ի քահանայից կամ ի մոնոզոնաց արհամարհեալ զեպիսկոպոսաւ իւրով ընթացցի առ թագաւոր կամ առ նախագլուխ եպիսկոպոսն, որպէս թէ խզեալ, ամբաստանեալ յիւրոցն, եւ նոցա ի հրապոյրս ելեալ, տացեն գիր հրամանի, մանաւանդ թէ ռիսովեամբ ինչ էին ընդ քարոզին բարեպաշտութեան, անընդունելի լիցի հրամանն եւ դիմող հրապուրիչն որոշեացի, որպէս անկարգութեան գտակ, զի զայս Անտիոքացին արարեալ՝ լուծաւ: Պարտ է ամենայնիւ հնազանդել, ընդ բուն վարդապետան, առաքելոյ ասելով. «Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց» (Եբր. ԺԳ. 17)» (Կանոն ԺԵ.)⁵⁰:

Դ. 3. Ժուժկալություն եւ պահք

Ս. Բարսեղ Մեծը գրում է, որ ժուժկալություն ասելով՝ պետք է հասկանալ եւ զսպվածությունը կերակուրի հանդեպ, եւ անամոթ խորհուրդներից ու մարմնի վայելքներից հեռու մնալը. «Արդ՝ է ժուժկալութիւն մեղաց ի բաց ջնջումն, ախտից ատարութիւն, մարմնոյ մեղուցումն մինչեւ նոյն ինքն բնական ախտիցն եւ ցանկութեանցն, կենացն հոգեւորացն սկիզբն, յաւիտենական բարութեանցն առիթ. ի նմա խայթոցք ցանկութեանցն ապականին»⁵¹: Ժուժկալություն նշանակում է անընչասեր լինել, պահք պահել եւ ուտելիքի հանդեպ անզուսպ չլինել, ապրել առանց բարկության եւ առանց սրտմտելու, լեզվին չափ եւ աչքերին սահման դնել եւ այլն: Ժուժկալությամբ է պայմանավորված ողջախոհությունը, քանի որ ժուժկալությունն է հեշտասիրության ախտից հեռացնում, կցորդակից դարձնում Քրիստոսի մահվանը:

Կրոնավորների համար պահքը պարտադիր է եղել Տոնացույցով սահմանված բոլոր պահոց օրերին: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր տարվա մեջ կան ընդունված պահոց օրեր: Այսպես՝ պահոց են ամեն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, որոնք որպես պահքի օրեր կարգված են բոլոր քրիստոնյաների համար դեռեւս առաքելական շրջանից. չորեքշաբթին Տիրոջ մատնության եւ չարչարանքների, իսկ ուրբաթը խաչելության օրն

⁵⁰ «Կանոնագիրք Հայոց, հտ. Բ., էջ 192–193:

⁵¹ Տէս «Basilio Di Cesarea. Il Libro Delle Domande (Le Regole)», Կանոն ԺԴ., էջ 80:

է: «Կանոնք առաքելականք»-ում սահմանված է. «Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թէ աւր չորեքշաբաթու ի պահս եղիցի, զի ի նմա գուշակեաց եւ յայտնեաց Տէրն կենարար զխորհուրդ շարչարանաց Իւրոց, եւ մատնութեան, եւ դատաստանի, եւ խաչելութեան, եւ մահուան, եւ յարութեան՝ աշակերտացն Իւրոց, եւ տրտմեցան առաքեալքն» (կանոն Գ.), «Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թէ ուրբաթ եղիցի ի պահս եւ ի սուգ եւ ի տրտմութիւն. վասն զի զոր ինչ ասացան յաւուրն չորեքշաբաթու զվասն շարչարանաց Փրկչին մերոյ՝ յուրբաթուն կատարեցաւ, յորժամ շարժեցան արարածք ամենայն եւ խաւարեցան լուսաւորք ի յերկինս» (կանոն Դ.)⁵²: Այդ օրերին պահք պահելու մասին կան բազում հիշատակութիւններ թե՛ ժողովների ու հայրերի կանոններում, թե՛ առանձին խրատներում ու ճառերում: Զորեքշաբթից եւ ուրբաթից զատ՝ ինչպես հոգեւորականների ու վանականների, այնպես էլ աշխարհականների համար կան սահմանված շաբաթապահքեր:

Ինչ վերաբերում է Զատիկական Մեծ պահքին, ապա այն պարտադիր է եղել բոլոր քրիստոնյաների համար: Սակայն հայոց Տոնացույցը երեք քառասնորդաց կամ հիսնակ պահք է սահմանում՝ Զատիկական, Աստվածահայտնության, Վարդավառի կամ Պայծառակերպության: Զատիկական եւ Հայտնության քառասնորդացների մասին նշված է Ս. Սահակ Պարթեւի կանոնախմբում (կանոն Խ., ԽԱ.)⁵³, իսկ Խոսրովիկ Թարգմանիչը երեք տոներից առաջ պահքերի մասին էլ հիշատակում է «զերիս յիսներեակսն» խոսքերով⁵⁴: Հետագայում աշխարհականների համար այս սովորութիւնը դուրս է եկել. Աստվածահայտնության եւ Վարդավառի հիսնակները դարձել են Վարդավառի դեպքում՝ շաբաթապահք, իսկ Աստվածահայտնության դեպքում՝ ութօրյա պահք, ինչպես այժմյան Տոնացույցում է⁵⁵: Երեք մեծ պահքեր պահելը սահմանված է մնացել կրոնավորների համար: Ստորեւ թվարկում ենք այն կանոնները, որոնցում խոսվում է Ս. Ծննդյան պահքի մասին՝ սահմանելով քահանաների, վանականների, կրոնավորների, ապաշխարողների համար պահել ոչ թե ութօրյա, այլ մեծ պահք (քառասուն կամ հիսնյակ). «Կանոնք Տեառն

⁵² «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 30:

⁵³ Անդ, էջ 397–400:

⁵⁴ Տէս ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ, Բան վարդապետութեան յաղագս քառասնորդացն, աշխ.՝ Գեւորգ վրդ. Յովսէփեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Զ., էջ 706. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, Վենետիկ, 1912, էջ 427:

⁵⁵ «Տոնացոյց», Վաղարշապատ, 1906, էջ 123, 204:

Եփրեմի արդիւնակատար կրանաւորի զոր ուսուցանէր յանապատին ի կուսութեան ճառէն» (կանոն Զ.)⁵⁶, «Հիպոդիտեայ սրբոյ բան ի Յնունդն եւ ի Մկրտութիւնն Տեառն»⁵⁷, «Կանոն երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ եպիսկոպոսի մեծի եւ առաքինւոյ մարգարէի եւ նշանագործի» (կանոն Գ.)⁵⁸, «Նեկտառեայ Հռոմայ եպիսկոպոսի»⁵⁹, «Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ Եւտրեպիոն»⁶⁰:

Ս. Գրիգոր Տաթեւացիին եւս նշում է, որ վանականները երեք քառասնորդաց պահք են պահում. «Այն որ աղուհացն է՝ տարւոյն պահքն. զոր յամենայն տարի միանգամ պահեմք առհասարակ ամենայն քրիստոնեայքս. թէպէտ կարգաւորք երեք քառասունք պահեն, այլ աշխարհականք միայն զաղուհացիցն պահեն: ...Եւ զայս առաքեալքն կարգեցին պահել ի տարին զերեք քառասունս. նաեւ զուրբաթ եւ զշորեք շաբաթ օրն պահս»⁶¹: Վերոնշյալ կանոններից հետեւությունն այն է, որ վանականները պետք է պահեն տարվա մեջ բոլոր պահքերն առանց բացառության, նաեւ շաբաթ եւ կիրակի օրերը՝ ներառյալ Զատիկից, Վարդավառից եւ Աստվածահայտնությունից առաջ պահվող յոթշաբաթյա կամ հիսնակ պահքերը:

Վանքերում պահքին վերաբերող կանոնների գործածությունը փաստված է պատմական աղբյուրներով եւ ազգագրական նյութերով: Դրանց համաձայն՝ հայկական տարբեր վանքեր, պահքի հիմնական օրերից եւ տեսակներից բացի, ունեցել են նաեւ իրենց բնորոշ պահքի օրերն ու ձեւերը: Օրինակ՝ համաձայն Ստեփանոս Օրբելյանի՝ Թանահատի վանքի միաբանները կաթնամթերք չէին օգտագործում, այդտեղից էլ՝ վանքի Թանահատ անունը⁶²: Ազգագրագետ Ե. Լալայանը, անդրադառնալով իմ մենաստանի վանական կյանքին (Ի. դարասկիզբ), գրում է, որ միաբանները «...բոլոր պասերը խստիւ պահել են, եւ նոյն իսկ բացի չորեքշաբթի եւ ուրբաթ օրերից պաս են պահել նաեւ երկուշաբթի օրերը, նշանաւոր

⁵⁶ «Կանոնադիրք Հայոց», հտ. Բ., էջ 57–58:

⁵⁷ Անդ, էջ 282–283:

⁵⁸ Անդ, էջ 280:

⁵⁹ Անդ, էջ 284:

⁶⁰ Անդ, էջ 285–286:

⁶¹ Ս. Գրիգոր ՏԱԹԵՎԱՅԻ, Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր, Կ. Պօլիս, 1740, էջ 148:

⁶² ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼՅԱՆ, Պատմութիւն նահանգին Սիսական, հտ. Ա., աշխ.՝ Կ. վրդ. Շահնազարեանցի, Փարիզ, 1859, էջ 204:

շաբաթապատերին մի շաբաթ էլ աւելի են պահել»⁶³։ Գլուտ եպիսկոպոսը, գրելով Սեւանա վանքի պատմությունը եւ անդրադառնալով ԺԹ. դարում եւ Ի. դարասկզբին միաբանների կենցաղին, եւս նշում է երեք հիսնակ պահք. «Բացի Մեծ պասից եւ շաբաթական ու օրական պասերից՝ կար եւ երկու յիսնակի պաս. մէկը Հոգեգալստեան պասից մինչեւ Վարդավառ, միւսն էլ աշնան յիսնակի սկզբից մինչեւ աւագ տօները։ Ծննդեան առաւօտը, Վարդավառին, երբեմն վանահօր տօնին արտակարգ հիւրասիրութիւն էր լինում վանահօր կողմից»⁶⁴։

Ե. ԱՂՈԹԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ

Վանական կենցաղում աղոթասացությունն առանձնահատուկ կերպով է կարեւորվում։ Ս. Բարսեղ Մեծը գրում է, որ միաբանությունը պետք է ունենա հստակ աղոթքի ժամեր, որպեսզի բոլոր եղբայրները միասին աղոթեն։ «Հաճախապատում ճառեր»-ում նշվում է, որ աղոթասացությունների կարգը չպետք է խափանվի, եւ բոլորը պետք է մասնակցեն՝ բացառությամբ վանահօր կողմից թույլ տրված առանձին դեպքերի. «Եւ հասարակաց պաշտանն մի՛ պատճառանաւք ինչ խափանեսցի, բայց եթէ ի պէտս ինչ եկեղեցւոյն զբաղեալ հրամանաւ վերակացւոյն. սակայն եւ անդ կատարեսցի աղաւթքն։ Եւ ամենայն ուրեք պաշտան աղաւթիցն հոգեւորապէս կատարեսցի անխափան. ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի գործել եւ ի ննջել եւ ի յառնել»⁶⁵։ Միշտ պետք է աղոթել եռանդուն հոգով եւ ջերմեռանդ արտասուքներով, որպեսզի աղոթքներն ընդունելի լինեն պարգեւատու Աստծուն։ Ճառում պատվիրվում է ամուր մնալ աղոթքով եւ պահքով, բարեպաշտ գործերով, միշտ ահով ու երկյուղով բարեպաշտութեան մեջ լինել, փորձել ավելացնել բարին, խափանել չարը, հեռու մնալ փառասիրությունից, մեղսալի ցանկություններից. «Եւ զգուշացեալ ամրացեալ կացցես աղաւթիւք եւ պահովք ջերմեռանդ արտասուաւք, սուրբ սիրով, շնորհալից յուսով եւ բաղձալից գթով առ Աստուծոյ կամսն։ Ահիւ եւ երկիւղիւ ի բարեպաշտութեան ջանս յառաջանալ միշտ, եւ առաւելուլ ի բարի գործս, եւ ոչ պակասեցուցանել յառաքինութեան վաստակոց յերեւելեաց կամ յաներեւութից. եւ զհանգա-

⁶³ Ե. ԼԱՆԱՅԵԱՆ, Վասպուրական. նշանաւոր վանքեր, Թիֆլիս, 1912, էջ 88։

⁶⁴ ԳԻԻՏ ԵՊԻՍՏՈՊՈՍ, Սեւանայ վանքը, Վիեննա, 1929, էջ 82։

⁶⁵ «Յաճախապատում ճառք», էջ 131։

մանս չարին խափուցանել հանդիսաւոր յառաջագիմութեամբ»⁶⁶։ Իհարկե, հայոց վանքերում աղոթասացությունը բավականին կարգավորված է եղել. իրենց հերթին կատարվել են բոլոր ժամերգությունները՝ Գիշերային, Առավոտյան, Արեւագալի, Ճաշու երեք, Երեկոյան, Խաղաղական եւ Հանգստյան։ Մխիթարյան հայրերից Ղուկաս Ինճիճյանը գրում է, որ հայկական շատ վանքեր «մշտապաշտոն» են կոչվել՝ նրանցում աղոթասացությունը երբեք չդադարելու համար՝ «զսոսա զամենեսին համարիմ ի կարգի Անհանգստից վանաց, որք փոփոխ կարգադրութեամբ՝ մի դասն զկնի միւս դասուն փոխանակելով միշտ կատարէին զպաշտօն Աստուծոյ. նմին իրի եւ կոչեցան Մշտապաշտօնք»⁶⁷։

Ձ. ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

Ս. Բարսեղ Մեծին վերագրվող «Գիր կանոնական»-ի մի քանի կանոններ էլ ուղղված են միայնակյացների իրավունքների կարգավորմանը։ Ինչպես արդեն նշել ենք, վանականները կամ միայնակյացները «...հոգեւոր նշանակութեամբ բռնում են բարձր տեղ Եկեղեցու մէջ եւ իրենց բացարձակապէս Աստուծոյ նուիրուելով կազմում են նրա յենարանը»⁶⁸, սակայն նվիրապետական աստիճան չունենալով՝ խորհրդակատարութեան կամ մի շարք այլ եկեղեցածիսական գործառույթներ կատարելու իրավունքից զրկված են։ Ստորեւ նշված կանոնով վանականին՝ այր թե կին, արգելվում է խորան բարձրանալ եւ սպասավորել. «Այր կամ կին ուխտական կամ շնորհաց տէր՝ մի՛ իշխեսցէ ի բեմ ելանել կամ սպաս ունել կամ ճրագ լուցանել. եւ եթէ համարձակի ոք՝ եղիցի նզովեալ» (կանոն ՃՀԱ.)⁶⁹։ Վանականին, ինչպես նաեւ դպիրին արգելվում է նաեւ ժողովրդին առաջնորդելը, հրապարակավ աղոթելը, մեղավորներին ապաշխարություն սահմանելը եւ այլն. «Թէ ոք ուխտական կամ դպիր ժողովրդեանն առաջնորդէ եւ հրապարակաւ աղաւթէ կամ շնորհս առնու յինքն կամ պտուղ կամ ապաշխարութիւն դնէ մեղաւորաց կամ վասն տգիտութեան զքահանայն արհամարհէ՝ եղիցի ընդ իսաշահանունսն Քրիստոսի» (կանոն ՃՀԴ.)⁷⁰։

⁶⁶ Անդ, 129։

⁶⁷ Ղ. վրդ. Ինճիճեան, Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի, հտ. Գ., Վենետիկ, 1835, էջ 207։

⁶⁸ ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 672։

⁶⁹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Բ., էջ 144։

⁷⁰ Անդ, էջ 145–146։

Ս. Գրիգոր Լուսավորչի կանոնախմբի մի կանոն արգելում է վանականին Ս. Խորհուրդները կատարել, քանզի այդ իրավունքը վերապահված է քահանաներին ու եպիսկոպոսներին. «Ոչ հրամայեն կանոնք՝ անապատականաց մկրտութիւն առնել եւ ւարէնս տալ ժողովրդեան կամ պսակ դնել, զի այս գործ առաջնորդաց է» (կանոն Ի.)⁷¹: Ճիշտ է՝ վանական դասը չունի ո՛չ սարկավագի, ո՛չ քահանայի, ո՛չ էլ եպիսկոպոսի իրավունքներ, բայց նրան է վերապահված խաղաղության, մարդկանց փրկության, սեփական հոգին կատարելագործելու եւ տիրանման լինելու համար անդադրում աղոթքի պատիվը: Այս մասին առկա է նաեւ Եկեղեցու հայրերի գրվածքներում, որոնց հետ կարելի է զուգահեռ անցկացնել: Ներսես Լամբրոնացին գրում է. «Արդ, եթէ կրօնաւոր ես միայն, թերեւս գրաւեալ ես ընդ օրինօքն Պաքմիմոսի, եւ ոչ ունիս իշխանութիւն աղօթել կամ վարդապետել, այլ լռութեամբ ընդ միտս եւ ընդ Աստուած խօսել»⁷²: Ս. Գրիգոր Տաթևացին միայնակյացի գործառույթները բավականին սահմանափակ է ներկայացնում. «Ապա ուրեմն միայնակեացն ոչ իշխէ Աւետարան ընթեռնուլ, եւ ոչ բուրվառով խունկ արկանել, եւ ոչ մաքրել եւ ոչ քարոզել: Զի սոքա սարկաւագացն են իշխանութիւն, ապա ուրեմն եւ ո՛չ քահանայագործել, ո՛չ մկրտել եւ ո՛չ պատարագել կամ պսակել: Եւ ոչ կարէ թողուլ զմեղս, եւ ո՛չ խաչ տալ, եւ ո՛չ որ ինչ քահանայիցն է գործ: Այլ եւ ոչ որպէս եպիսկոպոսն գաւազանաւ ունիլ, կամ կարգ տալ, կամ առնուլ զկարգ քահանայի, կամ իշխել հրամանաւ ի վերայ քահանայից կամ սարկաւագաց»⁷³:

Է. ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԵՒ ԿԵՆՑԱՂ

Ս. Ներսես Մեծի 356 թ. հրավիրած Աշտիշատի ժողովն անդրադարձել է Հայաստանում վանական կյանքի կարգավորմանը: Թեեւ ժողովի կանոններն իրենց նախնական տեսքով մեզ չեն հասել, սակայն պահպանվել են հիմնական դրույթները հայ մատենագիրների երկերում⁷⁴:

⁷¹ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 247:

⁷² «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացու Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցուլ եւ Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 91:

⁷³ Ս. Գրիգոր ՏԱԹԵՒԱՅԻ, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պօլիս, 1741, էջ 175:

⁷⁴ ՏՆՍ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Մ. Աբեղեանի, Ս. Յարութիւնեանի, Ա. Սարգսեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Բ., էջ 2030–2032, ՓԱԽՏՈՍ ԲՈՒՋԱՆԳ,

Պատմահայր Ս. Մովսես Խորենացին գրում է, որ Ս. Ներսես հայրապետը «շինէ եւ յանապատ եւ յանմարդ տեղիս եղբայրանոցս եւ մենաստանս եւ յատկանձնակաց խրճիթս...»⁷⁵։ Այսու, Աշտիշատի ժողովը որոշում է երեք տեսակ բնակութեան տեղեր պատրաստել կրոնավորների համար՝ եղբայրանոցներ, ուր կրոնավորներն ապրում էին համատեղ կյանքով եւ կանգնում միասնական աղոթքի, մենաստաններ, որտեղ յուրաքանչյուր ճգնավոր փակվում էր իր խցում, եւ առանձին ճգնարաններ քարայրներում ու անտառներում նրանց համար, ովքեր նախընտրում էին լիովին առանձնացած կյանքը. «Անապատներում՝ եղբայրանոցներ, առանձնակեացների համար՝ միաշնանոցներ եւ խրճիթներ՝ որոշ կանոններով»⁷⁶։ Իսկ վանականների ապրուստը հոգալու համար Ս. Ներսես Մեծը որոշեց, որ «Թագաւորներուն եւ նախարարներուն, իշխաններուն եւ զօրավարներուն եւ անոնց գերդաստաններուն գերեզմանները վանքերու մէջ ըլլան, եւ փոխարէն անոնց գիւղերէն եւ ագարակներէն մէկ քանին նոյն վանքերուն յատկացուին։ Եպիսկոպոսներ արդէն իրենց կալուածներն ունէին, իսկ միաշնակեացներ սակաւապէտ եւ ընշատեաց կեանք պիտի ունենային, եւ իրենց կը բաւէին բարեպաշտներուն նուէրները»⁷⁷։

Ս. Սահակ Ա. հայրապետի կանոնախմբի՝ «Նորին սրբոյն Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշման վանաց» հատվածում (կանոնք ԼԶ.—ԽԴ.) բացատրված են վանք եւ եկեղեցի հաստատությունների տարբերությունները։ Հեղինակը գրում է, որ ոմանք, տգիտությամբ մեկ շինությունը եկեղեցի կոչելով եւ մյուս շինությունը վանք անվանելով, կամենում են զանազանություն գտնել երկուսի մեջ եւ հավատքի մեջ հերձված առաջ բերել՝ մոռանալով Աստծու խոսքը, որ ասում է՝ «Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն (Եփես. Դ. 5)» (կանոն ԼԶ.)⁷⁸։ Հաջորդ կանոնում հեղինակը գրում է, որ չեն արհամարհում եկեղեցու շինվածքը, քանի որ այնտեղ են հավաքվում Աստծու քահանաները, հավատացյալ ժողովուրդը, եւ այնտեղ են կատարվում սրբազան արարողությունները. «...ի նոսա ժողովին քահանայք եւ մանկունք ուխտի եւ պաշտանեայք Աստուծոյ՝ կատարել զաղաւթս եւ զխնդրուածս, վասն որոյ եւ աղաւթա-

Պատմությունն Հայոց», «Մատենագիրք Հայոց», հտ. Ա., Անթիլիաս—Լիբանան, 2003, էջ 315—317։

⁷⁵ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, նշ. աշխ., էջ 2031։

⁷⁶ ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 262։

⁷⁷ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Ա., Ս. էջմիածին, 2001, էջ 189։

⁷⁸ Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 386—387։

րանք կոչին եւ սրբարանք. եւ հաստատեալ կայ ի նոսա տէրունական սեղանն յորոյ վերայ զհացն եւ զգինին պատարագեմք, յաւրինակ կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի...» (կանոն ԼԷ.)⁷⁹: Իսկ «թե ինչ պատճառով շինվեցին վանքերը» հարցին պատասխանում է, որ եթե ամուսնացյալ քահանաներն ունեն նաեւ ընտանեկան հոգս, ապա վանքերում բնակվող հոգեւորականներն ու կրոնավորներն ազատ են նման մտահոգությունից եւ հավատարիմ իրենց կոչմանը՝ վարում են պարկեշտ ու կուսակրոն կյանք, աղոթում աշխարհի համար եւ իրենց սրբակենցաղ վարքով աշխարհականներին օրինակ ծառայում. «...կուսութեամբ են պարկեշտացեալք միշտ մարտնչելով ընդ հուր ախտին, զոր բնութիւնն վառեալ բորբոքէ, եւ անյապաղ զպաշտամանն կատարեն զկարգ, զխաղաղութիւն խնդրելով ամենայն աշխարհի, եւ զգեղջն շինութիւն եւ զառողջութիւն ի տուէ եւ ի գիշերի բազում արթնութեամբ» (կանոն ԼԸ.)⁸⁰:

Վանականների բնակության վայրին անդրադարձել են նաեւ Ներսես Բ. կաթողիկոսը (548—557 թթ.) եւ Ներշապուհ եպիսկոպոսը, որ 554/5 թ. Դվինում հրավիրում են ժողով (Դվինի Բ.), որոնց անվամբ «Կանոնագիրք Հայոց»-ում պահպանված են ԼԷ. կանոններ, որոնք անդրադառնում են ներեկեղեցական մի շարք հարցերի, իսկ որոշներ վերաբերում են վանականների: Նկատելի է, որ Ներսես Բ.-ի եւ Ներշապուհի կանոններն առանձնացնում են կրոնավորների երկու տեսակի բնակավայրեր. որոշ վանականներ ապրում էին բնակելի տեղերում՝ շենքերում, իսկ ոմանք՝ մեկուսանում մենաստաններում⁸¹: Ժողովի ԼԴ. կանոնն այսպես է բանաձեւում. «Իսկ մոնագունք եւ վանաց մանկունք վանս մի ոք իշխեսցեն ուրեք ունել բայց ի վանս. ապա եթէ վանք չկան՝ յաւագ երիցուն տուն երթիցեն, զի չէ իշխանութիւն յայլ տան աւթել. եւ մի լիցի լսել, թէ մի վանք, բազում վանք, որ չէ հասարակ ըստ առաքելոցն կարգի» (կանոն ԼԴ.)⁸²: Շենքերում, այսինքն՝ գյուղերում հաստատված վանականների տները կարող էին ներկայանալ որպես վանականության վաղ շրջանի շարունակություն, երբ փոքր համայնքները խառնված էին բնակիչների ամենօրյա կյանքին: Մյուս կողմից՝ վանական մենաստանների ու աշխարհիկ

⁷⁹ Անդ, էջ 392:

⁸⁰ Անդ, էջ 395:

⁸¹ Տէս Ա. MARDIROSSIAN, Le livre des canons Arméniens (Kanonagirk' Hayoc') de Yovhannēs Ajwnec'i (CSCO, vol. 606. Sub. tom. 116), Lovanii, 2004, էջ 357:

⁸² «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 490:

կյանքի միջեւ անջրպետը դեռ մեծ չէր. հնարավոր էր օրվա ընթացքում լքել վանքը՝ ստիպված լինելով երեկոյան միայն վերադառնալ⁸³։ Այս փոխադարձ ներթափանցումն ուներ նաեւ իր անհարմարությունները, որն արտահայտված է հաջորդ կանոնում. «Այլ ոմանք ձիաբոյժք եւ վաճառականք եւ վաշխառուք փոխանակ կրանաւորութեան՝ շահաժողովք. յայսմհետէ դադարեսցեն եւ ապաշխարեսցեն զմեղսն, զոր մեղան. ապա եթէ ոչ՝ յանդիման արժանի գործոցն պատիժս կրեսցեն» (կանոն ԼԵ.)⁸⁴։ Կանոնն արգելում է վանականներին կրոնավորական կյանքի փոխարեն զբաղվել ձիաբուծությամբ, վաճառականությամբ եւ վաշխառությամբ։ Շենեքում ապրող կրոնավորներին է ուղղված նաեւ ԼԲ. կանոնը՝ սահմանելով, որ նրանք պահքով, աղոթքով պետք է անցկացնեն իրենց կյանքը, հյուրասեր լինեն. «....Եւ վանականք, որ ի շէնս բնակեալ են, պարսպեալ զանձինս պահաւք եւ աղաւթիւք եւ անվեհեր հիւրասիրութեամբ, որչափ Աստուած պատրաստէ՝ բաւական համարել, որպէս Քրիստոսի զինուոր» (կանոն ԼԲ.)⁸⁵։ Նշենք նաեւ ԼԳ. կանոնը քննադատում է նրանց, ովքեր թույլ էին տալիս, որ վանք մտնեն հացթուխ, կթվոր, խնոցի հարող կանայք. «Եւ մի՛ ամենեւին, որպէս լուաք, հացարար եւ կովկիթ կամ խնեցահար ի վանսն տանել կին մարդ....» (կանոն ԼԳ.)⁸⁶, իսկ ԼԶ. կանոնի համաձայն՝ վանականներն իրավունք չունենին աղանդավորներին վանքում հյուրընկալել. «Եւ մի՛ աղանդաւորաց երբեք վանս տալ, զի ոչ հրամայեն կանոնք առաքելականք» (կանոն ԼԶ.)⁸⁷։

Սիոն Ա. Բավոնեցի (767–775 թթ.) կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ 768 թ. Պարտավում հրավիրված ժողովը, որի կանոնական որոշումները տեղ են գտել «Կանոնագիրք Հայոց»-ում «Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի» խորագրով, սահմանում է, որ կրոնավորը կամ վանականն իրավունք չունի իր կամքով մի տեղից մյուսը տեղափոխվելու՝ բացառությամբ այն դեպքի, երբ վանականն ուղարկվում է մեկ այլ վանք՝ առաջնորդելու կամ վարդապետելու. «Կրանաւոր ուր առեալ է զկրանս սրբութեան եւ տեղափոխ լինի ուխտէ յուխտ՝ արգելեալ լիցի, եւ մի՛ ոք իշխեսցէ զայնպիսին ընդունել, այլ ուր ընծայեցան Քրիստոսի, ի նմին տեղ կատարեսցէ զա-

⁸³ ՏԵՍ Ա. MARDIROSSIAN, նշ. աշխ., էջ 358։

⁸⁴ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 490։

⁸⁵ Անդ, էջ 489։

⁸⁶ Անդ։

⁸⁷ Անդ, էջ 490։

ռաբրինութեան իւրոյ զհանդէս. եւ կատարեսցի՝ բայց եթէ յառաջնորդաց կոչեսցի յառաջ՝ յառաջնորդութիւն եկեղեցւոյ եւ կամ վարդապետութիւն ունիցի ի լրումն աստուածեղէն ուսման առաջնորդին» (Կանոն ԺԵ.)⁸⁸:

Ս. Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում վերը հիշված համանման հորդորներն ու խրատները, կանոնական հրահանգները նույնպէս ընդգծված են: Նա վանքերում բնակվող կրօնավորներին թելադրում է վանքը շփողնել քաղաքներ ու գյուղեր տեղափոխվելու համար՝ անձնական բարեկեցութեան մղումից ելնելով, որից հոգիներին բազում վնասներ են լինում. «Մի ոք զընկերակից կրօնաւորաց թողլով զկենակցութիւն՝ առանձինն բնակիցէ, ոչ յաղագս ճգնողական վարուց՝ որպէս միայնակեացք, այլ վասն ազահութեան ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւնն ոչ հասարակաց եկեղեցւոյն, այլ իւր միայնոյ ամբարիցէ», իսկ վանքերից դուրս ապրող կրօնավորներին պատվիրում է վերադառնալ վանքեր, որպէսզի դրսում ապրելով՝ չընկնեն գարշութեան, վատթարութեան, որովայնամոլութեան, արբեցութեան եւ անառակութեան մեջ. «....Այս եղիցի կանոնական օրէնք ի վերայ այնպիսեացն. փոխել այսուհետու զբնակութիւնս իւրեանց ի վանս եւ զվարս իւրեանց՝ ըստ ձեւոյն եւ ըստ կարգին՝ յապաշխարութիւն եւ ի պարկեշտութիւն մինչեւ ի վախճան»⁸⁹: Կրօնավորները, երբ վանքի միաբան են դառնում, այդ վանքում էլ պիտի մնան, եւ իրենց կամքով չտեղափոխվեն, որպէսզի չառաջանան գժտություններ. «Դարձեալ եւ զայլ պատուիրեմք. զի թէ հնար է փոխել ձեզ ի փոփոխական բարուց՝ վանաց ի վանս շրջելով, զի վասն դոյզն պատճառի թողուլ զառանջնորդն իւր եւ զկենակից եղբարսն, անհաստատութեան բարուց է նշանակ: Վասն զի բաց ի հոգւոց վնասուէ, որ հրամայեալ է ի գիրս, թողուլ եւ գնալ յաղագս մարմնաւոր ինչ պատճառի, ոչ թողացուցանեն զփոփոխումն ի տեղւոջէն»⁹⁰:

Այսպիսով՝ վանական կյանքով ապրելու ձգտում ունեցող անձը թողնում է աշխարհը եւ մտնում վանք, որպէսզի հրաժարվի աշխարհական կյանքի ընթացքում ձեռք բերած մեղսավոր սովորություններից եւ զերծ մնալով աշխարհիկ գայթակղություններից՝ որդեգրի ճշմարիտ քրիստոնյային վայել վարքագիծ: Վանական կենցաղավարությունը ծառայություն է Աստծուն: Այն իրականանում է, երբ անմնացորդ կերպով հանձն-

⁸⁸ «Կանոնագիրք Հայոց», հտ. Բ., էջ 11–12:

⁸⁹ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, նշ. աշխ., էջ 76–78:

⁹⁰ Անդ, էջ 88–89:

վում են Աստծու կամքին եւ կամավորաբար ստանձնում հնազանդության, աղքատության եւ ողջախոհության ուխտերը: Վանական կյանքի այս իրողություններն իրենց արտացոլումն են գտել թե՛ թարգմանական, թե՛ զուտ հայկական կանոնական բնույթի երկերում, ինչպես նաեւ առանձին խրատներում ու ճառերում:


РЕЗЮМЕ

Статья посвящена канонам регулирующим монастырский уклад жизни последователей Армянской Апостольской церкви. В армянской действительности имел широкое распространение монастырский устав написанный Св. Василием Великим. Подобные предписания присутствуют в различных группах канонов, вошедших в «Армянскую книгу канонов», а также в различных поучениях и речах многих авторов. В статье подробно рассмотрены каноны, относящиеся к трем монашеским обетам — целомудрию, нестяжанию и послушанию, а также каноны определяющие духовные и бытовые стороны жизни монахов.

SUMMARY

This article deals with the canons regulating the monastic lifestyle of the Armenian Apostolic Church. The Monastic Statute authored by St. Basil the Great was especially widely used in the Armenian reality. Similar rules are also present in various groups of canons found in the “Armenian Book of Canons,” as well as in individual exhortations and discourses by various authors. The article discusses in detail the canons concerning three monastic vows: vows of virginity, abstinence and obedience, as well as the rules related to the monks’ prayer, ritual life and other household realities.





Doi: 10.56737/2953-7843-2022.11-65

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական եւ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

«ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-Ի ԺԱՄԱՆԱԿԸ, ԶԵՂԻՆԱԿԸ, ՍՏԵՂՈՍԱՆ ՅԱՆՈՒՄՆԵՐԸ, ԹԱՐԳԱՆՆԻՉ-ԽՄԲԱԳԻՐԸ¹

Նայոց գրավոր կյանքին սկզբից եւեթ (Ե. դ. 10-ական թվականներից) ուղեկցել է մի հայերեն մատյան, որը կարճ կոչվել է «Յաճախապատում» եւ մեկուկես հազարամյակ հանրային գիտակցության մեջ վերագրվել է Գրիգոր Պարթևին²:

Միջնադարյան գրավոր եւ բանավոր ավանդույթից մեզ հասած շատ գիտելիքներ եւ տեղեկություններ հերքվել են հետագա գիտական հետազոտությունների շնորհիվ, որոշներն էլ հաստատվել են, բայց նրանց մեջ ամենակարեւոր գիտանքներից է համարվել «Յաճախապատում»-ի հեղինակի հարցը. Գրիգոր Լուսավորիչ, Մաշտոց, թե՛ մի երրորդ անձ, ուստի եւ՝ չորրորդ դար, հինգերորդ, թե՛ ավելի ուշ:

Այն հայագետները, որոնք գործը վերագրել են Գրիգոր Պարթևին, հետեւաբար եւ Դ. դարի առաջին քառորդին, Մաշտոցին համարել են թարգմանիչ եւ խմբագիր (Բ. Սարգիսյան, Ա. Զամինյան, Լ. Խաչիկյան, Ա. Մարտիրոսյան եւ այլք³): Եթե նշված հեղինակները չեն էլ ապացու-

¹* Ստացվել է՝ 9.09.2022, գրախոսվել է՝ 30.09.2022: էլ. փոստ՝ artsruni.sahakyan@gmail.com:

² «Արբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթագրութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1894 (սրանից առաջ եղել է երկուական հրատարակություն Կ. Պոլսում (1737 թ., 1824 թ.), Վենետիկում (1883 թ., 1954 թ.), իսկ հետագայում հայտնվել է աշխարհաբար երկու թարգմանություն՝ արեւելահայերեն (Վ. Համբարձումյան, Թեհրան, 2003) եւ արեւմտահայերեն (Մ. Նաջարյան, Հալեպ, 2005), ինչպես նաեւ գերմաներեն (Ի. Մ. Շմիդտ, 1872), ռուսերեն (Ս. Ս. Արեւշատյան, Երեւան, 2011) եւ անգլերեն (Ա. Տերյան, 2021):

³ Բ. ՍԱՐԳԻՍՅԱՆ, Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 403. Ա. ԶԱՄԻՆՅԱՆ, Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, էջ 89–90. Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Օտարալեզու հայ գրականությունը IV դարում (Ներսէս Պարթևի եւ Եպիփանի

ցել, ապա իրենց կարծիքը բխեցրել են շորրորդ դարի հայ մշակույթի վերաբերյալ ունեցած ճշմարիտ պատկերացումից, որի ձևավորմանը մասնակցել են նաեւ Հ. Գաթրճյանը, Ղ. Ալիշանը, Ա. Զամինյանը, Եղ. Քասունին եւ այլք⁴։ Ըստ այդմ՝ հայ քրիստոնեական գրականությունը ձևավորվել է Դ. դարում՝ օտար լեզուներով։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Եղիա Քասունին. «Նախամեսրոպեան այդ մէկ դարին միջոցին Հայաստանի մէջ հետզհետէ գոյացաւ յունարէն եւ ասորերէն լեզուներով գրուած, բայց հայուն համար յօրինուած եւ հաւանօրէն մեծ մասամբ ալ հայ գրիչներէ արտագրուած գրականութիւն մը.... որ ապա առանձին թարգմանիչներու կողմէ օգտագործուեցաւ Ե. դարուն՝ հայերէն լեզուով անդրանիկ գրականութեան յօրինման մէջ»։ Իսկ Լ. Խաչիկյանը՝ որպէս հարցի պատմության քաջագետ, գրում է. «Մեր սկզբնաղբյուրներում ուղղակի ցուցումներ կան այն մասին, որ այդ յուրատեսակ՝ օտար լեզուներով, բայց հայերի պետքերի համար կյանքի կոչված մատենագրության հիմնադիրը եղել է ինքը՝ Գրիգոր Պարթևը։ Ազաթանգեղոսի երկում կարդում ենք, որ նա ավանդել է «ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորիմացս դիւրալուրս»։ Հաճախագոյն եւ դժվարապատում ճառերն իրավամբ նույնացվել են բազմաթիվ ձեռագրերով մեզ հասած եւ «սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի» գրչի արգասիք համարվող 23 այն ճառերի հետ, որոնք հենց ձեռագրական ավանդույթով «յաճախապատում եւ լուսավորք» են կոչված»⁵։

Իսկ ովքեր համարում են, որ «Յաճախապատում»-ի հեղինակը Մաշտոցն է, կարծում են՝ իբր Գրիգոր Լուսավորչի անունն օգտագործվել է երկի հեղինակությունը բարձրացնելու նպատակով (Մ. Աբեղյան, Պ. Ֆեթթեր, Կ. Տեր-Մկրտչյան, Ա. Սրապյան եւ այլք)⁶։ Հիշյալ

նորահայտ «Հարցման» առիթով), ՊԲՀ, 1973, թ. 3, էջ 27–51. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Մաշտոց, Երեւան, 1983։

⁴ Հ. ԳԱԹՐՃՅԱՆ, Պատմութիւն մատենագիտութեան Հայոց, Վիեննա, 1851. Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Վենետիկ, 1901. Ա. ԶԱՄԻՆՅԱՆ, Պատմութիւն հայ գրականութեան, մաս Ա., Նոր Նախիջեւան, 1915. ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ, Հայ մշակույթի պատմութիւնը, Պէյրուի, 1954, էջ 267։

⁵ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Աշխատություններ, Ա., Երեւան, 2012, էջ 35։

⁶ Մ. ԱՐԵՂՅԱՆ, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք առաջին, Երեւան, 1944, էջ 119. Պ. ՖԵԹԹԵՐ, Հայկական աշխատասիրությունը, Վիեննա, 1895, էջ 69. Կ. ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, Հայոց եկեղեցոյ պատմութիւն, մասն Ա., Վաղարշապատ, 1908, էջ 121. Ա. ՍՐԱՊՅԱՆ, «Հաճախապատում ճառերի» հեղինակի հարցը, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, թ. 5, էջ 25–38։

հեղինակների կարծիքը հիմնված է Ե. դարի այն իրողությունների վրա, որոնք արտացոլված են «Յաճախապատում ճառք»-ում՝ առանց հաշվի առնելու, որ դրանք կարող են լինել Ե. դարի թարգմանիչ-խմբագրի ընդմիջարկումները կամ հավելումները: Բացի այդ՝ ի հիմնավորումն իրենց կարծիքի՝ նրանք վկայակոչում են Ագաթանգեղոսին զուգահեռվող Կորյունի այն տողերը, որոնցով նույն ճառքը վերագրվում են Մաշտոցին՝ համարելով, որ Ագաթանգեղոսն է օգտվել Կորյունից: Ինչպես արդեն հայտնի է արդի գիտությունը, ոչ մեկն էլ մյուսից չի օգտվել, երկուսն էլ գրել է նույն Կորյունը, նախ՝ Ագաթանգեղայ «Պատմութիւն»-ը՝ նրա հունարեն միջուկը թարգմանելով եւ ընդարձակելով, իհարկե, Մաշտոցի հսկողությամբ, ապա՝ Մաշտոցի վարքը: Այնուամենայնիվ, թեկուզեւ վեճն ավարտված է, հարկ եմ համարում մի վերջին անգամ մեջքերել Կորյունին՝ համադրելով Ագաթանգեղոսի հետ եւ ուշադրություն հրավիրել մի նուրբ տարբերության վրա, որ կա երկու բնագրերի միջեւ: Այսպես՝ Ագաթանգեղոսն արդեն մեջքերվեց Լ. Խաչիկյանի խոսքում, իսկ Կորյունը դրան զուգահեռ ունի հետեւյալը. «Ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել եւ բարձրագոյն վարդապետութեամբն սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան, յորս բազում նմանութիւնս եւ օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք եւ դիւրահասոյցք տխմարագունիցն եւ մարմնական իրօք զբաղելոցն լինիցին առ ի սթափել եւ զարթուցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»⁷: Ակնհայտ չէ՞ միթե, որ Կորյունը խոսում է միմիայն Մաշտոցի դյուրապատում եւ հաճախագոյն ճառերի մասին, թեկուզ նման արտահայտչամիջոցներով, որոնց մեջ առկա է նաեւ անդրաշխարհի թեման, իսկ Ագաթանգեղոսը խոսում է Գրիգոր Լուսավորչի դժվարապատում ճառերի եւ դյուրալուր առականների մասին, որոնց մեջ խոսք չկա անդրաշխարհի վերաբերյալ: Ուրեմն Կորյունի երկում Մաշտոցը միաժանր⁸ հեղինակ է, իսկ

⁷ ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, աշխ.՝ Մ. Աբեղյանի, Երեւան, 1941, էջ 78:

⁸ Ագաթանգեղոսի զատ-զատ նշած դժվարապատում ճառն ու դյուրալուր առակը Կորյունի երկում ձուլվել են իրար եւ առաջ բերել մեկ ժանր՝ ճառ՝ մեկ մակդիրով՝ դյուրապատում,

Ազաթանգեղոսի երկուսի Գրիգոր Լուսավորիչը՝ երկժանր, որից պետք է հետեւեցնել, որ առակաները մեզ չեն հասել: Փաստորեն երկու բնագրերի նույն հեղինակը՝ Կորյունը, շատ լավ գիտակցել է երկու հեղինակների տարբերությունը, բայց նրանց գործի բնութագրումը՝ նույն ոճով ու բառամթերքով, շփոթեցրել է նոր ժամանակների գրագետներին, թեկուզ, ի վերջո, վերջիններիս հաջողվել է Մաշտոցի ճառերի տակ հասկանալ «Վարդապետություն»-ը, իսկ Գրիգորի ճառի տակ՝ «Յաճախապատում»-ը:

Բացի այդ՝ նկատելի է նաեւ երկրորդ նուրբ կողմը: Կորյունն ազաթանգեղյան իր հատվածում գրում է, որ Գրիգոր Լուսավորիչը շարադրել է հաճախագույն դժվարապատում ճառեր եւ դյուրալուր առականեր, իսկ «Վարք Մաշտոցի» երկում գրում է, որ Մաշտոցը շարադրել է հաճախագույն դյուրապատում ճառեր՝ առանց առակաների: Պարզ է, որ նախորդում եղած «դժվարապատում» եւ «դյուրալուր» բաղադրյալ բառերից հաջորդ շարադրանքում նա ստացել է մեկ բաղադրյալ բառ՝ մեկական բաղադրիչներ առնելով եւ միացնելով՝ «դյուրապատում»: Հակառակը պատկերացնելն անհնար է. իբր մեկ բառի մեջ եղած բաղադրիչներից առանձին բաղադրյալ բառեր հյուսել: Այդ դեպքում դա բնագրային կախում էր դիտվի եւ չէր համարվի, որ «դյուրապատում» բառից ստացվել է թե՛ դյուրալուր-ը, թե՛ դժվարապատում-ը:

Ասացինք, որ «Յաճախապատում»-ի հարցում կա նաեւ երրորդ մոտեցումը, եւ դրա արդի կիրարկողն ու դավանողն Աբրահամ Տերյանն է, ըստ որի՝ «Յաճախապատում»-ը պատկանում է մի անձի, որն ապրել է ոչ շուտ, քան Զ. դարի երկրորդ կեսին⁹:

Վերոբերյալ կարծիքների մեջ ամենագրավիչն այն է, որ երկրորդ եւ առաջին տեսակետների համար կա միջնորդ, որը հանդես է եկել նախ՝ երկրորդի, ապա՝ առաջինի օգտին: Եւ քանի որ այդ միջնորդը լրջախոհ հայագետ Լ. Խաչիկյանն է, դա մեզ հարկադրեց ավելի մոտիկից հետաքրքրվել այդ նյութով եւ միանալ նրա իսկ վերանայած խնդրի լուծման գործին¹⁰:

այսինքն՝ երկու բարդ բառերի միավորումից ստացվել է երրորդը:

⁹ Տողերիս ստեղծման պահին Աբր. Տերյանի աշխատությունը դեռ ամբողջովին լույս չի ընծայվել, բայց մենք շնորհակալ ենք նրան՝ բանավոր հաղորդման համար: Առավել մանրամասն հաջորդիվ:

¹⁰ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, ՆՇ. աշխ. նաեւ՝ Գրիգոր Պարթեւին վերագրված «Հարցում»-ը՝ որպես հայ մատենագրության երախայրիք, ԲՄ, 1964, թ. 7, էջ 301–330. տես նաեւ նույնի՝ Աշխատություններ, Ա., Երեւան, 2012, էջ 53–99: Տարօրինակ է, թե ինչու գրքի խմբագիրը նախորդ

Բանն այն է, որ Լ. Խաչիկյանը, որոշակիորեն ճշգրտելով իր գիրքորոշումը Մաշտոցի եւ Գրիգոր Լուսավորչի հեղինակային հարցերում, վերանայեց Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոդվածի¹¹ եւ «Գրիգոր Պարթևին վերագրված հարցումը....» հոդվածի որոշ գրույթներ՝ դրանց հրապարակումից (1964 թ.) մոտ տասը տարի անց լույս տեսած իր նոր հոդվածում («Օտարալեզու հայ գրականությունը....», 1973 թ.), եւ հնարավոր համարեց, որ թե՛ «Հարցում»-ը, թե՛ «Յաճախապատում»-ն ստեղծվել են Դ. դ. առաջին քառորդում՝ իհարկե Ե. դարում թարգմանվելով եւ խմբագրվելով:

Ահա այստեղ էլ Լ. Խաչիկյանը միանգամայն գիտական ազնվամտությամբ «Յաճախապատում»-ից իր իսկ հայտնաբերած «Մաշտոցյան» հատվածը հռչակեց Մաշտոցի խմբագրման արդյունք¹²: Խոսքը «Յաճախապատում»-ի 7-րդ ճառի («Վասն յօրինուածոց արարածոց») մասին է, որտեղ հեղինակ Գրիգորը բացատրում է արարչության «մեխանիզմը», իսկ խմբագիր-թարգմանիչ Մաշտոցը, կարծես ավելի հասկանալի անելու նպատակով, այդ հատվածն օժտում է գրի ստեղծման օրինակով, որպեսզի պարզ դարձնի, թե ինչպես է այն ստեղծվում տառ—գիր—հնչյունի անվան արտասանությամբ՝ այբ, բեն, գիւ, դա եւն: Հատվածի մանրակրկիտ քննությունը մեզ թույլ տվեց Լ. Խաչիկյանի դիտարկմանն ավելացնել այն, որ Մաշտոցը հատվածը խմբագրել է շատ նուրբ ու սակավ ընդմիջարկումներով, որոնք եթե ստորեւ մեջբերված բնագրում ընդգծենք փակագծերով, ապա շատ պարզ կլինի. «Նաեւ զքննութիւն արարածոց յօրինեաց [որպէս զգիր դպրութեան] եւ եդ անուանս, զի անուանքն [զընդրութիւնն] տայցեն [գրոյն] ի միմեանց զորոշումն [եւ գիրն զբարս կարգացէ անուանն]: Զի երկուս երկուս յօրինեաց, զի մին միւսոյն քարոզիչ իցէ, եւ բնութեանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսա ի միմեանց, եւ

հոդվածի (1973 թ.) 8-րդ հատվածը զետեղել է այս հոդվածի (1964 թ.) վերջնամասում՝ խախտելով ժամանակագրական կարգը: Տողերիս գրողը Լ. Խաչիկյանի ազդեցությամբ «Յաճախապատում»-ով սկսեց զբաղվել 2005-ից եւ առաջին հրապարակային ելույթն այդ թեմայով ներկայացրեց Խաչիկյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովին (2008 թ.), որտեղ երկու «Իրարամերժ» գիտնական այրեր՝ Ս. Արեւշատյանն ու Պ. Մուրադյանը, միմյանց վրա հենվելով, միավորվեցին՝ իմ ելույթի դրույթները հերքելու նպատակով: Իսկ իմ միակ դաշնակիցն իմ ուսուցիչն էր՝ հանգուցյալ հոբելյար Լ. Խաչիկյանը:

¹¹ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, Բանբեր Մատենադարանի, 1964, թ. 7, էջ 11–24, նաեւ՝ Աշխատություններ, Ա., էջ 100–115 (հատկապես՝ էջ 111):

¹² Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Աշխատություններ, անդ, էջ 35–36 (ծան.):

անուանցն բնութիւնքն պիտոյ էին, որ կային ունէին զանուանսն» եւ այլն¹³: Եթե մտովի հեռացնենք ուղիղ փակագծերում նշված խմբադրական միջամտութիւնները, ապա կստանանք Գրիգոր Լուսավորչի նախնական բնագրի հայերեն թարգմանութիւնը: Կարծել կարելի է, որ Լ. Խաչիկյանի շնորհիվ ուշադրութեան առնված այս հատվածը միայն բավական է, որ ապացուցվի Մաշտոցի՝ «Յաճախապատում»-ի խմբագրելը՝ չհաշված թարգմանելը:

Իսկ ինչ կովան կարող է լինել «Յաճախապատում»-ի թարգմանածո բնույթը հաստատելու համար:

Ամենագորեղ կովանը պետք է համարել բնագրի օտարաբան, այն է՝ հունաբան եւ ասորաբան լեզուն, որը, ճիշտ է, խճողումներ չունի, բայց բավականին բարդ է հենց հինգերորդ դարի ընթերցողի համար, ուր մնաց արդի մասնագետ ընթերցողի, որի համար օրինաչափորեն աշխարհաբար թարգմանութիւնները ոչ պակաս դժվարենկալ են, քան գրաբարը: Ինչո՞ւ օրինաչափորեն, որովհետեւ հունաբան եւ ասորաբան գրաբարից թարգմանելու դեպքում եւս օտարաբանութիւնները, անկախ թարգմանչից, պահպանվում են¹⁴: Իսկ պատճառն այն է, որ ժամանակին Գրիգոր Պարթեւը գրել է երկու գրավոր լեզուներով, ինչպես ընդունված էր Դ. դարի քրիստոնյա Հայաստանում: Պատահական չէ, որ Կորյունը Ե. դարում, կարդացած լինելով «Յաճախապատում»-ի մաշտոցյան թարգմանութիւնը, Ագաթանգեղոսի իր շարադրանքում այն բնորոշել է «ճառս յաճախագոյնս, դժուարապատումս», իսկ Մաշտոցի գրվածքները բնորոշել է իբրեւ «ճառս յաճախագոյնս, դիւրապատումս», որի տակ պետք է հասկանալ թե՛ «Վարդապետութիւն»-ը, թե՛ «Յաճախապատում»-ի խմբագրական հավելումները եւ թե՛ մեզ չհասած հնարավոր ճառեր:

Եւ իրոք, «Վարդապետութեան» պես դյուրին են այն հատվածները, որոնք «Յաճախապատում»-ի մեջ գրել է Մաշտոց խմբագիրը, ավելի հասկանալի եւ դյուրընկալ են, քան թարգմանական ճառերը: Վերջին դիտարկումն կարող է չափանիշ ծառայել Գրիգոր Լուսավորչի հեղինակային, հետեւաբար եւ թարգմանական ճառերը խմբագիր Մաշտոցի հավելագրումներից տարբերակելու համար, իհարկե, ի շարս այլ չափանիշ-

¹³ «Յաճախապատում ճառք», անդ, էջ 69:

¹⁴ Հմմտ. Վազգեն Համբարձումյանի թարգմանութիւնը:

ների եւս, ինչպէս, օրինակ, պատմագիտական, բանասիրական, դավանաբանական, աստվածաբանական եւ այլն¹⁵:

Բայց «Յաճախապատում»-ի մեջ կա մի վառ օրինակ եւս, որը բանասերները շատ են շահարկել՝ հօգուտ Մաշտոցի հեղինակութեան, եւ որը նույնպէս արժանացել է Լ. Խաչիկյանի ուշադրությանը: Դա Արշակունի թագավորին հանդիմանելն է քրիստոնեական առաքինության եւ աստվածային պատվիրանների տեսակետից. «Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր առնի առ Աստուծոյ, այլ առաքինութեան բարետոհմութիւն: Զի ի Հայս ոչինչ մեծագոյն եւ ի Պարսս՝ քան զԱրշակունեաց զազգս եւ տոհմս, որ եւ յԱբրահամէ սերեցան աստ, նա եւ յամենայն ազգս թագաւորք երկրի ըստ անսուտ բանին Տեառն ամենեցուն (Ծննդ. ԺԷ. 6): Այլ եթէ ոչ զգաստասցին ի բարի կրօնս, աւելի պատուհաս ընկալցին ի տեսառնէ: Եւ ծառայք նոցա, որ հաճոյ եղեն Աստուծոյ, թագաւորեալք փառաւորեսցին ի Տեառնէ, եւ նոքա պարտաւորեալք յազգս մեղաց՝ պատժեսցին յարգար իրաւանցն»¹⁶: Ո՛վ է այն հայ Արշակունի թագավորը, որին սպառնում է հեղինակն ավելի հուժկու աստվածային պատուհասով: Ուրեմն արդե՞ն պատուհասովել էր նա, մնում էր թագավորելուց զրկվի եւ գահը հանձնի իր ծառաներին:

Շատերի ուշադրությունը միանգամից ուղղվել է Հայոց վերջին Արշակունի Արտաշեսին՝ Վռամշապհո որդուն: Բայց վերջինիս պատուհասովելու մասին ոչինչ հայտնի չէ, նրա անառաքինի կյանքը դեռ եւս չէր հատուցվել որեւէ պատժով, բացի այդ՝ նրա օրոք Պարսքում մարել էր Արշակունիների փառքը: Մնում է Տրդատ Մեծը, որի հետագա սրբացումը խանգարել է մեզ՝ նրան տեսնելու վերոբերյալ տողերի հասցեատեր: Այնուամենայնիվ, եթե հեղինակը Գրիգորն է, հանդիմանվողը Տրդատն է¹⁷, եթե Մաշտոցն է որպէս խմբագիր, ապա նկատի ունի Արտաշես վերջինին¹⁸, ինչը չի բացառվում, որովհետեւ տվյալ ճառային հատվածի համաբնագրում Արշակունիների մասն արհեստական ընդմիջարկման տպավորություն է թողնում: Ի դեպ, բարետոհմիկների, առավել եւս թագավորական տոհմի հանդեպ սույն

¹⁵ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 100:

¹⁶ Անդ, էջ 238, տ. 574—583:

¹⁷ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Մաշտոց, Երեւան, 1982, էջ 116. նաեւ՝ ԱՐՄԸ. ՍԱՀԱԿՅԱՆ, Հին աշխարհից միջնադար բանահյուսական եւ գրական հետազոտելով, Երեւան, 2019, էջ 39—41:

¹⁸ Հմմտ. Պ. ՖԵԹԵՐ, նշ. աշխ., էջ 73. Մ. ԱՔԵՂՅԱՆ, նշ. աշխ., էջ 120:

հայացքը հոգեբանորեն արդարացվում է կարճազատ տոհմի զավակ, բայց սրբակյաց Մաշտոցի տեսակետից, ինչպես նկատել է Լ. Խաչիկյանը¹⁹: Ուրեմն Ե. դ. Հայաստանում համարվել է, որ Արշակունիների փառքը վեր է թե՛ հայ, թե՛ պարսիկ իշխանական տոհմերից, սակայն վերջին հայ Արշակունի թագավորն ինչ-որ պատուհասի է հանդիպել, որը խմբագիր Մաշտոցը մեկնաբանել է իբրեւ պատիժ եւ զգուշացում, բայց նրան սպառնում է աստվածային ավելի դաժան պատուհասով: Միաժամանակ սույն մեջբերումը պետք է դիտել իբրեւ ակնհայտ վկայություն այն բանի, որ Հայաստանում Ե. դ. 20-ական թվականներին արդեն հանրությունը հայտնի էին թագավորական գահի հավակնորդ իշխանական տոհմերի մասին, որոնք հիշատակվում են իբրեւ ծառաներ: Բայց խմբագրական բնույթը երեւում է ոչ միայն Արշակունիների վերաբերյալ արված առարկայական դատողությունից այն դեպքում, երբ ճառը վերացական-բարոյաբանական միտում ունի: Այդ արհեստական ընդմիջարկումը նկատվում է նաեւ նրանից, որ հատկապես Արշակունիների թեման այստեղ հայտնվում է հանկարծակի՝ առանց նախընթաց մտքի հետ կապի, դեռ ավելին՝ հակասելով այդ մտքին: Որովհետեւ ճառում մինչ այդ խոսվում է այն մասին, որ Աստծու պարգեւն ու պատիժները հետո են լինելու՝ ըստ մարդկային արժանիքների. «Եւ մի ոք զարմասցի, որ աստ ներէ, զի քաղցրութիւնն Աստծոյ, ասէ, զնոսա յապաշխարութիւն ածէ» (տ. 564—566),— գրում է հեղինակ Գրիգորը՝ հղելով աղբյուրը՝ Սուրբ Գիրքը, «ասէ»): Բայց պարզվում է, որ Արշակունի թագավորն անառաքինի վարքի համար պատժվել եւ պատժվելու է այստեղ՝ երկրային կյանքում, ոչ թե վերջին դատաստանին: Դա նշանակում է, որ Ի. ճառի 574—583 տողերը՝ իբրեւ շեղում վերացական-բարոյական խրատից, չեն տեղավորվում ընդհանուր բնագրային շարակարգում: Հնարավոր է, որ նշված տողերից ավելի լայն ընդգրկում ունենա շեղումը՝ ներառելով նաեւ 563—590 տողածավալը: Այստեղ ընթերցողի ներողամտությունը գտնելու ակնկալիքով հարկ է հիշեցնել, որ տողերիս գրողը նախորդ հոդվածներից մեկում Արշակունիների հանդիմանանքի հատվածը համարել է Գրիգոր Լուսավորչի հեղինակային բնագրի մաս²⁰:

¹⁹ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, անդ:

²⁰ ՏԵՍ ԱՐԾ. ՍԱՀԱԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 41:

Այսպիսով՝ ելնելով «Յաճախապատում»-ի թարգմանական բնույթից եւ թարգմանիչ-խմբագրի միջամտությունից եւ հավելումներից՝ բնագրի միջուկը պետք է քննել Դ. դ. առաջին քառորդի իրողությունների հետնախորքում՝ որպես Գրիգոր Լուսավորչի գործ, եւ այն իրավամբ ներառել «Ագաթանգեղիկայի» հետազոտական ծրագրում՝ վերջնականապես համոզվելու համար, թե երբ, ինչպես, ում միջոցով ստեղծվեցին նամակ-ճառերը, ինչպես դրանք դարձան ժողովածու նախ հունարեն, ապա գուցե նաեւ ասորերեն, հետո հայերեն, եւ թե ինչպես չբացակայեց հայոց եկեղեցական կյանքից ու ժողովրդի կենցաղից մինչեւ օրս:

Առայժմ այդ գրական հուշարձանը պետք է դասվի մատներով հաշվարկված համաշխարհային վաղ վարդապետական գանձերի շարքը: Այսօր ամեն մի քրիստոնյա պետք է գիտակցի եւ հաղոթս հիշի, որ Գրիգոր Պարթեւն իր լրջագույն ներդրումն է արել տիեզերական բարոյական վարդապետության մեջ Դ. դարի առաջին քառորդում:

«ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ»-Ի ԿԱԶՄԸ, ՃԱՌԵՐԻ ՊԱՏՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պարունակում է 23 ճառ եւ մեկ եզրափակիչ աղոթք²¹:

Ելնելով այն հիմնադրույթից, որ Գրիգոր Պարթեւը պաշտոնավարման տարիներին Հայոց տարբեր գավառների առաջնորդներից, վանահայրերից, վարդապետներից ու իշխաններից ստացած նամակ-հարցումներին ի պատասխան՝ գրել է խրատական թղթեր, հրահանգներ եւ մեկնաբանություններ հընթացս գործոց՝ առանց նպատակ ունենալու դրանք մի գրքում ամփոփելու, կարող ենք ասել, որ այդ հունարեն ու ասորերեն գրվածքներից որոշ թղթեր հետագայում հավաքվել են մի ժողովածուի մեջ՝ ճառեր անվամբ եւ «Յաճախապատում» վերնագրով²² հավանաբար Ներսես Մեծի օրոք: Հունարենի եւ ասորերենի գլխավոր ցուցիչը հայերեն բնագրի գերակշիռ օտարաբան ոճն է, որի թարգմանիչը եւ խմբագիրը եղել է Մաշտոցը: Վերջինիս թարգմանության ժամանակ

²¹ ԱՐԾ. ՍԱՀԱԿՅԱՆ, անդ, էջ 48–50:

²² Հետ՝ հունարեն թարգմանելու դեպքում կունենանք՝ λογοι πολλοι, որ կօգնի ավելի ստույգ հասկանալու «Յաճախապատում»-ի իմաստը. Հատ, բազմակի, բազմապատիկ, տե՛ս անդ, էջ 49 (ծան.), հմմտ. էջ 38, որը սխալագրություն է:

եղել են ոչ միայն ընդմիջարկումներ²³, այլև հավելումներ՝ ճառագլուխների, առանձին հատվածների (հատկապես դավանաբանական բնույթի), ճառավարտների, ինչպես նաև եզրափակիչ ճառի եւ աղոթքի տեսքով: Իհարկե, օտարալեզու ժողովածուն կազմողներին չի հաջողվել լիովին հավաքել իրենց ուսուցիչ Գրիգորի բոլոր թղթերը: Եղածներից կարելի է կռահել, որ նրանք տեղ են տվել հատկապես բարոյաբանական բնույթի մեկնողական, բացատրական ուսուցումներին: Ինչեւէ, կորուստն այլեւս անդառնալի է, որովհետեւ հայերեն թարգմանվելուց հետո նրանք դադարել են հունարեն եւ ասորերեն արտագրվելուց եւ աստիճանաբար դուրս են մղվել ձեռագրային շրջանառությունից, ինչպես շատ այլ նմանատիպ գրվածքներ:

Ներսես Մեծի օրոք «Յաճախապատում»-ի կազմողները որոշակի դեր ունեն ոչ միայն նյութերի ընտրություն, այլև դասավորման գործում: Օրինակ՝ ակնհայտ է, որ նրանք ժողովածուի սկզբում տեղադրել են արարման թեմայով ճառը, որը Մաշտոցը ճոխացրել է դավանաբանական դատողություններով եւ Ս. Երրորդության բազմակի հիշատակումներով, որոնք Դ. դ. սկզբին բնորոշ չեն: Իսկ ժողովածուի վերջում դրել են վանական եւ ճգնական կյանքի թեմաներ՝ դարձյալ 23-րդ ճառի մաշտոցյան հավելագրումով՝ կապված Բարսեղ Մեծի որոշ կանոնների գործածման հետ²⁴: Զգացվում է, որ եկեղեցական կյանքի հայացումը դեռեւս չէր բավարարում բոլոր պահանջներին, եւ Մաշտոցը «Յաճախապատում»-ը թարգմանելիս հնարավորինս ներմուծել է այդ կյանքը կարգավորող հրատապ դրույթներ: Երբեմն դա կատարվել է բռնազբոսիկ, արհեստական ընդմիջարկումներով (օրինակ՝ Արշակունիների հանդիմանանքը), երբեմն էլ հաջողվել է անել սահուն՝ բնական հավելումներով:

²³ Տե՛ս, օրինակ, գրերի ստեղծման եւ Արշակունիների հանդիմանման հատվածների վերոբերյալ վերլուծությունը:

²⁴ Այդ առումով հետաքրքիր կլինի նաև համեմատել 9-րդ ճառը (Պահքի մասին) Բարսեղ Կեսարացու համանուն երկի հետ, որը հայերեն է թարգմանվել Զ. դ. (Շ), հասկանալու համար, թե արդյո՞ք Մաշտոցից հետո եւս ինչ-որ հավելում է եղել «Յաճախապատում»-ի մեջ: Հմմտ. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ, Գիրք պահոց, աշխ.՝ Կիմ Մուրադյանի, Ս. էջմիածին, 2008: Թե Գրիգոր Պարթևի ճառը՝ ժողովածուի մեջ կամ առանձին, ընկել է Բարսեղ Կեսարացու ձեռքը դեռեւս Պապ թագավորի օրոք՝ նրանց միջև մղված աթոռավեճի ժամանակ, եւ Կեսարիայից ձեռնադրվելու կողմնակիցները հենվում էին Գրիգորի եւ մյուս նախորդների վրա: Այս մասին՝ ավելի ուշ:

Ինչ վերաբերում է «Յաճախապատում»-ի ճառերի վերնագրերին, երբեմն էլ՝ ճառի ներսում եղած սահմանազատիչ նշումներին, ապա պետք է ենթադրել, որ դրանք ավելի շուտ ավելացրել են ժողովածուն կազմողները, քան թե Մաշտոցը, որովհետեւ վերջինս դժվար թե այդ վերնագրերը նշանակեր ինչ-որ տեղ հապճեպ, ճառի սկզբնամասի որոշ արտահայտությունների հիման վրա՝ դրանց կրկնումով, մի խոսքով՝ ամբողջ ճառի էությունը շարտացույց ձեւական եղանակով: Իսկ կազմողները դա կանեին, քանի որ նրանց բավարարել է միայն ժողովածուի ձեւական կողմի ապահովումը, այն է՝ արտաքին տեսքի հարդարումը: Վերնագրերի հապճեպ ու ձեւական նշանակումը պատճառ է դարձել, որ երբեմն խմբագիրը կամ հետագա գրիչները վերնագրի մեջ լրացումներ են կատարել, իբր այն ամբողջացնելու, ճառի բովանդակությունը համապատասխանեցնելու նպատակով: Կամ էլ երբեմն միեւնույն ճառը երկատեղ են եւ առանձին վերնագրել (օրինակ՝ Բ. ճառը վերակոչվել է «Առանձնաւորութիւնք»): Այս երկատումը կարելի է վերագրել Մաշտոցին, որովհետեւ նախորդ ճառի (Ա.) վերջին մասը (տող 70—85) եւ Բ. ճառի սկիզբը (տող 1—24) բացահայտ խմբագրական բնույթի ընդմիջարկում են՝ Ս. Երրորդության դավանաբանության շեղումով: Իրականում եթե Ա. ճառի 65—69 տողերից հետո կարդանք Բ. ճառի 25 եւ հաջորդող տողերը, կլսենք Գրիգոր Լուսավորչի անխաթար խոսքը «արարիչ Հայր եւ տեր եւ հաստիչ Աստուծոյ» մասին: Առհասարակ խմբագիր Մաշտոցի հավելագրումներում պարզորոշ երեւում է Ս. Երրորդության վերաբերյալ դավանաբանական հատվածների ավելացման միտում: Եւ դա հասկանալի է, եթե հաշվի առնենք, որ բուն Գրիգորյան ճառերում Ս. Եռյակի անդամների անունների հիշատակումից բացի՝ ավելորդ դավանաբանական մեկնումներ չկան, քանի որ դրանք Դ. դ. սկզբներին դեռեւս պահանջված ու հրատապ չէին, ինչպես դա եղել է Դ. դ. վերջերին եւ Ե. դ. սկզբներին:

Ահա այդ սկզբունքից ելնելով՝ պետք է խմբագրական ընդմիջարկում համարել Ե. ճառի սկիզբը եւ 49—54 տողերը, որտեղ թեթեւակի նկարագրվում է Ս. Երրորդությունը, որովհետեւ ըստ խմբագիր-թարգմանիչ Մաշտոցի՝ ճառն ուղղված է հոգեւորականներին, որոնց համար դժվար չէ այդ չափով ընկալել եւ յուրացնել Ս. Երրորդության սահմանումը:

Իբրեւ ասվածի հաստատում, սակայն, կարելի է դիտել Զ. ճառը, որը կառուցված է «էր եւ է» ու «ոչ էր եւ ոչ է» հակադրազույգերով՝ ցույց

տալու համար, թե ինչքան բարի է Աստված, որ չարի համար տեղ չի նախատեսել արարչագործության մեջ, եւ թե ինչքան չար է սատանան, որ միշտ դրդում է հակառակագործության: Սակայն այս ճառը միանգամից սկսվում է Ս. Երրորդության մասին մի բացատրական «առակով», ինչպես խմբագիրն է ասում, եւ ոչ մի կերպ չի կապվում բուն ճառի հետ, որն սկսվում է 13-րդ տողից. «Աստուած էր եւ է. էր անսկիզբն յԻրում անփոփոխմանն եւ է հաստատութիւն արարածոց» եւ այլն: Այնուհետեւ՝ 43-րդ տողում վրա է հասնում ընդմիջարկողը եւ շարունակում մինչեւ 67-րդ տողը՝ առաջ բերելով մի անկապ շարակարգ, որում կհամոզվենք հետեւյալ մեջբերման միջոցով (տ. 40—43). «Երկայնամիտ եւ ներող էր եւ է քաղցրութեամբ եւ բարերար կամօք անյիշաչար երեւեալ եւ ոչ զամենեսեան աստէն պատժէ (Աստված.—Ա.Ս.), զի դարձեալ ի մեղաց՝ կեցցեն»: Շարունակվում է ընդմիջարկմամբ. «Ամենասուրբ Երրորդութեան բարերարութիւնքն կամօքն Իւրովք էր եւ առ արարածս Իւր, եւ է յանպակաս էութեան, որ ոչ պակասի, ոչ կշռի եւ ոչ պարփակի երեւելեօք եւ աներեւութիւք առ ողորդանս եւ խօշտանկանս ըստ հնարագէտ մատակարարութեանն» (տ. 43—67): Սրան հաջորդում է. «Իսկ պատիր խաբէութիւն ստութեանն եւ բանսարկութեան, ուստի կորուստ ոչ էր ի սկզբանն՝ մինչ ոչ էր մոլորութեանն, յառաջագայիւ եւ վրիպեցուցանել ի շարսն» (տ. 68—70):

Մեզ մնում է Զ. ճառի 40—43-ից հետո կարդալ տ. 68—70-ը, եւ պարզ կլինի, թե ինչպես բարերար Աստված, պատժելու փոխարեն, թողնում է, որ հետ կանգնեն մեղքերից եւ փրկվեն, իսկ բանսարկու ստապատիր խաբեբան, որը կորսված չէր սկզբում, քանի դեռ չէր մոլորվել, առաջ ընկնելով վրիպեցնում է դեպի շարը: Ահա՛ կապակցված խոսքը, որ միացնում է նշյալ տողերը, եթե, իհարկե, բաց ենք թողնում նրանց միջեւ եղած խմբագրական շեղումը Ս. Երրորդության բարերար կամքի թեմայով:

Վերոբերյալ եւ սույն բնագրային դիտարկումները մեզ թույլ են տալիս խոսել նաեւ ընդարձակ խմբագրական միջամտությունների աղբյուրների մասին: Եթե Գրիգոր Լուսավորիչը՝ որպես գործնական թղթի հեղինակ, իր շարադրանքում ժամանակ չէր հատկացնում, Ս. Գրքից բացի, դիմելու այլ աղբյուրների, չնայած լիովին բացառել չի կարելի, ինչպես վկայում է հերմեսյան բնագրի հետ եղած առնչությունը (այդ մասին ստորեւ), ապա թարգմանիչ եւ խմբագիր Մաշտոցը կարող էր

խմբագրման ժամանակ օգտվել հեղինակավոր աստվածաբան հայրերի գրվածքներից: Այնպես որ, արդի բնագրային աղբյուրագիտության խնդիրներից է ոչ միայն «Յաճախապատում»-ի աղբյուրների բացահայտման դժվարին աշխատանքը, այլևեւ ճառերի հեղինակ Գրիգոր Պարթեւի եւ խմբագիր Մաշտոցի բնագրային առանձնագատման ոչ պակաս դժվարին գործը:

Մինչեւ օրս «Յաճախապատում»-ի համար բանասիրությունը շատ քիչ եւ մոտավոր աղբյուրներ է գտել. եղածներն ուշ ժամանակի են եւ առնչվում են Մաշտոցին կամ հետագա գրիչներին: Բուն հեղինակային աղբյուրի նշումը խնդրահարույց է, որովհետեւ Գրիգոր Պարթեւը որեւէ աղբյուրից օգտվել է հիշողությամբ եւ ազատ վերաշարադրմամբ: Իսկ Ս. Գրքից եղած քաղազրույթները, եթե անգամ արվել են անգիր, բնագրին պետք է մոտ լինեին, որովհետեւ թարգմանիչը դրանք հեշտորեն նկատել է եւ փոխարինել Ս. Գրքի նախնական հայերեն թարգմանության բառացի մեջբերումներով, ինչը հաստատում է, որ Մաշտոցը թարգմանել եւ խմբագրել է մինչեւ 30-ական թվականները, դեռ ավելին՝ մինչեւ 428 թ.:

Խոսքը, սակայն, չի վերաբերում այն դեպքերին, երբ Գրիգոր Լուսավորիչը գործածում է սուրբգրային արտահայտություններ՝ որպես իր շարադրանքի մասեր: Օրինակ՝ ԺԱ. ճառում Ս. Գրիգորը գրում է. «Հեզուսին իմաստնոց իմացուցանէ լսողաց զբանս հանճարոյ» (էջ 131), կամ Բ. ճառում գրում է. «...զմոլորեալ դարձուցանել յաստուածգիտութիւն շնորհօք բարերարի Հօրն... զի մի իսպառ կորիցեն, այլ... գիտել, ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ եւ ուղղել զթիւրեալս...» (էջ 15): Փաստորեն՝ վերոբերյալ երկու մեջբերումներում հեղինակը գործածել է Առակաց՝ ասույթի վերածված առաջին տողը՝ երկու մասի բաժանելով եւ ձուլելով իր խոսքի մեջ: Թարգմանիչ Մաշտոցը դրանից չի շփոթվել եւ երկու դեպքում էլ ասույթի մասերը թարգմանել է այնպես, ինչպես Առակաց գրքի առաջին նախադասությունը՝ քաջ գիտակցելով, որ Ս. Գրիգորն իր խոսքի մեջ լուծել է Ս. Գրքի բառերը: Արդյոք միշտ է Մաշտոցը թարգմանելիս հավատարիմ եղել այդ սկզբունքին: Ե. ճառի 51–53 տողերում խմբագիրը գրում է. «Զի բանիւ Տեառն երկինք եւ երկիր հաստատեցան, եւ հոգւով բերանոյ Նորա՝ ամենայն զօրութիւնք Նորա» (էջ 40): Ինչպես տեսնում ենք, այստեղ Ս. Հոգու դերը երեւում է «Նրա բերանի հոգով» արտահայտության մեջ, ինչը միանգամայն հա-

մապատասխանում է նույն արտահայտության թարգմանությանը նույն ճառի տ. 421-ում, որը, սակայն, մեջբերվում է Ս. Գրքից. «...որ հոգևով բերանոյ Իւրոյ սատակէ զչարն՝ Քրիստոս» (էջ 53)²⁵՝ ի տարբերություն Ծննդոց Բ., 7 համարի, որտեղ «...փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հոգի կենդանի»։ Այսինքն՝ պարզ է, որ Մաշտոցը հետեւողական է եղել համանման թարգմանելու եւ խմբագրելու հարցում²⁶։

Այս նկատառումն էական է այնու, որ Գրիգոր Պարթեւը ճառերում հաճախ է կրկնում ոչ միայն նույն մտքերը, խոսքերը, այլեւ արտահայտչամիջոցները, որոնք թարգմանչից լրացուցիչ ջանք են պահանջում՝ հեղինակի հետեւողությամբ՝ մնալու միեւնույն ոճի ու բառամթերքի շրջանակում²⁷։ Օրինակ՝ այն միտքը, թե արարածներն սկզբնապես բարի են ստեղծվում, հետո դառնում են չար՝ ըստ կամքի, արտահայտվում է նաեւ կարծես հակասող ձեւով, թե դրանք ստեղծվում են ոչ բարի, ոչ չար, այլ հետո են դառնում չար կամ բարի՝ ըստ կամքի²⁸։ Կամ խոսելով մարդկային երկու դաստիարակների մասին՝ խմբագիրը գրում է, որ մեկը կոչվում է ավետիս, մյուսը՝ սպառնալիք, եւ այս այլաբանության զույգը հանդիպում է գրեթե բոլոր ճառերում՝ ուղղակի թե անուղղակի ձեւով։ Այդ գաղափարից ազդվել է նաեւ Ագաթանգեղոսի «Վարդապետութիւն»-ը (Տ678), եւ դա հասկանալի է, որովհետեւ միջնորդը եղել է Մաշտոցը, որը «Յաճախապատում»-ի թարգմանությունից այն մուծել է «Վարդապետութեան» մեջ²⁹։

Ահա թե ինչպես է Մաշտոցը «Վարդապետութեան» մեջ ձայնակցել «Յաճախապատում»-ին։

²⁵ Հմմտ. Թեոաղ. Բ., գլ. Բ., 8։

²⁶ Միայն թե մեկ-մեկ Մաշտոցը գործածում է նաեւ հայտնի ասորաբանություններ (Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 51–53), օրինակ՝ «ի ձեռն», «քարոզ» «գուարթուն» եւ այլն։ Դա ոչ թե միայն նշանակում է, որ բնագիրը թարգմանվել է ասորերենից (չի բացառվում, որ Գրիգորի որեիցե ճառ թարգմանված լիներ հունարենից ասորերեն կամ հակառակը), այլեւ այն, որ այդ բառն արդեն (Դ.–Ե. դդ.)՝ իբրեւ հոմանիշ հայերեն այլ բառերի, մտել էր բանավոր գրական հայերենի մեջ (Նկատի ունենք հետերոէպիկ թարգմանական ընթերցանության եղանակով գրերի գյուտի նախընթաց 100-ամյակում ձեւավորված բանավոր գրական հայերենը։ Իսկ այլալեզու «հետերոէպիկ ընթերցում» հասկացությունը կիրառության մեջ է գրել Գ. Սարգսյանը դեռեւս 90-ական թթ.)։

²⁷ Հմմտ. Ի. ճառ, տ. 564–565 եւ Զ. ճառ, տող 42–43, անճառ, անպատում բարութիւն — էջ 56, 82, 87, 169 եւն, որդեգրութեան շնորհ — էջ 62, 65, 92–98, 113, 120 եւն, անուշակ արքայութիւն — էջ 10, 26, 67, 89, 107, 108, 144, 177 եւն։

²⁸ Հմմտ. ճառ Ե., էջ 52, տ. 383–384 եւ ճառ Ի., էջ 228, տ. 298–299, այլեւ՝ տող 317–318։

²⁹ Հմմտ. ճառ Բ., էջ 10, ճառ Թ., էջ 92, տ. 57–58, ճառ ԺԸ., տող 11–12 եւն։

ՅՃԽ. «Որպէս երկինք ամպովք եւ ցօղովք.... խնամէ եւ հասուցանէ զպտուղս բուսոց,— որ սնուցանէ եւ արբուցանէ.... զմարդիկ եւ զանասունս, զգազանս եւ զթռչունս եւ զամենայն զեռունս եւ զսողունս....» (տ. 176—181):

Վարդ. «....եւ երբեմն ցօղ սնուցիչ բուսոց՝ կերակրել զգազանս եւ զթռչունս, զերէ եւ զանասուն եւ պատրաստել զդարմանս մարդկան եւ զխնամս արարածոց» (Տ547):

ՅՃԽ. «Զի նոյն արարածք, որ դարմանիչք առնէն.... յորժամ յղփանայ.... յայնժամ զնոյն դայեակ զայրացուցանէ.... այլ եւ ցրտով եւ ջերմով զտունկս եւ զբոյսս ապականէ եւ զանձրեւս ի կարկուտ եւ ի ձիւն դարձուցանէ, եւ զցօղ չեղեմն վնասակար եւ զօգտակարսն ի դժնդակս (տ. 185—196):

Վարդ. «....յորժամ կամի՝ զշայեկանսն մատուցանէ, իսկ յորժամ ոչ՝ զդժնդակսն, զեղեամն եւ զձիւն եւ վնասաբեր կարկուտ.... պատրաստէ զվնասն (Տ548):

Ակնհայտ է դառնում, որ Գրիգոր Լուսավորչի եւ Մաշտոցի միջոցով պահպանվել են Դ. դ. վարդապետական լեզվին հատուկ մի շարք արտահայտություններ եւ հասկացություններ, որոնք հետագայում աստիճանաբար դուրս են մղվել գործուն կիրառությունից: Դրանցից են՝ «անձնիշխան կամք», «ավետիս», «սպառնալիք», «որդեգրություն շնորհ», «դարձ», «քարոզ» (=ավետաբեր) եւ այլն:

Դառնալով հեղինակ Գրիգոր Պարթեւի եւ խմբագիր Մաշտոցի խնդրին՝ պետք է անենք մի գիտաբանական եզրահանգում՝ կապված այդ խնդրի հետազոտման պատմության հետ:

Բանն այն է, որ այն բանասեր-պատմաբանները, որոնք «Յաճախապատում»-ն ընթերցելիս խոշորացույցի տակ են առել Ն. դարի խմբագրական հետքերը՝ նրա հեղինակ են համարել Մաշտոցին (Պ. Ֆեթթեր, Կ. Տեր-Մկրտչյան, Մ. Աբեղյան եւ այլք)՝ բոլորովին չկասկածելով, որ դրանք հեղինակային բնագրին չեն պատկանում:

Դեռ ավելին՝ դրանից ելնելով՝ Ա. Սրապյանը փորձել է Մաշտոցի հեղինակությունն առավել ամրացնել բովանդակային կարգի փաստարկներով, թե իբր «Յաճախապատում»-ը Դ. դարի գործ լինելու դեպքում պետք է լիներ նորադարձների թեմայով, մինչդեռ այդպես չէ, թե իբր տիեզերաժողովների մասին ակնարկները տանում են Ն. դար եւ այլն³⁰: Ընդհա-

³⁰ Ա. ՍՐԱՊՅԱՆ, նշ. աշխ., էջ 27—29: Հեղինակի այս եւ այլ փաստարկները ոչ խոր ընթերցման հետեւանք են:

նուր թերությունն այն է, որ բացի Լ. Խաչիկյանի վերոբերյալ հոդվածից, որով հեղինակը հրաժարվում է իր նախորդ հոդվածում հայտնած կարծիքից, մնացած բոլորը՝ կողմ եւ դեմ Գրիգոր Լուսավորչի հեղինակությանը, իրենց կարծիքները չեն բխեցնում Դ. կամ Ն. դարերի պատմական հասարակական-քաղաքական համաբնագրից:

Դ. դ. առաջին քառորդում եղել են եւ նորադարձների, եւ հնաբնակ քրիստոնյաների, եւ ժողովների (ոչ միայն տիեզերական) խնդիրներ, որոնց գոնե ի պաշտոնե պիտի անդրադառնար տվյալ հովվապետը: Բայց քանի որ անտեսվել է նորադարձների թեման, ապա ընթերցողի ուշադրությունը հատուկ հրավիրում ենք «Յաճախապատում»-ի այն ճառերի վրա, որոնցում շոշափվում է նաեւ այդ թեման: Այսպես՝ Դ. ճառում խոսելով հրեշտակների ծառայության մասին՝ Գրիգոր Պարթեւը գրում է, որ Աստծուն հաճելի է, որ նույնն արին նաեւ մարդիկ «....եւ զբազումս ի մարդկանէ դարձուցին յաստուածգիտութիւն եւ յուղղութիւն ըստ կամաց արարողին կենաց» (տ. 103—105): Կամ Թ. ճառում խոսելով արարածներին անխնամ չթողնելու մասին՝ Գրիգորը գրում է, որ Աստված «վասն բազում մարդասիրութեան իւրոյ քարոզեաց զդարձ եւ զապաշխարութիւն ի քաւութիւն ամենայն մեղաց» (տ. 95—97):


Եւ կամ Ի. ճառի էջ 233-ում կարդում ենք. «Զի հարուածք որ գան յաշխարհ, վասն մեղաց է իմանալ, զի զղջացեալ զգաստասցին եւ դարձցին յապաշխարութիւն փրկութեան» (տ. 437—439):

Իսկ ԺԲ. ճառում, հուսահատությունը պատժի արժանի մեղք համարելով, Գրիգորը գրում է. «Ի վերայ այսոցիկ հաւատացելոց եւ արժանաւորաց յուսոյ, որ անյուսութեամբ լան եւ կոծին եւ ցտին.... որպէս զհեթանոսս, որոց ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զԱստուած.... Եւ ինքեանք անկանին ի պատիժս վասն անյուսութեան» (տ. 136—139, 143—144):

Հասկանալի է, որ առաջին երկու օրինակները բխում են Դ. դարի սկզբների համաբնագրից, իսկ վերջին տողերի հասցեատերը կարող է լինել թե՛ Դ. եւ թե՛ Ն. դարերում: Եւ դա բնական է, նորանոր օրինակների կարիք էլ չկա, թեկուզ ցանկացողը կարող է դիմել Ի. ճառի վառ օրինակին, ըստ որի՝ հեղինակ Գրիգոր Լուսավորիչը գրում է. «Զի ճշմարտութեան վերակացուք.... միաբանեալ են ընդ սուրբ զօրս երկնաւորաց ի լուսաւորութիւն վերնոց եւ ներքնոց: Եւ ապստամբեալք ի մերոց եւ ամբարշտեալք ի բանէն.... օտարացան եւ յետս կացին որպէս քուրմք եւ կախարդք եւ այլ եւս չարք» (տ. 363—369): Ընդունենք, թե Ն. դ. հայ հա-

սարակությունը դեռ ծանոթ է վերջին արտահայտությունը՝ հետ կանգնել քրիստոնեությունից որպես քրմեր եւ կախարդներ, բայց նույն ձեւով այն ծանոթ է նաեւ արդի հասարակությանը: Իսկ իմ է ավելի բնորոշ: Իհարկե, նորադարձներին: Սակայն յուրովի նորադարձ է ամեն մի նոր մկրտվող, հետեւաբար պետք չէ Դ. եւ հետագա դարերն իրարից բաժանել ըստ նորադարձության կեղծ հատկանիշի, այլ պետք է պարզապես համադրել պատմական հավաստի փաստեր, որոնք առկա են «Յաճախապատում»-ում:

Շարունակությունը հաջորդիվ



ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

1920 Թ. ԹՈՒՐԲԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԵՒ ԿԱՐՍԻ ՆԱՅԱՆԳՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՐՋ

Սկիզբը՝ թիվ Ը.

Նահանգում թալանի էին ենթարկվում ոչ միայն թուրքական կամ քրդական բնակավայրերը, այլև պետական եւ համաժողովրդական ունեցվածքը¹, մինչեւ իսկ պահեստներում գտնվող ռազմական գույքը, ինչը նույնպես մնում էր անպատժելի: Այդ մասին նահանգապետի՝ Երեւան ուղարկած տեղեկություններն ու բողոքները եւս որեւէ արդյունք չէին տալիս, քանի որ Կարսի երկու «գորահրամանատարները» կառավարության մեջ իրենց ունեցած կապերով² վայելում էին վերջինիս եւ մասնավորապես ռազմական նախարարի ամենաթողությունը, որի հանդեպ կարող էր անգոր լինել նույնիսկ բանակի գլխավոր հրամանատարությունը: Օրինակ՝ երբ հայտնի է դառնում գեներալների կողմից Սարիղամիշի մի մեծ պահեստի թալանումը, եւ տեղում նահանգապետի կատարած քննությունը, դա փաստում է, որ վերջինս այդ մասին հեռագրեր է ուղարկում Երեւան: Դրանց հիման վրա Կարս է գալիս Սիլիկյանը, բայց քննական գործը ձգձգվում է, կողոպտիչներն անպատիժ են մնում, իսկ Սիլիկյանն ստիպված էր լռել³:

Այսպիսին էր, ահա, իրագործությունը Կարսի նահանգում, որի պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել պետական շինարարության եւ մարտունակ բանակ ունենալու մասին: «Մենք անբարոյականացնում էինք մեր ամբողջ զորաբանակը,— գրում է այդ առթիվ Ղորղանյանը,— եւ երբեք կառավարչական պատուանդանը: Բայց զինուորական իշխանությունը այդ օրերում, մեր պետութեան վերջի վեցամսեայ ընթացքում անվճռաբեկ արտօնություն էր ձեռք բերել բոլոր պետական խնդիրներում, եւ երկրի դիկտատոր Ռուբէն փաշան՝ այն ժամանակուայ Զօրաց եւ ներ-

¹ Տե՛ս «...Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 208, 285 եւ այլն:

² Տե՛ս անդ, էջ 326:

³ Տե՛ս անդ, էջ 66—68:

քին գործոց մինիստրը, իր քմահաճ ձգտումների սանձերը թողած՝ արագընթաց եւ փրփրալից տանում էր թշուառ երկիրը դէպի խորխորատ»⁴:

Կարսի նահանգում, «որտեղից պէտք է ծաւալուէր մեր պետականութիւնը» եւ որտեղ 450 000 բնակչության մեջ հայերը կազմում էին մեկ քառորդը⁵, նահանգապետը վարում էր նահանգի մահմեդական բնակչության մեջ հայկական իշխանությունների հանդեպ վստահություն ներշնչող, շրջահայաց եւ խաղաղասիրական քաղաքականություն, ինչը, չնայած Օլթիում եւ այլ վայրերում թուրք եւ թաթար գործակալների ծավալած հակահայկական սադրիչ գործունեությանը, զգալի արդյունք էր տալիս՝ ապահովելով նաեւ առանձին մահմեդական պարագլուխների աջակցությունը նահանգի կառավարությանը: Արդահանի գավառապետ Կադիմովը, օրինակ, նահանգապետին տեղյակ էր պահում գավառում տեղի ունեցող թուրք-վրացական գաղտնի հանդիպումների, ինչպես եւ սահմանի այն կողմում քեմալականների գործողությունների մասին⁶: Երբ նահանգապետը Երեւան է ուղարկում Կադիմովի կարեւոր տեղեկությունները, որոնց ճշմարտացիությունը հետագայում փաստարկվեց, ռազմական նախարարը դրանք անտեսում է, քանի որ այդ տեղեկությունները բխում էին «թուրքական աղբիւրից» եւ, նրա կարծիքով, մոլորեցնելու նպատակ էին հետապնդում⁷: Ավելին, նա նահանգապետին արգելում է այդուհետ «լուսաբանել թատերաբեմի դրութիւնը, որովհետեւ նահանգապետի տուեալները տրամագծօրէն տարբերում էին շտաբի «Ճիշտ տեղեկութիւններից»»⁸: Մինչդեռ շտաբից ուղարկվում էին, որպես կանոն, նախարարի քիմքին հաճո եւ Կարսի զորահրամանատարների «ռազմական տաղանդը» ներկայացնող՝ «ծայրայեղ սուտ եւ հնարած տեղեկութիւններ»⁹:

Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ Կարսում զինվորական հետախուզություն, որպես այդպիսին, գոյություն չուներ: «Եթէ մեր կառավարչական ընթացքում մենք ունէինք շատ եւ շատ թերի եւ միանգամայն անբաւարար հիմնարկութիւն՝ այդ մեր զինուորական խուզարկու բաժինն էր,— նշում է նահանգապետը:— Նա ոչինչ չը գիտէր, նա զբաղուած էր ինտրիգներով (բանասարկութեամբ) եւ իր հաշիւներով՝ բայց ոչ պետա-

⁴ Անդ, էջ 232:

⁵ Տէս անդ, էջ 40, 41:

⁶ Տէս անդ, էջ 255—258:

⁷ Տէս անդ, էջ 259:

⁸ Անդ, էջ 165:

⁹ Անդ, էջ 164:

կան վսեմագոյն իմաստի պահպանութեամբ:Մեր հրամանատարութիւնը ոչինչ չը գիտէր՝ թէ ինչ է կատարուում սահմանից այն կողմը, նա չը գիտէր եւ երկրի տրամադրութիւնը դէպի ժամանակի վերապրումները: Այդ մթնոլորտում ամենաքաջազնալից բանակն էլ պէտք է պարտուէր, եւ մենք կու գնացինք այն ձախորդ ընթացքին, ուր ամեն ինչ մեր դէմ էր եւ մենք բոլորի դէմ: Իսկ մենք, ինքնահաւան եւ անգիտակից դէպի պայթալից շրջապատը՝ միայն զառանցում էինք եւ միայն օրօրուում այդ խաբուսիկ մթնոլորտում»¹⁰:

Այն, որ անգլիացիների կողմից Կարսի նահանգը հանրապետութեանը միացնելուց հետո Թուրքիայի եւ Վրաստանի հետ նահանգի ողջ սահմանը մեկ տարի շարունակ «միանգամայն բաց» եւ «անպաշտպան» էր մնում, եւ Հայաստանի կառավարութիւնը սահմանագիծը միայն 1920 թ. «զբաղեցրեց»¹¹, ցույց է տալիս, թե, մեղմ ասած, որքան անհոգ էին գտնվել ՀՀ կառավարութիւնն ու Կարսի զորահրամանատարները նաեւ այդ հարցում:

Ինչեւէ, Ա. Հովսեփյանի եւ Դ. Փիրումյանի «ջարդելու, փշրելու» քաղաքականութիւնը եւ մահմեդական բնակչութեան շարունակական պատուհասումը վերջինիս պէտք է դարձնեն Բեմալի բնական դաշնակիցը: Դա ոչ միայն մեծապես վնասեց նահանգի մահմեդական բնակչութեանը հայկական պետականութեան շուրջ համախմբելու՝ նահանգապետի շրջահայաց եւ, ինչպէս վկայում են փաստերը, իրատեսական քաղաքականութիւնը, այլեւ անհնար դարձրեց Թուրք-հայկական առճակատման պարագայում մահմեդական բնակչութեան գեթ մեծամասնութեան չեզոքութեան ապահովումը: Մինչդեռ, ինչպէս իր օրինակով փաստում է Ղորղանյանը, այլապէս մահմեդականները կարող էին նույնիսկ հետախուզական նպատակների համար օգտագործվել:

Ուշագրավ է, որ նահանգի մահմեդական բնակչութեան՝ բուն Կարսի շրջանի, Արդահանի եւ այլ վայրերի հատվածները, որ գերծ էին մնացել Ա. Հովսեփյանի եւ Դ. Փիրումյանի ասպատակութիւններից, ոչ միայն համերաշխ եւ բարեկամական մոտեցում ունեին հայկական իշխանութիւնների հանդեպ, այլեւ աջակցում էին նրանց: «Կարսի շրջանի եւ Արտահանի իսլամութիւնը կատարելապէս հանգիստ էր,— գրում

¹⁰ Անդ, էջ 261:

¹¹ Անդ, էջ 273:

է Ա. Բաբալյանը,— եւ ոչնչով չէր արտայայտում իր համակրանքը դէպի տաճիկները: Նահանգապետի հրամանի համաձայն՝ բոլոր թիւրք գիւղերը սայլեր հանեցին եւ մեր զօրքի պարենաւորման գործին մեծապէս նպաստեցին: Վրացեանն ու ես եղանք Զարուշատի թրքաշատ շրջանում եւ ստուգեցինք թիւրք ազգաբնակութեան լօյեալ վերաբերմունքը դէպի մեր իշխանութիւնները: Պատերազմի ամբողջ ընթացքին Կարսի իսլամութիւնը, որպէս հաւատարիմ տարր, նպաստեց մեր գործին»¹²:

Այդ մասին հետաքրքիր վկայություն է կատարում նաեւ Յ. Ա. Ք. Հաճյանը: «Շնորհիւ Կարսի նահանգապետ Ղորղանեանի հեռատես վերաբերմունքին,— գրում է նա,— թուրք-քիւրտ ազգաբնակութիւնը, որոնք մեծ թիւ էին կազմում Կարսի շրջանում, մեղմացան, եւ Միլլի շարժումը վերջացաւ, մօտեցան նահանգապետին եւ խոստացան հաւատարիմ մնալ Հայաստանի նորաստեղծ հանրապետութեան»¹³:

Իսկ ինչպիսին էին Կարս քաղաքի պաշտպանական հնարավորությունները: Երբ այն Հայաստանի հանրապետությանը միացվեց, իրենից ներկայացնում էր մի հսկա շտեմարան՝ լի ինչպէս ռազմական, այնպէս էլ շինարարական բազմատեսակ պիտույքներով, որոնք ժամանակին այնտեղ կուտակել էր ռուսական հրամանատարությունը՝ իր հետագա նվաճողական ծրագրերի իրականացման համար: Կարսի շուրջ ամբարված էին ավելի քան 300 վերստ տարածութեան համար նախատեսված երկաթուղային շինարարութեան բոլոր անհրաժեշտ պարագաները: «Կարսի եւ Սարիղամիշի զինուորական պահեստները,— գրում է նահանգապետը,— մեքենաների, տեխնիկ գործիքների եւ շինութեան բազմատեսակ նիւթերի այն մեծ շտեմարաններն էին, որ ամբարում էին Թիւրքաց Հայաստանի ապագայ ռուս գաղութների համար պէտք պարագաները:

Գալով բուն ռազմամթերքին՝ չափազանցութիւն չի լինի, եթէ ասելու լինեմ, որ այդ մասում ոչ ծայր կար, ոչ հաշիւ...

Փամփուշտի եւ բազմատեսակ ռումբերի պաշարը լեռներ էին կազմում, երկաթէ մացառոտ, հեռագրական եւ հեռախօսի լարեր կային հազարաւոր վերստ տարածութեան համար: Զիու նալ կար մի քանի միլիոն զոյգ, իսկ բահ, բրիչ, երկաթ, ցեմենտ, ապակի, աղ, կաշի, երկաթէ մեխ, տախտակ եւ հազար ու մի բան՝ անթիւ ու անհամար»¹⁴: Բացի

¹² Ա. ԲԱԲԱԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 56:

¹³ «Ալիք», 1961 թ. ապրիլի 30, թիվ 90:

¹⁴ «...Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 64—65:

այդ՝ Կարսում դիզված էին 40 000 քառ. սաժեն կազմող գերաններ եւ վառելափայտ: Այդ ամենն անգնահատելի նշանակություն ուներ երկրի վերաշինության համար: Կառավարությունը Ղորղանյանին Կարս ուղարկելիս այդ հարստությունները ուսումնասիրելու, հավաքելու, կարգի բերելու եւ պահպանելու համար մի հատուկ միջվարչական հանձնաժողով է կազմում՝ բաղկացած բոլոր նախարարությունների ներկայացուցիչներից: Հանձնաժողովի անդամների մեծ մասը, որոնք ռազմական նախարարության ներկայացուցիչներն էին, պահեստների բոլոր արժեքավոր գույքերի, մինչեւ իսկ ապակու, երկաթի, կաշվի եւ զանազան տնտեսական սարքավորումների վրա, որպես ռազմական նշանակության գույք, արգելք են դնում, որից հետո, Կարսի զորահրամանատարության հետ համագործակցելով, ձեռնամուխ են լինում դրանց կազմակերպված թալանին, այն էլ՝ «ոչ թէ հատուկ, ֆուրգոններով, վագոններով, այլ նոյնիսկ յատուկ «զինուորական» գնացքներով...»¹⁵:

Թալանվեցին մինչեւ անգամ Կարսի պաշտպանության համար կառուցողական նշանակություն ունեցող հեռագրական եւ հեռախոսային կապի մեծաքանակ նյութատեխնիկական միջոցները: «Պատերազմի ընթացքում ռուս կառավարությունը՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզուանը եւ այլ վայրերը հեռագրացանցի եւ հեռախօսի պարագաների մեծ պահեստներ էր դարձրել,— գրում է Ստ. Ղորղանյանը:— Նահանգի բոլոր քաղաքների եւ զորակայանների միջեւ կար ոչ թէ մի հեռագրագիծ՝ այլ վեց եւ ավելի գիծ: Կարսի ամրությունները, որ 25 վերստ տրամագիծ ունէին՝ բոլորը կապուած էին թէ՛ իրար հետ եւ թէ՛ Կարսի հետ առանձին հեռագրական գծերով եւ առանձին հեռախօսներով: Եւ հազիւ թէ պէտք է ասել, որ մենք կարող էինք օգտագործել այդ մեծաքանակ նիւթը ոչ միայն Կարսի նահանգի պէտքերի համար, այլեւ միւս վայրերը բաւարարել: Բայց զինուորական իշխանությունը՝ ի դէմս առանձին ախորժակների, իր վետօն էր դնում Կարսի նահանգում բոլոր արժեքավորների վերայ, յայտարարելով այդ գույքը «զինուորական», եւ կառավարությունը խոնարհուում էր այդ բոլորի առաջ: Այդ մեծ հարստությունը շարունակ տանում էին Կարսից, շարունակ կրում «զինուորական» պէտքերի համար: Բայց թէ ուր էին գնում այդ ավերջ վագոնները, ո՞վ էր տանում այդ հարստությունը, եւ որտե՞ղ էր նա հալում՝ այդ էլ երեւի «զինուորական», «ռազմական»

¹⁵ Անդ, էջ 66–67:

գաղտնիք էր:Եւ այդ մեծ հարստութիւնով փոխանակ նոր եւ նոր հեռախօսագծեր կառուցանելու երկրում՝ մենք հնարաւորութիւն չունեցանք կանոնաւորելու նոյնիսկ այն գծերը, որոնք գոյութիւն ունէին եւ մեզ պէտք էին: Հեռագրական կապը թէ՛ նահանգում եւ թէ՛ Երեւանի հետ ընդհատուած եւ խանգարուած էր ոչ թէ ժամերով ու օրերով, այլ շաբաթներով ու շարունակ»¹⁶:

Նահանգապետի բողոքները, որոնք սովորաբար անպատասխան էին մնում¹⁷, այս դեպքում էլ արդյունք չեն տալիս, իսկ «պետական կօնտրօլը,— գրում է նահանգապետը,— դիտում էր Կարսում կատարուող ալան-թալանը՝ միայն Երեւանից:Ես ումբակոծում էի իմ այդ առիթով պահանջներով հեռագրական գլխաւոր վարչութեան պետից սկսած մինչեւ մինիստր նախագահը, բայց իմ տարիուկէս ժամանակամիջոցի ընթացքում բոլոր բողոքներս մնում էին առանց հետեւանքի»¹⁸: Մինչեւ իսկ Կարսի բերդում գործող հեռախօսակապն ու հեռագրակապն էին իսպառ անհետացել: Կարսի անկումից մի շաբաթ առաջ, երբ զորքերի հրամանատար գեներալ Դ. Փիրումյանը երկու նախարարներին՝ Ս. Վրացյանի եւ Ա. Բաբալյանի ներկայութեամբ հրավիրեց զինվորական խորհրդակցություն, հրետանու հրամանատարի ղեկուցումից պարզվեց, որ Կարսի բազմաթիվ ամրութիւնները, որտեղ տեղակայված էին 100-ից ավելի ծանր թնդանոթները, ինչպես միմյանց, այնպես էլ հրետանու հրամանատարի եւ բերդի շտաբի հետ ո՛չ հեռագրական եւ ո՛չ էլ հեռախօսային կապ ունեին, եւ հրետանու հրամանատարը այդ պատճառով հնարավորութիւն չունեւ իրազեկվելու, թե ինչ էր կատարվում իր խնամքին հանձնված ամրութիւններում եւ նաեւ անհրաժեշտ կարգադրութիւններ անել¹⁹: Դա դեռ բոլորը չէ: Կարսի անկումից միայն հինգ օր առաջ ամենքին հայտնի դարձավ, որ Կարսի ամրութիւնները եւ խրամատները զուրկ են էլեկտրական կամ որեւէ այլ լուսավորութիւնից եւ մինչեւ իսկ ջրով ապահովված չեն: Երկաթուղու գծերը, որոնցով ռումբերը փոխադրվում էին դիրքեր, ամբողջովին շարքից դուրս էին եկել: Բացի այդ՝ «ոչ միայն ֆորտերը, դիրքերը, այլ նոյնիսկ հրետանու հրամանատարը՝ բոլոր ամրութիւնների անմիջական մեծը, իր տրա-

¹⁶ Անդ, էջ 220—221:

¹⁷ Տէս անդ, էջ 322—323, 348:

¹⁸ Անդ, էջ 67, 220—221:

¹⁹ Տէս անդ, էջ 220—221:

մադրութեան տակ աւտոմօբիլ չուներ»²⁰: Եւ երբ քեմալական բանակը մոտենում էր Կարսին, եւ անհրաժեշտ էր դեպի դիրքեր ռազմամթերք տանել, զորքերի հրամանատարը խնդրեց նահանգապետի ավտոմեքենան: «Հայկական զօրաբանակը կրիտիկ մօմենտում մի աւտոմօբիլ անգամ չուներ,— գրում է նահանգապետը:— Թէ ո՛ւր չքացան այդ բազմաթիւ աւտոմօբիլների հետ միասին եւ հազարաւոր ձիերը եւ եզները, որ զինուորական իշխանութիւնը անդադար բռնազրաւում էր տարիուկէս ժամանակի ընթացքում Կարսի նահանգում իր «ռազմական» եւ պատերազմական պէտքերի համար, դա նոյնչափ հետաքրքիր, որչափ եւ մոլթ պատմութիւն է»²¹: Կարսի անկումից մի շաբաթ առաջ միայն, երբ բերդի պարետը հայտարարեց, որ Կարսի ամրություններից փորձեր պետք է կատարվեն, «սկսեցին սրբել, կարգի բերել երեսի վերայ ընկած բազմաթիւ թնդանօթները, եւ միայն այդ օրերում սկսեցին պէտք վարժութիւնները»²²:

Այդ նույն ժամանակ, ինչպէս պարզ դարձավ վերոնշյալ զինվորական խորհրդակցութեան ժամանակ, բերդապահ եւ զորքերի հրամանատար Դ. Փիրումյանը ոչ մի տեղեկութիւն չուներ թշնամու ուժերի, նրա նպատակների եւ այն ուղղութեան մասին, որով հնարավոր էր նրա արշավը²³: Նրա շտաբի պետը՝ փոխգնդապետ Վահան Տեր-Առաքելյանը, որն աշխարհամարտից առաջ տիրացու էր եղել, ամենեւին հասկացողութիւն չուներ բերդի ամրութիւնների մասին եւ քարտեզից էլ ոչինչ չէր հասկանում²⁴: Ինչ վերաբերում է զորքի պարենավորմանը, ապա դա, չնայած 1920 թ. առատ բերքին, նաեւ «այն մեծաքանակ հացին եւ այլ մթերքներին, որ մեր զինուորականները կրել էին իւր ժամանակին Օլթի գաւառից», այնքան անկազմակերպ էր», որ, օրինակ, Կարսի անկումից տասն օր առաջ մի զորամաս ստիպված եղավ կողոպտել մի պահեստ, որտեղ գնդապետներն իրենց համար հաց էին ամբարել²⁵:

Այս իրադրութիւնում, ահա, երբ ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը երկու նախարարներին՝ Ա. Բաբալյանին եւ Ս. Վրացյանին, ճա-

²⁰ Անդ, էջ 372—373:

²¹ Անդ, էջ 228:

²² Անդ, էջ 372—373:

²³ Տէս անդ, էջ 373:

²⁴ Տէս անդ, էջ 158:

²⁵ Տէս անդ:

նապարհում էր Կարս, նրանց հետ հաջորդ հանդիպումը կանխատեսում էր ունենալ էրզրումում²⁶:

Այն, որ Կարսի զորահրամանատարությունը, ի դեմս երկու «ջարդող, փշրող» գեներալների, ոչ միայն կատարելապես հեռու էր ռազմական գործից, այլև ապիկար ու վախկոտ, պարզ դարձավ դեռ սեպտեմբերի 29-ին, երբ նրանք անհիմն կերպով զանգվածային խուճապ ստեղծեցին Կարսում: Նախարարներ Ա. Բաբալյանը եւ Ս. Վրացյանը Կարս ուղևորվելիս ճանապարհին հանդիպեցին Կարսից խուճապահար փախչող մարդկանց բազմությունը²⁷: Պարզվեց, որ խուճապը սեպտեմբերի 29-ին ստեղծել է գեներալ Ա. Հովսեփյանը, որը Հարամ Վարդանի ուղղությամբ թշնամու դիրքերում ինչ-որ շարժում էր նկատել եւ չափազանցված տեղեկություններ էր հաղորդել Դ. Փիրումյանին, որն էլ, ժողովի հրավիրելով քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներին ու ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամներին, առաջարկել էր քաղաքն անմիջապես դատարկել, քանի որ թշնամին կես ժամից կարող էր մոտենալ քաղաքի դարպասներին, գիշերային հարձակում գործելով՝ կտրել նահանջի ճանապարհները եւ բնակչությանը կոտորել: «Քաղաքը խուճապի էր մատնուած,— նշում է Ա. Բաբալյանը:— Շատերը գիշերուայ հագուստով փախուստի են դիմում, մեծ թալան եւ անկարգություններ են տեղի ունենում: Փախչողների առաջին խմբումն է լինում զօր. Յովսէփեանի ընտանիքը, նրա եղբայրը հարիւրաւոր կովերով.... Սակայն գիշերը անցնում է, եւ թշնամին չի երեւում: Հետեւեալ օրը միայն պարզում է «Թիւրիմացութիւնը», ինչպէս արտայայտւում էր գեն. Փիրումեանը: Դատ է բացւում, բայց մեղաւորները մնում են անպատիժ»²⁸:

Բնութագրական է, որ Կարսի հրամանատարությունը այդ խուճապի եւ իրարանցման պայմաններում զբաղված էր զինվորների միջոցով իր եւ իր մերձավորների անձնական ունեցվածքը «փրկելով», իսկ երբ Ալեքսանդրապոլի գավառում Հովսեփյանի եղբոր կովերը բռնազրավվում են, նա եւ Փիրումյանը, բազմաթիվ հեռագրերով եւ սպառնալիքներ տեղալով, պահանջում էին, որ այդ անասունները վերադարձվեն, եւ որ քաղաքացիական իշխանությունն իրենց գործերին չխառնվի: «Շատ մեծ զարմանք կպատճառեր այն փաստը,— գրում է Կ. Սասունին,— որ հակառակ

²⁶ Տէս Ս. ՎՐԱՅԵԱՆ, նշ. աշխ., հտ. Բ., էջ 229:

²⁷ Տէս անդ, էջ 228:

²⁸ Ա. ԲԱԲԱԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 55:

այն դժվար եւ պատասխանատու պարտականության, որ դրված էր այդ երկու զորավարներուն վրա, անոնք զբաղած էին զանազան անհատներու շահերը պաշտպանելու գործով եւ շատ փոքր կարգադրություններով»²⁹:

Ա. Բաբալյանն ու Ս. Վրացյանը, ծանոթանալով Կարսում տիրող իրադրությանը, անմիջապես հեռագրում են ռազմական նախարարին՝ պահանջելով հեռացնել Կարսի ճակատից Հովսեփյանին, որն իր «խուճապային խառնուածքի պատճառով» բարոյալքում էր զորքը, եւ որ գլխավորն է՝ վստահություն էր ներշնչում զինվորների ու սպայության մեջ: Նրանց հեռագրին Նազարբեկյանը պատասխանում է, որ ռազմական նախարարը կարգադրել է մարտական գործողությունների ընթացքում բարձր հրամանատարների փոփոխություն չկատարել³⁰: Նախարարները, որոնց նպատակն էր ռազմաճակատի ղեկավարումը բարեխիղճ եւ վստահելի զինվորականի հանձնել եւ «ազատուել այդ ցեցից, որ 2 տարուայ ընթացքին բազմահազար բողոքների տեղիք էր տուել», պնդում են, որ Դրոն Սուրմալուի ճակատից տեղափոխվի Կարս, սակայն մերժում են ստանում: Նրանց առաջարկը, որ գոնե Մ. Սիլիկյանն Ալեքսանդրապոլից Կարս փոխադրվի, Ռ. Տեր-Մինասյանը նույնպես մերժում է³¹:

Կարսի ռազմաճակատն այդպիսով շարունակում է մնալ ապիկար զորահրամանատարության ձեռքում, որը ձախողեց նաեւ հայկական զորքի՝ հոկտեմբերի 14-ին ծրագրված վճռական հակահարձակումը: Այն սկսվեց ոչ թե լուսաբացին՝ նախատեսված ժամին, այլ երկու ժամ ուշացումով, իսկ Հարամ Վարդանի ուղղությամբ՝ երեք եւ կես ժամ ուշացումով³²: Չնայած դրան՝ հայկական կողմի հաջողության գրավականը մեծ էր: «Մի ճիգ եւս, եւ թշնամին պիտի փախուստի դիմէր,— գրում է Ա. Բաբալյանը,— արդէն մեր օդանաւը կէսօրին լուր էր բերել, որ տաճկական տրանսպորտը գլուխը դարձրել էր դէպի Սարիղամիշ»³³: Հարձակումը, սակայն, ձախողվեց գեներալ Ա. Հովսեփյանի՝ զորամասին պատկանող առաջին գնդի որոշ վաշտերի փախուստի եւ դրան հետեւող զանգվածային խուճապի հետեւանքով³⁴, իսկ Հովսեփյանն այդ երեկո չկարողացավ Մ. Սիլի-

²⁹ Կ. ՍԱՍՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 82:

³⁰ Ա. ԲԱԲԱԼԵԱՆ, նշ. աշխ., էջ 55:

³¹ Անդ: Հմմտ. Ս. ՎՐԱՅԵԱՆ, նշ. աշխ., հտ. Բ., էջ 230—231:

³² Կ. ՍԱՍՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 71:

³³ Ա. ԲԱԲԱԼԵԱՆ, նշ. աշխ., էջ 57:

³⁴ Կ. ՍԱՍՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 76:

կյանին զեկուցել, թե իր զորամասի գնդերը որ դիրքերն են զբաղեցրել, եւ մի քանի ժամ անհրաժեշտ եղավ դա պարզելու համար³⁵: Կարսի հայկական զորամասերը հոկտեմբերի 14-ի չհաջողված հակահարձակումից լիովին բարոյալքվեցին: «Այդ ճակատամարտի ձախողումով,— գրում է Կ. Սասունին,— զորքին մեջ բեկում առաջ եկավ: Կարսի հանձնումը հեշտ ըմբռնում դարձավ: Խուճապային հոգեբանությունը սեփականություն մնաց եւ զինվորականության, եւ քաղաքացիներուն»³⁶: Մինչդեռ Կարսում հայկական զինված ուժերը թե՛ թվով եւ թե՛ զինվածության մեծապես գերազանցում էին թշնամուն³⁷: Պատերազմի ողջ ընթացքում՝ նույնիսկ այն ժամանակ, երբ թշնամին մոտեցել էր Կարսին, ինչպես վկայում է ժամանակակիցը, հայկական բանակի հրամանատարությունը ճակատային գործողությունների՝ այդ թվում նահանջի որեւէ ծրագիր չունեւ³⁸: Կարսի զորքերի հրամանատարությունը, ի դեմս Դ. Փիրումյանի եւ Ա. Հովսեփյանի, ստեղծված իրավիճակում զբաղված էր միայն փախուստի ուղիներ փնտրելով: Գեներալ Ա. Հովսեփյանը հոկտեմբերի 27-ին «գործող բանակի հրամանատար» գեներալ Դ. Փիրումյանին հաղորդում է, որ ծանր հիվանդ է եւ խնդրում է իրեն ազատել ճակատի հրամանատարությունից³⁹: Բախտը, սակայն, Ա. Հովսեփյանին ժպտում է, քանի որ ռազմական նախարարը, որը դեռ սեպտեմբերի վերջին անկարելի էր համարում սկսված պատերազմի պայմաններում բարձր հրամանատարական կազմում փոփոխություններ կատարելը, Կարսի անկումից երեք օր առաջ որոշում է կայացնում Հովսեփյանին հեռացնել՝ նշանակելով նրան թիկունքի հրամանատար⁴⁰, իսկ «անկողնում պառկած» Փիրումյանը շարունակում էր իր ձեռքում պահել «հրամանատարութեան գերագոյն իշխանութիւնը»⁴¹: «Թէ ինչո՞ւ ամիսների ընթացքում Զօրաց մինիստրը հնարաւոր չէր համարում փոխել հրամանատար կազմը,— գրում է Դորդանյանը,— եւ ինչո՞ւ այդ հնարաւոր եղաւ Կարսի անկումից երեք օր առաջ՝ այդ

³⁵ Ա. ԲԱՔԱԼԵԱՆ, նշ. աշխ., էջ 57:

³⁶ Կ. ՍԱՍՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 80:

³⁷ «Դիրքերում», Կարս, 1920 թ. հոկտեմբերի 17:

³⁸ Վ. ԱՐՄՐՈՒՆԻ, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Երեւան, 2002, էջ 36:

³⁹ «...Ստեփան Դորդանեանի յուշերը», էջ 168:

⁴⁰ Անդ, էջ 167:

⁴¹ Անդ, էջ 167: Ռազմական նախարարը, ի վերջո, նման որոշում կայացրեց, թերեւս, այդ օրերին Երեւան մեկնած Վրացյանի՝ նախարարական խորհրդում ներկայացրած զեկուցման հիման վրա: Տե՛ս Ա. ՎԱՅՆԵԱՆ, նշ. աշխ., հտ. Դ., էջ 242—245:

էլ երեւի մի այնպիսի ռազմական գաղտնիք է, որ իր հետ տարաւ Ռուսէն փաշան, որպէս յիշողութիւն իր անցած փառաց...»⁴²: Ա. Հովսեփյանի փոխարեն Կարսում առաջավոր զորաբանակի հրամանատար է նշանակվում եւ այնտեղ է ուղարկվում գեներալ Ղազարյանը եւ «բժշկական հետազոտութիւնից յետոյ կատարելապէս առողջացած գեն. Յովսէփեան, պատերազմի հանելուկային կորիզը գեն. Կազարովին յանձնելով՝ ինքը անցաւ թիկունքում հրամանատարելու...»⁴³:

Մինչ մեկնելը Ա. Հովսեփյանը Դ. Փիրումյանի հետ միասին ամեն տեսակի խոչընդոտներ է ստեղծում ռազմաճակատի նոր հրամանատար գեն. Կազարովի առջեւ, որը նույնիսկ փոխադրամիջոց չէր գտնում ճակատ մեկնելու համար: Կարսի «շտաբում» նոր հրամանատարը չի կարողանում գտնել քարտեզի մի երկրորդ օրինակ եւ ստիպված է լինում ռազմաճակատ մեկնել առանց քարտեզի: «Բայց աւելի հետաքրքիրն այն է,— գրում է նահանգապետը,— որ գեն. Յովսէփեանի կայանը գալով՝ գեն. Կազարով չի գտնում այնտեղ այն քարտէսը, որի վերայ պէտք է նշանակուած լինէին այն կէտերը, որտեղով որ շարժուել է թշնամին, եւ ուր է նա այժմ:

Եւ հազիւ թէ պէտք է բացատրել, որ առանց այդ նշանների, առանց այդ ռազմական քարտէսի՝ ինքը, Նապօլեօն՝ ոչինչ չէր կարող անել: ...Նոր հրամանատարը չի գտնում իր «շտաբում» ոչ մի տեղեկութիւն այն մասին՝ թէ ի՞նչ զօրամասեր են նորան ենթարկում, որտե՞ղ են նոքա, նոցա քանակը, հրամանատար կազմը, եւ առհասարակ այն այբուբենը՝ առանց որոնց կարգաւ անկարելի է...»⁴⁴: Այս ամենը նկատի առնելիս չի կարող զարմացնել, որ իրադրության հետ թռուցիկ ծանոթանալով՝ գեներալ Ղազարյանը գտնում էր, որ հայկական բանակը լիովին կազմալուծված է, «զօրաց շարքերը հալւում են ժամէժամ, որ հրամանատար կազմը միանգամայն անընդունակ, անհեղինակ, ապիկար ու անպատուախնդիր, որ այստեղ եւ այնտեղ ցրուած մասերը ոչ իրար հետ կապ ունեն եւ ոչ իր՝ գեներալի, եւ այդ մթնոլորտում կարելի է միայն խելագարուել, անձնասպանութիւն գործել, եւ ոչ հրամանատարել...»⁴⁵: Դ. Փիրումյանը, որը մինչեւ իսկ Կարսի անկումից 4 օր առաջ թալանի էր ուղարկում զինվոր-

⁴² «...Ստեփան Ղորանեանի յուշերը», էջ 146:

⁴³ Անդ, էջ 169:

⁴⁴ Անդ:

⁴⁵ Անդ:

ներին⁴⁶, նույնպես մտադրվել էր գաղտնի կերպով փախչել Կարսից: Հոկտեմբերի 28-ի գիշերը ոստիկանապետը նահանգապետին զեկուցում է, որ նա որոշել է «իր արքանեակներով» լուսաբացին գաղտագողի փախչել Ալեքսանդրապոլ: Նահանգապետն այդ մասին տեղեկացնում է Ա. Բաբալյանին, որն անմիջապես գնում է Փիրումյանի մոտ: Չնայած դեռ կեսգիշեր չկար, բայց վերջինս եւ իր շտաբը «անոյշ քնած» էին: Իսկ երբ Ա. Բաբալյանը «գործերի հրամանատարից» բացատրություն է պահանջում, «թէ ինչ հիմունքներով, առանց նոյնիսկ իրեն իրազեկ անելու ու ամբողջ նահանգի հայ ազգաբնակչութիւնը երեսի վրայ թողնելով՝ նա իր արքանեակներով» լուսաբացին փախչելու է քաղաքից, գեներալը կարկամում է, իսկ շտաբի պետը նրան ասում է, որ դա հրամանատարի իրավունքն է, եւ որ վերջինս ղեկավարվում է «ռազմական միտումներով»: Ա. Բաբալյանի այցը, այնուհանդերձ, կանխում է Դ. Փիրումյանի եւ նրա շտաբի գաղտնի փախուստը⁴⁷: Այսպիսի պայմաններում Կարսի՝ գրեթե լիովին բարոյալքված բանակը, իհարկե, չէր կարող հաղթել կամ նույնիսկ դիմակայել թշնամուն, մինչդեռ «Հայաստանի կառավարութիւնը կը թերագնահատէր թրքական ուժերը եւ կը գերագնահատէր հայկական բանակին ռազմական կարողութիւնը»⁴⁸:

РЕЗЮМЕ

В статье освещаются события 1920 года, положение в Карсской области в дни турецкого вторжения и причины, сыгравшие значительную роль в ходе войны и позорных поражений армянской армии на Карсском фронте. Эти поражения были вызваны не численностью турецких войск или военным преимуществом, которого в действительности не было, а деморализацией армянских войск, действовавших на Карсском фронте. В статье также выясняются основные причины этой деморализации — иными словами это предательская деятельность высшего военного командования Карса, в частности, генералов Овсепяна и Даниэла Бек-Пи-

⁴⁶ Անդ, էջ 365—366:


⁴⁷ Անդ, էջ 172:

⁴⁸ Էջեր մեր ազատագրական պատմութենէն, Բ. Հայ. հանրապետութեան վերջալոյսին, գրեց՝ ԳԵԴ. Տ. ԲԱՂՏԱՍԵՐԵԱՆ, Փարիզ, 1937, էջ 232:

румяна, которые, пользуясь покровительством министра обороны Рубена Тер-Минасяна не только не понесли наказания но и привели страну и народ к поражению и тяжким бедствиям.о и провалили войну и довели страну и народ до тяжелых бедствий.

SUMMARY

The article covers the situation in Kars province during the Turkish invasion of 1920 and the factors that played a significant role in the course of the war and the disgraceful defeats of the Armenian army on the Kars front. Those defeats were caused not by the number of Turkish troops or military advantages, which in reality did not exist, but by the demoralization of the Armenian troops operating on the Kars front. The article also elucidates the main reasons for this demoralization, highlighting the incompetence of the Kars high military command, in particular generals Hovsepyan and Daniel Bek-Pirumyan, who, enjoying the patronage of Defense Minister Ruben Ter-Minasyan, not only went unpunished, but also failed in winning the war and brought the country and people to grave disasters.



ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ԸՍՏ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԱՆՂԵՍԻ ԽՄԲԱԳԻՐ ԱՐՇԱԿ ՉՈՂԱՆՅԱՆԻ՝

ՄՈՒՏՔ

Հայ ազգի մեծագույն նվիրյալ Արշակ Չոպանյանի անունը սերտորեն կապված է նրա խմբագրած «Անահիտ» հանդեսին, որի նշանակության մասին քաջատեղյակ են ոչ միայն նրա գրական-գրաքննադատական վաստակին փոքրիշատե առնչվողները, այլև հայ մտավորական եւ գիտական հասարակությունը:

Չոպանյանի խմբագրած այլ հանդեսների շարքում առանձնանում է Փարիզում հրատարակված «Վերածնունդ» պարբերականը, որի տպվելու առաջին օրից 2 տարի շարունակ (ամիսը 2 անգամ պարբերականությամբ) Չոպանյանը՝ որպես խմբագրապետ եւ քաջահմուտ հասարակական-ազգային գործիչ, լուսաբանել է քաղաքական-հասարակական-մշակութային իրադարձությունները, յուրաքանչյուր համարում հրապարակել ծավալուն հոդվածներ, ուսումնասիրություններ, բանախոսությունների, ճառերի գրավոր տարբերակներ, թարգմանություններ օտարազգի այն հեղինակներից, որոնք հայանպաստ դիրքորոշումներով են հայտնի, քաղաքական գործիչներին՝ անգամ Ֆրանսիայի նախագահին, Անգլիայի նախարարին, այլոց ուղղված ու նրանցից ստացած նամակներ, որոնցում երեւում է օտար հետազոտողների անթաքույց հարգանքը Չոպանյան մարդ եւ մտավորական տեսակի հանդեպ, նրա շնորհիվ աշխարհին ներկայացած հայ ազգի հանդեպ հիացումը, հարգանքը եւ նրա վշտերին ու ցավերին ապրումակցումը:

«Վերածնունդ»-ի ստեղծման շարժառիթը խորապես ազգային էր. գերծ մնալով կուսակցամոլության ախտից՝ ծառայել ազգօգուտ գործերով, դարձնել «ազգային ոգին եւ ազգանվեր գործունեությունը կենդանի եւ

^{1*} Ստացվել է՝ 11.11.2022, գրախոսվել է՝ 25.12.2022: Էլ. հասցե՝ nairamelsiki@gmail.com:

վառ»² Սփյուռքում հայեցի դիմագիծը պահպանելու, ուժացման չգնալու համար: Այս նպատակներին են միտված Չոպանյանի՝ հանդեսում տպագրած հոդվածները, քաղաքական-հասարակական-մշակութային վերլուծությունները, անգամ թարգմանած քնարերգությունը: Խմբագրի ընդգրկած հարցերի շրջանակը բավական լայն է՝ առանցքում ունենալով 1917–18 թթ. դեռ ծավալվող համաշխարհային պատերազմն ու այնտեղ իր գոյության կռիվը մղող հայ ազգի, նրա շահերի ու իրավունքների, ազգային հզոր ինքնության ու ոգու ներկայացումն օտար աշխարհներին:

Որպես խմբագիր՝ Ա. Չոպանյանը, խմբագրապետ-տնօրեն Լեւոն Համբարձումյանի հետ, առաջնորդվելով միայն ազգաշահ քաղաքականությամբ, երկու տարում ձեւավորեց հանդեսի ազգային կայուն ուղղվածությունը: Երախտավոր մտավորական խմբագրի՝ որպես ազգային-հասարակական գործչի կյանքի այս երկու տարիները կարելի է դիտարկել իբրեւ մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով նրա խմբագրական աշխատանքի ազգային-գաղափարաբանական սեւեռվածությունը, հայանպաստ դիրքորոշումը:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱԲԱՆՈՒՄԸ՝

ՈՐՊԵՍ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀՂԱՅՔ

Օտար հողում հայ ազգի դեսպան Չոպանյանը 1917–18 թթ. եւ դրանից էլ վաղ վայր է դրել գրողի ու բանաստեղծի իր գրիչը: Ուշագրավ է, որ պարբերականի միայն երկու համարներում է նա թարգմանում օտար հեղինակների՝ Ժան Էքարի եւ Էմիլ Պիգնոթի բանաստեղծությունները, որոնք նվիրված են «բզկտված ու բազմաշարչար» հայ ազգին: Օտարազգի բանաստեղծները լիահույս են, որ բոլոր ազգերի միջից հատկապես հային հասած երկարատեւ տառապանքներից հետո նա ուղղվելու է դեպի հանդարտ ու հաղթական, նորածագ արշալույսները³: Գեղարվեստական շատ խոր արժեք, իհարկե, չունեն բանաստեղծությունները, բայց այն հանգամանքը, որ սրանցում օտար բանաստեղծները Հայաստանի անցյալն ու ապագան խտացնող տողեր են երկնել, ինքնին մի հավելյալ ու խոսուն փաստ է այն մասին, որ

² «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիվ 1, հուլիսի 14, էջ 1:

³ Տե՛ս «Վերածնունդ», 1917, թիվ 1, հուլ. 14, էջ 23–24, ինչպես նաեւ «Վերածնունդ», 1917, թիվ 3, սեպ. 14, էջ 81–82:

Զոպանյանի վաստակն այս ազգանվեր գործում՝ հայությանը Եւրոպային ծանոթացնելու եւ դրանով իսկ ճանաչում ձեռք բերելու, անուրանալի է: Իրականում այս երկու գեղարվեստական գործերն են միայն, որ զբաղեցրել են Զոպանյանի միտքը. հետագա համարներում շուրջ երկու տարի ազգային գործիչ-խմբագրապետը իրեն լիովին նվիրում է հրապարակախոսութեանը: Ինքն այդ մասին գրում է. «Երբ մեր ազգային հարցը իր լուծումը գտած ըլլայ՝ հայկական անկախութեան անտարակուսելի հռչակմամբ եւ իրականացմամբ, ես.... հանգիստ խղճով պիտի կարենամ քաշուիլ եւ ինքզինքս ամբողջովին նուիրել զուտ գրական աշխատանքներու,որոնց նպատակը պիտի ըլլայ դարձեալ հայ անուան վարկը բարձրացնելու նպատակը»⁴: Հայրենիքի համար օրհասական ժամին ազգային հարցն ավելի բարձր է, քան գեղարվեստական գործունեությունը. այն ինքնանպատակ է, երբ ազգի խնդիրներին անհաղորդ գրողը գեղարվեստով է զբաղվում կամ փորձում է քնարով կռվել (թերեւս կարող ենք հիշել Մ. Նալբանդյանի քաղաքացիական քնարերգությունը, հատկապես «Մանկության օրեր» բանաստեղծությունը): Գրեթե մեկ դար անց նույնատիպ միտք է արտահայտում Զորի Բալայանը. «Պատահական չէր, որ փիլիսոփաները գտնում էին, որ խառնակ ժամանակներում արվեստագետը պետք է սնվի միայն հրապարակախոսության ցամաք հացով, որը գեղարվեստական գրականության օպերատիվ եւ մարտավարական ժանրն է»⁵:

«Վերածնունդ» պարբերականի բոլոր համարներում հստակ երեւան են գալիս Զոպանյանի միտումնային դիրքորոշումները՝

1. դիտարկել հայ ազգը իր ինքնության կերպում, ընդգծել եւ ներկայացնել հայի ազգային դիմագիծը, նրա անպարտելի էությունը, պայքարող տեսակը, մատնանշել թուրքից տարբերվող հայի արարող տեսական աշխարհի տեսադաշտում,

2. ներկայացնել ցեղասպանության հետեւանքով մարդկային եւ տարածքային կորուստներ ունեցող հայ ազգը Համաշխարհային պատերազմի բովի, այլ ազգերի հետ (ոչ թուրքի) արժանապատիվ հարաբերությունների եւ համաշխարհային քաղաքական պատմության ու մշակույթի համաբնագրում,

⁴ «Վերածնունդ», 1918, թիվ 24, դեկ. 14, էջ 480:

⁵ «Գրական թերթ», Երեւան, 2009, թիվ 1 (2965), 30 հունվարի, էջ 6:

3. տեսնել հայ ազգի ապագան միմիայն հայերի կուռ համախմբվածության եւ ազատագրական պայքարի, հայ ազգի ինքնավարության, անկախ երկիր ունենալու, Սփյուռքի եւ հայրենիքի սերտ միասնության մեջ:

Այսօր, երբ ականատես ենք հայի ինքնության համատարած ձեւախեղման, ազգային հերոսների նպատակադրված աղճատման, «Վերածնունդ» պարբերականի խմբագիր Չոպանյանի՝ 100-ամյա վաղեմությունն ունեցող հողվածների յուրաքանչյուրը հույժ արդիական է, եւ ըստ այդմ՝ նրա՝ այս երկու տարիների ազգային հարցերի տարաբնույթ քննումներին հարկ է մոտենալ կարեւորության մեծ գիտակցումով, քանզի մեծ մտավորականի առաջադրած ազգային խնդիրների, ազգային ինքնության պատմական ճշմարիտ ճանաչությամբ, քաղաքական վայրիվերումների մեջ ազգի գոյապահպանման արժեքներով միայն կարելի է այսօր դիտարկել ներկան եւ չձեւախախտել ազգի ապագան:

ՀԱՅ ԱԶԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՈՒՄ

ԵՒ ՆՐԱ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՏՅՈՒՄ

Չոպանյանի հողվածների, բանախոսությունների, ճառերի ու թարգմանությունների եւ հղած նամակների մեջ շոշափած թեմաները միջգիտակարգային են՝ քաղաքականություն, պատմություն, արվեստաբանություն, գրականություն: Զերծ մնալով այս ոլորտների իրերի խորքը թափանցելուց՝ կքնենք դրանցում բացազատվող ազգային այն հայեցակարգը, որով խմբագիր Չոպանյանը պարզում է հայ ազգի լինելիության խնդիրները:

Արշակ Չոպանյանի մեծագույն մտահոգությունը եւ կյանքի նպատակը Եւրոպային եւ աշխարհին հայ ազգին, նրա հզոր ու առանձնահատուկ ինքնությունը ներկայացնելն էր: «Նրա անձնական գերմարդկային ջանքերին ենք պարտական,— գրում է Կ. Դալլաքյանը,— որ մի քանի տարիների ընթացքում Եւրոպայի առաջավոր մտավորականության կարծիքում կատարվում է բեկում՝ հայ ժողովրդի տառապանքների դիմաց արհամարհանքին զուգակցվող խղճահարությունից դեպի հարգանք ու հիացում նրա քաջարի ոգու եւ բարձր մշակույթի նկատմամբ»⁶:

Ժիշտ է, Չոպանյանի հրապարակած նյութերում հաճախ է շեշտվում հայի՝ ցեղասպանված, դարերով լքված լինելու փաստը, բայց հեղինա-

⁶ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Արշակ Չոպանյան. կյանքը եւ գործը, Երեւան, 1987, էջ 94:

կը նախեւառաջ պայքարող, իր իրավունքների ու ազատութեան համար մարտնչող, ըմբոստ ու քաջ հային է ներկայացնում: Հայի «հաւատքը, գործելու եռանդը, խեղճին մը սէրը» հրաշքներ են գործում. դպրոցների բացման իր ճառերում մեծ մտավորականը կարեւորում է հայերեն խոսելու, գրելու հրամայականը, խրախուսում այն հայրենանվեր անհատներին, որ օտար հողում անգամ ազգային ինքնութիւնը պահպանելու համար դպրոց ու թերթ են հիմնում: Այսօր, երբ մայրենին լրջորեն վտանգված է, Ա. Զոպանյանի խոսքերը խիստ արդիական հնչեղութիւն ունեն. ազգային դիմագիծը պահելու, հայ մնալու համար հայերեն խոսել եւ գրել է պետք: Հայ ինքնութեան տարրերից կարեւորագույնը՝ հայերենի հարգնք իմացող հայն է մեծարում իր ազգը եւ դրանով նաեւ օտարից հարգանք ձեռք բերում. «Երբ մենք կը յարգենք մեր ազգը, օտարն իսկ կը մղենք, մեր տան մէջ կամ՝ դուրսը, յարգել զայն»⁷: Իր ցեղի իրական արժեքը, իր մշակույթն ու պատմութիւնը, իր երկիրը ճանաչող հայն է ազատութեան մարտիկը, որ երբեք չի հանդուրժում օտարի լուծը՝ թուրքի բռնապետութիւնը: «Յեղ մը որ ունի հին պատմութիւն ու նուրբ մշակույթ, ցեղ մը որ ստեղծած է աշխարհիս ամենէն ճոխ ու գեղեցիկ լեզուներէն մին, ու ամէն ձեւերուն տակ իր արուեստագիտական հանճարին ապացոյցները տուած է, ցեղ մը որ ազատութեան խորին ըմբռնումը ունէր եւ պաշտամունքը, որ միշտ կը յիշեր անցեալը եւ իր ազգային հոգւոյն ու կեանքին բոլոր յատկանիշները անկեղծ պահած էր, չէր կրնար մինչեւ ետքը համակերպիլ թուրք բռնապետութեան ծանր ու ստորնացուցիչ լուծը կրելու...»⁸:

Պարբերականի առաջին իսկ համարում՝ «Յուլիս 14» խորագրով նյութում, առանց ավելորդ սնամիառութեան եւ խանդավառութեան, հոգեվածագիրը հատկանշում է հայ մարդու գլխավոր գծերը՝ «խոհական ազատամտութիւն ու առողջ ազգասիրութիւն»: Այս կարեւորագույն հատկութիւններով էլ պայմանավորված՝ հեղինակն առանձնացնում է հայի ընկալման երկու մոտեցում՝ նահատակվելով ազատութիւն ընտրելը (Վարդան Մամիկոնյան) եւ խելոք մնալով, ոտքի տակ չընկնելով, նվաստանալով ապրելը (Վասակ Մամիկոնյան): Հայ մտավորականների՝ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի եւ ուրիշների ստեղծա-

⁷ «Վերածնունդ», 1917, թիվ 1, հուլ. 14, էջ 9:

⁸ «Վերածնունդ», 1918, թիվ 11, էջ 247:

գործություններում ու հողվածներում եւս կա հայերի նման բաժանում, որ տարատեսակ ձեւակերպումներով է դրսեւորվում: Առավել ջղուտ բնութագրումներ են տալիս հայ ազգային իմաստաբանական մտքի դարբիններ Գ. Նժդեհը՝ հայի նվաստացող տեսակին «հայի տականք» անվանելով, եւ Հայկ Ասատրյանը՝ նրան որպէս «օրվա հայություն» բնութագրելով: «Հայութիւնը պատմականօրէն բաժանւած է երկու հակամարտ հոսանքների: Դրանցից մեկը «ցեղահոգ» է, միւսը՝ անձնազոհ: Մէկի ճակատը պսակում է ցեղի ձեռքը, միւսի էությունը կնքւած է ընկածութեան մրով: Մէկը վառում է ցեղի կենդանանորոգ զօրութեանականութեամբ, միւսը՝ մոխիր է միայն: Մէկն առաջնորդում է ցեղի լինելիական բարոյականով, ինքնակատարելագործումի տենչ ունի եւ մարմնացնում է ճակատագիրը յաղթահարելու, բարձրանալու բնաճիգը, միւսը՝ էութեամբ ստորնահակ է, «տականք»⁹,— գրում է Հ. Ասատրյանը:

Չոպանյանը, անտարակույս, առաջին տեսակի համակիրն է ու երկրպագուն եւ միշտ բոլոր հողվածներում մերժում է բռնութեամբ եւ նվաստացած ապրելու, թշնամու, այս պարագայում թուրքի հետ ծնկած բանակցելու ձեւը: «Որովհետեւ Հայը Վարդանի ազգն է.... Հայը իր պատմութենէն սորված էր ընդվզիլ բռնութեան դէմ: Արեւելքին մէջ՝ ան հին մարտիկն է եղած ազատութեան, յաճախ անբաղդ, բայց անընկճելի եւ անխորտակելի, միշտ անվհատ ու կենդանի մարտիկը»¹⁰: Ինչպիսի ցնծութեամբ ու ոգեւորութեամբ է Չոպանյանն ընդունում թուրքին դիմադարձ կանգնելու ու նրա դէմ քաջաբար պայքարելու լուրերը: Նա համեմատում էր, քննում տարբեր աղբյուրներ, ընդամին՝ ուսումնասիրում էր նաեւ թուրքական զեկույցներ, որոնցում գրված էր, որ հայերի դիմադրությանն են հանդիպել Նրզնկայում, Էրզրումում եւ այլուր. «....Թող թուրքը ըսէ թէ այդ դիմադրութիւնը «դիւրաւ» փշրուեցաւ, էականը այն է, որ հայկական դիմադրութիւն գտեր է իր առջեւ»¹¹: Ազգաշահ գործչի համար հայի պայքարող, դիմադրող տեսակն էր կարեւոր: Խոսքը վերաբերում էր մանավանդ թուրքի վայրագությունները չմոռացող հայ մարտիկներին, կամավորներին, զինվորներին, որ հայ հերոսության ու ինքնապահպան ուժի «ամենէն աւելի թանկագին վերագառքնումն»¹² էին: Այս ուժն էր ծնում այն

⁹ Հ. ԱՍԱՏՐՅԱՆ, Հատընտիր, Երեւան, 2004, էջ 132:

¹⁰ Անդ, 1917, թիվ 1, էջ 4:

¹¹ «Վերածնունդ», 1918, թիվ 6—7, էջ 125:

¹² «Վերածնունդ», 1918, թիվ 3, էջ 261:

իրավունքը, որ, ըստ Չոպանյանի, պիտի տաներ ճշմարիտ հայ ինքնություն ունեցող յուրաքանչյուր անհատի դեպի ազգային երազի՝ ինքնավար երկրի ստեղծմանը: «Բայց Անդրանիկ եւ իր մոռնալ չգիտցող քաջերը թուրք ծուղակին մէջ ինկած եւ պահպանած են հայ մարտական ուժը, որմէ միայն կրնայ ծնիլ հայ իրական անկախ տէրութիւնը»¹³:

Նրանց օրինակով՝ ազգային հպարտություն եւ ինքնասիրություն պետք է ունենալ միշտ եւ երբեք չստորանալ թշնամու առջեւ: Ազգային այսպիսի ինքնասիրության դիրքերից է, որ Չոպանյանը չի ընդունում 1918 թ. լրագրերում տարածված լուրը. «Բանակցիլ Թալաաթի հետ, եւ Պոլսոյ մէջ... Հայ այդպիսի որոշում տալ մտքէն պիտի չանցնէր»¹⁴: 1917 թ. հոգվածներից մեկում հայերի եւ թուրքերի համակցության մասին խոսելիս Չոպանյանը դա ընդունում է միայն մեկ պայմանով, եթե «Իրենց ձեռքում մնալիք Թուրքիան հաջողեցնեն քաղաքակրթ դարձնեն»¹⁵, եւ այդ ժամանակ միայն կարող ենք «չմոռցուելիքը մոռնալ» ազատության համար. պայման, որ ոչ մի ժամանակում իրականալիք չէ: Չոպանյանի այս խաղաղասիրական, բայց միամիտ ու անհեռանկար ցանկությունը ածանցվում էր գուցե բանաստեղծական էությունից: Այսօր անգամ այն գրավիչ ու գայթակղիչ է խաղաղության ձգտող, բայց իրական վտանգը չտեսնողների համար, բայց թուրքի կործանարար բնույթը քաջ գիտակցող հայի համար նրա՝ անցյալի ու ներկայի վայրագությունները երբեք «մոռցվելիք» բաներ չեն: Ի դեպ, Չոպանյանի այս լավատեսությունն անհիմն չէ. նա տարանջատում է օսմանյան թուրքերին եւ Ռուսաստանի թուրք-թաթարին եւ երազում հայի հետ հավասարազոր նրանց բարօրության եւ ազատության մասին: Բայց ուշագրավ է, որ 1918 թ., երբ արդեն հստակ գիտեր Վարուժանի ու Սիամանթոյի ողբերգական նահատակության մասին, հիմնովին փոխում է կարծիքը, ընդվզում այդ բարբարոս տեսակի դեմ՝ համարելով, որ թշնամու առաջ չպետք է խոնարհվել, նրա հետ ցանկացած բանակցություն զուր է, եւ նրան պետք է պարտադրել միայն դիմադրություն, հաղթանակ եւ ի վերջո, անկախ ու ինքնավար երկիր ունենալը:

Ուշադրության արժանի են հատկապես ճառերում հնչող ազգային հարցերը եւ դրանց պարզաբանումները: Ականատեսների վկայությամբ՝

¹³ «Վերածնունդ», 1918, թիվ 16–17, էջ 529:

¹⁴ Անդ, էջ 528:

¹⁵ «Վերածնունդ», 1917, թիվ 3, էջ 54:

Ա. Չոպանյանի ճառերը մանավանդ ազգասեր հասարակության շրջանում արցունքների առիթ են դարձել, տոգորել ներկաներին ազգային վեհ գաղափարներով ու դրանց իրականացման հաստատակամ ցանկություններով, վարակել նահատակված հայ մտավորականների ոգեկոչման խորհրդավորությամբ: 1917 թ. նոյեմբերի 10-ին կազմակերպած սգահանդեսում Չոպանյանը պարզել է այն դատողությունը, որ ցեղասպանված հայ մտավորականները «Ազգին հոգեկան ուժին վառաբանեմ էին, ազգին ապագայ վերածնության սիմեոն ըլլալ կոչուած էին»¹⁶: Ճառախոսը, ներկաների համար հնչեցնելով մոտ երկու տասնյակ անուններ, կանգ է առնում Վարդգեսի անվան վրա. դեպքը, որ նա պատմում է, իրոք ցնցում է ազգային ինքնության բացառիկ նկարագիր ունեցող, թուրքի առաջ չխոնարհվելու, մահվան աչքերին աներկյուղ նայելու հայի հաստատակամությունը: Թալեաթի խուքին, թե՛ «Վճռական պայքարն է ասիկա, կամ մենք թուրքերս կամ դուք հայերդ տակը պիտի երթանք. Թուրք եղիր, քեզ կ'ազատեմ: Վարդգեսը պատասխանում է՝ Ուրեմն դուն Հայ եղիր»¹⁷: Ավերոդ, տիրելու նկրտումներով մոլազար թուրքից տարբերվող հայի ազգային ինքնության այս անպարտելիությունը կապված է մարդկության արարչական լավագույն գաղափարներին¹⁸: Սա բացառիկ հայի ինքնության չոպանյանական հավատամքն է նաեւ ազգի հարատեւության եւ նրա ապագայի հույսի մշտագո առհավատչյան, ըստ Չոպանյանի՝ «Անմահ խոսք մը ժպտուն արութեան ու հայ ազգի ապագային վրայ անդրդուելի հաւատքի»¹⁹:

1918 թ. «Վերածնունդ»-ի համարներում, երբ պատերազմի բոլոր ճակատներում թուրքն առաջխաղացում ուներ, խմբագրի անունով ոչ մի հոդվածում կամ ակնարկում հուսահատություն չկա: Նա կարծում էր, որ «մեծագույն վտանգը յուսահատությունն է»²⁰, եւ իր անհուն լավատեսությամբ ու մեծագույն ազգասիրությամբ փաստում. «Անպարտելի է

¹⁶ «Վերածնունդ», 1917, թիվ 5–6, էջ 135:

¹⁷ Անդ, էջ 138:

¹⁸ Ազգասիրության ու հայոց ոգու անպարտելիության, հայ ազգի իրավամբ հզոր լինելու այս հավատը խարսխված է հայ ցեղի երկու մեծագույն գիտակ այրերի՝ Հայկ Ասատրյանի եւ Գարեգին Նժդեհի սկզբունքներին, եւ այս երկու երախտավոր հայերին անդրադառնալիս, անտարակույս, պետք է արժանին մատուցվի Չոպանյանին՝ նկատի առնելով նրա համակողմանի իմացությունը եւ անվերապահ, բայց անաչառ պաշտամունքն առ սեփական ազգն ու նրա մշակույթը:

¹⁹ «Վերածնունդ», 1917, թիվ 5–6, էջ 135:

²⁰ «Վերածնունդ», 1917, թիվ 3, էջ 164:

Հայը, որովհետեւ իր ազգային ինքնութիւնը կը յենուի մարդկային ազնիւ իտէալի մը վրայ, եւ ոչ թէ... տիրելու իղձով միայն լցուած եւ անգիտակից հօտ մը իրենց գործիք ընող պետերու անձնական փառասիրութեան եւ բիրտ զօրութեան վրայ: Անպարտելի է հայը, որովհետեւ կեանքի տարր է, եւ ոչ քանդումի»²¹:

Վերոնշյալ սգահանդեսում վկայակոչելով Զոհրապի վերջին բառերը՝ «Մնաք բարով, հայեր»՝ ուղղված տարագիր ազգակիցներին՝ Չոպանյանը հաստատականորեն պարզում է իր համոզումը, որ գալու է հայութեան արշալոյսը. «...Արիւնլուայ աւերակներէն ոտքի կանգնած Մայր-Հայաստանը կզգայ բոլոր մարտիրոսներու փառապանծ հոգիներու գերագահ ներկայութիւնը»²²:

Հայ նահատակ գրողների ավանդած լույսը, նրանց արյան շարունակութեան հույսն է այն ուժը, որով պիտի ապրի հայ ազգը. «Ես պիտի մեռնիմ, գիտեմ, բայց Հայաստանը չպիտի մեռնի»²³, — տարագիր գրողի խոսքն իր ճառում հղում է Ֆրանսիացի հայագետը: Ազգի պահպանման կարեւորագույն հարցը նաեւ այստեղ է գտնում Չոպանյանը. հայ ինքնութեան ժառանգականութիւնը, որ փրկութիւնն է ազատագրում է բերելու: Խոսելով նահատակ մտավորականների կորսված հսկայական ներուժի, մասնավորապէս, Ռուբեն Զարդարյանի արվեստի մասին՝ հետազոտողն առավել քան վստահ է, որ հայի ազգային ստեղծագործ ու արարող գենը չի կորչելու, որովհետեւ այս դեպքում Զարդարյանի երկու որդիները արդեն իսկ հոր գրական ու համբավաբեր ուղին էին ընտրել: «Ու այդ ուժը, այդ լույսը, աշխարհիս բոլոր թուրքերը չեն կրնար ջնջել, չեն կրնար մարել: Բոլոր թուրք ուղեղները քով քովի գալով հայրիկին պէս (Ռուբեն Զարդարյանին նկատի ունի, որի երկու որդիները ժառանգել էին հոր տաղանդից.—Ն.Բ.) էջ մը չպիտի կարենային արտադրել: Ահա՛ ամուր կռուան մը յոյսի: Ինչքան ալ մեծ ըլլայ աղէտը, որ մեզ հարուածեց, ինչ ալ ըլլան՝ վճռական փրկութենէն առաջ՝ դեռ մեզի սպառնացող վտանգներն ու դաւերը, այս ազգը չի կրնար ջնջուիլ, քանի որ ունի այդ ուժը, որ գերագոյն ուժն է»²⁴:

Արշակ Չոպանյանի այս խոսքերը վհատ լավատեսութեան կամ անհիմն երեւակայութեան ծնունդ չեն: Նա համարում էր, որ իր լավատեսու-

²¹ «Վերածնունդ», 1918, թիվ 1—2, էջ 4:

²² «Վերածնունդ», 1917, թիվ 5—6, էջ 141:

²³ «Վերածնունդ», 1918, թիվ 12—13, էջ 287:

²⁴ «Վերածնունդ», 1918, թիվ 14—15, էջ 297:

թյունն ամուր ու հաստատակամ առաջ շարժվելու խթանն է եւ «հայ ցեղին ամեն կողմ՝ յայտնած անվախութեան ու վստահութեան ոգիին մէկ մասնիկը, մէկ ցոլքը»²⁵։ Տողերի հետեւում երեւում է Չոպանյան գեղագետի երազուն հոգին, որ երբեք հուսախաբ չի լինում եւ մահասարսուռ ամեն պատմութեան միջից անգամ պարզում է իր լուսե երազանքն առ մայր Հայաստանը, որ պիտի հառնի ու իր շուրջը հավաքի հայ ինքնությունը կրող հայորդիներին։

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՋՐ՝

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԵՐԿՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

«Վերածնունդ» պարբերականի խմբագրապետի շոշափած հարցերի շրջանակի առանցքում գտնվող ազգային երազի՝ ազգային ինքնավար երկրի ստեղծման շուրջ խորհրդածությունները երեւան են գալիս երկու տարվա հասարակական-քաղաքական բովանդակություն ունեցող գրեթե բոլոր նյութերում։ Պետութեան ստեղծման ճանապարհին Չոպանյանն առաջադրում է մի շարք խնդիրներ՝

1. դիվանագիտությամբ աշխարհին ճանաչելի դարձնել Հայկական հարցը՝ դաշնակիցների հետ համախոհ եւ աջակից լինելով,

2. դաշնակիցների, հատկապես ռուսների օգնությամբ, նաեւ սեփական ուժերին հավատալով ու զենքի ուժով դիմագրավել թուրքին,

3. մաքրել հայրենիքը թշնամուց ու ստեղծել ինքնավար երկիր։

Այս խնդիրների առաջադրումն ունեն թիրախային լուծումներ՝ համահայկական թիվ մեկ նպատակի շուրջ արեւելահայութեան, արեւմտահայութեան եւ սփյուռքահայութեան ազգային համախմբում, ջանադիր ու նպատակային գործունեութեան շարունակական իրազեկումներ հասարակութեան մեջ, լուսաբանումներ հայ եւ օտար մամուլում, բանախոսություններում, ելույթներում։

Ինչպես վերը նշել ենք, ընդունելով երկու տիպի հայի՝ ազատութեան համար պայքարող ու մեռնող եւ լուելով, հաշտվելով, նվաստանալով ապրող, Չոպանյանը՝ որպէս խմբագիր, սկզբունքորեն հարում է զենքով ազատությունը նվաճելու գաղափարին։ Այս առումով նա տարօրինակ, ազգային տեսակետից անընդունելի է համարում խոսքերը, որ վերագրում են հասարակական եռանդուն գործիչ Ալեքսանդր Խատիսյանին,

²⁵ «Վերածնունդ», 1918, թիվ 1—2, էջ 29։

Թե՛ «Հայերը հասկցած են անցեալ դժուարութիւնները մոռնալու եւ Թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութեանց ապագայ մը ունենալու հարկը»²⁶։ Վերլուծական ամուր միտք ու քաղաքականապէս հասուն մտածելակերպ ունենալով, քաջատեղյակ լինելով Թուրքի վայրագություններին ու թրծված լինելով դժվար, բայց ճանաչողական լայն փորձառություն տված տարիների բովում՝ մեծ մտավորականը որոշ ժամանակ անց արդէն լիովին վստահ էր, որ Թուրքի հետ անհնարին է ոչ միայն հաշտվելը, այլեւ բանակցելը հաշտության շուրջ։ Այս իրատեսական եզրահանգումն է պատճառը, որ Չոպանյանը շատ ուշագրավ ու իրապէս ճիշտ ամփոփում է տալիս. Թուրքին հաղթելու եւ նրան հաղթանակ պարտադրելու համար զենքով պայքարել է պետք, իսկ Թուրքի պարտությունը դիվանագիտական առումով միմիայն ի՞ր դաշտում է լինելու. «Թուրքը իր արժանատի պատիժը Պոլսէն զրկուելով միայն կրնայ կրել»²⁷։ Չոպանյանը կարծես առերեւոյթ հարում է քաղաքականապէս արմատական քայլի՝ միմիայն զենքով ազատություն վերագտնելուն։ Սակայն ե՛ւ նախորդ, ե՛ւ հաջորդ հոդվածներում, իր ճառերում եւ նամակներում Չոպանյանը բարձրացնում է եւս մեկ կարեւոր գործոնի՝ դիվանագիտության դերը։ Ազգային հարցերը, ազգային խնդիրները պետք է բարձրաձայնվեն, եւ ի վերջո, Հայկական դատը բոլոր հնարավոր դիվանագիտական հանգույցներով ու խողովակներով պետք է շեփորել եւ հայտնի դարձնել։ Դրա համար պետք են հրապարակախոսություն, դիվանագիտական ճակատում աշխատանքներ, թերթերում հրապարակումներ, ազգի փրկության ու ազատության գործին նպաստող բանախոսություններ ու ճառեր։ Խելոք ապրելու եւ ոտքի տակ չընկնելու մասին խոսակցությունները՝ որպէս տեղեկություններ, դիվանագիտության դաշտում չպիտի անգամ շրջանառվեն. թշնամին, ըստ Չոպանյանի, չպիտի իմանա հայի այդ տեսակի մասին։ Միեւնույն ժամանակ «Բուն խնդիրը» խորագրով հոդվածում նա համարում է, որ քննադատություն պետք է լինի անգամ դիվանագիտական ոլորտում. «անատամ» ու անառողջ գովասանությունը կարող է վնաս տալ, իսկ կրկնակի վնաս կարող է տալ դիվանագիտական կարեւոր հաղորդագրություններ ունեցող, բայց անճշտություններ պարունակող քննադատությունը։ Նման կարծիքի պատճառը Չոպանյանի՝ որոշակի

²⁶ «Վերածնունդ», 1918, թիվ 16–17, էջ 529։

²⁷ «Վերածնունդ», 1918, թիվ 12–13, էջ 261։

ուղղվածության հոգվածների մերժումն է եղել այլ պարբերականների կողմից, քանզի այլ խմբագիրներ համարել են, որ Չոպանյանն ավելորդ քննադատություն է կատարում՝ հայերին մեղադրելով ծայրահեղ հանդուրժողականության եւ նվաստացուցիչ զսպվածության համար²⁸:

Դիվանագիտական ճակատում Հայկական դատի հաղթանակի համար ազգասեր գործիչը կարեւորում է հայկական քարոզչական գործունեւորի ազդեցիկությունը ոչ միայն Ֆրանսիայում, այլեւ ԱՄՆ-ում, Իտալիայում, Անգլիայում եւ այլուր, կարեւորում է այս առումով ոչ միայն խոսքը, այլեւ գործը՝ հանգանակությունը, օգնությունը կամավորականներին, Կովկասի հայրենակիցներին անվերապահ աջակցություն հայտնելը եւ այլն՝ ըստ էության՝ դառնալով հայկական քուէաորսի (lobby) ստեղծման առաջին մունետիկներին: Հայրենիքի հողի վրա ռազմական պայքարը, ըստ Չոպանյանի, պիտի մղվի նաեւ «փրօփականտի եւ դիւանագիտական» պայքարի համադրութեամբ: Իրենք՝ Սփյուռքում ապրողները, այդ առումով, բացառիկ դեր պիտի կատարեն հայրենիքում կռիւղ իրենց ազգակիցների համար՝ դառնալով նրանց թիկունքն ամրապնդող, միջազգային հանրության աչքի առջեւ իրենց մարտնչող հայրենակիցներին պաշտպանող յուրատեսակ վահան: Շատ ուշագրավ ու այսօր էլ արդիական իր այս համոզումը հայտնելով՝ Չոպանյանը նշում է բազմաթիւ գործիչների, որոնց հայօգուտ գործունեւության համար պակասում են որոշակի նախաձեռնություններ՝ այցելություններ քաղաքական-հասարակական վայրեր, թերթերում լուսաբանումներ, շահեկան զրույցներից մինչեւ բանախոսություններ ու ճառեր, ընդհուպ հատուկ միջոցներով հայանպաստ դիրքորոշումների ձեւավորում²⁹:

²⁸ Տե՛ս «Վերածնունդ», 1917, թիւ 2, էջ 37:

²⁹ Հետաքրքիր զուգադիպութեամբ նմանատիպ մտքեր է հայտնում հայ ազգային ու իմաստասիրական մտքի մեծ տաղանդը՝ Հայկ Ասատրյանը: 1943 թ. դեկտեմբերի 29-ին, ի պաշտպանութիւն ձեռնարկուած Գրեգորի Նժդեհի եւ մյուսների, նա գրում է. «Մեզ համարում են (Եւրոպայում.—Ն.Բ.) առեւտրական ժողովուրդ՝ անմարտունակ, ինքնապաշտպանութեւն անընդունակ, բարոյապէս անլիարժէք եւ խարդախութեամբ ապրող: Չեն ուզում հավատալ, որ հայը հերոսական ոգի ու պատմութիւն է ունեցել... Ժողովուրդները ոչնչանում են նաեւ մյուսների մասին ունեցած սխալ գիտելիքների եւ իրենց մասին ուրիշների կազմած թշուր կարծիքի հետեւանքով: Մենք չունենք գիտականորեն, ոչ էլ հոգեբանորեն կազմակերպուած ազգային քարոզչութիւն: ...Ազգային քարոզչութեան գործը պահանջում է ձեռքազատուել պատահականութիւններից, կամայականութիւնից եւ ոչ գիտական մոտեցումից: Այն պետք է կազմակերպվի որպէս համազգային գործ»: Հ. ԱՍԱՏՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 178:

Կարծում ենք, որ Հ. Ասատրյանը չէր կարող նեղ իմաստով ծանոթ լինել Չոպանյանի հոգվածին (ուշագրավ է, որ միմյանց մասին որեւէ հիշատակման չենք հանդիպել, այնինչ

Այս պատճառով նա առանց վարանման գրում է անգամ Ֆրանսիայի նախագահին՝ բազմաթիվ ակնառու փաստերի ցույց դնելով ու իրավամբ պահանջելով այդ երկրի ուշադրության սեւեռումը հին ու տառապած ժողովրդի ողբերգության վրա: Ռուս-թուրքական պատերազմում 4 ամիս շարունակ կռվող հայերի անուրանալի ու անձնագոհ քաջագործությունների, եղեռնազարկ եղած ժողովրդի սխրանքները միթե, Ֆրանսիան, ըստ Չոպանյանի, չպիտի հավուր պատշաճի բարձրաձայներ. միթե այդ իրավունքը հայերը՝ որպես դաշնակից զորքերի ամենահավատարիմ կռվողներ, չունենին: «Հայոց այս քաջասիրտ ընթացքը միթե արժանի չէ՞ գէթ մէկ բառով գնահատուելու՝ դաշնակից քաղաքականութեան պարագլուխներուն ճառերէն մէկուն մէջ»³⁰,— անթաքույց զարմանքով, բայց իր պարսավանքի մեջ առանց նսեմացնելու ֆրանսիացի ազգին՝ հառավելություն հայ ժողովրդի, գրում է Չոպանյանը Ֆրանսիայի նախագահին ուղղված նամակում: Ընդհանրապես, այն հարցերում, որ վերաբերում են հայի ազգային նկարագրին, Չոպանյանը, խորախորհուրդ բառերով նկարագրելով հայ ժողովրդին, ներարկում է նաեւ հայության՝ առաջադեմ այլ ժողովուրդների հետ հավասար լինելու գաղափարը. խիստ արդիական այս ըմբռնումը հիմա, երբ առավել զգալի է պարտված, նվաստացած զգալու մեծ աններդաշնակությունը, պետք է դառնա ապրելու հրամայական: «Մեր ժողովուրդը, ինչպէս ձերը (Ֆրանսիայի նախագահին է դիմում.—Ն.Բ.), ջղային է, կրքոտ, ըմբոստ ոգով, միանգամայն շատ անհատապաշտ եւ շատ ազգասէր, յառաջդիմութեան բոլոր շարժումներուն հակամէտ եւ նոյն ատեն իր աւանդութեանց սերտ փարած, ու դարերէ ի վեր զինքը հարուածող ահաւոր բազմապիսի աղէտներուն հակառակ՝ միշտ կեանքով, աշխոյժով ու նոյն իսկ զուարթութեամբ լեցուն»³¹:

Որպես դիվանագիտական եւ հայության մասին քարոզչական կարեւորագույն քայլերի վերջնարդյունք Չոպանյանն առաջարկում է ազգային հանձնախմբի ստեղծում եւ համաժողովների կազմակերպում, որոնց շուրջ կհամախմբվի աշխարհի հայությունը՝ կռվկասահայությունը՝ ռուսահայությունը, արեւմտահայությունն ու սփյուռքահայությունը:

ազգային հարցերում նրանք գաղափարապես շատ ընդհանրություններ ունեն), իսկ մտքերի նմանությունը խոսում է միայն ազգի ներկայով ու ապագայով մտահոգ, ազգային եզակի մտածելակերպ ունեցող մարդկանց ընդհանրության մասին:

³⁰ «Վերածնունդ», 1918, թիվ 14—15, էջ 515:

³¹ «Վերածնունդ», 1918, թիվ 11, էջ 246:

Արշակ Չոպանյանի՝ համաժողովի եւ հայերին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ միավորելու մասին տեսլականը բխում էր միմիայն ազգի հանդեպ անշահախնդիր սիրուց, ազգային երազանքի՝ ինքնավար Հայաստան ունենալու շուրջ համախմբման նպատակից: Այս պատճառով էլ, իմանալով իրեն ուղղված անհիմն քննադատությունների մասին, խմբագիրն անհուն տառապանքով արդարանում է եւ բարձրագույն հայտնում իր ցավի ակունքը. «Ազգային կենսական շահերուն պոռացող պահանջն է որ կը մղէ զիս այս խորհրդածույթիւնները ամբողջ ազգին առջեւ դնել»³²:

Չոպանյանը հստակ գիտի, որ հայ ժողովուրդը վճռական ընդհանրություն գտնում է իր պաղարյունությունը եւ իմաստությունը շարժվում, սին վեճերը դադարեցնում ու միաբանվում³³: Տարբեր միությունների եւ խմբակների՝ մեկ ազգային շահի՝ Հայոց դատի պաշտպանության եւ քարոզչության շուրջ համախմբում առաջարկելով հայությանը՝ Չոպանյանը համարում է, որ երկրի համար օրհասական պահերին անմիաբան եւ քաղաքականապես անհեռատես գործիչներն անգամ պետք է մեկդի դնեն անձնային, կուսակցական անհամաձայնություններն ու միասին լծվեն մեկ գործի՝ հայրենիքի փրկության գաղափարին: «Արժանի հանդիսանանք... կորովով, մեկդի դնենք անձնական ռիսալից սին ու գժուձ վեճերը...: Մեր ցույց տալիք ազնւութենէն, զոհաբերութենէն, եռանդէն, ազգային դատի շուրջ կուռ համերաշխութենէն կախում ունի հայ սուրբ երազին ամբողջական իրականացումը»³⁴:

Ըստ էության՝ հարյուր տարի առաջ Ա. Չոպանյանը, ինչպես այսօր քաղաքականապես հասուն ու բանիմաց անձինք, համարում է, որ ժողովրդին առաջնորդելն ազգի ազնվագույն մասի (էլիտայի՝ բառի բուն եւ ուղիղ նշանակությամբ) խնդիրն է: Եւ միայն ազգային խնդրի շուրջ ազգային շահով առաջնորդվողները, հանդուրժողականություն ունեցողներն ունեն իրավունք ժողովրդի ճակատագիրը որոշելու: «Քաղաքական էլիտայում, լայն իմաստով, ոչ միայն իշխանական դիրք եւ պաշտոն զբաղեցնող մարդիկ են, այլեւ հասարակության այն անհատներն ու մարդկանց խմբերը, ովքեր կարող են ազդել ոչ միայն հանրային տրամադրությունների վրա, այլեւ արգելք կիրառել ընդհանուրի շահը պաշտպանե-

³² «Վերածնունդ», 1918, թիվ 12–13, էջ 267:

³³ «Վերածնունդ», 1917, թիվ 2, էջ 41:

³⁴ Տես «Վերածնունդ», 1918, թիվ 24, էջ 481:

լու համար»³⁵,— մեկ դար անց որպես գիտական խոսք ձևակերպվում է Ա. Զոպանյանի ասելիքը:

Ներկայիս հայաստանյան քաղաքական-հասարակական պատկերն այսօր շատերն են աղերսակցում 1918 թվականի օրհասական դեպքերին, երբ հայ ժողովուրդն սպասումով երեսը դարձնում էր մեկ դեպի Ռուսաստան, մեկ դեպի Ամերիկա, մեկ Արեւմուտք: Ի տարբերություն այսօրվա, երբ Արցախին, ինչու ոչ, նաեւ Հայաստանին սպառնացող վտանգներն առավել քան ակնառու են, եւ օգնության սպասելն օտար երկրներից՝ չափավոր միամտություն՝ 1918 թվականին Զոպանյանի եւ մյուս մտավորականների, ինչպես նաեւ հասարակական-քաղաքական գործիչների նման փափագներն ազուցված էին նախեւառաջ կորսված հողերը վերադարձնելու, հետո միայն ինքնավար երկիր ունենալու հույսին³⁶: «Դաշնակիցներու պաշտպանութեան տակ բացարձակապէս ազատ Հայ Տէրութեան մը ստեղծման կարելիութիւնը»³⁷ ստիպում է Զոպանյանին խանդավառութեամբ ու լի հույսերով հայացքն ուղղել ամենից առաջ Արեւմուտքին, որի օգնութեամբ կարելի էր հասնել ոչ միայն Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հողերը հետ բերելուն, այլեւ ազատ ու ինքնավար հայկական երկրի ձեւավորմանն ու կայացմանը: Նշել ենք, որ Զոպանյանի՝ երբեմն չափազանց զգացմունքային դատողությունները խարսխված են միմիայն հայրենիքի հանդեպ ունեցած մեծ սիրոյ ու նրա ողբերգական ճակատագրի հանդեպ նույնքան մեծ ցավի վրա: Այսպիսի դեպքերում զգացապաշտ Զոպանյան բանաստեղծը հաղթում է իրապաշտ Զոպանյան վերլուծաբանին. «Թրքահայաստանն ու Կիլիկիան, միացած՝ ըստ մեր ազգային ծրագրին՝ կազմեն ազատ Տէրութիւն մը՝ դաշնակիցներուն հովանաւորութեան տակ, Ամերիկայի հզօր ու կարեւոր աջակցութեամբ»³⁸: Բայց «Վերածնունդ»-ի խմբագիրը նաեւ ներզգայական մակարդակի հետազոտող է. նա պարսավում եւ անսխալականութեամբ է փաստում որոշ երկրների, հատկապէս Ուկրաինայի եւ Թուրքիայի նենգ միությունը, մերկացնելու

³⁵ Կ. ԱԼԹՈՒՆՅԱՆ, Քաղաքական էլիտայի ձեւավորման եւ սահմանման խնդիրների ձևակերպման շուրջ, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երեւան, 2018, էջ 15, հմմտ <http://ysu.am/files/latu-13-21.pdf>

³⁶ Տէս Ն. ԲԱԼԱՅԱՆ, 30-ական թթ. արեւելահայ գրական-հասարակական կյանքը. բացասական գրաեւորումների արձագանքը Ա. Զոպանյանի «Անահիտ» հանդեսում, ԼՀԳ, Երեւան, 2011, թ. 4 (632), էջ 195–201:

³⁷ «Վերածնունդ», 1917, թիվ 2, էջ 40:

³⁸ «Վերածնունդ», 1917, թիվ 1, էջ 15:

աստիճան պարզում նրանց դաշինքի եղկելի բնույթը. «Ըոպե մը առաջ ամեն գնով հաշտութիւն կ' ուզեն կնքել՝ նոյն իսկ սատանային հետ՝ իրենց եսական տնտեսական շահերը ապահովելու, իրենց առեւտուրը վերսկսելու համար»³⁹։ Աշխարհի անտարբեր աչքի առջեւ իր ազատության համար մարտնչող ժողովուրդը մենակ է. սա անսխալ ու նյարդերի ջղաձգումով է գիտակցում անվանի գործիչը եւ ցավալի իրականության մեջ որոնում փրկության նոր փարոս՝ հառելով հայացքը դեպի Ռուսաստան։

Հատկանշական է, որ ռուսական զորքերի հետ մեծ հույսեր կապող Չոպանյանը, երբ ռուսահայերին հորդորում, խնդրում էր հախսուռն ջանասիրությամբ քարոզել պայքարող հայի հակաթուրք գործունեությունը, որը պիտի եւ լիներ եղբայրական ռուս ժողովրդի նույն նպատակը, սկզբնապես միայն մեկ-երկու հոգւածներում է մեծ խանդավառություն ապրում բոլշեւիկների՝ «մարքսիստների» հայտնվելու առթիվ։ Հետագայում արդեն նա պարզորոշ գիտակցում է «նոր ռուսների» «կեղտոտ եւ զզվելի էությունը», երբ լուրեր են հասնում մարքսիստների «տունդարձի» եւ հայկական զորագնդերն ու հայ ժողովրդին թուրքական հսկայական բանակին դեմ հանդիման մենակ թողնելու մասին։ Բոլշեւիկների հետագա քայլերը եւս մեկ անգամ ամրապնդում են Չոպանյանի այն տեսակետը, որ նրանք, զոհելով իրենց ճանապարհին հազարավոր մարդկային կյանքեր ու նվիրաբերելով արյունով պահված տարածքներ, առաջնորդվում են միայն սեփական շահով՝ «ընկերավարական երազին իրականացման համար ընդունելով ամէն ստորացում»⁴⁰։ Ուշիուշով հետեւելով կովկասյան դեպքերին, հայ ժողովրդի ազգապահպան հերոսական կռիվներին⁴¹՝ նա մեծ ցնծությամբ է ընդունում իր ազգի մանր ու մեծ հաղթանակները՝ շնորհիվ իր հայեցակարգի հիմնային գործոնների՝ անընկճելի լավատեսության ու ազգի հզոր ապագայի հանդեպ ամուր հավատի։ Չոպանյանի՝ մարդու եւ մտավորականի վեհատես որակների համապար-

³⁹ «Վերածնունդ», 1918, թիվ 3, էջ 58։

⁴⁰ «Վերածնունդ», 1918, թիվ 6—7, էջ 124։

⁴¹ Հետաքրքիր է, որ Չոպանյանը Սարգարապատի հերոսական ճակատամարտի մասին որոշ կերպով ոչինչ չի գրում. նրան միայն հունիսի կեսերին են հասնում հայ ժողովրդի համախմբված հերոսական կռվի լուրերը, որոնք առիթ են դառնում մարգարեաբար ավետելու, որ Արեւելյան Հայաստանում ստեղծվում է ինքնավար պետություն։ «Արիւնի ու խաւարի մէջ՝ իրապէս անկախ Հայաստան մըն է որ կը դարբնուի կոր, իր ձեռքով իր անկախութիւնը վաստկող Հայաստան մը»։ Տե՛ս «Վերածնունդ», Փարիզ, 1918, թիվ 12—13, էջ 260։

փակ ու բացառիկ նկարագիրն է ընդգծում Վ. Ավագյանը. «Օտար հանրույթների առջեւ նա իր ժողովրդի հոգեւոր նվաճումները, ինչպես նաեւ քաղաքական պահանջները միշտ էլ ներկայացրեց արժանապատվութեամբ՝ օտարազգի բարեկամ-մտավորականների աջակցութիւնը միշտ գիտակցելով որպէս ազնիւ գործակցութիւն Մարդու եւ Մարդկայինի հաղթանակի համար»⁴²:

Կարող ենք միանշանակ պնդել, որ Ա. Զոպանյանը «Վերածնունդ» պարբերականի հասարակական-քաղաքական-մշակութային վերլուծութիւններում ներկայանում է իբրեւ վեհապէս ամուր ու հաստատուն հավատամքով եզակի մի մտավորական, հայ ազգի բացառիկ նվիրյալ ու գաղափարային առաջնորդ, որի քննաբանած հարցերը ազգի ու նրա ինքնութեան, նրա մշակույթի ու պատմութեան մասին ելակետային են եղել հայոց պետականութեան ստեղծման ճանապարհին ու այսօր էլ պահպանում են արդիական շեշտադրումներ:


РЕЗЮМЕ

1917—18 годах Аршак Чопанян редактировал периодическое издание «Верацунд» (Возрождение), в опубликованных на его страницах аналитических материалах на общественно-политические и культурные темы прослеживается особая национальная концепция выдающегося мыслителя и общественного деятеля. Особенно в эти два судьбоносных для армянского народа года Чопанян стал выдвигать национальные проблемы и искать пути их решения. В статье подробно представлены как национальная направленность журнала, так и значение распространения национальных идей, а также аспекты мышления редактора Чопаняна, связанные с сущностью армянского народа, его историей и культурой, и его императивом — представляя армян на чужбине с лучшей стороны напоминать о героической и самостоятельной борьбе армян и их цели — о создании государства. Особое внимание уделяется общественно политическим суждениям и выводам исследователя, являющимся отправной точкой на пути создания армянской государственности и имеющим четкую современную направленность и сегодня.

⁴² Վ. Ավագյան, *Արշակ Զոպանյանի կյանքի եւ գործունեության նկարագիրը*, ՊԲՀ, Երեւան, 2022, թիվ 2, էջ 83—84, համար <http://ysu.am/files/Handes-2022-2.pdf>, մուտք 09.11.2022:

SUMMARY

A unique national paradigm of a great thinker and public figure Arshag Chobanian is revealed in the social, political and cultural analyses published in the periodical “Veratsnund” (Renaissance) and edited by Arshag Chobanian from 1917 to 1918. Especially during those two fateful years for the Armenian people, Chobanian purposefully began to put forward national problems and look for ways to solve them. The article presents in detail both the national focus of the periodical and the importance of the national ideology, as well as the aspects of editor Chobanian’s thinking related to the identity of the Armenian people, their history and culture, high representation on foreign lands, and the heroic struggle of the Armenian people to create an independent state. Special attention is paid to the political and social judgments and conclusions of the researcher, which were made at the inception of the Armenian statehood and are also relevant nowadays.



ՀՐԱԶԵԱՅ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Բանասիրական գիտություն, թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՖԵՈՂՈՐ ԴՈՍՏՈՒՄԱԿՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐ ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՃ՝

Արեւմտահայ վիպագրութեան խոշորագոյն դէմքերից մէկը՝ Յակոբ Օշականը, ափսոսանքով էր նշում, որ հայ՝ յատկապէս արեւելահայ ամենատաղանդաւոր վիպասաններն անգամ անտեսել ու անտեսում էին վէպի զարգացման այն լայն ու խոստումնալից ճանապարհը, որը ոչ միայն Ռուսաստանը, այլեւ Եւրոպան նուաճած «վէպին կիսաստուածը»՝ Ֆ. Մ. Դոստոեւսկին էր ուղենշում: Պատճառները, որ ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի հայ արձակի վրայ Դոստոեւսկին այն էական հետքն ու վիթխարի ազդեցութիւնը չունեցաւ, չվերափոխեց այնպէս, ինչպէս Ի. դարի համաշխարհային միտքն ու գրականութիւնը, այն դէպքում, երբ, ինչպէս Օշականն է նկատում, «մայրենի լեզուի մը պէս կը ներկայանար արեւելահայերուն, ուր ռուսերէնը օրուան չէ, տուններուն լեզուն էր դարձեր»², առանձին եւ խորը ուսումնասիրութիւն են ենթադրում: Ի տարբերութիւն Դոստոեւսկու՝ Չեխովը, օրինակ, աւելի էական ու ծաւալուն հետք ու ազդեցութիւն թողեց հայ արձակի վրայ, քանի որ նորավէպի համեմատ՝ վէպը հայ գրականութեան աքիլէսեան գարշապարն է: Թէ ինչու՝ առանձին՝ խորքային քննութեան խնդիր է, այդուհանդերձ՝ նոյնիսկ մեր խոշոր վիպագիրները զերծ մնացին Դոստոեւսկու ազդեցութիւնից:

«Եւ սակայն ուրիշ բան չըրաւ Բաֆֆին յաջորդ արեւելահայ վիպողներու սերունդը, — գրում է Օշականը, — գլուխն ունենալով Շիրվանզատէն: Դրէք այս մարդոց փառասիրութեան ծիրին կիսաստուածը վէպին (Տոսթոեւսկին), «Քառսը», փոխանակ ըլլալու սանկ ու նանկ վէպ մը, պիտի դառնար ութսունական թուականներէն անգին վկայութիւն: Այս նկատողութիւնները աւելի են, քան պարզ ցաւի մը թելադրանքները: Ամեն

^{1*} Ստացուել է՝ 31.10.2022, գրախօսուել է՝ 10.12.2022: Էլ. հասցէ՝ hrachsar79@gmail.com:

² Յ. ՕՇԱԿԱՆ, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հտ. 10, Անթիլիաս, 1982, էջ 9:

ժամանակ քով քովի չեն գար Մուրացան, Նար-Դոս, Շիրվանզատէ, Բաֆֆի — բոլորն ալ մեծատաղանդ մարդեր, որոնց պակասածն էր մտատիպարը: Որոնք սպասարկեցին տափակ հանգանակներու, լրագրութեան ու վարժապետական ցանկութիւններու: Հերոսական արեւելահայ վէպը, այսօր, հեռուէն ինչ տրտում, սահմանափակ ճիգ է, երբ բաղդատուի զինքը ծնողներուն վաւերական արժանիքներուն»³: Անգամ Դօստոեւսկուն բարձր գնահատած ու նրա գրականութեան անդիմադրելի ազդեցութեան հանդէպ լիովին բաց եւ նոյնիսկ այդ ազդեցութիւնն իրենց գրականութեան վրայ խոստովանած հայ հեղինակների, ինչպէս, օրինակ՝ Յակոբ Կարապենցի երկերում ազդեցութեան ընդամենն ինչ-որ նշոյլներ, հեռաւոր արձագանքներ կարելի է գտնել: Քիչ չեն նաեւ Դօստոեւսկու գրականութեամբ հիացած, բայց նրա ազդեցութիւնը չկրած կամ մասնակիօրէն կրած անուանի մեծութիւնները համաշխարհային գրականութեան մէջ՝ Ֆրանսուա Մօրիակ, Անդրէ Մալրօ, Անդրէ Ժիդ, Ժորժ Բեռնանոս, Ալպեր Քամիւ, Ժան-Պօլ Սարտր, Ֆրանց Վերֆէլ, Էդուարդօ Մալեա, Խուան Կառլոս Օնետտի, որոնց ամբողջ գրականութիւնը Դօստոեւսկուց վերցրած առանձին մի տեսլիկ կամ տեսլիքների վրայ է հիմնուած: Նոյնիսկ Օշականը, որ ցաւով էր քննադատում Դօստոեւսկու ազդեցութեան պարարտ հնարաւորութեան՝ հայ գրողների անտեսումը, իր քննադատական գործերում անընդհատ շեշտում էր այդ «շֆելագոյն մարդու» (ընդգծում ենք՝ շեշտելու համար մարդկային մեծութիւնն իբրեւ հանճարեղութեան պայման) գրականութեան նշանակութիւնը եւ յատկապէս գիւղացու հոգու խորխորատները թափանցելու իմաստով ինքն իրեն նրա հետեւորդը համարում⁴, ինքն էլ խորութեամբ չընկալեց Դօստոեւսկուն, յատկապէս նրա քրիստոնէական աշխարհայեացքի փիլիսոփայական խորքերը, թէեւ բացառուած չէ, որ գիւղական միջավայրը, գեղարուեստական խնդրադրումներն ու ժողովրդական կերպարները թոյլ չտուեցին նրան արտայայտել այդ խորքը. չէ՞ որ Դօստոեւսկու խոշոր կերպարները, որ ոգու իսկական ազնուականներ են, պետերբուրգեան միջավայրում են երեւում արդէն: Օշականը, որ, Դօստոեւսկու երկերում բարձր էր գնահատում յատկապէս ժողովրդական իրականութեան խորքերը թափանցելու եւ այդ խորքերից «անտիպ զգացումներու» գոհարներ վեր բերելու,

³ Անդ, էջ 10–11:

⁴ Անդ, էջ 28:

«իսկութիւններ» եւ «հոգեկան դրութիւններ» կենսաւորելու զօրութիւնը⁵, իր լաւագոյն վէպերից մէկում՝ «Ծակ-Պտուկ»-ում հէնց ինչ-որ չափով մօտեցաւ Դոստոեւսկուն։ «Իրենց կիրքերուն մեծ թիապարտներից» մէկը՝ այսպէս էր Օշականն անուանում Դոստոեւսկուն, իսկ իր գեղարուեստական իրականութեան «պայմաններից» մէկը «կիրքին ու գեղեցկութեան եղբայրութիւնը»⁶ համարում։

Թէ՛ Դոստոեւսկու, թէ՛ Օշականի հերոսները կրքով տոգորուած մարդիկ են։ Կիրքն Օշականի վէպի հերոսների գործողութեան հիմնական խթանիչ ուժն է։ Իսկապէս «Ծակ-Պտուկ»-ում վիպագրին յաջողում է պեղել մարդկային հոգու անդունդներն ու նկարագրել դրանցում հոսող կրքերի գետերը, բայց մի էական, խորքային տարբերութիւն կայ նրա եւ Դոստոեւսկու հերոսներին տանջող կրքերի միջեւ։ Օշականի հերոսների կրքերը խիստ անձնային են, «չափազանց մարդկային», մինչդեռ Դոստոեւսկու հերոսների կրքերն ու տառապանքը վեր են անձնայինից. նրա լաւագոյն հերոսներին գաղափարներն են դարձնում կրքոտ, նրանք տառապում են աշխարհի անկատարութիւնից, եւ նրանց կրքերը ոչ թէ զգայական են, այլ ոգեղէն։ «Դոստոեւսկին չի հիպերբոլացնում իր հերոսների կրքերն ու տառապանքները, փորձում է դրանք պատկերել հնարաւորինս մօտ այն իրականութեանը, որ մարդկային պատկերացումներում ընկալւում է սովորական «նորմալ», մինչդեռ իրականում «Ֆանտաստիկ» է ու հիպերբոլացուած։ Դոստոեւսկին այդ հնարքը «պարտասում» բառով է բնորոշում՝ մատնանշելով յուսահատութեան, խելագարութեան ու ինքնասպանութեան աստիճանի հասած մարդկային վիճակի «սահմանային» բնոյթը։ Այդ հնարքի հիմնական գործառնոյթը, «ներքին մարդու» մօտ «խորքային» էութեան, զգացական ներուժի, «բացարձակ ոգեղէնութեան» բացայայտումն է։ Գրականագիտութեան մէջ Դոստոեւսկու հերոսների կրքերի եւ տառապանքների չափազանցման (հիպերբոլացման) հանդէպ ընդգծուած հետաքրքրութիւն առաջացաւ Զ. Ֆրոյդի եւ նրա հետեւորդների ուսմունքի կապակցութեամբ։ Արեւմտեան գրականագիտութիւնը Դոստոեւսկու քերթողականության այդ առանձնայատկութիւնը շեշտադրեց որպէս նրա գեղարուեստական գլխաւոր նուաճումներից մէկը, կրքերի ու տառապանքների հիպերբոլացումը կապելով ենթա-

⁵ Անդ, էջ 29։

⁶ Անդ։

գիտակցականի ուսումնասիրության հետ: Կրքերի եւ տառապանքների հիպերբոլացումը ներկայանում էր հերոսների անտրամաբանական արարքների, դաժանութեան մերթ որպէս պատճառ, մերթ որպէս հետեւանք»⁷: Իր «Վկայութիւններ»-ում բազմիցս Ֆրոյդին ու նրա ուսմունքը յիշատակող Օշականի վրայ Դոստոեւսկին, անշուշտ, հէնց հոգեվերլուծութեամբ միջնորդուած ազդեցութիւն է թողել, եւ ուղղակի կապ գոյութիւն ունի նրա վէպի մենախօսական բնոյթի եւ իր հերոսների արարքների ու ներաշխարհի մանրակրկիտ հոգեքննութեան միջեւ: Ֆրոյդն ինքն զգալիօրէն հեռացել է իր աշխարհայեացքի ձեւաւորման վրայ մեծ ազդեցութիւն թողած Դոստոեւսկուց, եւ առաջին հերթին՝ հոգեւոր իրականութեան նիւթականացմամբ: Իսկ առանց հոգեւոր իրականութեան ըմբռնման՝ հնարաւոր չէ գնահատել Դոստոեւսկու իրական մեծութիւնն ու նշանակութիւնը, եւ այս իրողութիւնն է նաեւ, որ Օշականին հեռացնում է Դոստոեւսկուց: Մարդու հոգեկան աշխարհի մթին կողմերի հանդէպ Դոստոեւսկուց իւրացրած հետաքրքրութեամբ ու սեւեռուն պրպտումներով հանդերձ՝ Օշականի պատումը հարում է «գիտակցութեան հոսքին», թէեւ «Ծակ-Պտուկ»-ում աւելի պակաս, քան «Մնացորդաց»-ում: Այնուամենայնիւ օշականեան պատումը անհատական է (սուբյեկտիւ), եւ պատահական չէ, որ Դոստոեւսկուց ու Ֆրոյդից բացի՝ «Վկայութիւններ»-ում ամէնից շատ յիշատակուող անունները Պրոլստը եւ Զոյսն են: Ըստ էութեան, առաջին հայեացքից, ինչպէս Գ. Գազդանովն է ուղղակի նկատում, Դոստոեւսկու եւ Պրոլստի միջեւ «ընդհանուր ոչինչ չկայ»⁸: Վ. Կիրպոտինն իրաւացիօրէն Դոստոեւսկուն Զոյսից ու Պրոլստից տարբերակող էական առանձնայատկութիւնը հոգեբանականութիւնն էր համարում. «Ի տարբերութիւն Պրոլստի ու Զոյսի դեկադենտական հոգեբանականութեան՝ Դոստոեւսկու հոգեբանականութիւնը նրա լաւագոյն գործերում ոչ թէ սուբյեկտիւ է, այլ իրապաշտական»⁹: Յ. Օշականի պարագան մի փոքր այլ է. «Ծակ-Պտուկը» վէպում մասնաւորապէս, որոշակի իրապաշտութեամբ հանդերձ, հոգեբանականութիւնն անհատական-հեղինակային է, այսինքն՝ հեղինակն ինքն է փորձում անթաքոյց կերպով թափանցել ու

⁷ М. В. Загидуллина, Гиперболизация страстей и страданий, <https://fedordostoevsky.ru/research/aesthetics-poetics/139/>

⁸ Г. Газданов, Достоевский и Пруст, Собрание сочинений в 5 томах, т. 4, Москва, 2009, с. 416.

⁹ В. Кирпотин, Достоевский, Москва, 1947, с. 64.

պեղել իր հերոսների հոգեկան անդունդները: Պատումն առաջ մղողը հեղինակային մենախօսությունն է: Օշականի աշխարհը, Մ. Բախտինի՝ Տոլստոյի կապակցութեամբ ասուած խօսքերով, «միաձուլ մենախօսական» է, «հերոսի խօսքը պարփակուած է նրա մասին հեղինակային խօսքի ամուր շրջանակում»¹⁰: Եւ եթէ Դոստոեւսկու հերոսի կապակցութեամբ կիրառելի է «հերոսի ամենակու գիտակցութիւն»¹¹, ապա Օշականի պարագայում կարելի է կիրառել հեղինակի «ամենակու գիտակցութիւն» բնորոշումը:

Սա, իր հերթին, տանում է ոճապաշտութեան, եւ, անշուշտ, Օշականը ոճապաշտ հեղինակ է, ինչպէս Մ. Պրուստն ու Զ. Զոյսը, ինչպէս «գիտակցութեան հոսքով» ստեղծուած գրականութիւնն առհասարակ, մինչդեռ Ֆ. Դոստոեւսկին «բազմաոճ կամ անոճ»¹² գրող է, եւ դա էր պատճառը, որ ոճապաշտ եւ գրականութեանն առաջին հերթին ոճական պահանջ ներկայացնող Վ. Նաբօկովն ուղղակի չէր հասկանում Դոստոեւսկու նշանակութիւնը¹³: Էական մի ընդհանրութիւն Դոստոեւսկու եւ Զոյսի ու Պրուստի արձակի միջեւ, այնուամենայնիւ, գոյութիւն ունի: Տոլստոյը չի թաքնում՝ որպէս հեղինակ, իսկ «գիտակցութեան հոսքի» խնդիրներից մէկն անհատական պատումի մէջ հեղինակային ներկայութիւնը նուազագոյնի հասցնելն է, արդիւնք, որ Դոստոեւսկուն, ի տարբերութիւն նախորդ եւ տասնիններորդ դարի հեղինակների, հէնց առարկայական (օբյեկտիւ) պատումով է յաջողում հասնել: Այնինչ «գիտակցութեան հոսքի» կիրառմամբ հանդերձ՝ Օշականը՝ որպէս հեղինակ, չի թաքնում իր հերոսների գիտակցութեան մէջ, շարունակ մեկնաբանում է գործողութիւնը, վերլուծում հերոսների արարքներն ու դրանց թաքնուած, անգիտակցական կամ ենթագիտակցական դրդապատճառներն ու շարժառիթները, նոյնիսկ շարժումների մէջ մատնանշում անգիտակցականն ու ենթագիտակցականը, ասոյթային ձեւակերպումներ, ընդհանրացումներ ու դատողութիւններ անում կեանքի, հոգեբանութեան, ցեղային խառնուածքի ու ամենատարբեր երեւոյթների վերաբերեալ՝ պատճառաբանելով, թէ «մտքի բոլոր գործողութիւնները նախնական ու թերի են գեղացիին մէջ»¹⁴, փորձում աւելի իմաստուն լինել, քան իր հերոսները, իր

¹⁰ Մ. Բախտին, Դոստոեւսկու պօտիկայի խնդիրները, Ստեփանակերտ, 2012, էջ 70:

¹¹ Անդ, էջ 62:

¹² Անդ, էջ 20:

¹³ Տէս В. НАБОВОКОВ, Федор Достоевский, «Лекции о русской литературе», Санкт-Петербург, 2021, էջ 166:

¹⁴ Յ. Օշական, Ծակ-Պտուկը, Անթիլիաս, 1996, էջ 79:

ներկայութիւնը որպէս հեղինակ ցոյց տալիս՝ փոխադրելով հերոսների մտածումներն ու զգացմունքները յղկուած թեւաւոր ձեւակերպումների, թէեւ իր հերոսների հոգու «վրդովիչ անդունդները» թափանցող ամենատես հեղինակն այս կերպ զանգուածային անգիտակցականը քննելու խնդիր է կարծես լուծում, քանի որ այնտեղ, ուր նիրհում է անհատական գիտակցութիւնը, գործում է զանգուածայինը, իսկ Յ. Օշականը, Զոյսի օրինակով, ցեղային ոգին պեղելու խնդիր ունէր, եւ հայ գրականութեան մէջ ազգային ոգու խորքերը նրա պէս ոչ ոք գուցէ չի էլ թափանցել, ինչպէս ռուսական ոգու խորքերը պեղելու հարցում անգերազանցելի է մնում Յ. Դոստոեւսկին: Բայց Դոստոեւսկու լաւագոյն հերոսներն իրենք են սեփական գիտակցութեամբ պեղում ու դուրս բերում այն ամէնը, ինչ թաքնուած է սեփական հոգու խորխորատներում. Դոստոեւսկուն հետաքրքրում էր ոչ թէ մարդու ենթագիտակցականն ինքնին, ինչպէս ընկալում են նրան Զ. Ֆրոյդն ու Յ. Օշականը, այլ եւնթագիտակցութեան գիտակցուածութեան աստիճանը, այլ կերպ ասած, մարդը Դոստոեւսկուն հետաքրքրում էր ինքնաճանաչման, ինքնագիտակցութեան, Աստծուն մօտենալու եւ Աստծուց հեռանալու տեսանկիւնից: Եւ այս ամէնից զատ՝ Օշականի վէպի (վէպերի) մենախօսական (հոմոֆոնիկ) բնոյթը հակադիր է Դոստոեւսկու վէպերի բազմաձայն (պոլիֆոնիկ), երկխօսական բնոյթին: Շատ յստակ է Օշականի խնդրադրումը՝ պատումի ոճի իմաստով Պրոստի եւ Զոյսի, իսկ մարդկային հոգու «վրդովիչ անդունդները»՝ անգիտակցականի ու ենթագիտակցականի թաքնուած շերտերը պեղելու իմաստով Դոստոեւսկու սխրանքը կրկնել:

Այս հակադրութիւններով հանդերձ՝ Օշականը կրում է նաեւ Դոստոեւսկու ոճի եւ պատկերամտածողութեան որոշակի ազդեցութիւնը: Դոստոեւսկու ոճին նուիրուած ուսումնասիրութեան հեղինակը «Լոյսը եւ ստուերը Դոստոեւսկու բնապատկերում» գլխում կարեւոր մի նկատում ունի. «Լոյսի պայքարը շրջապատի խաւարի դէմ՝ ահա Դոստոեւսկու վաղ շրջանի վիպակներում՝ ներքին տարածքներում, լոյսի ու ստուերի յարաբերակցութեան գլխաւոր մօտիւր»¹⁵: Օշականի վէպերում եւս, ըստ ամենայնի, եթէ ոչ Դոստոեւսկու վաղ շրջանի վիպակների ազդեցութեամբ, ապա խիստ նմանութեամբ, նկատում է լոյսի եւ ստուերի յարաբերակցման ու խաղի կիրառման նոյն սկզբունքը:

¹⁵ Н. М. Чирков, О стиле Достоевского, Москва, 1964, с. 103.

Օշականը մշտապես նկատում, շեշտում է լոյսի ու ստուերի առկայությունն ու սահմանները տներում, որ նա անուանում է «մշտաստուեր», եւ ամենակարեւորը՝ լոյսի ու ստուերի յարաբերակցումը բնապատկերային- նկարագրական մանրամասնությունից յարաճում է պատկերային մօտիւի, ինչպէս Դօստոեւսկու վիպակներում, եւ ինչպէս Դօստոեւսկու վիպակներում՝ Օշականի երկերում եւս լոյսը մտքի, ստուերը մարդկային միջին կողմերի պատկերումն է։ Այսպէս, Յ. Օշականն իր հերոսների մտային առկայծումների, գիտակցութեան յստակեցումների մասին խօսելիս լոյսի կամ արեւի փոխաբերությունն է գործածում. «Մէկէն լոյսը ինկաւ մտքին մէջ»¹⁶։ Իսկ հոգեվիճակների, (օրինակ մենութեան) վերաբերեալ՝ ստուերը կամ ստուեր ցուցող այլ բառ։ Ահա մի պատկեր «Ծակ Պտուկ» վէպից. «Բակը։ Խոնաւ։ Դէպի խորերը ան կը մութնաւ բոլորովին։ Ամառ թէ ձմեռ, ան լեցուն էր տխուր ու սէւ հոտով մը, արեւ չինկած տեղերուն գոռ չորտմութիւնը։ Տունին շինուած օրէն արեւը դադրեր էր հոնկէ։ Ամրան խիստ տաքերուն անգամ այդ հոտը չէր հալածուեր։ Այդ առտու, անիկա կճում բերաւ տղուն։ Աշնան յառաջացած օրերն էին ու լոյսը դժուար կը տաքնար։ Յուրաքանչէր կը դպէր նոյնիսկ առողջներում։ Բակը։ Բայց պաղէն աւելի, որ մտած էր արդէն իր մորթէն ներս, Թումաս կը զգար, ու ասիկա՝ աւելի ուժգնօրէն, ընտանի, փնտռուած, ստուերոտ այդ մենութիւնը, որուն մէջ ան ինքզինքը պաշտպանուած գիտէր ուրիշներուն նայուածքէն։ Հիւժախտաւորները կը տառապին լոյսէն, ինչպէս նայուածքէն։ Հոս, գոհ էր, երջանիկ էր անիկա, գրեթէ մանկական միամտութեամբ մը, այդ ահագին տունին մէջ, Նազիկին հետ միմիայն ըլլալուն»¹⁷։

Օշականի աշխարհը բաժանուած է լոյսի եւ ստուերի. բոլոր հոգեկան երեւոյթներն ունեն իրենց ստուերները, իսկ մտքից ճառագող լոյսը հագուադէպ է, որ թափանցում է այդ միջին աշխարհը, ինչպէս տներից ներս։ Սա նշանակում է, որ արտաքին աշխարհում նկարագրող լոյսն ու ստուերը, բնապատկերի լոյսն ու ստուերը Օշականի աշխարհում հոգեւոր իրողութիւնների «արտաքնացումներ» են («ստուերը, իբր անոր գեղեցկութեան արտաքնացում»¹⁸)։

¹⁶ Յ. Օշական, նշ. աշխ., էջ 82։

¹⁷ Անդ, էջ 10—11։

¹⁸ Անդ, էջ 29։

Լոյսի ու ստուերի պատկերի հետ են առնչում նաեւ կարմիրն ու սեւը՝ կարմիրի հետ կրակը, արինը, կիրքը, որին յաջորդում են սեւը եւ մահը, իսկ Օշականի վէպում մահը միշտ սեռային կրքի հատուցումն է։ Օշականին հետաքրքրող մղումները կիրքը եւ մահն են, մեղքը եւ ոճիրը եւ մարդուն ոճրագործութեան մղող միջին բնազդները։ Նա խորապէս փորձում է զննել մարդուն մեղքի եւ ոճրի դրդող պատճառները։ Օշականի հերոսներն ապրում են իրենց բնազդների եւ ենթագիտակցութեան աշխարհում։ «Ծակ-Պտուկը» վէպում գրեթէ էջ չկայ, որում «մեղք» ու «ոճիր» հասկացութիւնները չեն կրկնւում, թէեւ նոր երանգաւորմամբ՝ ընդհուպ մինչեւ իւրօրինակ մեղա-աշխարհագրութեան կերտում։ Ոճիրը, օրինակ, բնութեան մէջ կիրճի ձեւով է արտայայտւում (չէ՞ որ, իսկապէս, մեղքն իշուածք է, որի մէջ գայթում են)։

Դոստոեւսկու հերոսները եւս ունեն մեղքի իրենց ընկալումը. Մարմելադովն օրինակ գիտակցում կամ մեղք է վերագրում ինքն իրեն, պրպտում իր ներսն ու տառապում սեփական հեշտասիրութիւնից ու թուլութիւնից. յամենայն դէպս Դոստոեւսկու հերոսները փորփրում են իրենց «հոգու դժոխքները» (Յ. Օշականի ձեւակերպումը), բայց ամենակարեւորը՝ ինքնապեղումից բացի՝ նրանց բնորոշ է քրիստոնէութեան մեծագոյն առաքինութիւններից մէկը՝ անձնագոհութիւնը, ինքնագոհումը, որ նրանց դարձնում է սեփական «հոգու դժոխքում» մարդկութեան համար տառապող անգոր էակներ, որ կ'ամ ծաղրւում են, ինչպէս Միշկինը, կ'ամ դարձի գալիս՝ անցնելով ոճրագործութեան դժոխքի միջով, ինչպէս Ռասկոլնիկովը։

Օշականի հերոսներն այդ գիտակցականութիւնը չունեն. հեղինակն ինքն է քննում մեղքն ու ոճիրը հաւաքական անգիտակցականի դրսեւորումներում։ Ինքնաճանաչողութիւնը խորթ է նրանց. նրանք ոճիրը գործելիս Աստծու անունն են տալիս ու ինքնագոհաբերութեան փոխարէն յանդգնում պատժել ու զոհաբերել այլոց։ Դոստոեւսկու հերոսների դէպքում մենք գործ ունենք մարդկային հոգու մթութեան մէջ թափանցող գիտակցական ճառագումների հետ, Օշականի հերոսներն ապրում են խաւարում։ Եւ դրա համար էլ տառապում են «աստեմակամը չհասկացած»՝ «անդենականին»-ին պատրաստուելու մտքից¹⁹։ Դոստոեւսկու հերոսները որոնում են Աստծուն եւ պատրաստուում են «անդենական»-ին՝

¹⁹ Անդ, էջ 102։

կեանքի օրօք մերձենալով Աստծուն ու մահուան առեղծուածին՝ իւրօրինակ կերպով հետեւելով Քրիստոսին՝ կեանքի օրօք դժոխք իջնելու օրինակին: Նրանց համար, ըստ էութեան, կեանքը մահուան նախապատրաստութիւն է, բայց այն հոգեւոր իմաստով, որ պատկերացնում էր էրազմ Ռոտերդամցին կամ Դոստոեւսկուն յաջորդած քրիստոնէական գոյապաշտութեան հեղինակները: Տարբերութիւնն այն է, որ Օշականի հերոսները գործում ու ապրում են այնպէս, ասես չեն հաւատում ո՛չ հոգուն, ո՛չ յետմահու կեանքին եւ ոչ էլ կեանքից յետոյ գիտակցութեան որեւէ կերպի գոյութեանը, մինչդեռ Դոստոեւսկու հերոսներն ապրում են այնպէս, ասես համոզուած են, որ կեանքից յետոյ գոյութեան այլ կերպ կայ: Այստեղ է, որ ոճրի ու պատժի հայեցակերպը Օշականի աշխարհայեացքում էապէս տարբերում է Դոստոեւսկու հայեցակերպից: Օշականի հերոսները, որ աւելի շատ առաջնորդում են մարդկային միջին ու յախուռն բնազդներով, տարերային զգացմունքներով, ընդ որում՝ տարտամ գիտակցելով դրանք, դատապարտուած են ապրել պատուի, մեղքի, ոճիրի, սեփական ձեռքով այլոց պատժելու իրաւասութեան, պատժի կերպի զանգուածային ու անառարկելի պատկերացումների շրջանակներում: Պատիժը, ըստ Դոստոեւսկու ընկալման, այն հատուցումն է, որ ոչ թէ մարդն է մարդու նկատմամբ իրագործում, այլ տրւում է մարդուն դարձի բերելու համար. ահա թէ ինչու Ռասկոլնիկովն իր ոճիրի միջոցով իսկապէս մերձենում է Աստծուն, պատիժը դառնում է աստուածային բարեգթութիւն:

Օշականի աշխարհում կայ եւ քրիստոնէութիւն եւ աղօթք, բայց նրա հերոսներն ասես աղօթում կամ Քրիստոսին յիշատակում են հաստատելու համար իրենց անհաւատութիւնը: Ահա այն տեսարանը, երբ պառաւները Նազիկին, մեղսաւոր յղիութիւնից որովայնը պարպելու համար, ծանր պարկերով բեռնած, տանում են լեռներ՝ դէպի «մեղքի ընդարձակուող հորիզոն» ու աղօթում, իսկ նա, որ առանց հաշիւի էր տուել իր կուսութիւնը, չէր հասկանում, թէ ինչու պիտի աղօթի. «Հապա Աստուածամայրը, որ իրենց պէս անցած էր զաւկի ու մահուան ցաւերէն: Հապա դրախտը: Այս ամէնը ձեռքիդ պատրաստ սեղանի մը պէս համով, պառաւին շրթներուն վրայ, չէին տկարանար, երբ կը թափանցէին Նազիկին մէջ: Վասնզի աղջիկներուն համար անհասկանալի է երկինքը: Անոնք կը վախնան, կ'երազէն, բայց իրենց երազին թեւերը մեղրամոմէ (ընդգծումը մերն է, զուգորդելու համար Իկարոսի հետ) շինուած են ու միշտ զա-

նոնք գետին, անկողին կը ձգեն: Զերմեռանդութիւնը սեռային վիճակ է անոնց մոտ»²⁰: Օշականի աշխարհում մարդիկ յիշատակում են Աստուածամօրն ու Քրիստոսին եւ շարունակում ապրել պատուի, մեղքի, յանցանքի մասին զանգուածային ու անգիտակցական պատկերացումների շրջանակներում, որ ոչ ոք չի վիճարկում՝ անձնատուր միին բնազդներին ու զգացմունքներին՝ ասես հլու եւ հնազանդ զգացմունքներ ուղարկող հեթանոս աստուածներին, որ այդ կերպ դեռ շարունակում են վճռել մարդկային ճակատագրերը:

РЕЗЮМЕ


В статье говорится об особенностях влияния Ф. М. Достоевского на мировоззрение А. Ошакана и в частности на роман «Цак Птук». Затрагивается мотив соотношения света и тени, тему преступления и наказания, полифонический характер романов Достоевского и «гомофонный» характер романа Ошакана. Достоевский оказал влияние на Ошакана посредством психоаналитического толкования, а Фрейд сам заметно отделился от значительно повлиявшего на формирование его мировоззрения Достоевского, и в первую очередь, материализацией духовной действительности. Ошакан, следуя Достоевскому, пробует углубиться во внутренний мир своих героев и понять подсознательные и бессознательные мотивы человеческих действий, тогда как герои Достоевского сами, своим собственным сознанием выводят все то, что скрывается в безднах их собственных душ. Иначе говоря, Ошакан интересуется коллективное бессознательное и подсознательное, как таковое, а Достоевского, осознанность подсознательного и человек с точки зрения самопознания и познание Бога.


SUMMARY

The article talks about the peculiarities of the influence of F. M. Dostoevsky on the worldview of A. Oshakan and, in particular, on the novel “Tsak Ptuk”. It touches upon the motif of the relation of light and shadow, the theme of crime and pun-

²⁰ Անդ, էջ 103:

ishment, the polyphonic nature of Dostoevsky's novels and the homophonic nature of Oshakan's novels. Dostoevsky influenced Oshakan through his psychoanalytic interpretation, while Freud markedly distanced himself from Dostoevsky, who had greatly influenced the formation of his worldview, and primarily through the materialization of spiritual reality. Oshakan, following Dostoyevsky, tries to delve into the inner world of his characters and understand the subconscious and unconscious motives of human actions, while Dostoyevsky's characters themselves, with their own consciousness, show everything that is hidden in the depths of their own soul. In other words, Oshakan is interested in the unconscious and in the subconscious as such, while Dostoevsky is interested in the consciousness of the subconscious and the self-awareness of human beings moving near to or far from God.





Doi: 10.56737/2953-7843-2022.11-124

ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ՈԱԶՄԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹ-ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ՝

Նայերենի եզրաբանության ճյուղերից է նաեւ ռազմականը, որի ուսումնասիրությունը կարելու է եւ գործնական, եւ գիտական առումներով: Եզրույթաբանության հարստացման խնդիրը տվյալ լեզվի բառապաշարի մշակման ու կատարելագործման կարեւորագույն հարցերից է, քանզի առանց հարուստ ու մշակված տերմինաբանության չկա զարգացած լեզու²: Ինչպես հայտնի է, արեւելահայ գրական լեզվի եզրույթների պաշարի համալրման աղբյուրներից մեկը գրաբարի բառանյութի ըստ հարկի գործածությունն է: Գրաբարի ռազմական եզրույթների ինչպես համաժամանակյա, այնպես եւ տարժամանակյա քննության համար հարուստ նյութ է ընձեռում Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկը³, որում արտացոլված են ժամանակաշրջանի պատմական կարեւոր իրադարձությունները: [Յառաջաբանից] եւ «դրուագ» անվանյալ երեք գլուխներից բաղկացած արժեքավոր այս աշխատությունն ունեցել է բազում տպագրություններ⁴:

* Ստացվել է 26.11.2022, գրախոսվել է 2.12.2022: Էլ. հասցե՝ sirapi87@list.ru:

Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄ Ֆինանսավորման երաշխավորած թեմայի («Երեւանի պետական համալսարան» հիմնադրամ (21T-6B030) շրջանակում:

² Տե՛ս Է.Վ. Ա.ՂԱՅԱՆ, Ընդհանուր եւ հայկական բառագիտություն, Երեւան, 1984, էջ 310:

³ Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյանի եւ Ստեփանոս Մախասյանցի կազմած գիտաքննական բնագիրը՝ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիգրիս, 1904: Օրինակները քաղում ենք այս հրատարակությունից՝ փակագծում նշելով էջը:

⁴ Տե՛ս օր.՝ Վենետիկ, 1793, 1891 Ալեքսանդրապոլ, 1895, Մոսկվա՝ 1883, եւ այլն:

Սույն հոդվածում առանձնացրել ենք Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում գործածված ռազմական բովանդակության բաղադրյալ բառերը, ներկայացրել դրանց կաղապարները, ըստ անհրաժեշտության՝ երբեմն անդրադարձել որոշ բառարմատների ծագումնաբանությանը եւ արտահայտած իմաստներին, բերել բնագրային օրինակներ:

Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում ռազմական բաղադրյալ եզրույթների կաղապարները նկարագրելով՝ նպատակ ունենք ցույց տալու գրաբարի կարեւորագույն դերն արդի արեւելահայերենի բառապաշարի հարստացման եւ եզրույթների համակարգի ձեւավորման գործում: Այս մոտեցումը հիմք է տալիս երբեմնի վանահոր երկում գործածվող ռազմական եզրերի առանձնացման եւ տարժամանակյա դիտակետում դրանց արժեւորման, քանի որ վերջիններիս մի մասը որպես այդպիսին մնացել է գրաբարի բառապաշարում եւ արդի հայերենի բառարաններում արձանագրված է իբրեւ պատմական բառ-եզր, իսկ մյուս մասը, կրելով իմաստային որոշակի փոփոխություններ, անցել է հայերենի զարգացման հաշորդ փուլերին:

Ռազմական հասկացությունների ու եզրույթների բացատրությունների եւ դրանց համեմատությունների ներկայացման, բերված օրինակների մեկնության եւ քննության համար հիմնականում հիմք են ծառայել մի քանի հայտնի բառարաններ⁵:

Ռազմական եզրույթները հիմնականում գոյականներ եւ ածականներ են, որոնք նաեւ լեզվի գործուն բառապաշարի սովորական բառամիա-

⁵ Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Հ. ՍԻՐՄԵԼԵԱՆ, Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Նոր հայկազեան բառարան (ՆՀԲ), հտ. Ա., Երեւան, 1979, հտ. 2, Երեւան, 1981: Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ, Գրաբարի բառարան, Երեւան, 2000: Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865: ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Երեւան, 1926: Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան (ՀԲԲ), Երեւան, 1944: Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010: Է.Գ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երեւան, 1969, 1972, 1974, 1980: Լ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Գրաբարի բացատրական բառարան. ձեւաբանորեն տարարժեք բառեր, Երեւան, 2003: Լ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Գրաբարի բացատրական բառարան, Երեւան, 2003: Մ. ԱՐԵՎՅԱՆ, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Երեւան, 1925: Լ. ՔՈՔԱՆՋՅԱՆ, Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան, Երեւան, 2006: Դ. ԶԻՒՆԳԱՐՅԱՆ, Ե. ԵՐՋՆՅԱՆ, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն-անգլերեն մեծ բառարան, Երեւան, 2015: Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երեւան, 1973: Հայկական համաբարբառ, հտ. 1, Երեւան, 1975, հտ. 2, Երեւան, 1978, հտ. 3, Երեւան, 1978:

վորներ են, ուստի խոսել գիտական անվանումների կամ եզրույթների, նրանց կերտման ու օգտագործման մասին, մեկուսացնելով այդ ամենը տվյալ լեզվի բառապաշարից եւ բառօգտագործման հարցերից՝ ուղղակի անհնար է: Անշուշտ, լեզվում սովորական բառերի եւ եզրույթների տարբերակում կա, եւ սխալ է սովորական բառերի եւ բառակապակցությունների եւ եզրույթ-բառերի ու բառակապակցությունների նույնացումը, որ երբեմն արվում է, սակայն էլ ավելի սխալ է դրանք անջրպետելը եւ եզրույթ-բառ կամ բառակապակցություն չհամարելը: Այսպիսով՝ եզրույթաշինությունը տվյալ լեզվի բառաշինության մի հատվածն է եւ ենթակա է նրա բառակազմական, բառօգտագործման, քերականական եւ մյուս բոլոր օրենքներին: Դա առաջին հերթին նշանակում է հայերենի գիտական անվանումների հարստացում հայերենի բառաստեղծական ճկունության շնորհիվ, այսինքն՝ լեզվում եղած բառերի հատուկ իմաստավորմամբ, եղած իմաստների եզրավորմամբ, նոր բառերի եւ բառակապակցությունների ստեղծմամբ, ինչպես նաեւ օտար, փոխառյալ բառերը հայերենի բառակազմական կանոններին հարմարեցման միջոցով⁶: Իբրեւ ռազմական բովանդակության եզրույթներ՝ առանձնացրել ենք Ղազար Փարպեցու գործածած այն բառերը, որոնք կամ անմիջականորեն օժտված են ռազմական իմաստով, կամ ունենալով նաեւ այլ իմաստներ՝ աչքի են ընկնում ռազմական իմաստի գերակայությամբ:

Ռազմի բնագավառին աղերսվող արմատների քննությունը ցույց է տալիս, որ ռազմական եզրաբանությունը հայերենում հարուստ չի եղել: Հայերենը ռազմարվեստին, պատերազմին ու զենքերին վերաբերող հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն սակավաթիվ բառեր ունի, որոնցից Հր. Աճառյանն առանձնացնում է հետեւյալ մի քանի արմատները՝ մարտ, աղմուկ (կռիւ), թուր, նետ, գերի, կումբ, սլաֆ⁷: Սրանցից արդի հայերենում ռազմական եզրույթի իրենց իմաստը կորցրել եւ իմաստափոխվել են աղմուկ եւ սլաֆ բառերը, իսկ կումբ-ը գործածությունից դուրս է եկել: Առաջին չորս արմատներից նետ-ը ունի պատմական արժեք, իսկ մարտ, թուր, գերի արմատներից հետագայում կազմվել են ռազմական կյանքին վերաբերող բազմաթիվ բարդ եւ ածանցավոր բառեր⁸:

⁶ Տե՛ս Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Երեւան, 1981, էջ 130:

⁷ Տե՛ս Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երեւան, 1940, էջ 111:

⁸ Տե՛ս Ս. ԱՍԼԱՆՅԱՆ, Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության եւ տերմինաբանության, Երեւան, 1982, էջ 240:

Ավելի մեծ թիվ են կազմում պարսկական փոխառությունները, որոնցից շատերը Ե. դարի հայ հեղինակները վաղուց էին գործածում իբրեւ բանավոր խոսքում տարածված եւ հայերեն ընկալվող բառեր, եւ որոնք նպաստում էին գիտական անվանումների հայերեն բառագանձի հարստացմանը: Պարսկերենից փոխառյալ ռազմական բովանդակության բառերն Աճառյանը բերում է «Երկիր եւ պետություն» խմբավորման մեջ⁹:

Աճառյանը նշում է, որ պարսկերենից փոխառությունները 166-ն են, որոնց մեծ մասը պատկանում է պարսից պետական կյանքին, եւ ամենամեծ մասն այնպիսի բառեր են մեր լեզվի համար, որ այսօր եւս շարունակում են իրենց գոյությունը, եւ չգիտենք, թե առանց դրանց ինչպես պիտի բացատրվենք (օրինակ՝ զրահ, դրոշակ, հրովարտակ, պահակ): Այս ամենը ցույց է տալիս, որ հին հայոց վարչական ձեւը, դիվանական գործողությունները, հարկային համակարգը, ռազմագիտությունը, զենքերը, մի խոսքով՝ ամբողջ պետական կազմը պարսկական ձեւով էր¹⁰: Նա առանձնացնում է հետեւյալ բառացանկերը.

ա) պետական ռազմական պաշտոններ՝ ասպետ, բդեշխ, իշխան, հազարապետ, համհարզ, հրամանատար, մարզպան, մարզպետ, սեպուհ, սպասալար, սպարապետ, ասպահապետ,

բ) պատերազմին վերաբերող բառեր՝ ապշոպ, ապուտ, ապստամբ, ասպատակ, արշաւ, ասար, գումարտակ, գումդ, դարան, դժպարտ, դրոշ, զինուոր, զօր, բիրախ, թնամի, լաշկար, հաշտութիւն, հէն, նամբար, մարզել, մարզիկ, նախնի, նահանջ, պայբար, պատերազմ, պարաւանդ, պարկէն, պէշոպայ, ռազմ, սպայ, վաշտ, վկանդել,

գ) զենքի տեսակներ՝ աշտեայ, ասպար, բահլիկ, դաշնակ, դաստապան, զէնֆ, զրահ, լախտ, խիշտ, նիզակ, պատկան, պատկանդարան, պարս, սաղաւարտ, վահան, վարապան, վարզ, վիրզ, տապար, տէգ:

Այսպիսով՝ պարսկերենից փոխառյալ բուն ռազմական եզրույթները եւ ռազմական բովանդակություն ունեցող ու ռազմական կյանքին վերաբերող արմատական բառերի ընդհանուր թիվը հասցնում է վաթսուհորսի, որոնք մոտավորապես տասն անգամ գերազանցում են հնդեւրոպական ծագման արմատներին: Այս բառերն իրենց գործածությամբ արդի հայերենի բառապաշարում նույնպես միատարր չեն. դրանց մի

⁹ Տէս Հ.Ր. ԱՃԱՌՅԱՆ, նշ. աշխ., I մաս, էջ 296:

¹⁰ Տէս անդ, էջ 305:

մասն արդեն հնացած է եւ ունի սոսկ պատմական արժեք, ինչպես՝ ասպետ, բդեշխ, ասպար, մարգպան, սեպուհ եւ այլն, իսկ մի մասը, որ Հր. Աճառյանը բերում է իբրեւ պատերազմին եւ զենքի տեսակներին վերաբերող բառեր, ընդհանրապես դուրս է եկել գործածությունից, ինչպես՝ ապշոպ, բահլիկ, լաշկար, խիշտ, պատկան, պատկանդարան, վկանդել, վիրգ եւ այլն¹¹։ Հին շրջանում պարսկերենից փոխառյալ որոշ բառարմատներ նույն իմաստով կամ որոշ իմաստափոխություններ արդի հայերենում ունեն լայն գործածություն, բառակազմական տարածում եւ եզրույթի վերածվելով՝ հարստացրել են հայերենի ռազմական եզրաբանության համակարգը՝ արշավ, գումդ, գումարտակ, հրամանատար, պատերազմ, սպա, վաշտ եւ այլն։

Աճառյանն անդրադառնում է նաեւ հունարենից փոխառյալ 17 եւ լատիներենից փոխառյալ 14 ռազմական եզրույթի, որոնցից ոչ մեկը ժամանակակից հայերենի ռազմական եզրաբանության մեջ չի գործածվում¹²։ Նա բերում է նաեւ ռազմական կյանքին վերաբերող արաբական 29 եւ թուրքական 4 բառ¹³։ Առաջիններից որեւէ մեկը չի գործածվում արդի հայերենում, իսկ թուրքերեն բառերից գործածական են միայն բաբան եւ բարուք (վառուդ) բառերը¹⁴, այն էլ՝ ժողովրդախոսակցական լեզվում եւ բարբառներում։ Ասորերենից փոխառյալ ռազմական եզրույթներ են համարվում ռազմական բնույթի տախտ(վաշտ), խարբ, մանգանայ, շեղբ, սակուր, սուլմ, սուսեր¹⁵ բառերը, որոնցից արդի հայերենում ինքնուրույն գործածություն եւ բառակազմական աշխուժություն են ցուցաբերում միայն վերջին չորսը, ինչպես նաեւ ռազմարվեստին վերաբերող բերդ, մաֆառել, գագաթն (ամրություն վայր) բառերը¹⁶։

Ռազմական բնագավառում այսօր դեռեւս շատ են գործածվում օտար բառերն ու անվանումները՝ հատկապես ռուսերենից փոխառյալ ռազմական եզրույթները։ Թեեւ ներկայիս բանակը հայկական է, որը ծառայում է հայ ժողովրդին, իսկ զինծառայողները գերազանցապես

¹¹ Տէս Ս. ԱՍԼԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 242։

¹² Տէս Հր. ԱՃԱՌՅԱՆ, նշ. աշխ., II մաս, Երեւան, 1951, էջ 46։

¹³ Տէս անդ, էջ 212, 281։

¹⁴ Տէս Է. Վ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976։ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երեւան, 1973։

¹⁵ Տէս Հր. ԱՃԱՌՅԱՆ, նշ. աշխ., I մաս, էջ 344։

¹⁶ Տէս անդ, էջ 200։

հայեր են, խոսում են հայերեն, հրամանները արձակվում են հայերեն, հրահանգները գրված են հայերեն, սակայն ինքնաբերաբար գործածական են մնում օտարահունչ ռազմագիտական շատ հասկացություններ ու բառեր, երբեմն գերիշխում են ռուսերեն հասկացությունները՝ իբրեւ հետխորհրդային իրողություն: Միաժամանակ հայերենում դեռևս չեն ձեւավորվել ռազմագիտական շատ եզրույթներ, բանակում կիրառվող հայերեն եզրերը դեռևս միասնական չեն. օդազնացության, հակաօդային պաշտպանության, հրետանային զորքերում հայերենը տակավին իշխող չէ: Այնինչ փոխըմբռնման եւ համընդհանուր գործածության ապահովման կարեւոր գործիքներից մեկը գիտականորեն իմաստավորված ռազմական եզրաբանական միօրինակ համակարգի ստեղծումն է, դրա համակարգումը, հետագա զարգացումն ու կատարելագործումը: Այս առումով կարեւորը լեզվաշինության, բառօգտագործման ճիշտ ուղղություն վերցնելն է, քանի որ, ինչպես բազմաթիվ փաստերով փորձը ցույց է տալիս, հաճախ այն, ինչ հնարավոր չի լինում թարգմանել այսօր, թարգմանվում է վաղը¹⁷:

Ինչպես հայտնի է, հայերենի գիտական բառերի կերտման միջոցներից են բառաբարդման տարբեր տեսակները, բառածանցումը, որոնց միջոցով կազմվում են նոր բառեր ու եզրույթներ: Այս ճանապարհով բառաստեղծման կանոնները մանրամասնորեն նկարագրված են հայ լեզվաբանության մեջ: Այս կազմությունների կերտման համար հիմք են ծառայում գրաբարի բառապաշարից եկող բազմաթիվ բառեր:

Հայերենում եզրակերտման ամենից հաճախ գործածվող միջոցը բառաբարդումն է, վերջինիս միջոցով նորանոր անվանումներ ստեղծելու հնարավորությունը: Ռազմական բարդ եզրույթներն արտահայտվում են վերլուծական եւ համադրական բարդությունների ձեւով: Դրանք հիմնականում երկբաղադրիչ կազմություններ են:

Ռազմական եզրույթները եւ ռազմական բովանդակության բառերը նպատակահարմար ենք գտել բաժանել հոդակապով եւ անհոդակապ տեսակների, որոնցից քանակապես ակնհայտորեն գերակշռում է առաջինը:

Հոդակապով բարդություններ են՝ ազատագունդ (20), աղեղնաձայն (10), առաջապահ¹⁸ (122), ասպարափակ (131), բանակատեղ (60), բերդա-

¹⁷ Տե՛ս Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 90:

¹⁸ Արդի ռազմական եզրահամակարգում գործածվում է հետևյալ իմաստով. «... համագորային զորամասի՝ զլիավոր ուժերից որոշակի հեռավորությամբ դեպի առաջ ուղարկած

կալ (146), գործակալ (83), զօրագլուխ (65), զօրապետ (65), զօրավար (25), հրամանատու (128), նետաձիգ (155), նիզակակից (65), նիզակատէգ (152), վերջապահ (69)¹⁹:

Անհոդակապ բարդությունն է այրընտիր (73) բառը: Առանձնանում են նաեւ այրեւծի (160), այրուծի (123) կցական բարդությունները:

Ըստ բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բառաբարդմամբ կազմված հայերեն եզրույթները ներկայացնում են խոսքիմասային զանազան հարաբերությամբ կազմված հետեւյալ կաղապարները.

գոյական+գոյական՝ աղեղնաձայն (10), բանակատեղ (բանակետեղ) (60), զօրագլուխ (65), զօրապետ (65), թշնամանակերս (85), նիզակատէգ (152),

գոյական+ածական՝ այրընտիր (73), ասպարափակ (131), թեւակից²⁰ (159), նիզակակից (65),

գոյական+բայարմատ՝ առաջապահ (122), բերդակալ (146), գործակալ (83), զօրավար (25), կողմնակալ (63), հրամանատու (128), նետաձիգ (150), նիզակափակ (72), վերջապահ (69),

ածական+գոյական՝ ազատագունդ (20):

Բարդ եզրույթների եզրաբանական կաղապարները մեր ընտրանքում ունեն հետեւյալ տեսակները.

ա) եզրույթ + եզրույթ՝ ազատագունդ (3), զօրապետ (536), նիզակատէգ (44),

բ) եզրույթ + ոչ եզրույթ՝ աղեղնաձայն (10), ասպարափակ (131), բանակատեղ (60), բերդակալ (146), զօրագլուխ (65), զօրավար (25), նիզակակից (65), հրամանատու (128), նետաձիգ (150),

գ) ոչ եզրույթ + ոչ եզրույթ՝ առաջապահ (122), գործակալ (83), վերջապահ (69), այրընտիր (73), այրեւծի (160), այրուծի (123):

մոտոհրաձգային (տանկային) ստորաբաժանում, ռազմերթի ժամանակ որպէս երթային պահպանութեան մարմին» (տե՛ս Լ. ՔՈԹԱՆՋՅԱՆ, Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան, Երեւան, 2006, էջ 5):

¹⁹ Արդի ռազմական տերմինահամակարգում գործածվում է հետեւյալ իմաստով. «... մոտոհրաձգային՝ (տանկային) զորամասի՝ հիմնական ուժերի նահանջն ապահովելու համար» (տե՛ս Դ. ԶԻԼԻՆՔԱՐՅԱՆ, Ե. ԵՐԶԵՅԱՆ, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն-անգլերեն մեծ բառարան, Երեւան, 2015, էջ 559):

²⁰ Թեւակից՝ բանակի թեւ կազմող, զորքին կցված՝ իբրեւ նրա թեւը:

Փոխառյալ բաղադրիչներով կաղապարների մեջ ավելի շատ են այն բարդությունները, որտեղ օտար բառը որպես առաջին բաղադրիչ է կիրառվում, ինչպես՝ ազատագունդ²¹, ասպարափակ²², բանակատեղ²³, բերդակալ²⁴, հրամանատու²⁵, նիզակակից²⁶:

Ածանցման միջոցով կազմված ռազմական բովանդակության բառերում մեծ է վերջածանցների կիրառությունը, որը նույնպես հայերենի կարեւոր առանձնահատկություններից է: Նախածանցավոր ընդամենը մի քանի կաղապար ունենք՝ -ան ժխտական նախածանցով կազմված՝ անազատ (61), անհրահանգ (4), անպարտ (93): Վերջածանցավոր կազմություններն են՝ -ած՝ կազմած²⁷ (131), -ակ՝ պահակ²⁸ (66), -ական՝ ամրական (118), զօրական (66), պատերազմական (164), սեպհական (11), -անի՝ ազատանի (49), -անք՝ թշնամանք (98), -աւոր՝ զօրաւոր (72), -եալ՝ բանակեալ (132), զինեալ (129), զինուորեալ (13), զօրացեալ (130), զօրացուցեալ (70), թշնամանեալ (98), իշխանացեալ (180), իշխեցեալ (159), կազմեալ (64), հեծեալ (123), նակատեալ (124), -եան՝ բերդեան (67), -եղ՝ զօրեղ (131), -իկ՝ մարտիկ (125), -իչ՝ թշնամանիչ (80), -ոդ՝ նետոդ (9), պատերազմոդ (165), -որդ՝ հակառակորդ (142), -որեար²⁹ աւագորեար (158),

²¹ Ազատ՝ պահլ. *azat*՝ ազնվական, իշխան. տարածված է նաեւ բազմաթիվ այլ լեզուներում (տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՐ, 1, էջ 83):

²² Ասպար՝ պահլ. *aspar* ձևից՝ վահան. իրանյան մյուս լեզուներն ունեն *spar*, *ispar* ձևերը (տե՛ս ՀԱՐ, հտ. 1, էջ 273):

²³ Բանակ՝ Հ.Ր. Աճառյանը բառը համեմատում է վրացերեն բանակի (բանակ), բանակեա, դաբանակեա (բանակել) բառերի հետ, սակայն ավելացնում է, որ սա կարող է ծագած լինել պահլավերենից, ինչպես ցույց է տալիս բառի -ակ վերջավորությունը (տե՛ս ՀԱՐ, հտ. 1, էջ 405):

²⁴ Բերդ՝ Հ.Ր. Աճառյանը համարում է ասորական փոխառություն՝ *bi-ir-ti* կամ *bi-ir-tu*՝ բերդ, ամրոց: Գ. Զահուկյանը գրում է, որ այս բառը ծագում է սեմական աղբյուրից, ակկադերեն *birtu/m*, արամ. *berta*՝ ամրոց, բերդ (տե՛ս ՀԱՐ, հտ. 1, էջ 442: Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 126):

²⁵ Հրաման՝ պահլ. *framan*, պարսկ. *farman* (տե՛ս ՀԱՐ, հտ. 3, էջ 130):

²⁶ Նիզակ՝ պահլ. *nezak*, *nizag*՝ աշտեյ բառից. նշանակում է նաեւ եղեգնիկ (տե՛ս ՀԱՐ, հտ. 3, էջ 451):

²⁷ Կազմած բառը բազմաթիվ այլ իմաստների հետ ունի նաեւ պատերազմական զենքեր իմաստը՝ «...իսկ զայն Մամիկոնեան զՎարդ զրամբ եւ կազմածով ածեալ հասուցանէր ի յերկիրս Հայոց» (էջ 131):

²⁸ Այս բառն ունի բազմաթիվ իմաստներ՝ 1. Պահապան, 2. Պաշտպան, հովանավոր, 3. Խնամակալ, 4. Նեղ կիրճերի մեջ պաշտպանական ամրոց: Ղազար Փարպեցին գործածել է վերջին իմաստով. «...գտեալ անդ զպահապանս պահակին» (66): Ծագել է պահլ. *pahr* ձևից՝ պահպանություն (տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՐ, հտ. 4, էջ 9):

²⁹ -որեար՝ կազմված է հավաքական -եար մասնիկով՝ որ՝ մարդ բառից (տե՛ս Հ.Ր. Աճառյան, ՀԱՐ, հ. 3, էջ 577–578):

ազատորեար (126), -ոց՝ ամրոց (72), -ութիւն՝ ազատութիւն (179), անազատութիւն (179), ամրութիւն (123), ապստամբութիւն (160), զօրութիւն (17), թշնամութիւն (77), իշխանութիւն (8), հաշտութիւն (166), հպատակութիւն (95), մարգպանութիւն (178), սպարապետութիւն (175), -ումն՝ յարձակումն (65), նուաճումն (169), պաշարումն (155), -ուոր՝ զինուոր (82): Երբեմն վերջածանցը հանդես է գալիս նախորդող մեկ այլ վերջածանցից հետո, ինչպէս՝ զինուորեալ (13), մարգպանութիւն (178): Միաժամանակ նախածանցով եւ վերջածանցով կազմված է անազատութիւն (179) բառը: Ըստ բաղադրիչների՝ եզրույթների եւ ոչ եզրույթների պատկանելության՝ ածանցավոր ռազմական եզրույթները կազմվում են ռազմական եզրերից եւ ընդհանուր գործածական բառերից:

Բայական բառույթներ են ստեղծվում -ել, -ալ, (ան) ալ, (են) ալ, (ցն) ել քերականական եւ բառաստեղծական մասնիկների միջոցով. հաճախ այս կամ այն հասկացութիւնը բայական նշանակութեամբ արտահայտելու անհրաժեշտութիւնից ելնելով եւ լեզվի մեջ այլեւս նոր արմատներ չառաջանալու պատճառով լեզուն դիմում է իր ներքին հնարավորութիւններին՝ բայեր կազմելով բայակերտ մասնիկների միջոցով³⁰: Բայական անվանումներն ստեղծվում են բնիկ եւ փոխառյալ բառերի բայացման միջոցով՝ -ել՝ ազատել³¹ (61), ապստամբել (67), արշաւել (10), բանակել (118), զօրել (54), թշնամանել (80), իշխել (117), լրտեսել (139), կազմել³² (121), կոռել (144), հեծանել (66), հրահանգել (112), հրամայել (165), հպատակել (54), հակառակել (71), յարձակել (69), մրցել³³ (135), նուաճել (138), պաշարել (121), պատերազմել (130), վառել³⁴ (71): -Անալ՝ ամրանալ (121), զօրանալ (130):

Բարդ եւ ածանցավոր եզրույթներին սերտորեն առնչվում են նաեւ բարդածանցավոր բառերը՝ ազատաբերութիւն (179), գործակալութիւն (121), հրամանատարութիւն (91), հրամանատրութիւն (55), նետաձգութիւն (111):

³⁰ Տե՛ս Հ. ՕՆԱՆՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը եւ նրա հարստացման միջոցները, Երեւան, 1982, էջ 114:

³¹ Նկատելի է, որ -ել-ով բայեր են կազմվում հատկապէս փոխառյալ արմատներից:

³² Կազմել՝ բազմիմաստ բառ է. ունի նաեւ զինել, սպառազինել իմաստը. «....եւ Վահան Մամիկոնեանկազմեալս առաքէր ընդ նմա» (էջ 64):

³³ Գրաբարի բառարաններում բառն ունի նաեւ կռվել, պատերազմել իմաստը. Ղազար Փարպեցիին գործածել է այս իմաստով. «....զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահանն այսպէս մրցէր հանդերձ երանելի եղբարբն Վասակա....» (էջ 135):

³⁴ Վառ՝ առանձին անգործածական արմատ է՝ զինուել, սպառազինուել իմաստով (տե՛ս Հ. Ր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՅ, հտ. 4, էջ 308):

Հայերենի բառակազմության մեջ առանձնակի դեր ունեն նաեւ հարադրությունները՝ իրենց զանազան դրսեւորումներով: Ռազմական բովանդակության կազմություններ են ստեղծվել բայական հարադրությունների միջոցով, որոնց բաղադրիչները, բարդության մեջ կորցնելով իրենց իմաստները, բարդությանը տալիս են նոր իմաստ: Մեր առանձնացրած հարադրություններն են՝ գրոհ տալ (127), զօրաժողով առնել (155), հրաման առնով (115), հրաման տալ (24), հպատակ լինել (138), նետաձիգ լինել (66), սպարափակ առնել (150), սուր ի վերայ դնել (155), վանել զինու (109):

Այսպիսով՝ հայերեն ռազմական եզրաբանությունը որոշակիորեն տարբերվում է եզրաբանության մյուս բնագավառներից: Հայերենի եզրաշինությունն ավելի գործունե է արդյունավետ է դառնում լեզվի ներքին հնարավորությունների գործածությամբ, որոնցից մեկը բառակազմական միջոցներով նոր եզրույթների ու բառերի կերտումն է: Բառային նոր միավորների ստեղծումով արտահայտվում են բառիմաստային նոր նրբերանգներ, ընդլայնվում լեզվում առկա բառապաշարային ատաղձից նոր բառեր կազմելու հնարավորությունները:

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено развитию сложных и словообразовательных моделей слов военного содержания в армянском языке на основе текста «Истории Армении» Газара Парпеци. Важнейшей особенностью современного армянского терминообразования является терминосистема грабара. Военные термины многозначны. Рассматривая данные примеру, мы пришли к выводу, что они не только многозначны, но и представляют преимущественно военную лексику. Ссылаясь на этимологию некоторых корней слов, мы приводим примеры из текста оригинала. Это дает право отметить, что разделение военных терминов и их оценка с современной точки зрения остались неизменными и зафиксированы в современных армянских словарях как исторические словосочетания. Другая же часть, претерпев определенные смысловые изменения, перешла в процессе развития армянского языка на последующие этапы.

SUMMARY

This study is dedicated to the development of compound and word-formative patterns of words of military content in the Armenian language with respect to Ghazar Parpetsi's "History of Armenia". One of the most significant features of the Modern Armenian term-formation is the terminological system of the Classical Armenian Language. Military terms are polysemantic. In examining these words, we concluded that they are not only polysemous, but also have predominantly military meanings. Referring to the etymology of some of the roots of the words, we give examples from the original text. This gives us the right to note that the classifications of military terms and their assessment from a contemporary point of view remained unchanged and are recorded in Modern Armenian dictionaries as historical word-combinations. The other part, having undergone certain semantic changes, passed to the subsequent stages in the process of development of the Armenian language.



ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ՝

Սուրբ Գրիգոր Նարեկացուն² ճանաչել, գնահատել ու սիրել են դեռևս իր ժամանակներում, անվանել ուսուցիչ-վարժապետ-վարդապետ՝ «պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ, ռաբբի ռաբբի անուանեցայ» (ՀԲ. գ.)։ Այդ մասին վկայում է հենց ինքը՝ հեղինակը. «Վարժապետ կոչվեցի... Ռաբբի, ռաբբի անվանվեցի»³։ Հիշենք, որ Եկեղեցու ուսուցիչ (ռաբբի) եւ փրկիսոփա են անվանվել հայրաբանները՝ քրիստոնեության ակնառու տեսաբաններն ու գործիչները։ Քրիստոնեության առաջին դարերում նրանք մշակել են նոր կրոնի հոգեւոր ժառանգությունը՝ դրա հետ համադրելով նորալատոնական փրկիսոփայությունը։

Հայրաբաններն այն ժամանակի փրկիսոփաներն են, երբ փրկիսոփայությունը ծառայում էր աստվածաբանությանը։ «Միջնադարյան կրոնն ունակ է փրկիսոփայության հարցերն ավելի լավ լուծել, քան ինքը՝ փրկիսոփայությունը»⁴։ Քրիստոնեությունն ու նորալատոնականությունն անբաժան են իրենց համադրման սահմաններում։

Գրիգոր Նարեկացու երկն իրավացիորեն կապում են նորալատոնականության հետ, սակայն այդ կապը միջնորդավորված է հայրաբանական գրականությամբ։

^{1*} Ստացվել է՝ 20.11.2022, գրախոսվել է՝ 21.11.2022։ էլ. հասցե՝ wua34@mail.ru:

² «Մատենանք» Բրիտանական գրականության համապատկերում տարբեր հեղինակներ են դիտարկել։ Առաել նոր ուսումնասիրություններից կարելի է յիշել Ադլենի գործը, ուր զուգադրուել են Նարեկացու եւ Եփրեմ Ասորու գրածները. «որ ստեղծուել են հաւատացեալներին արթուն եւ զգօն պահելու համար»։ տե՛ս Jesse Siragan Arlen, Texts for Keeping Watch: The Hymns of the Night of Ephrem of Nisibis and the Book of Lamentation of Gregory of Narek. DOI: 10.1484/J.VIATOR.5.118201:

³ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Մատյան ողբերգության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2021, Բան ՀԲ. Բ., էջ 401:

⁴ Տե՛ս «Формирование Средневековой Философии», Москва, 1979, էջ 89: Նույն հատվածում կարդում ենք նաեւ հետեւյալը. «Հայրաբանական կապադոկյան դպրոցն իրականացրեց քրիստոնեական գաղափարախոսության եւ նորալատոնական փրկիսոփայության համակողմանի համադրման առաջին տարբերակը» (անդ, էջ 89):

Նարեկացին առաջնորդվում է հայրաբանների ժառանգությամբ, որտեղ նորալատոնականությունը միաձուլված է քրիստոնեության հետ (համադրումն ավարտվել է Զ. դարում): Պարզ է՝ ինչ նորալատոնականությունից անցել էր քրիստոնեությանը, նրա անկապտելի մասն էր: Նորալատոնականությունը միախառնված է դավանաբանությանը, եւ ինքն արդեն իր անկախ հատկանիշներով չի ներկայանում:

Նորալատոնականության տարրերի առկայությունը «Մատյան ողբերգության» երկում դավանաբանության եւ ոչ փիլիսոփայության սահմանում է: Դրանք լծորդվել են դավանաբանական համակարգին: Նարեկացին առանձին փիլիսոփայական խնդիրներ չի քննում:

«Մատյան ողբերգության» երկի հիմքը Հին եւ Նոր Կտակարաններն են եւ հայրաբանական գրականությունը:

Եւ քանի որ մեծ մտածողը Նարեկա վանքում բարձր հեղինակություն է վայելել գրական եւ դավանաբանական ժառանգությամբ, ինչպես հայրաբաններին, նրան տվել են ուսուցչի (ռաբբի) եւ փիլիսոփայի պատվանուններ: Հարկ է նկատի ունենալ, որ աստվածաբանության ուսուցիչը դարի ողջ իմաստությանը ձգտող անհատականություն էր: Հայրաբանները քրիստոնեության հանրագիտակներ էին: Նշված հատկանիշներն իրավացիորեն վերագրվել են «Մատյան ողբերգության» երկի հեղինակին: «Քրիստոնեական փիլիսոփայության էությունը հանգում է նրան, որ Սուրբ Գրքի տեսանկյունից բացատրի աշխարհը եւ նրանում մարդու տեղը»,— գրում է Օգոստինոսը⁵: Այս բնութագրությունն ամբողջապես վերաբերում է Նարեկացու գլխավոր երկին: Այն հիմնովին նվիրված է աշխարհում մարդու տեղի քննությանը, գոյին ու գոյաբանությանը, որով դուրս է գալիս զուտ կրոնական շրջանակից՝ դառնալով հանճարեղ գեղարվեստական երկ:

Փիլիսոփայությունը բուն գոյության քննության առումով անվանում են գոյապաշտություն (existentialism), որի սկզբնավորողների թվում տրվում են Օգոստինոսի, Շոպենհաուերի, Կիերկեգորի, Նիցշեի անունները: Այս շարքում հարկ է ավելացնել Գրիգոր Նարեկացու անունը:

Նարեկացին կարող էր փիլիսոփա ճանաչվել նաեւ այն պատճառով, որ խորհրդապաշտ (անգլ.՝ *mistic*, յուն.՝ «μυστικός») էր, իսկ խորհրդապաշտությունը համարվել է փիլիսոփայական աստվածաբանություն:

⁵ S⁶ А. А. Столяров, Аврелий Августин, Жизнь, Учение и Его Судьбы, в кн.: “Памятники Религиозно-Философской Мысли: Западная Патристика”, Москва, 1991, էջ 7:

Միջնադարյան փիլիսոփայությունը հաճախ գրական շարադրանք ուներ (գրական երկի հեղինակներ են Գրիգոր Աստվածաբանը, Մաքսիմոս Խոստովանողը, Օգոստինոսը եւն)։

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկն իր օրինակը չունեցող գրական երկ է, որը հեղինակի աշխարհայացքը ներկայացնում է համահավաք ու ամբողջական։

Երկը որոշակիորեն կապված է Օգոստինոսի «Խոստովանություններ»-ի հետ, ենթադրում ենք նաեւ՝ Գրիգոր Աստվածաբանի «Իմ կյանքի մասին», «Իմ հոգու տառապանքների մասին» ինքնակենսագրական քերթվածների հետ։

Սակայն Նարեկացու երկն իր դարաշրջանի քրիստոնեական մարդաբանության խտացումն է։

Գերմանացի փիլիսոփա Ֆոյերբախը քրիստոնեությունը համարում է փիլիսոփայական մարդաբանություն։ Նա նույնն ասում է մեկ այլ կերպ՝ «աստվածաբանության գաղտնիքը մարդաբանությունն է»⁶։

Ճիշտ կլինի ասել, որ «Մատյան ողբերգության» աստվածաբանության առանցքում են գոյաբանությունն ու մարդաբանությունը միասին։ Նրանում պահպանվել են հինկտակարանային գոյաբանական հայացքները, շարադրվել նորկտակարանյան մարդաբանությունը՝ գեղարվեստական հանճարեղությամբ։

Ի տարբերություն Գրիգոր Նարեկացու՝ Օգոստինոսի «Խոստովանություններ» երկը պատկերում է նոր (քրիստոնյա) անձնավորության ձեւավորումը՝ հոգեբանական տեղաշարժերով։ Սույնի հիմամբ կարելի է եզրահանգել, որ Օգոստինոսի եւ Նարեկացու երկերը նման են աստվածաբանության եւ մարդաբանության միահյուսումով։

Դրական ստեղծագործություն լինելուց զատ՝ «Մատյան ողբերգության» երկն առաջին հերթին աղոթամատյան է, ինչը հեղինակին հնարավորություն է տալիս մարդուն ներկայացնելու որպես փոքր տիեզերք (microcosm)։

Աղոթքի տեսության հիմնավորման հարցում կարեւոր դերակատարություն է ունեցել Բարսեղ Մեծի եւ Գրիգոր Աստվածաբանի աշակերտ, հոշակավոր աստվածաբան եւ արեւելաքրիստոնեական խորհրդապաշտական-ճգնակեցական ավանդույթի տեսաբան Եւագր Պոնտացին։ Հա-

⁶ Ску Л. Фейербах, Сущность Христианства, Сочинения, т. 2, Москва, 1995, էջ 8, 193, 277, 404։

մաձայն վերջինիս մտածողության՝ աստվածաբանության երրորդ փուլի, այսինքն՝ խորհրդական աստվածաբանության հիմնական նպատակը մաքուր աղոթքին հասնելն է⁷, «մտքի անմիջական զրույցն Աստծու հետ»⁸, որի ընթացքում «մարդու համար բացվում են աստվածաբանության գաղտնիքները»⁹:

«Մատյան ողբերգության» երկի յուրաքանչյուր գլուխն սկսվում է «ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ» բառերով, որ ակամայից հիշեցնում են Եւագր Պոնտացու վերոնշյալ ձեւակերպումը՝ «մտքի զրույց Աստծու հետ»¹⁰: Այսինքն՝ կարելի է վստահաբար արձանագրել, որ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը շարունակական մի երկխոսություն է Աստծու հետ, երկխոսություն, որ ընթանում է հայ աստվածաբանական բարձրագույն մտքի մակարդակով:

Նարեկացին է վկայում «անմիջական զրույցի մասին». «Եւ քանզի սկիզբն կալայ խաւսել ընդ քեզ» (Բան Դ. ա):

Խորհրդապաշտական սույն փորձառությունն առանձնահատուկ մանրամասնությամբ է նկարագրել նաեւ նորալատոնականության հիմնադիր Պլոտինոսը: Նրա կարծիքով՝ այս բարդագույն փորձառությունը վերապրելուց հետո ներքին մարդն անխափան կերպով հաղորդակցվում է Արարչին. «Հաստ շարժման, որը մեր ներսում մեզ հարաբերում է մեզ հետ, թուլացնում է ինքնագիտակցությունը եւ ուղեկցում է դեպի Նա, վերջնարդյունքում ինքնագիտակցումն ընդհանրապես անհետանում է, եւ մենք ամբողջովին մեր ներսում ենք՝ միավորված Նրա հետ»¹¹:

Նմանատիպ երկխոսության ականատես ենք նաեւ Ս. Օգոստինոսի «Խոստովանություններ»-ում, որտեղ վերջինս իր Արարչին դիմում է «Դու»-ով. «Մեծ ես Դու, Տեր»¹², եւ «Եւ մարդն ուզում է Քեզ փառաբանել»¹³:

Ի տարբերություն Ս. Օգոստինոսի՝ Ս. Գրիգոր Նարեկացին Աստծուն դիմում է անմիջական, ուղիղ, երկրորդ դեմքով, պատվանուններով, տարողունակ մակդիրներով:

⁷ Տե՛ս «Аналитика Мистицизма», под ред. Е. Г. Балагушкина, Москва, 2011, էջ 348:

⁸ Անդ:

⁹ Հմմտ. անդ, էջ 348:

¹⁰ Հարկ ենք համարում նշել նաեւ, որ Ս. Գրիգոր Աստվածաբանի երկերը նույնպես լեցուն են խորհրդապաշտական նմանաբնույթ գաղափարներով (առավել մանրամասն տե՛ս Святитель Григорий Богослов, Творения, т. 2, Москва, 2011):

¹¹ Տե՛ս Ս. Блонский, Философия Плотина, Москва, 2009, էջ 303:

¹² Տե՛ս «Памятники Религиозно-Философской Мысли: Западная Патристика», էջ 53:

¹³ Անդ:

Բացի այդ՝ թե՛ Ս. Օգոստինոսի եւ թե՛ Ս. Գրիգոր Նարեկացու երկերին հատուկ են սեփական «ես»-ի եւ անձնական ճակատագրի շուրջ մտահոգությունները, որոնց հիմքը Պլոտինոսի՝ «ներքին ես»-ին վերաբերող բնորոշումներն են։ Պլոտինոսի «ներքին ես»-ը Օգոստինոսի համար հոգեկան ներգործության կենտրոնն է, որտեղ դրսևորվում են մարդու բարձրագույն կարողությունները։

Օգոստինոսը ցույց տվեց, որ «ներքին մարդու» կյանքն անասելի բարդ է, նրա հոգին անդունդ է։ Նարեկացին հոգու անդնդային խորությունը ցույց տվեց մեղք—փրկություն շղթայում։ Մեղքերի թվարկման առումով «Մատյան ողբերգության» երկը եզակի է համաշխարհային գրականության մեջ։ Մեղքերի թվարկումով Նարեկացին իջնում է «ես»-ի անկատարության անդունդները, ինչին պետք է հակակշռեն կատարելության գազաթնները։

Օգոստինոսի երկը կյանքի մեծ ճանապարհ ընդգրկող խոստովանություն է։ Նարեկացին իր երկը միաժամանակ խոստովանություն է համարում. «Եւ արդ, զորս յայտնեցից եւ յաղագս ոյց նշանակեցից եւ վասն որպիսեաց ճառեցից եւ զորքան ծածկեալս մերկացուցից եւ կամ վասն որոց խոստովանեցայց» (Բան ԻԸ. ա.)։ Բանաստեղծը խոստովանում է Աստծուն անկրկնելի խորությամբ, երկիր—երկինք կապն ամբողջությամբ գոյի իմաստավորման դաշտ ներառելու կարողությամբ։

Թե՛ Օգոստինոսի եւ թե՛ Գրիգոր Նարեկացու երկերում «ես»-ը «ներքին ես»-ն է։ «Ճշմարտությունը բնակվում է ներքին մարդու մեջ»,— գրել է Օգոստինոսը¹⁴։

Նարեկացու երկի համապարփակությանն իր նպաստն է բերում խորհրդագգածությունը։ Այն առաջ է բերում անհատական հավատի իրար հյուսվող միկրոհամակարգեր՝ հնարավորություն ընձեռելով բաց անելու «ներքին ես»-ի տիեզերքը։ Խորհրդապաշտական համակարգը «ես»-ն անմնացորդ կապում է Աստծու հետ։ Խորհրդագգածությամբ են պայմանավորված երկում սրբազան խորքի (ներքին գաղտնի խորքեր) բարդ, լարված համադրությունները։

Հիշենք, որ խորհրդապաշտությունն ընկալվել է որպես ամեն տեսակի կատարելության, ամեն տեսակի աստվածաբանության գազաթ, որի վերջնահանգրվանը հոգու վերամիավորումն է Աստծու հետ։ Նորալատո-

¹⁴ Տե՛ս «Памятники Религиозно-Философской Мысли: Западная Патристика», էջ 33–34։

նականություն մեջ այդ հանգրվանին հասնելու համար առկա են տեսական նախապատրաստություններ: Այսպես՝ ռուս հետազոտող Վ. Պետրովի հոգվածներից մեկում կարդում ենք հետևյալը. «Եթե Պլոտինոսի եւ Պորփյուրի նորպլատոնականության մեջ աստվածայինի հետ միությունը հնարավոր է «տեսականորեն»՝ մտահայեցությամբ, ապա Յամբլիքոսից հետո դեպի աստվածները համբառնալու գործընթացում հավասար նշանակություն են վերագրվում աղոթքին եւ պաշտամունքին»¹⁵:

«Յամբլիքոսը (ի տարբերություն իր նախորդներից՝ Պլոտինոսից ու Պորփյուրից) կարծում էր, որ հոգին չի կարող բարձրանալ դեպի Միակը միայն փիլիսոփայության միջոցով, եւ մտավոր հայեցությունն անհրաժեշտ է լրացնել կրոնական փորձառությամբ, (սրբազնագործությամբ եւ աղոթքով)»¹⁶:

Վերոնշյալ վկայությունների հիմամբ կարելի է եզրահանգել, որ Եւագր Պոնտացու «զուտ աղոթքի» տեսությունը, ամենայն հավանականությամբ, ձեւավորվել է Յամբլիքոսի՝ սրբազնագործություններին ու աղոթքին վերաբերող տեսական հայացքների ազդեցությամբ:

Այս առումով բացառություն չէ նաեւ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը, քանի որ այն եւս որոշակի նմանություններ է բովանդակում Եւագր Պոնտացու «զուտ աղոթքի»՝ խորհրդապաշտական-ճգնակեցական տեսության հետ:

Ըստ պատմաբան, բյուզանդագետ ու հայագետ Ա. Կաթանի՝ Աստծու հետ հոգով վերամիավորվելու գաղափարը բնորոշ է հայրաբանության դարաշրջանի վերջին մեծ մտածող Մաքսիմոս Խոստովանողին. «Մաքսիմոսի մարդակենտրոն աստվածաբանությունը խորապես անհատական է, նրա քերթությունը մարդասիրական է, որի նպատակը մարդու աստվածացումն է...»¹⁷:

Խորապես անհատական է նաեւ Ս. Գրիգոր Նարեկացու աստվածաբանությունը, որը եւս մարդակենտրոն է:

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե ինչ հարաբերության մեջ են աստվածաբանությունն ու խորհրդապաշտությունը: Տվյալ հարցին

¹⁵ Տե՛ս В. В. ПЕТРОВ, «Реальный» Символ в Неоплатонизме и в Христианской Традиции (в Ареопагитском Корпусе и у Карла Ранера), «Вестник Православного Свято-Тихоновского Гуманитарного Университета», Серия 1: Богословие, Философия, вып. 3 (31), 2010, էջ 44:

¹⁶ Անդ, էջ 36:

¹⁷ Տե՛ս А. КАЖДАН, История Византийской Литературы, Санкт-Петербург, 2002, էջ 109:

առանձնահատուկ պատասխանի մի տարբերակ առկա է ռուս աստվածաբան եւ կրոնափիլիսոփա Վ. Լոսսկու «Ակնարկ Արեւելյան Եկեղեցու խորհրդապաշտական աստվածաբանության» գրքում, համաձայն որի՝ արեւելյան դավանաբանությունը կտրուկ տարբերություն չի դրել խորհրդազգաթուխության եւ աստվածաբանության միջեւ: Այնուհետեւ հանրահռչակ աստվածաբանը հավելում է. «Աստվածաբանությունն ու խորհրդազգաթուխությունը բնավ չեն հակադրվում, ընդհակառակը, պաշտպանում եւ լրացնում են միմյանց: Մեկն անհնար է առանց մյուսի: Եթե խորհրդապաշտական փորձառությունն ընդհանուր հավատի անհատական դրսեւորումն է, ապա աստվածաբանությունը՝ այն համընդհանուրի, որ յուրաքանչյուր ոք կարող է փորձով ճանաչել»¹⁸:

Խորհրդային ժամանակաշրջանի նարեկացիագիտությունը խորհրդապաշտական փորձառությունը հակադրում էր Եկեղեցուն՝ դրանում որոնելով հակաեկեղեցական գաղափարներ¹⁹:

Սակայն վերոգրյալի հիմամբ վստահաբար կարելի է պնդել, որ խորհրդազգաթուխությունն անբաժան է աստվածաբանությունից: Ընդհանրական Եկեղեցու տիեզերական վարդապետներից խորհրդապաշտ Ս. Դիոնիսիոս Արեոպագացին Եկեղեցին համարում է հրեշտակների նվիրապետություն, մաքուր լույսի եւ մաքուր հայելիների արտացոլում՝ «գաղտնիքների» խիստ կարգով²⁰:

Խորհրդապաշտական փորձառությունը քրիստոնյայի փրկությունը դիտարկում է իբրեւ անհատական կեցության գլխավորագույն հարց:

«Կրոնն ունի գործառնային երեք մակարդակ. առաջինը ներկայացված է, այսպես կոչված, անհատական հավատով, մարդու կրոնական զգացմունքների եւ պատկերացումների անհատական աշխարհով...»²¹:

Վ. Լոսսկին խորհրդապաշտությունը հարաբերակցում է կրոնական փորձի հետ, որի շրջանակում «անհետանում կամ նվազագույնի է հաս-

¹⁸ Сѣу В. Лосский, Очерк Мистического Богословия Восточной Церкви, Москва, 2012, էջ 11:

¹⁹ Սույնի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս Մ. ՄԿՐՅԱՆ, Գրիգոր Նարեկացի, Երեւան, 1955:

²⁰ Ս. Դիոնիսիոսի նմանաբնույթ ձեւակերպումներին եւ դրանց մեկնաբանություններին կարելի է մանրամասն ծանոթանալ հետեւյալ հրատարակությամբ՝ ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՅԻ, Յաղագս Աստվածայնոցն Անուանց, Յաղագս Եկեղեցական Քահանայապետութեան//The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite, ed.: R. W. Thomson, CSCO, vol. 488, Armeniaci Tomus 17, Lovanii, 1987:

²¹ Сѣу «Аналитика Мистицизма», 2011, էջ 357:

նում անձի եւ առարկայի միջեւ տարբերությունը, եւ անմիջական կապ է ստեղծվում Աստծու հետ, ապա կապը նկարագրվում է բառացիորեն կամ այլասացորեն, հասկացություններով կամ պատկերավոր, ավելի հաճախ՝ առաջին կամ երրորդ դեմքով՝ որպես բարձրացում, ընկղմում, միավորում»²²:

Եկեղեցու հեղինակությունը մշտապես բարձր է եղել: Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու սրբերից Թովմաս Աքվինացին ասել է, թե անհրաժեշտ է հենվել եկեղեցու, բայց ոչ Օգոստինոսի, Հերոնիմոսի կամ այլ ուսուցչի հեղինակության վրա. «Ինչ դու ճշմարիտ գտար, հենվիր դրան եւ այն վերագրիր եկեղեցուն»²³:

Ճշմարիտ հավատը մշտապես պահանջել է եկեղեցու հեղինակության անխոս ընդունում:

Ս. Գրիգոր Նարեկացին խորհրդապաշտական իր հայացքներով ոչ թե հակադրվել է եկեղեցուն, այլ նրան է ձոնել «Մատյան ողբերգության» երկի ՀԵ. գլխի երկրորդ մասը: Մեծ մտածողն այդ մասում պանծացնում է եկեղեցին, որը, ըստ նրա, զարդարված է Քրիստոսի եւ Սուրբ Հոգու շնորհներով, խոսում է հրեշտակների աննյութեղեն լեզվով: Այնուհետեւ եկեղեցուն տրվում են բարձր խորհրդանշանային-այլաբանական ուրիշ բնութագրումներ²⁴:

«Մատյան ողբերգության»-ը բնորոշ են կառուցվածքային այնպիսի առանձնահատկություններ, որոնք խորհրդապաշտական տեսանկյունից ընթերցողին ապահովում են հոգեւոր հասունության աճով, ներքին «լուսավորմամբ», հափշտակության կայուն դրույթամբ, ինչպես նաեւ՝ հոգեւոր-հոգեբանական վերափոխություններով:

Հափշտակության պարագայում, ինչպես համոզված են նորալատոնականները, հոգին դուրս է գալիս իր սովորական վիճակից, ձգտում Բարձրագույն Կեցության:

Այստեղ վառ արտահայտված է ներքին «ես»-ի հափշտակության հոգեվիճակը, խոսքի ազդեցությամբ հոգեներգործությունը: Խորհրդապաշտությամբ է պայմանավորված մարդկային պատմության, որպես մեղքի եւ փրկության շղթայի՝ ընկալումը, ինչը «Մատյան ողբերգության» երկի բովանդակության հիմքն է:

²² Տե՛ս В. Лосский, նշ. աշխ., էջ 11:

²³ Տե՛ս А. Столяров, Патристика, Москва, 2001, էջ 17:

²⁴ Ս. Գրիգոր Նարեկացի, նշ. աշխ., 2021, Բան ՀԵ., էջ 414–432:

Երկում խտացված են քրիստոնեական գրականության պատկերացումները մեղքի եւ փրկության վերաբերյալ: Բանաստեղծը մեղք—փրկություն հակադրության պատկերմամբ հասել է մարդկային երեւակայության վերջնասահմանին: Խորհրդազգածական երեւակայությունը բաց է անում «ներքին մարդու»՝ մեղքի եւ փրկության ապրումների տիեզերքը:

«Մեղքերի հետեւում կանգնած է մահը»,— ասված է Վ. Լոսսկու աշխատության մեջ²⁵: Մի կողմից՝ հեղինակի համար ճակատագրի վճիռներն անբեկանելի են, մյուս կողմից՝ նորկտակարանյան հավատը նրա մեջ վառում է փրկության հույսը:

Ֆոյերբախը մարդուն անվանում է տառապող անհատ: Մարդն այդպիսին է քրիստոնեության համար²⁶:

Նարեկացին նույնպես տառապանքով է գնում դեպի Աստված՝ փորձելով դուրս գալ մեղքի անդունդներից եւ հուսալով վերերկրային հանգրվանների:

Սույն ուսումնասիրության առաջին հատվածում մենք նշել ենք, որ Գրիգոր Նարեկացին իր երկը համարում է խոստովանություն, որը մեղք—փրկության խորհրդանշանային-փոխաբերական հարասություն է: Մեղք—փրկություն հակակշիռները վառ են պահում մարդու ներքին երկատման հնոցը: Հակակշիռները «ես»-ին տարուբերում են բեւեռից բեւեռ:

Երկվության մասին Օգոստինոսը հետեւյալն է գրում իր «Խոստովանություններում». «... մեկ մարդու մեջ վիճում են երկու կամք, նրա ներսում պայքարում են միմյանց թշնամի երկու հոգի՝ սկզբնավորված երկու թշնամի էություններից եւ թշնամական երկու սկիզբներից. մեկը՝ բարի, մյուսը՝ չար»²⁷:

Երկվական ծանր հոգեվիճակում Նարեկացին առաջնորդվում է գույլ դեպի աստվածայինը շրջելու փրկիչ գիտակցությամբ:

Մարդու ներքին դրախտն ու դժոխքը կողք կողքի են՝ փոխներթափանցված:

Կեցության նախասահմանված օրենքներից շեղումն առաջ է բերում «ես»-ի երկատում եւ գոյության իմաստը կասկածի ենթարկող բախում:

²⁵ Ску В. Лосский, н2. աշխ., էջ 469:

²⁶ Հարկ ենք համարում նշել, որ Աստծու եւ մարդու տառապանքի նյութը առանցքային տեղ է զբաղեցնում Ֆոյերբախի աշխատություններում (հմտ. Л. Фейербах, н2. աշխ., էջ 72—75, 77, 121, 174, 266, 314, 322, 329 եւ այլն):

²⁷ Ску «Памятники Религиозно-Философской Мысли: Западная Патристика», էջ 207:

«...Հմայանակք երկու յերկոսին ձեռին, Մինն՝ արեամբ, եւ միւսն՝ կաթամբ.

Երկու բուրանոցք կայծակնաւորք, Մինն՝ խնկով, եւ միւսն՝ ճենճերիւ.

Սկաւառակք կրկին կրաւորականք համոց, Մինն՝ քաղցու, եւ միւսն՝ դառնութեամբ.

Բաժակք զոյգ առ երկուս բերմունս, Մինն՝ արտաւսր, եւ միւսն՝ ծծումբ...

Արեգակունք երկու ի յերկուց ծայրից, Մինն՝ խաւարի, եւ միւսն՝ կիզման » (Բան Լ. գ.):

Հեգելը «Կրոնի փիլիսոփայություն» աշխատության մեջ մարդու ներքին երկատումն այսպես է ներկայացրել. «Մեկ այլ «ես»-ում ինձ բացառում եմ ինձանից, իմ հանդեպ կայացնում խիստ դատավճիռ... «Ես»-ը կրակ է եւ ջուր, որոնք մերձենում են իրար եւ միաժամանակ միասնությունն են այն բանի, որ փախչում են իրարից, իսկ նրանց մերձեցումը իր հերթին երկակի հակադիր հարաբերություն է՝ որպես մերթ բաժանված, երկատված, մերթ հաշտեցված եւ միավորված կողմերի հարաբերություն»²⁸:

«Մատյան ողբերգության» երկում «ես»-ն իր երկատումով առավել ամբողջական է ներկայացվել: Մինչ գոյաբանական փիլիսոփայությունն ու գրականությունը «ես»-ի ներքին երկատումը չի ունեցել նման բարձրագույն արտացոլում:

Երկում ներկայացված նավաբեկության տեսարանը (Բան ԻՅ. բ.) «ես»-ի համընդգրկուն երկատման առարկայական պատկեր է: «Մեղսագործությունից հետո մարդկային պատմությունը դարձել է ինչ-որ նավաբեկություն՝ փրկության սպասումով: Սակայն փրկության ափը, որպես այդպիսին, չի դարձել նպատակ: Ենթարկվելով կործանման՝ այն լոկ հնարավորություն է տալիս կրկին ճանապարհ բռնելու դեպի նույն եւ միակ նպատակը՝ Աստծու հետ միությունը»²⁹:

Համաձայն Եկեղեցու սուրբ հայրերի, ինչպես նաեւ Ս. Գրիգոր Նարեկացու տեսության՝ «ես»-ի ներքին բզկտումից ազատագրվելու միակ ճանապարհն Աստծու հետ վերամիավորումն է, իսկ Աստծու հետ տեղի ունենալիք միությունը կարեւորագույն գործոն է մարդու աստվածաց-

²⁸ Տե՛ս Գ. В. Ф. Гегель, Философия Религии, т. 1, Москва, 1975, էջ 254–255:

²⁹ Տե՛ս В. Лосский, նշ. աշխ., էջ 483:

ման համար, որը «Մատյան ողբերգության» երկի խորհրդապաշտության առանցքն է: Դրանից զատ՝ այստեղ խտացված են մարդու նկարագիրն ու փիլիսոփայությունը: Մարդու կազմախոսության վերաբերյալ տվյալները ծառայում են վերջինիս աստվածակերպության տեսանելի մարմնավորմանը եւ զորեղ բանականության հետ լծորդմանը:

Մարդու կազմախոսությունը դեռեւս անտիկ դարաշրջանում ուսումնասիրել է հունական արմատներից սերող հին հռոմեական բժիշկ եւ փիլիսոփա Գալեն Կլավդիոսը, իսկ վերջինիս հայացքները քրիստոնեական ժամանակաշրջանում զարգացրել է Ս. Գրիգոր Նյուսացին³⁰:

Նարեկացիագիտության մեջ մարդու կազմախոսության ուսումնասիրության տեսանկյունից անտեսվել են անտիկ բժշկագիտության ավանդները:

Ըստ Ս. Գրիգոր Նարեկացու՝ մարդն արարչության կրողն է՝ արժանի աստվածացման: Նա իր բարձր կոչումով տիեզերքի կենտրոնում է: Հրեշտակակերպ է, վերձիգ կառուցվածքով (Բան ԽԶ. Բ.)³¹:

Իսկ Ս. Գրիգոր Նազիանզացին, դիմելով մարդուն, ասում է. «...քեզ կհիշեցնեմ, որ դու ստեղծված Աստված ես»³²: Նրա համար մարդն այս աշխարհի պսակն է:

Ի տարբերություն Ս. Գրիգոր Նազիանզացու եւ Ս. Գրիգոր Նարեկացու՝ Ս. Գրիգոր Լուսավորչի «Վարդապետութիւն»-ում մարդուն տրված է այսպիսի գնահատական. «Բայց Աստուած զմարդն միայն բազմապատիկ փառաւորեաց եւ մտաւք մեծացոյց, հոգեխառն հրեշտակացս խոնարհագոյնս արար»³³: Շարունակության մեջ ասվում է. «...որ շնորհեաց առաւելութիւն գիտել ճանաչել իմանալ եւ ի միտ առնուլ ամենայն շնորհաց աստուածակիր աստուածատուր իմաստութիւնն եւ զբանաւորութիւնն... եւ իշխել ի վերայ ամենայն երկրաբուղիս, երկրածին ստեղծուածոցն... եւ կացոյց զնա տէր ամենայնի»³⁴:

³⁰ Առավել մանրամասն տե՛ս Ս. Գրիգոր ՆՅՈՒՍԱՅԻ, *Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն*, Ս. էջմիածին, 2008:

³¹ Հարկ ենք համարում նշել, որ երկում համադրված են մարդուն կազմախոսության նկարագրման անտիկ եւ քրիստոնեական եղանակները:

³² Ս. Գրիգոր Նազիանզացու սուլն վկայությունը տրված է ըստ հետեւյալ հրատարակության՝ հմմտ. Գ. Գ. КИРИЛЕНКО, Е. В. ШЕВЦОВ, Краткий Философский словарь, Москва, 2010, էջ 83–84:

³³ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, 1983, էջ 148:

³⁴ Անդ:

Այսպիսով՝ Նարեկացին Եկեղեցու սուրբ հայերի՝ մարդու աստվածացման գաղափարի զարգացնողն ու շարունակողն է:

Սակայն «Մատյան ողբերգության» երկում «աստվածային» մարդուն հակադրված է «անպտուղ» մարդը, որի խորհրդանիշը գոսացած թզենին է³⁵: Գոսացած թզենին եւ նավաբեկության տեսարանը «Մատյան ողբերգության» երկի ծանրակշիռ առարկայական պատկերներից են:

Նավաբեկության տեսարանը խորհրդանշում է պատմության աղճատումը, քայքայումը, որը հետեւանք է մարդկային հոգու անկման:

Գիտենք, որ նավը Եկեղեցին է խորհրդանշում, եւ տակավին Մաշտոցի շարականներից սկսած՝ այդ քնարական նավն ուղղորդում է բարի նավավարը՝ ամենակարող Աստված, որ Նարեկացու պատկերներում մի պահ՝ «Նաւուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ», որովհետեւ Իր ձեռքի գործերը սխալ ընթացք են որդեգրել եւ փոխանակ ապավինելու «ի Հոգիդ քո Սուրբ, որ ընդ Հաւր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ քեզ փառաւորեալ ի լոյս անմատոյց, որով կեանք եւ երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ՝ մեղապարտիս», որովհետեւ քաւութիւն եւ կեանք է շնորհում եւ օգնութեան է հասնում բոլոր կարօտեալներին, որովհետեւ թագաւորում է «քաղցրութեամբ, ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ» (Բան Ա. գ.—ե.):

РЕЗЮМЕ


Поэма «Книга скорбных песнопений» рассматривается в контексте христианской литературы, что помогает воссозданию общих литературно-исторических закономерностей. Поэма — это жанр молитвы, а молитва рассматривается как возможность для беседы с Богом. Псалмы — это молитвы, лежащие в основе как содержания, так и структуры поэмы «Книга скорбных песнопений». Связь поэмы с неоплатонизмом рассматривается как реальность, опосредованная святоотеческой литературой. Отношения между мистицизмом и теологией были четко представлены. Поэма Нарекаци впервые рассматривалась как онтологическая поэма, чем и обусловлена его художественная гениальность.


³⁵ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, նշ. աշխ., 2021, Բան Թ. Բ., էջ 56–58:

Заслуживают внимания откровения о специфической связи с поэтическими книгами Ветхого Завета.

SUMMARY

“The Book of Lamentations”, poem by Gregory of Narek is considered in the context of Christian literature, which helps to bring out general literary and historical patterns. The poem is written in a genre of prayer, and prayer is seen as an opportunity for conversation with God. The psalms are the prayers that underlie both the content and structure of “The Book of Lamentations”. The connection of the poem with Neo-Platonism is seen as a reality mediated by patristic literature. The relationship between mysticism and theology has been clearly elucidated. First, the poem of Gregory of Narek was seen as an ontological poem, which accounts for his artistic genius. Noteworthy are the disclosures of a specific connection to the poetic books of the Old Testament.





ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. գրականագետ Լյուդվիգ Կարապետյանը երիտասարդական ավյուրում շարունակում է բուռն ստեղծագործական գործունեություն ծավալել: «Դասը վարում է գրողը» (4 պրակով, գրական — կենսամատենագիտական ակնարկներ, գրողների դիմանկարի էսքիզներ) (2002—2006), «Ոսկեդարից մինչև... 21-րդ», (հայ մանկապատանեկան գրականության պատմության ուրվագծեր) (2008—2009), «Սփյուռքահայ մանկապատանեկան գրականություն (պատմության ուրվագիծ, քրեստոմատիկ նյութեր)» (2013), «Արեւմտահայ մանկապատանեկան գրականություն» (պատմության ուրվագիծ, քրեստոմատիկ նյութեր)» (2013), «Ճանապարհորդություն մանկության մոլորակում» (2013) եւ մանկապատանեկան գրականությանն առնչվող 30-ից ավելի այլ աշխատությունները մանկական գրականությամբ հետաքրքրվողների սեղանի մշտամնա գրքերից են:

Այս շարքը 2022 թվականին համալրվել է եւս մեկ արժեքավոր մենագրությամբ. «Երվանդ Պետրոսյան. բանաստեղծը... երկու սրտով»¹ խորագիրն է կրում գրականագետի նոր գիրքը՝ «Արագած աշխարհ» մարզային թերթի գլխավոր խմբագիր Վարդեան Գրիգորյանի խմբագրմամբ: Պատահական չէ, որ անվանի բանաստեղծ, մանկագիր, հրապարակախոս Երվանդ Պետրոսյանին նվիրված երկը ընթերցողի սեղանին է դրել մանկության, պատանեկության, երիտասարդության ու հասունության տարիների սրտակից ընկերներից մեկը:

Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ Լյուդվիգ Կարապետյանը կարող էր պատմել Արագած սրբազան լեռան հովտում բազմած Հնաբերդ ոստանի զավակի մանկության անհոգ տարիների մասին. կանաչ ու ծաղկանկար դաշտերում

¹ ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Երվանդ Պետրոսյան. բանաստեղծը... երկու սրտով, Երեւան, 2022: Հետագա հղումները կանենք շարադրանքի մեջ՝ փակագծով:

խաղը, գյուղի հին, ավերակ բերդից միասին քարաբեկորներ գլորելը, Սուրբ Հովհաննես վանքում կողք կողքի մոմեր վառելը... Դեռեւս դպրոցական տարիներից տաղանդաշատ դասընկերոջ եւ իր անդրանիկ գրական թոթովանքների մասին պատմությունները հեղինակը ներկայացնում է ականատեսի աչքով եւ հիշողության անիվը հետ ու առաջ պտտելով: Այն անցնում է երիտասարդական տարիների հուշաշխարհի տպավորությունների քարտեզով: Այս շրջանում, ճիշտ է, երկու ընկերների ուղիները տարբեր էին (Լյուդվիգ Կարապետյանը ընտրեց Երեւանի պետական համալսարանը, իսկ Երվանդ Պետրոսյանը՝ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը), սակայն դրանք խաչվում էին «բանասիրություն» կոչվող խորիմաստ աշխարհում: Կյանքի հետագա փուլերում էլ նրանց ընկերությունը մնաց հաստատուն, եւ այս գրքի շնորհիվ Լյուդվիգ Կարապետյանը այն դարձնում է հարատեւ:

Այդ մտերմությունը պատճառ է դարձել, որ Լյուդվիգ Կարապետյանը գիրքը գրելիս կիրառի գրականագիտական հետաքրքրական հնարանք՝ մտերիմ ընկերոջն ուղղված բաց նամակների ժանրով ներկայացնելով բանաստեղծի ստեղծագործ դիմանկարը: Նախաբանի փոխարեն գրված բաց նամակում հեղինակը ներկայացնում է գրքի ստեղծման շարժառիթները՝ նշելով, որ այն առաջին հերթին «Երվանդ Պետրոսյանի ստեղծած հրաշալի գրականության հանդեպ խոնարհում է, ամբողջական փորձ՝ գնահատանքի խոսք ասելու այդ մասին» (էջ 6): Երկրորդ բաց նամակը նվիրված է բանաստեղծի «Ինքս իմ ետեւից» (2016) հուշագրքին: Այստեղ ծանոթանում ենք Ե. Պետրոսյանի կյանքի հետաքրքիր փաստերի հետ՝ սկսած մանկության տարիներից մինչեւ կյանքի վերջին օրերը: Հետաքրքիր հուշեր են պահպանվել՝ կապված Մանկավարժական մայր բուհի հետ. աշակերտել Արշալույս Բաբայանին, Աշոտ Աբրահամյանին, Մորուս Հասրաթյանին, Աշոտ Մկրտչյանին, Վաչե Պարտիզունուն, Եղիշե Պետրոսյանին՝ մարդիկ, որոնց դասախոսությունների մասին այսօր առասպելներ են շրջանառվում, հանդիպել Հրաչյա Քոչարի, Պարույր Սեւակի, Գուրգեն Մահարու (նրա հորդորով է Ֆերդինանդ Պետրոսյանը դարձել է Երվանդ) պես մեծություններին, սովորել մանկավարժականի ոսկե սերնդի ժամանակաշրջանում՝ Հրանտ Մաթեոսյան, Մելս Սանթոյան, Արմեն Մարտիրոսյան, Լիպարիտ Սարգսյան, Աելիտա Դոլուխանյան եւ շատ ուրիշներ, այս ամենը նպաստել է բանաստեղծի հետագա ընթացքին ու կայացմանը:

Հաջորդ բաց նամակով Լ. Կարապետյանը ներկայացնում է ընկերոջ ստեղծագործական գործունեությունը՝ քննության առնելով տարբեր տարիներին տպագրված մանկական շուրջ 50 եւ «մեծական» 13 շարքերը: Խոսելով «Պատուհան»-ի մասին, որն ստեղծվել է 1968-ին, իսկ 2011-ին ներառվել «Շարժասանդուղքի վրա» ընտրանի ժողովածուում, հեղինակը նշում է պատճառը, թե ինչո՞ւ է առաջինը անդրադառնում մեծերին հասցեագրված այս գրքին. «Առաջինը ես պատուհանին եմ անդրադառնում՝ մանկական քո առաջին գրքերի «երթը» ընդհատելով, որ ինձ չնախատես, որ մանկականը չափից ավելի եմ գերադասել մեծերին հասցեագրվածներից» (էջ 19): Այստեղից արդեն պարզորոշվում է, թե ինչու՞ բանաստեղծը «երկու սիրտ» ունի. «Մեկը պատկանում է երեխաներին, մյուսը՝ մեծերին: Երկուսն էլ նույն հաճախականությունը են բաբախում» (էջ 58): Գրքում մեջբերված հարցազրույցներից մի քանիսում Ե. Պետրոսյանն անկեղծանում է, որ իր համար թանկ են բոլոր գրքերը՝ թե՛ մանկական, թե՛ մեծական, թանկ են ինչպես իր սիրասուն զավակներն ու թոռները: Ընդհանրապես, այսպիսի մեջբերումներ ընթերցողը կարող է հանդիպել գրքի սկզբից մինչեւ վերջ: Բանաստեղծի տարբեր հարցազրույցների, հոդվածների, գրական հանդիպումների ժամանակ արտահայտած հետաքրքիր մտքերը մեջբերելով՝ գրքի հեղինակն ապահովում է անմիջականություն, որը բանաստեղծի գործունեությանն անձանոթ ընթերցողին կարող է գրավել եւ թույլ տալ պատկերացում կազմելու նրա աշխարհայացքի, անհատականության, «մարդ» տեսակի, ինչպես նաեւ ստեղծագործական շարժառիթների մասին:

Հետագա բաց նամակներում արդեն ծանոթանում ենք տարբեր տարիներին տպագրված մանկական ստեղծագործություններին եւ շարքերին՝ «Հեքիաթ մոծակի եւ փղերի մասին» (1980), «Հեքիաթի խնձորը» (1985), «Հազարան հավքը» (1989) «Հազար ու մի եթեն» (2007) եւ ուրիշներ, որոնք ամփոփված են «Գրքերի երամ» (2009) ընտրանի ժողովածուում: Լ. Կարապետյանը գրքում ներկայացրել է Ե. Պետրոսյան մանկագրի թողած հարահոս ժառանգության լավագույն նմուշները, որոշներն ամբողջությունը, մի մասը՝ հատվածաբար տպագրելով այնտեղ: Առանձին բաց նամակներ նվիրված են Պետրոսյանի հեքիաթներին, այն բանաստեղծություններին, որոնք հայտնի են նաեւ որպես մանկական երգեր, հանելուկներ: Բաց նամակներից մեկի շնորհիվ ծանոթանում ենք մանկագրի 2004-ին լույս տեսած «Այբբենարանին»:

«Երգեր՝ «Շարժասանդուղքի վրա» բաց նամակում Կարապետյանը ներկայացնում է Ե. Պետրոսյանի «մեծական աշխարհը»՝ անդրադառնալով «Պատուհան» (1968), «Անվախճան օր» (1977), «Արագածից Արարատ» (1986), «Գիրք ելից» (2003) եւ այլ շարքերի:

«Երվանդ Պետրոսյան. Բանաստեղծը... երկու սրտով» գրքում ծանոթանում ենք նաեւ բանաստեղծի տարաբնույթ հոգվածներին, ակնարկներին, հարցազրույցներին, որոնք քաղաքական, մշակութային, տնտեսական եւ այլ ոլորտներում տեղի ունեցող իրադարձություններին նվիրված հրապարակագիր-լրագրողի մտածումների արձագանքներն են: Գրքում տպագրված են նաեւ մտավորականների եւ գրականագետների գրախոսություններ եւ գովաբանական խոսքեր՝ նվիրված Երվանդ Պետրոսյան քաղաքացուն եւ բանաստեղծին: Նրա գործունեությունը բարձր են գնահատել Հ. Շիրազը, Գ. Մահարին, Պ. Սեւակը, Ս. Սարինյանը, Տ. Մանսուրյանը, Ռ. Դավոյանը, Լ. Անանյանը, Ժ. Ավետիսյանը, Ս. Դանիելյանը, Ա. Եղիազարյանը եւ այլք:

Գրքում ներկայացվում են նաեւ գրողի ընտանեկան, գրական հանդիպումներից եւ ուղեւորություններից հուշապատասխաններ մնացած հետաքրքիր լուսանկարներ, որոնցում ընթերցողն արդեն դիտողական կապի մեջ է մտնում այդ բարի, մանուկների աշխարհում՝ մանուկ, մեծերի մեջ՝ մեծ անձնավորության հետ: Առանձին հավելվածով ներկայացվում են նաեւ մեծերին եւ մանուկներին հասցեագրված տարբեր ժողովածուներից առանձնացված տաղեր ու երգեր:

Վերջում մի բաց նամակ էլ նվիրված է 2019 թ. մայիսին Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղի միջնակարգ դպրոցի անվանակոչության առթիվ կազմակերպված համալիր միջոցառմանը, որի ընթացքում «Երվանդ Պետրոսյանը հավերժ սանի կարգավիճակով այցելեց այդ թանկ ու նվիրական սրբավայր» (էջ 152): Այստեղ ամբողջությամբ մեջբերված է առողջական խնդիրների պատճառով միջոցառմանը չմասնակցած Լ. Կարապետյանի գիրը՝ միշտ արթուն ու հիշատակող.

«Երվանդ Պետրոսյան. բանաստեղծը... երկու սրտով» հատորը ընթերցողին ամբողջական պատկերացում է տալիս հայ մանկագրության նշանավոր դեմքերից մեկի՝ Երվանդ Պետրոսյանի կյանքի, գրական դիմանկարի եւ մարդկային արժանիքների մասին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՄՀ

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , произнесенное в Джермуке во время патриаршего визита в Вайоцдзорскую епархию	5
--	---

ПРОПОВЕДИ

Проповедь АРХИЕПИСКОПА ХАЖАКА ПАРСАМЯНА , произнесенная во время Св. Литургии в церкви Св. Гаяне	8
Проповедь ЕПИСКОПА БАГРАТА ГАЛІСТАНЯНА , произнесенная в церкви Святого Иоанна Евангелиста в Аштараке в епархии Мясяцотна	11
Проповедь ИЕРОМОНАХА МИНАСА АХВЕРДЯНА , произнесенная во время св. Литургии в церкви Св. Гаяне	16

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ФЕОФИЛ АНТИОХИЙСКИЙ — Послание к Автолику	20
ИЕРОМОНАХ АНАНИЯ ЦАТУРЯН — Каноны, касающиеся монахов Армянской Церкви	40

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АРЦРУНИ СААКЯН — Время создания «Многовещательных речей», автор, условия создания, переводчик — редактор	65
АШОТ АЙРУНИ — О турецком вторжении 1920 г. и ситуации в Карской области	82

НАИРА БАЛАЯН — Национальные вопросы в понимании редактора журнала
«Верацнунд» Аршака Чопаняна 95

ГРАЧИЯ САРИБЕКЯН — Некоторые проявления влияния Федора Достоевского
в сочинениях Акопа Ошакана раннего периода. 113


СООБЩЕНИЯ

СИРАППИ КАРАПЕТЯН — Развитие словообразовательных моделей
в сочинении Лазаря Парпеци «История Армении». 124

НОРАЙР КАЗАРЯН — Сочинение Св. Григора Нарекаци «Книга скорбных
песнопений» в контексте христианской литературы 135

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ОВАННЕС САРГСЯН — Новое исследование о современной армянской
поэзии 148



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during his Pontifical visit to Jermuk — the Diocese of Vayots Dzor	5
---	---

SERMONS

Sermon delivered by ARCHBISHOP KHAJAG BARSAMYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	8
Sermon delivered by BISHOP BAGRAT GALSTANYAN during the Divine Liturgy celebrated at St. Hovhannes Avetaranich (John the Evangelist) Church of Artashat, prelatie church of the Diocese of Masyatsotn	11
Sermon delivered by REV. FR. MINAS HAKHVERDYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	16

RELIGIOUS STUDIES

THEOPHILUS OF ANTIOCH — To Autolycus.	20
REV. FR. ANANIA TSATURYAN — Rules concerning monks in the Armenian Church	40

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

ARTSRUNI SAHAKYAN — Time of the writing, author, circumstances of creation, translator-editor of the collection of sermons “Oft-Quoted Discourses”	65
ASHOT HAYRUNI — On the Turkish invasion of 1920 and the situation in Kars province	82


NAIRA BALAYAN — National issues according to Arshag Chobanian, editor of “Renaissance” periodical	95
HRACHYA SARIBEKYAN — Some manifestations of Fyodor Dostoevsky’s influence on Hakob Oshakan’s early work	113

ESSAYS

SIRARPI KARAPETYAN — The development of military terms in the book “History of Armenians” by Ghazar Parpetsi	124
NORAYR GHAZARYAN — “The Book of Lamentations” by St. Gregory of Narek in the context of Christian literature	135

LITERARY REVIEW

HOVHANNES SARGSYAN — A new study of modern Armenian poetry.	148
--	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Վայոց ձորի թեմ՝ Ջերմուկ հովուապետական այցի ժամանակ 5

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ

վանքում մատուցուած Ս. Պատարագին 8

Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՍՊՈՍ ԳԱԼՍԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Մասեացոտնի

թեմի առաջնորդանիստ Արտաշատի Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ
Եկեղեցում մատուցուած Ս. Պատարագին 11

Տ. ՄԻՆԱՍ ԱՐՂՅ. ՀԱԽՈՒԵՐԴԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում

մատուցուած Ս. Պատարագին. 16

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԹԵՈՓԻԼՈՍ ԱՆՏԻՈՔԱՅԻ — Առ Առևտրիկոս 20

Տ. ԱՆԱՆԻԱ ԱՐՂՅ. ԾԱՏՈՒՐԵԱՆ — Վանականներին վերաբերող կանոնները

Հայոց Եկեղեցում 40

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ — «Յաճախապատում ճառք»-ի ժամանակը,

հեղինակը, ստեղծման հանգամանքները, թարգմանիչ-խմբագիրը 65

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ — 1920 թ. թուրքական ներխուժման եւ Կարսի նահանգում

տիրող իրադրութեան շուրջ 82

ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԵԱՆ — Ազգային հարցերը՝ ըստ «Վերածնունդ» հանդեսի
խմբագիր Արշակ Զօպանեանի. 95

ՀՐԱՉԵԱՅ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ — Ֆեոդոր Դոստոևսկու ազդեցության որոշ
դրսեւորումներ Յակոբ Օշականի վաղ շրջանի ստեղծագործության մէջ . . . 113


ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Ռազմական եզրոյթ-կադապարների
զարգացումը Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում. 124

ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐԵԱՆ — Սուրբ Գրիգոր Նարեկացու
«Մատենան ողբերգության» երկը քրիստոնէական մատենագրության
համապատկերում. 135

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ — Նոր ուսումնասիրութիւն արդի հայ
բանաստեղծության վերաբերեալ 148



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 26.01.2023 թ.



ԵԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ